

Հ ր ա ս ա ռ ա կ ու թ ի լ ն Գ. Գ ա յ ս ի ա ռ ի

Ս. ՊԱԼԱՍՏՆԵԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

(ՄԱՍՆ Ա. Բ. և Գ.)

ՀԻՆԿԵՐՈՐԳ ՏԻՊ



Թ Ի Յ Լ Ի Մ

Տպարան Տ. Մ. Ռաֆինանյի

1906

4147-9251

77-13

Վր. Մարտիրոսյան

Ս. Պ Ա Լ Ա Ս Ա Ն Ե Ա Ն

1907 թ. Իր Տարիք

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ջ Ո Ւ Ի

(ՄԱՍՆ Ա. Բ. Կ Գ.)

Հ Ի Ն Գ Ե Լ Ր Ո Ր Դ Տ Ի Պ

1335 ~~752~~



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Տ. Մ. Ռոտիննանցի

1906




Handwritten signatures and notes at the top of the page.

Վ. ԱՄԻՆՆԱՅԷ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Октября 1905 г.



573+

11969

U 4 J 2 4 9
Հիմնական և Գրական
8081

ՅԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒԻ

ՄԱՍԵ ԱՌԱՋԻՆ

ԿԱԶՄԱԹՈՒՐՆ ԵՒ ՄԱՍՈՒՆԻ ԲԱՆԻ.

Faint, mostly illegible text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page.

1332

և քանակաբար է, որքան եթէ նոր ոտք ելած երեխայից պահանջէինք շափահաս մարդու պէս հաստատ քայլերով շրջել ու վազել...

Վերջին ժամանակներս սկսում են առանձին ուշադրութիւն դարձնել մեր ուսումնարանների այս կենսական հարցի վրայ. կազմվում և առջարկվում են նոր նախագծեր հայերէն լեզուի ուսման համար, որոնց նպատակն է որոշել հին ու նոր հայերէնի սահմանները դասաւուսութեան մէջ: Այս նախագծերի պահանջողութիւնները ընդհանրապէս միևնույնն են, խորշել անբնական ցալտումներից և աշխատել միշտ հեշտից դժուարը անցնել և հասկանալից անհասկանալին: Աղղղնական ուսումը մայրենի խօսուն լեզուով աւանդելուց լետու, չգիմել ուղղակի գրաբար լեզուի քերականութեանը, որ միայն զգուանք է լարուցանում աշակերտների մէջ, այլ նախ կենդանի լեզուի քերականութիւնը ուսուցանել, լետու անցնել գրաբար լեզուին, որ եթէ աշխարհաբարի հետ համեմատելով աւանդուի աշակերտներին, կը թեթեանալ ու կեանք կը ստանալ:

Այս կողմից մեր աշխատութիւնը, համարձակվում ենք ասել, մի փոքրիկ ծառայութիւն կարող է մատուցանել աղղղային ուսումնարաններին: Այս գրքով մայրենի խօսուն լեզուի քերականութիւնը աւանդելուց լետու, կը մնալ գրաբար լեզուի հոլովմունքը, խոնարհմունքը և բաղդասութեան առանձնութիւնները ուսուցանել, որի համար անտարակոյս առաջուանից շատ քիչ ժամանակ ու աշխատանք պիտի գործ դրուի թէ ուսուցչի և թէ ուսանողի կողմից:

Աւելորդ է լինել որ մեր աշխատութիւնը, իբրև փորձ, թերութիւններից ազատ չէ: Այսքան կասենք միայն որ մենք աշխատել ենք, որքան հնար էր, ընտրել լեզուի հիմնական օրէնքները և գրականութեան մէջ ընդհանրացած ձևերը, և խորշել ենք քաջան ամեն բաներից, որ կարող է մասնաւոր անձի ճաշակի արգասիք համարուիլ: Այս է մեր պատասխանը պարոններին, որոնք կարծում են թէ վաղ է աշխարհաբար լեզուի քերականութիւնը գրել:

Ս. Պալասանեան

Թիֆլիս, Յունիսի 15, 1874:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍՈՒՆԻ ԲԱՆԻ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԲԱՆԻ

§ 1. ԻՆՉԻՑ Է ԿԱԶՄՎՈՒՄ ԲԱՆԸ ԿԱՄ ԽՕՄՔԸ:

Մարդս միւս արարածներից պոնազանվում է գլխաւորապէս խօսելու ընդունակութիւնով կամ լեզուով: Խօսքը մեզ նորա համար է տուած՝ որ մեր մտքերը ուրիշներին հաղորդենք, մերձաւորներին խօսելով, իսկ հեռաւորներին գրելով:

Ուրեմն ամէն խօսք, բանաւոր լինի կամ գրաւոր, բաղկանում է մեր ունեցած մտքերից զանազան առարկաների վրայ:

Խօսակցութեան մէջ մեր մտքերը միմեանց հետ շխառնելու համար՝ յաճախ կանգ ենք առնում, իսկ դրութեան մէջ միևնոյն նպատակով գործ ենք ածում այլևայլ կէտադրութեան նշաններ—քուծ ('), ստորակէտ (,), միջակէտ (.), վերջակէտ (:): Իսկ ուր որ խօսելիս կամ կարդալիս առանձին կերպով շեշտում չենք, գործ ենք դնում հեռեեալ արտասանութեան նշանները: շեշտ ('), հարցալան նշան (') և զարմացական նշան (':):

Ա. Նախադասութեան կազմութիւնը:

§ 2 Ինչ է նախադասութիւնը.

Արեգակը փայլում է: Սոխակն երգում է: Խոտը հնձած է: Մշակները բանում են: Ձիւնը սպիտակ է: Ոսկին մետաղ է: Քանի առանձին միտք կալ արտեղ: Ա՞րն է առաջինը: (Պատասխան. արեգակը փայլում է:) Ո՞րն է երկրորդը, երրորդը, չորրորդը, հինգերորդը, վեցերորդը: Ինչո՞վ են բաժանուած միմեանցից արդ մտքերը: Ի՞նչ տառով է սկսվում իւրաքանչիւր միտքը: Իւրաքանչիւր առանձին միտք, որ արտայայտում ենք բառերով, կոչվում է նախադասութիւն: Արեգակը փայլում է նախադասութիւն է:

Իւրաքանչիւր նախադասութիւնից յետոյ գրվում է երկու կէտ կամ վերջակէտ:

Եթէ նախադասութիւնը խօսքի սկզբումն է գտնվում կամ վերջակէտից յետոյ, գլխատառով է սկսվում:

Համարեցէք թէ քանի նախադասութիւն կալ հետեւել օրինակների մէջ. Գրէք, ուր հարկաւոր է, վերջակէտեր ու գլխատառեր: ուսումը հարկաւոր է մարդուս մենք սովորում ենք գրել ծառերը ծաղկում են զարնանը ամառը շատ շոգ է լինում պղինձը օդտակար մետաղ է շունը հաւատարիմ անասուն է վարդը հոտաւէտ ծաղիկ է ձմեռը ձիւն է գալիս:

§ 3. ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ԳԼՒԱԽՈՐ ԱՆԳՈՍՆԵՐԸ— ԵՆԹԱԿԱՑ ԵՒ ՍՏՈՐՈՂԵԱԼ:

Արեգակը տաքացնում է: Վարդը բացվում է: Երեխան խաղում է: Կատուն մլաւում է: Մեղուն աշխատասէր է:

Քանի առանձին միտք կալ այս օրինակների մէջ. Քանի նախադասութիւն կալ: Ինչ առարկայի վրայ է խօսվում առաջին նախադասութեան մէջ: (Պատասխան. առաջին նախադասութեան մէջ

խօսվում է արեգակի վրայ) Ի՞նչ է ասվում այդ առարկայի վրայ: (Պատասխան. թէ նա տաքացնում է:) Ի՞նչ առարկայի վրայ է խօսվում երկրորդ նախադասութեան մէջ, Ի՞նչ է ասվում այդ առարկայի վրայ: Աշխատեցէք գտնել և լաջորդ նախադասութիւնների մէջ՝ թէ ինչ առարկաների վրայ է խօսվում և ինչ է ասվում այդ առարկաների վրայ:

Իւրաքանչիւր նախադասութեան մէջ երկու գլխատարանդամ կայ. 1) առարկան որի վերայ խօսվում է, որ կոչվում է ենթակայ, և 2) այն, ինչոր ասվում է առարկայի վրայ, որ կոչվում է ստորոգեալ:—Վարդը բացվում է նախադասութեան մէջ վարդը ենթակայ է, իսկ բացվում է—ստորոգեալ:

Ենթական և ստորոգեալը նախադասութեան գլխատարանդամներն են, որովհետև առանց նոցա ոչ մէկ նախադասութիւն չէ կարող կազմուիլ:

Նախադասութեան մէջ ենթական կարելի է գտնել ո՞՞վ կամ ի՞նչ հարցը անելով ստորոգեալի հետ: Ո՞վ է խաղում:—Երեխան: Ի՞նչ է բացվում:—Վարդը:

Գրութեան մէջ ենթական ստորոգեալից ոչ մէկ կէտագրութեան նշանով չէ բաժանվում:

1. Հետեւել հարցերի պատասխանները գրեցէք ձեր տետրակների մէջ, այնպէս որ առանձին նախադասութիւններ կազմուին և պէտք եղած տեղը գլխատառ ու վերջակէտ գրէք: Յետոյ գրէք իւրաքանչիւր նախադասութեան ենթական ու ստորոգեալը:

Ի՞նչ է վարդը: (Վարդը ծաղիկ է:) Ի՞նչ է արծաթը: Ի՞նչ է թուփը: Ե՞րբ են կանաչում ծառերը: Ե՞րբ են թափվում տերեւները: Ի՞նչ է անում գերձակը: Ի՞նչ է անում աշակերտը: Ի՞նչ է անում վարժապետը:

2. Ազգմեցէք ինքեւրդ առանձին նախադասութիւններ, որոնց մէջ ենթակայ լինին հետեւել բառերը, և գրեցէք ձեր տետրակների մէջ:

Երկաթ — շաքար — քացախ — ճրագ — թուչուն — միզու — գալլ —
— քաղաղ — հաւ — հողագործ — ջաղացական — վաճառական:

3. Կազմեցէք նախադասութիւններ, որոնց մէջ ստորոգեալ
ըմբն կետեալ բառերը:

Գրում է — կարգում է — երկում է — խօսում է — մտածում է —
տարւմ է — լողում է — բառաչում է — մայում է — հաջում է — ու-
նում է — մանչում է — խրխնջում է — համեղ է — զօրեղ է — սողուն է —
Քաշում է — բոյս է:

4. Կազմեցէք մի քանի նախադասութիւններ զաստան մէջ
գտնուած առարկաներով:

§ 4. ՀԱՄԱՌՈՑ ԵՒ ԸՆԳԱՐՁԱԿ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ.

Գիւղացիքը հնձում են:

Ո՞րն է այս նախադասութեան մէջ ենթակայ և որը ստորոգեալ:

Այս վերջին նախադասութեան մէջ քացի ենթակայից ու ստո-
րոգեալից կան ուրիշ բառեր էլ, որոնք պարզում, մեկնում են թէ

գիւղացիք ինչ են հնձում (խոտ), որտեղ են հնձում (զաշտում), երբ
են հնձում (ամառը), ո՞ր գիւղացիք հնձում են (աշխատասէր): Այս

հարցերին պատասխանող բառերը կոչվում են երկրորդական ան-
դամներ, որովհետեւ կարող են լինել ու չլինել նախադասութեան

մէջ, և միայն պարզում, ամբողջացնում են նորա միտքը: Որոնք
են նախադասութեան գլխաւոր անդամները:

Այն նախադասութիւնը, որի մէջ միայն գլխաւոր ան-
դամները կան, կոչվում է համառօտ. — Գիւղացիք հնձում են

համառօտ նախադասութիւն է:

Այն նախադասութիւնը, որի մէջ երկրորդական անդամ-
ներ էլ կան, ասվում է ընդարձակ. — Աշխատասէր գիւղացիք

աշխատ խոտ են հնձում զաշտում ընդարձակ նախադասու-
թիւն է:

Նախադասութեան երկրորդական անդամները կարելի է
գտնել զանազան հարցեր անելով ստորոգեալի հետ:

1. Հետեալ օրինակների մէջ ցոյց տուէք նախադասութեան
գլխաւոր և երկրորդական անդամները:

Քոյրս գիրք է կարգում: — Մեծ մայրս եկեղեցի է գնում: — Պա-
ռաւ կինը կտաւ է գործում: — Երեխայքը խաղում են ուսումնարա-
նի բակում: — Մեր պարտէզի ծառերը լաւ պտուղներ են տալիս: —
Գարնան ու աշնան օրերում շատ անձրևներ են գալիս: — Փոթորկից
վետոյ միշտ խաղաղ եղանակ է լինում:

2. Հետեալ օրինակների մէջ ալլեալ հարցերի պատասխան-
ները անպէս զասուորեցէք, որ կարգաւորեալ նախադասութիւն-
ներ կազմուին:

Սովորում են: Ո՞վ է սովորում (Աշակերտները սովորում
են): Ի՞նչ են սովորում (զասերը): Ո՞ւմ դասերը սովորում են
(Իրանց): Ե՞րբ են սովորում (միշտ): Ո՞ր աշակերտները սովորում
են (աշխատասէր):

Շինում են: Ո՞վ է շինում (Մեզունքը շինում են): Ի՞նչ
են շինում (մեղր): Ի՞նչպիսի մեղր (քաղցր): Ո՞րտեղ (փեթակում):

Փայլում է: Ի՞նչ է փայլում (Լուսինը փայլում է): Ե՞րբ է
փայլում (գիշերները), ո՞րտեղ (երկնքում), ինչպիսի լուսին (գեղե-
ցիկ):

Կտրում են: Ո՞վ է կտրում (Գիւղացիք կտրում են): Ի՞նչ
են կտրում (փայտ), երբ (ձմեռը), ո՞րտեղ (անտառում):

Բարեկամ է: Ո՞վ է բարեկամ (Շունը բարեկամ է): Ո՞ւմ
(մարդու): Ի՞նչպիսի բարեկամ (հաւատարիմ):

§ 5. ՅԱՏԿԱՅՈՒՅԻՉ ԲԱՌԵՐ.

Հայկի որդիքը երկար ժամանակ հովուական կեանք են վա-
րել:

Ի՞նչպիսի նախադասութիւն է այս, համաձօն թէ ընդարձակ:
Որոնք են գլխաւոր անդամները և որոնք երկրորդական: Ի՞նչ հարց
պիտի անենք որ գտնենք Հայկի բառը (Ո՞ւմ որդիքը հովուական
կեանք են վարել): Ի՞նչ հարց պիտի անենք որ գտնենք հովուական
բառը (Ի՞նչպիսի կեանք են վարել Հայկի որդիքը): Ուրեմն Հայկի
բառը գրուելով որդիք բառի մօտ՝ ցոյց է տալիս թէ ում որդոց

վրայ է խօսքը, և զանազանում է նոցա ուրիշ անձի պատկանող որդիներէց: Այսպէս և հովուական քառը որոշում է թէ Բնչպիսի կեանքի վրայ է խօսքը, — հովուական և ոչ ուրիշ որեիցէ կեանքի վրայ:

Այն բառերը, որոնք որոշում են մի առարկայ ուրիշ իւր նման առարկաներից, ցոյց տալով նորա որպիսութիւնը կամ պատկանելութիւնը, կոչվում են յատկացուցիչ: Հայկի որդիքը երկար ժամանակ հովուական կեանք են վարել նախադասութեան մէջ Հայկի և հովուական յատկացուցիչ են որդիքը և կեանք բառերի, որոնք այս պատճառով կոչվում են յատկացեալ: Յատկացուցիչը պատասխանում է հետեւեալ հարցերին. ո՞վ, ո՞ւմ կամ ինչի՞, ո՞րպիսի կամ ի՞նչպիսի:

Յատկացուցիչը յատկացեալից ոչ մի կէտադրութեան նշանով չէ բաժանվում:

1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք յատկացուցիչ բառերը:

Գիշատիչ զազանները ուրիշ կենդանիների մտով են կերակրվում: Բարձր լեռների զազաթները ծածկուած են ձիւնով: — Չսեռուան զիշերները երկար են: — Գարնան օրերը զուարճալի են: — Վահագն երուանդեան Տիգրանի որդին էր: — Հայկական զբախանութիւնը շատ հարուստ է պատմական գրուածներով:

2. Հետեւեալ նախադասութիւնների մէջ իւրաքանչիւր ենթակալի մօտ մի լարմար յատկացուցիչ գրէք:

— (որպիսի) Չուրը պղտոր է: — Չուրը պարզ է: — մրգերը շուսակար են: — (որ) օրերը կարճ են: — օրերը երկար են: — մարդը չէ տեսնում: — մարդը չէ լսում: — մարդը չէ խօսում: — մարդը չէ կարող մահադալ: — (ինչի) հօտը ախորժելի է: — համը քաղցր է գոյնը կանաչ է: — (Ո՞ւմ) ականջները երկար են: — միտքը սուր է: — տետրակը մաքուր է:

3. Հետեւեալ նախադասութիւնների մէջ իւրաքանչիւր ստորոգեալի մօտ մի յատկացուցիչ գրէք:

Չին — կենդանի է: — Ոչխարը — անասուն է: — Սիրամարգը — թռչուն է: — Օձը — սողուն է: — Մեղուն — միջատ է: — Մանուշակը — ծաղիկ է: — Աղամանդը — քար է:

§ 6. ԲԱՅԱՅԱՅՏԻՉ ԲԱՌՆԵՐ:

Արտաշիաս կուսակալը շինեց Արտաշատ քաղաքը Երասխի եզերքի վրայ:

Այս նախադասութեան մէջ նշանակուած բառերը իսկապէս աւելորդ են, և միայն աւելի մեկնում, ըացայայտում են այն առարկաները, որոնց մօտ գրուած են, կուսակալ գրուելով Արտաշիաս անուան մօտ ցոյց է տալիս թէ ո՞վ էր Արտաշիասը: — կուսակալ, և ոչ հասարակ մարդ: Նշնպէս և քաղաք գրուելով Արտաշատ անուան մօտ մեկնում է թէ Բնչ է Արտաշատը: — քաղաք, և ոչ մի ուրիշ բան:

Այն բառերը, որոնք մեկնում են մէկ առարկայի ով կամ ինչ լինելը, կոչվում են ըացայայտիչ: Արտաշիաս կուսակալը շինեց Արտաշատ քաղաքը Երասխի ձախ եզերքի վրայ նախադասութեան մէջ կուսակալը և քաղաքը ըացայայտիչ են Արտաշիաս և Արտաշատ բառերի, որոնք այս պատճառով ասվում են ըացայայտեալ:

Բացալատիչ լինում է առհասարակ ընդհանուր հասկացողութիւնը մասնաւորի մօտ, ինչպէս. բազէ թռչունը, բօս օձը, տառեխ ձուկը, գալլ զազանը, թզենի ծառ, մարտ ամիս, ուրբաթ օր:

Բացայայտիչը եթէ մէկ բառով է արտայայտուած, ոչ մի կէտադրութեան նշանով չէ բաժանվում ըացայայտեալից. իսկ եթէ մի բանի բառից է կազմուած, բութով է բաժանվում եթէ ըացայայտեալից յետոյ է գրուած, կամ երկու ստորակէտի մէջ է գրվում, եթէ նախադասութեան մէջ է ընկած. ինչպէս. Սուրէն զօրավարը Կրասոսի գլուխն ուղարկեց Տիգրանին՝ հոռմայեցոց ոխերիմ թշնամուն (կամ՝ հոռմայեցոց ոխերիմ թշնամի Տիգրանին): Յազիկրտ Պարսից թագաւորը

(կամ Պարսից Յազկերտ թագաւորը) մեծամեծ հալածանքներ հանեց քրիստոնեաների դէմ:

1. Հետեւալ նախադասութիւնների մէջ գտէք բացաւայտիչ բառերը և, ուր հարկաւոր է, բով և ստորակէտներ դրէք:

Արամ նահապետը չաղթեց Ասորեստանցոց Բարշամ իշխանին — Արա գեղեցիկը Արամ նահապետի որդին էր: — Պարուր իշխանը թագաւորական թագը ստացաւ Մարաց կիսաքսար թագաւորից: Արտաւազը Տիգրան Բ-ի որդին գերի տարուեցաւ Եգիպտոս: — Սաթենիկը Արտաշէս Բ-ի կինը Ալանաց թագաւորի աղջիկն էր: — Յուսուպի Արարացոց ոստիկանը մեծ վնասներ հասցրեց Հալոց: — Կիրակոս Գանձակեցին ժԲ դարու պատմիչը հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում Քաթարաց վրայ: — Աղէքսանդր Մակեդոնացին բարկութեան ժամանակ սպանեց Կլիդոնին իր հաւատարիմ զօրավարին:

2. Հետեւալ նախադասութիւնների մէջ բացաւայտիչ բառեր աւելացրէք:

Անի — նշանաւոր էր իր ճարտարապետութեամբ: — Վալդա — թափվում է Կասպից ծովը: — Արմաւիր — շինուեցաւ Երասխ (Ի) — վրայ: Տրդատ քրիստոնեակ մկրտուեցաւ սուրբ Գրիգորի ձեռով: — Վաղարշակ — քաղաքական և զինուորական օրէնքներ տուաւ Հալոց: — Վահէ — մեռաւ Արբէլայի պատերազմում:

§ 7. ԼՐԱՑՈՒՅԻՉ ԲԱՌԵՐ

Հողագործները երկիրը վարում են գուլթանով:

Այս նախադասութեան միաքը բոլորովին ամբողջ է: Եթէ ասէինք միայն հողագործները վարում են, միաքը թերի կը լինէր: Մեզ կը հարցնէին թէ «ինչ են վարում հողագործները» և «ինչով են վարում»: Այս պատճառով այստեղ աւելացրած են երկիրը և գուլթանով բառերը, որոնք ստորոգեալի միաքը լրացնում են: Երկիրը ցոյց է տալիս թէ ինչի վրայ է անցնում հողագործների գործողութիւնը, իսկ գուլթանով ցոյց է տալիս թէ ինչ գործիքով հողագործները կատարում են իրանց գործը:

Այն բառերը, որոնք ստորոգեալի միաքը լրացնում են,

կոչվում են լրացուցիչ: — Հողագործները երկիրը վարում են գուլթանով նախադասութեան մէջ երկիրը և գուլթանով լրացուցիչ բառեր են:

Ենթական նախադասութեան մէջ գլխաւոր առարկան է, իսկ լրացուցիչ բառերը երկրորդական առարկաներ են, որոնց վրայ անցնում է ենթականի գործողութիւնը, կամ մօտիկ յարաբերութիւն ունի նորա գործողութեան հետ:

Լրացուցիչ բառերը պատասխանում են հետեւալ գլխաւոր հարցերին:

1. Ո՞ւմ ի՞նչ: Հայերն Վահագնին Աստուծոյ տեղ էին պաշտում: Քրիստափոր Կոլոմբոսը գտաւ Ամերիկան:

2. Ո՞ւմ, ինչի՞: Հարուստները օգնում են աղքատներին: — Այս աշակերտը արժանի է վարձատրութեան:

3. Ո՞ւմից, ի՞նչեց: Պարուրը իւր թագը ստացաւ Կիսքսարից: Քաջասիրտ մարդը վտանգեց երկիրը շունի:

4. Ում՞ով, ինչ՞ով: Յովսէփը եղբայրների հետ թաղամանով էր խօսում: — Մասիսի գագաթը ամբողջ տարին պատած է ձիւնով:

Լրացուցիչ բառերը ստորոգեալից ոչ մի կէտադրութեան նշանով չեն բաժանվում

1. Հետեւալ նախադասութիւնների մէջ գտէք լրացուցիչ բառերը:

Մեղուն մոզր է շինում: — Որթը խաղող է բերում: — Լուսինը իւր լույսը ստանում է արեգակից: — Փիւնիկեցիք գտան ապակին: — Ազգերը զանազանվում են միմեանցից լեզուով, վարք ու բարքով, երբեմն նաև կրօնով: Անձնասէր մարդը ատելի է ամէնին: — Արարացիք հնարել են թուանշանները: — Արգարը խորհուրդ տուաւ Պարսից և Ասորեստանցոց թագաւորներին ընդունել քրիստոնէական հաւատը:

2. Հետեւալ նախադասութիւնների մէջ իւրաքանչիւր ստորոգեալի մօտ լրացուցիչ բառեր դրէք:

Գիւղացիներն մշակում է (ինչ) — Ոսկերիչը շինում է — Ջաղաց-
 պանը աղում է — Պատկերահանը նկարում է — Կատուն բռնում է —
 Հունը պահպանում է — Մետրոպ Մաշտոցը հնարից — Բժիշկը լուսաց-
 նում է (նւմ) — Վարդան Մամիկոնեանը մի քանի անգամ Ջարդեց —
 Աս ամէն օր տեսնում եմ — Հալրը սիրում է — Ոչ ոք չէ սիրում —
 Չանասէր աշակերտը արժանի է (ինչի) — Մոլ աշակերտը արժանի
 է — Չինուորը հպատակում է (նւմ) — Մենք պարտական ենք օգնել
 — Ամէն քաղաքացի պարտական է հնազանդել (ինչին) — Ով որ
 աշխատում է, հասնում է — Այսօր նամակ ստացայ (ուսից) — Ընդու-
 նէ այս փոքրիկ ընծան — Աշակերտները գրում են (ինչով) — Մար-
 գիկ կերակրվում են — Փայտը կտրում են — Յորենը հնձում են:

§ 8. ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ:

Կապիկները բնակում են տաք երկրներում: — Մարդիկ ցն-
 քեկը աշխատում են և զիշերը հանգստանում: — Արծիւր շատ
 ըարձր է թռչում: — Մարդս անգործութիւնից ձանձրանում է:

Այս օրինակներէ մէջ ստորագեայից առաջ կամ լիտոյ զանա-
 զան բառեր կան դրած, որոնք ենթակաների գործողութեան կամ
 գրութեան ալ և ալ հանգամանքներն են ցոյց տալիս: Առաջին
 օրինակի մէջ տաք երկրներում՝ գրուելով ընկալում են ստո-
 բագեայի մօտ ցոյց են տալիս թէ ո՞րտեղ են բնակում կապիկները:
 Երկրորն օրինակի մէջ ցնքեկը և զիշերը բառերը ցոյց են տա-
 լիս թէ Մըը աշխատում են մարդիկ և Մըը հանգստանում: Երրորդ
 օրինակի մէջ շատ ըարձր բառերը ցոյց են տալիս թէ ինչպէս
 են թռչում արծիւները: Չորրորդի մէջ անգործութիւնից բառը
 ցոյց է տալիս թէ ինչից կամ ինչ պատճառից ձանձրանում է
 մարդս:

Այն բառերը, որոնք ենթակայի դործողութեան կամ դը-
 րութեան այլ և այլ հանգամանքներն են ցոյց տալիս, կոչ-
 վում են պարագայական բառեր: — Մարդիկ ցնքեկը աշխա-
 տում են և զիշերը հանգստանում՝ նախադասութեան մէջ
 ցնքեկը և զիշերը պարագայական բառեր են:

Պարագայական բառերը ցոյց են տալիս.

1. Գործողութեան տեղը, և պատասխանում են այս հար-
 ցերին. ո՞րտեղ, ո՞րտեղից, ո՞ւր. զոր օրինակ. Չիները լո-
 գում են ջրում:

2. Գործողութեան ժամանակը, և պատասխանում են
 այս հարցերին. ե՞րբ, ո՞րքան ժամանակ, ո՞ր ժամանակից և
 մինչև ո՞ր ժամանակ. ինչպէս. Արշակունեաց թագաւորու-
 թիւնը տեկց վճց հարիւր տարի:

3. Գործողութեան որակիտեթիւնը, և պատասխանում
 են այս հարցերին. ի՞նչպէս, ի՞նչ կերպով. զոր օրինակ. Օ-
 րերը անըզգալի կերպով անցնում են:

4. Գործողութեան պատճառն ու նպատակը, և պատաս-
 խանում են այս հարցերին. ինչե՞ց, ի՞նչ պատճառով, ինչի՞
 համար. զոր օրինակ. Չիւնը հալվում է տաքութիւնից:


Պարագայական բառերը ոչ մէկ կէտով չեն բաժանվում
 նախադասութեան միւս բառերից:

Պարագայական բառերը մեծ նմանութիւն ունին լրացուցիչ բա-
 ւերի հետ. երկուսն էլ ամբողջացնում են ստորագեայի միտքը.
 այն զանազանութեամբ միայն որ լրացուցիչ բառերը աւելի կա-
 րեւոր են և աւելի մօտիկ կապակցութիւն ունին ստորագեայի հետ
 քան թէ պարագայական բառերը: Այսպէս. երբոր ասում ենք
 աշակերտը պատրաստում է, պատրաստում է ստորագեայի
 միտքը անկատար է, և պահանջում է բացատրել, թէ ի՞նչ է պատ-
 րաստում աշակերտը. — Իւր գասերը Իսկ երբ որ ասում ենք
 աշակերտը նստած է, հարկ չէ անպատճառ մեկնել թէ ո՞րտեղ
 է նստած աշակերտը, դասատան մէջ, թէ աթոռի վրայ և ալին:
 Որքան էր գասերը լրացուցիչ կը լինի, իսկ դասատան մէջ
 աթոռի վրայ պարագայական բառեր:

1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ դուք պարագայական բառերը

Ծառերը ձմեռը հանգստանում են, զարնանը ծաղկում են, ամա-
 ռը պտուղ են տալիս և աշնանը հասնում: — Աշնանը ծիծեռնակները
 թռչում են տաք երկիրներ և զարնանը կրկին վերադառնում են մեր
 կողմերը: — Օրը տեւում է 24 ժամ, ժամը 60 րոպէ և րոպէն 60 վայր-
 կեան: — Մարդիկները սառել են ցրտից: — Վահակ Պարթեք նստաւ կա-
 թուղիկոս 390-ից մինչև 440: — Երեխանց պատժում են իրանց ծու-

1335
 44869
 752



լուծեան համար:—Աշխատասէր աշակերտը իւր դասերը միշտ լաւ է պատրաստում:—Ուշադրութեամբ կարդացէք ձեր դասը, որ բան հասկանաք:—Մարդիկ տներ են շինում ցրտից ու տաքութիւնից պաշտպանուելու համար:—Հայաստանում երեք լինձ կայ, որոնք իրանց մեծութեան պատճառով ծով են կոչւում:

2. Հետեեալ նախադասութիւնների մէջ աւելացրէք շարժար պարագայական բառեր:

Մարդիկ բնակում են (որտեղ) — Գիւղացիքը աշխատում են — Ծառերը տնկում են — Այն մարդիկ որ — են բնակում, կոչւում են Եւրոպացիք, նոքա որ — են բնակում, կոչւում են Ասիացիք: — Մեղուները թռչում են (որտեղից) — Տերեւները թափւում են — Հանքերը հանում են — Մենք շատ օգտակար բաներ ենք սովորում — Քրիստոնեակը կիրակի և տօն օրերը գնում են (որ) — Մենք ամեն օր գնում ենք — Կուր գետը թափւում է — Բոլսերը սկսում են ծիրլ (երբ) — Ալեգալը մալր է մտնում — տաք է լինում — ցուրտ է լինում — Հայերը քրիստոնէութիւնը ընդունեցին — Տարին տևում է (որքան ժամանակ) — Ամիսը տևում է — Ծարաթը տևում է — Բարի երեխան (ինչպէս) — լսում է մեծերի ասածները: Ուսուցիչը պատժում է ծովաշակերտներին — Ջուրը սառում է (ինչից) — Մութը հալւում է — Օդը մաքրւում է — Ջուրը գոլորչի է դառնում — Բերանս պապակում է — Մըշակը լողնեցաւ — Գիրքը տպում են (ինչի համար) — Ճանապարհները շինում են — Տները շինում են — Ջօրքը պահում են:

§ 9. ԿՈՉԱԿԱՆ ԲԱՌԵՐ:

Դո՛ւ, Տէր, ճանաչում ես մեր սրտի գաղտնիքը:

Այս նախադասութեան մէջ ճանաչում ես ստորոգեալ է, դու ենթակալ, իսկ Տէր կոչական բառ է, որով խօսողը Աստուծոյ է դառնում և նախադասութեան մէջ ոչ մէկ բառից կախում չունի:

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս թէ խօսողը ում է գառնում իւր խօսքովը, ասում են կոչական բառեր: Դո՛ւ, Տէր, ճանաչում ես մեր սրտի գաղտնիքը նախադասութեան մէջ Տէր կոչական բառ է:

Եթէ կոչական բառը նախադասութեան մէջ է ընկած, երկու ստորակէտի մէջ է գրւում. իսկ եթէ նախադասութեան սկիզբը կամ վերջն է գտնուում, ստորակէտով է բաժանւում նորանից: Կոչական բառի վրայ շեշտ է գրւում, եթէ իրանից առաջ շեշտուած բառ չկայ. շեշտ չէ գրւում, եթէ իրանից առաջ շեշտած բառ կայ. ինչպէս. Հայր, ներք ինձ իմ յանցանքը: Սիրելի հայր, ներք ինձ իմ յանցանքը:

Հետեեալ նախադասութիւնների մէջ գտէք կոչական բառերը և դրէք, ուր հարկուար է, շեշտ ու ստորակէտ:

Տիրան սուր ես գնում:—Արշակ գնանք պարտէղ գրօսնելու:— Ծնորհակալ եմ քեզ սիրելի բարեկամ քո տուած լիշատակի համար:—Ընդունէ ինձանից այս փոքրիկ ընծան սիրելի մայր:—Աշակերտը ասաց ուսուցչին. Մեկնեցէք ինձ այս բառը վարժապետ:— Յիսուս ասաց խաչի վրայ Վստուած իմ Աստուած իմ ինչի թողիր ինձ:

Կրկնութիւն. — Ի՞նչ է նախադասութիւնը. Ո՞րոնք են նախադասութեան գլխաւոր անդամները. Ո՞ր նախադասութիւնը կոչւում է համառօտ և ո՞րը ընդարձակ. Ի՞նչ է լատկացուցիչը. Ի՞նչ է բացալատիչը. Ո՞ր բառերը կոչւում են լրացուցիչ. Ի՞նչ են ցոյց տալիս պարագայական բառերը. Իւրաքանչիւր առանձին նախադասութիւնից լետու, ի՞նչ կէտեր են գրւում. Իւրաքանչիւր առանձին նախադասութիւն ի՞նչ տառով է սկսւում. Ի՞նչ կէտադրութեան նշանով բաժանւում է ենթական ստորոգեալից, լատկացուցիչը լատկացեալից, լրացուցիչ և պարագայական բառերը նախադասութեան միւս բառերից. Ե՞րբ և ի՞նչ կէտերով բաժանւում է բացալատիչը բացալատեալից. Ի՞նչ կէտերով բաժանւում է կոչական բառը նախադասութեան միւս բառերից:

Կարդացէք մի հատուած ձեր ընթերցարանից և իւրաքանչիւր

նախադասութիւնը առանձին լուծեցէք, ցոյց տալով որոշակի նախադասութեան գլխաւոր և երկրորդական անդամները:

Բ. Նախադասութեան տեսակները:

§ 10. ԴԻՄԱՒՈՐ ԵՒ ԱՆԳԷՄ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ.

Արամը հայրենասէր ու քաջ մարդ էր:—Արշակ, իրիկուն մեկ մօտ արի:

Առաջին օրինակի մէջ ենթական որոշ լինում է, որ և պատասխանում է ո՛վ հարցմանը: Ո՛վ էր հայրենասէր ու քաջ մարդ:— Արամը: Երկրորդ օրինակի մէջ թէ և ենթական չէ լինում, բայց չափոնի իմացվում է կոչական բառից. արի, ի հարկէ զու, Արշակ: Բայց կաչ նախադասութիւն, որի մէջ ենթական որոշ չափոնի չէ, կամ բոլորովին անչափ է. դրօրինակ. որոտում է—Բնչ է որոտում—անչափ է: Ասում են, պատմում են—բայց ո՛վ է ստում, պատմում, որոշ չափոնի չէ:

Այն նախադասութիւնը, որի մէջ ենթական յիշվում է կամ մտքով իմացվում է, կոչվում է ղիմաւոր: Արամը հայրենասէր և քաջ մարդ էր, և Արշակ, այս իրիկուն մեկ մօտ արի՝ նախադասութիւնները ղիմաւոր են:

Այն նախադասութիւնը, որի մէջ ենթական որոշ յայտնի չէ կամ բոլորովին անյայտ է, կոչվում է անղէմ:—Որոտում է, ասում են նախադասութիւնները անղէմ են:

Հետեւել հարցերի պատասխաններից կազմեցէք անղէմ նախադասութիւններ:

Ի՞նչ է լինում առաւօտեայն վաղ:—Ի՞նչ է լինում երեկոյեան:—Ի՞նչ է լինում ամառը:—Ի՞նչ է լինում ձմեռը:—Ի՞նչ է լինում

աշնանը. Ի՞նչ է պատահում, երբ ամպերը միմեանց շփվում են:— Ի՞նչ է լինում, երբ երկինքը ամպում է:—(Վերջին հարցման պատասխանը կարող է անղէմ նախադասութիւնից ղիմաւորի փոխուիւն անձրեւում է կամ անձրեւ է գալիս. վերջին ձեւը աւելի գործածական է մեր լեզուում: Այսպէս ասում են նաև ծիւն է գալիս, անձրեւ է գալիս, և այլն):

§ 11. ԳԼԽԱՒՈՐ ԵՒ ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ.

Վասակ Սիւնին, որ իր ազգը գաւաճանեց, բանտի մէջ մեռաւ:

Այս նախադասութիւնը կազմում է երկու նախադասութիւնից. 1) Վասակ Սիւնին բանտի մէջ մեռաւ, 2) որ իր ազգը ղաւաճանեց: Առաջին նախադասութիւնը բոլորովին անկախ է, իսկ երկրորդը առաջինից կախում ունի և նորա հետ կապուած է:

Այն նախադասութիւնը, որ կախում չունի ուրիշ նախադասութիւնից, կոչվում է գլխաւոր: Իսկ այն նախադասութիւնը, որ գլխաւորից կախում ունի և պարկերու համար է գործ դրվում, կոչվում է երկրորդական:—Վասակ Սիւնին բանտի մէջ մեռաւ նախադասութիւնը գլխաւոր է, որ իր ազգը ղաւաճանեց երկրորդական:

Հետեւել նախադասութիւնների մէջ ղանադանեցէք յիմեանցից գլխաւոր և երկրորդական նախադասութիւնները, և ցոյց տուէք թէ երկրորդականները ի՞նչ բառերով կապուած են ղլխաւորների հետ:

Վարդան Մամիկոնեանը, որ իր կեանքը ազդի անկախութեան համար նուիրեց, չաւթննական երախտաղիտութեան արժանի է:— Տիգրան Բ. որ Ասիոյ մեծ մասի տէր էր ղարձել, թշուառ ձեռութիւն ունեցաւ: Հարկաւոր է որ փոքր ժամանակներս ւովորենք, որպէս զի լետոյ մեկ էլ, ս ղիշներին էլ օգտակար լինինք: Մեծ բազղաւորութիւն է երկխանց համար որ ուսումնարաններ կան:—Մենք գիտենք որ արեղակը լուսաւորում և տաքացնում է

երկիրը:—Կոլոմբոսից առաջ չէին իմանում թէ Ամերիկան կայ:—
Պէտք է խօսել այնպէս, որ մեզ հասկանան:

§ 12. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ:

Ով որ շատ քան է իմանում, պարտական է իր գիտու-
թիւնը ուրիշներին օգտի համար գործ դնել:—Յայտնի է որ
երկիրս պտըտում է արեգակի շուրջը:

Որո՞նք են այս օրինակների մէջ գլխաւոր նախադասութիւն-
ները և որո՞նք երկրորդական: Ի՞նչ հարցման է պատասխանում
ով որ շատ քան է իմանում՝ երկրորդական նախադասութիւնը:
(Ո՞վ պարտական է իր գիտութիւնը ուրիշների օգտի համար գործ
դնել: Ի՞նչ հարցման է պատասխանում որ երկիրս պտըտում է
արեգակի շուրջը երկրորդական նախադասութիւնը: (Ի՞նչ լայտ-
նի է: Եւրեմն այս երկրորդական նախադասութիւնները գլխաւոր
նախադասութիւնների ենթակամների տեղ են բռնում:

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախա-
դասութեան ենթակայի տեղ է բռնում, կոչվում է երկրոր-
դական ենթակայ նախադասութիւն:—Ով որ շատ քան է
իմանում՝ և որ երկիրս պտըտում է արեգակի շուրջը երկրոր-
դական ենթակայ նախադասութիւններ են:

Եթէ երկրորդական ենթակայ նախադասութիւնը գլխա-
ւորից առաջ է դասուած, ստորակէտով է բաժանվում նորա-
նից. խիկ կթէ յետոյ՝ ոչ մէկ կէտով չէ բաժանվում. ինչպէս.
Ով կը խաղայ, նա կը կաղայ. Յայտնի է որ երկիրս պտը-
տում է արեգակի շուրջը: Բայց կթէ ասինք՝ թէ՞ երկիրս
պտըտում է արեգակի շուրջը, (ստորակէտ դնելու է, որով-
հետև. երկր. ենթ. նխգ. գլխաւորից նախադաս է). այդ վա-
ղուց յայտնի է:

1. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք երկրորդական
ենթակայ նախադասութիւնները և, ուր հարկաւոր է, ստորակէտ
զրէք:

Ով ալարի ոչ դալարի:—Ով չուտ նա կուշտ:—Ով որ փքա-
նայ շուտով չբանալ:— Ով որ փող ունի խելք չունի ով որ խելք
ունի փող չունի:—Պէտք է հիւանդը ճշգրտեալ կատարէ բժշ-
կի խորհուրդները:— Կարելի է թէ անձրև գայ:— Լաւ է որ ժա-
մանակին տուն հասանք:

2. Հետևեալ նախադասութիւնների մօտ աւելացրէք երկ-
րորդական ենթակայ նախադասութիւններ:

(ն) —բաղդաւոր է:—միշտ անբաղդ է:—վարձատրութեան
արժանի է:—պատժի արժանի է:—կարելի է (իսկ) —Հաւանա-
կան է:—Կասկածելի է:—Յայտնի է:—

§ 13. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՅԱՏԿԱԳՈՒՅԻՉ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Այն մարդիկը, որոնք Ամերիկայումն են ընակվում,
կոչվում են Ամերիկացիք:

Ո՞րն է այս օրինակի մէջ գլխաւոր նախադասութիւն և որը
երկրորդական: Ի՞նչ հարցման է պատասխանում Որոնք Ամե-
րիկայումն են ընակվում՝ երկրորդական նախադասութիւնը:
(Ո՞ր կամ ո՞րպիսի մարդիկը կոչվում են Ամերիկացիք: Եւրեմն
այստեղ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասու-
թեան ենթակայի որպիսութիւնն է ցոյց տալիս:

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախա-
դասութեան մէկ օրեիցէ անդամի սրպիսութիւնն է ցոյց տա-
լիս, կոչվում է երկրորդական յատկացուցիչ նախադասու-
թիւն:—Որոնք Ամերիկայումն են ընակվում երկրորդական
յատկացուցիչ նախադասութիւն է:

Եթէ երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը գլխ-
աւորից յետոյ է դասուած, ստորակէտով է բաժանվում նորա-
նից, եթէ գլխաւոր նախադասութիւնը քիչ շատ երկար է, և չէ բա-

ժանվում, եթէ կարճ է, ինչպէս. Կղզի կոչվում է այն ցածար երկիրը, որն շուրջը ջրով պատած է: Կայ ծառ որ պտուղ է տալիս, կայ էլ որ պտուղ չէ տալիս:

Իսկ եթէ երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնը գլխաւորի մէջ է ընկած, բաժանվում է նորանից երկու ստորակէտով կամ բութով և ստորակէտով, եթէ ընդհանուր կամ սովորական որպիսութիւնն է ցոյց տալի. իսկ եթէ մասնաւոր կամ էական որպիսութիւնն է ցոյց տալիս, յատկացուցիչ նախադասութիւնը չէ բաժանվում իր յատկացեալից, և միայն ստորակէտ է գրվում այնտեղ, ուր վերջանում է երկրորդական նախադասութիւնը. ինչպէս—Մարդս, (կամ մարդս) որ սխալախան է, չէ սիրում իր յանցանքը խոստովանել:

Եյն մարդը որ ուրիշներին օգնում է, երախտագիտութեան արժանի է:

Առաջին օրինակի մէջ ընդհանրապէս բոլոր մարդկանց սխալականութեան վրայ է խօսքը, երկրորդի մէջ մասնաւորապէս մի կարգի (ուրիշներին օգնող) մարդկանց վրայ:

Բայց շատերը հետեւելով աւու ու գերմ. կէտադրութեան, ամէն յատկացուցիչ նախադասութիւն անխտիր բաժանում են երկու ստորակէտով:

1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք երկրորդական յատկացուցիչ նախադասութիւնները, և պէտք եղած տեղը բութ ու ստորակէտ դրէք:

Նունը որ հաւատարիմ անասուն է ճանաչում է իր տիրոջ ձայնը:—Չանձրութիւնը մի հիւանդութիւն է որի զեղը աշխատութիւնն է: Սոկրատը որ դատապարտուեցաւ թոյն խմելու առաքինի քաղաքացի էր:—Երկիրս որի վրայ մենք ապրում ենք տիե-

զերքի ամենափոքր մասն է:—Մարդս որ մահկանացու է մեծամեծ գործերի ձեռնամուխ է լինում:—Փամանակը որ ամեն բան փոխւմ է փոխում է և մարդկանց բնատրուծիւնը:—Ի՞նչպէս է կոչվում այն ջուրը որ ամեն կողմից ցամաքով պատած է:—Կաք զեռ որ զեռի մէջ է թափվում, կայ էլ որ ձովն է թափվում:

2. Հետեւեալ նախադասութիւնների մէջ ենթակաների լրացուցիչ կամ պարապարական բառերի մօտ աւելացրէ՛ք երկրորդական լատկացուցիչ նախադասութիւններ:

Այն թռչունը—չէ կարող թռչել:—Այն ցամաքը—կոչվում է թերակղզի:—Այն անասունը—կոչվում է չորքոտանի:—Այն ժամացոյցը—չէ կարող բանել:—Մարդս—կարող է շատ բաներ ստեղծել:—Անասունը—չէ կարող խօսել:—Կարելի է ուտել այն մրցեբը:—Պէտք է հնձել աչն ցորենը:—Շիշեցէ՛ք մէկ մէկ փունջ այն ծաղիկներից:—Քնանք զբօսելու աչն պարտկը:—Կարելի է հիւանդանաչ այն սենեակում:—

§ 14. ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ:

Կարծում են թէ լուսնի վրայ ընակիչներ կան:

Ո՞րն է այտեղ գլխաւոր նախադասութիւնը և որը երկրորդական: Ի՞նչ հարցման է պատասխանում լուսնի վրայ ընակիչներ կան երկրորդական նախադասութիւնը (Ի՞նչ են կարծում) Արեմն աչտեղ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան ստորոգեալի միտքը լրացնում, ամբողջացնում է:

Եթէ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութեան միտքը լրացնում է, կոչվում է երկրորդական լրացուցիչ նախադասութիւն:—Թէ լուսնի վրայ ընակիչներ կան երկրորդական լրացուցիչ նախադասութիւն է:

Եթէ երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը գլխաւորից նախադաս է, ստորակէտով է բաժանվում նորանից. ինչպէս. Ինչ կը ցանես, այն կը հնձես: Իսկ եթէ լրացուցիչ նախադասութիւնը գլխաւորից յետոյ է դասուած, սովորաբար չէ

բաժանվում նորանից, մանաւանդ եթէ գլխաւոր նախագասու-
թիւնը համառօտ է. բայց կարող է բաժանուիլ բուժով կամ
ստորակէտով, եթէ գլխաւոր նախագասութիւնը քիչ շատ ըն-
դարձակ է, ուրեմն և մեկնութեան կարօտ չէ: Զորօրինակ,
Պարձեմ թէ չես սխալվում: Պարսից թագաւորների գիտա-
սորութիւնն այն էր, (կամ այն էր) որ քրիստոնէութեան հետ
հայոց ազգութիւնն էլ ոչնչացնեն:

1. Հետեւեալ նախագասութիւնների մէջ գտէք երկրորդա-
կան լրացուցիչ նախագասութիւնները և, ուր հարկաւոր է, բու-
թով կամ ստորակէտով բաժանեցէք գլխաւորներից:

1. Ինչ կասես այն կը լսես:—Ինչ կը բրթես այն կը խըր-
թես:—Գուք գիտէք որ ես հիւանդ եմ:—Յուսամ թէ ասածս
հասկացար:—Տիգրան Բ կամենում էր որ քոյոր Ասիան իրան տէր
ճանաչէ:—Վաւան Մամիկոնեանի ղիտաւորութիւնն այն էր որ մանր
Վուրներով Պարսից զօրութիւնը տկարացնէ:—Վուստապուհ թա-
գաւորի ցանկութիւնն այն էր որ գիտութիւններն ու արուեստ-
ները ծաղկեն հայոց մէջ:

3. Հետեւեալ նախագասութիւնների մէջ իւրաքանչիւր ստորո-
գեւալի մօտ աւելացրէ՛ք երկրորդական լրացուցիչ նախագասութիւն-
ներ:

Աշխատասէր աշակերտը լոյս ունի—Քրիստոնէական կրօնը
պատուիրում է մեզ—Հողագործը աշխատում է—Բժիշկը կարծում
է—Վաճառականի բանը գործը այն է—Գիտէք—Մենք չգիտենք—
Պարող էք ասել—Ասացէք ինձ—

§ 15. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

Ինչ տեղ հաց, այնտեղ կայ:

Ո՞րն է այս առածի մէջ գլխաւոր նախագասութիւնը և ձրը երկ-
րորդական: Ի՞նչ հարցման է պատասխանում ինչ տեղ հաց երկրորդա

կան նախագասութիւնը (Ո՞րտեղ կայ).—Ինչ տեղ հաց (կայ).—
Ուրեմն այտեղ երկրորդական նախագասութիւնը գլխաւոր նախա-
գասութեան դրութեան պարագան է ցոյց տալիս:

Եթէ երկրորդական նախագասութիւնը գլխաւոր նախա-
գասութեան ենթակայի գործողութեան կամ դրութեան պարա-
գաներն է ցոյց տալիս, կոչվում է երկրորդական պարագա-
յական նախագասութիւն: Ինչտեղ հաց (կայ) երկրորդական
նախագասութիւն է:

Երկրորդական պարագայական նախագասութիւնների կէ-
տադրութեան կանոնը այս է. եթէ պարագայական նախա-
գասութիւնը գլխաւորից նախադաս է, ընդհանրապէս ստո-
րակէտով բաժանվում է նորանից. Երբոր լուսինը գտնվում
է արեգակի ու երկրի մէջ, արեւը խաւարում է: Իսկ եթէ
պարագայական նախագասութիւնը գլխաւորից յետոյ է դաս-
ուած, սովորաբար չէ բաժանվում նորանից. ինչպէս. Բանդ այն-
պէս բռնէ որ յետոյ չզոջաս: Բայց երբեմն կարող է բաժա-
նուիլ ստորակէտով, մանաւանդ եթէ գլխաւոր նախագասու-
թիւնը ընդարձակ և ամբողջ է. Ես ձեզ տալիս եմ այս պիւր-
քը, որպէս զի կարդար և ձեր կարծիքը յայտնէք:

1. Հետեւեալ նախագասութիւնների մէջ գտէ՛ք երկրորդական
պարագայական նախագասութիւնները և, ուր հարկաւոր է, ստո-
րակէտներ գրէք:

Որտեղ գնաս այնտեղի գզակը ծածկիր:—Ինչ տեղ պանիր այն-
տեղ բանիր:—Ինչ տեղ վերք կալ դիրք չկալ, ինչ տեղ դիրք կալ
վերք չկալ:—Արեւմուտքն այնտեղ է որտեղ արեւ մալր է մանում:
—Երբ որ մարդ քաղցած է ուտել է կամենում, երբ որ ծարաւ է
խմել է կամենում:—Զուրը գոլորշիանում է երբ որ կրակի վրայ
տաքացնում են:—Սառույցը ջուր է կտրվում երբ որ տաք տեղ է
լինում:—Լոյսը այնպիսի արագութեամբ է տարածվում որ մենք

չենք կարող երևակայել:—Ինչպէս գիտես այնպէս արա:—Ինչպէս որ արեգակը ցլում է երկնքի ամպերը այնպէս և ճշմարտութիւնը ցլում է ստույթիւնը:—Չմեռը անձրևի տեղ ձիւն է գալիս սրովհետև գոլորշիները չափազանց ցրտից ոչ միայն ջուր են կըտրվում, այլ և սառչում են:

2. Հետեւալ նախադասութիւնների մէջ աւելացրէք երկրորդական պարագայական նախադասութիւններ:

Իրիճը ցանում են այնտեղ—Գետնախնձորը աւելի լաւ է բուսնում այնտեղ—Առհասարակ զիւղերը շինվում են այնտեղ—Մենք ուրախութեամբ գնում ենք այնտեղ—Լուսանում է (ե՞րբ)—Մթնում է—Գիշերը լուս է լինում—Մասերը ծաղկում են—Տերեւները թափվում են—Պէտք է կարգաւ այնպէս—Աշակերտը սովորում (ի՞նչի համար)—Մեզուն ծաղիկների վրայ թռչկոտում է—Հաւը թուխս է նստում—Աշտ Գ. Ողորմած կոչուեցաւ—

§ 16. ՄԻՋԱՆԿԵԱԼ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ.

Հայկ նահապետը, ասում են ազգային պատմիչները, շատ որդիք ու թոռներ ունեցաւ:

Այս որինակի մէջ Հայկ նահապետը շատ որդիք ու թոռներ ունեցաւ անկախ, ուրեմն և զխաւոր նախադասութիւն է. իսկ ասում են ազգային պատմիչները նախադասութիւնը զխաւորի մէջ ընկած է և ոչինչ կախում չունի նորանից, ուստի և կարող է դուրս թողուիլ, առանց զխաւոր նախադասութեան մտքին մթութիւն պատճառելու:

Այն նախադասութիւնը որ ուրիշ նախադասութեան մէջ է ընկած և ոչ մէկ բառից կախում չունի, կոչվում է միջանկեալ: Ասում են ազգային պատմիչները միջանկեալ նախադասութիւն է:

Միջանկեալ նախադասութիւնը զխաւորից բաժանվում է երկու ստորակէտով, ուրեմն նաեւ երկու գծով կամ փակագծով. ինչպէս, Լուսնի վրայ—ինչպէս կարծում են—ընակիչներ կան:

Տրդատի յաջող բարտուղար Ագաթանգեղոսը (այսպէս է անուանում նորան Խորենացին) ազգով հոտիմայիցի էր:

Հետեւալ նախադասութիւնների մէջ գտէք միջանկեալ նախադասութիւնները և զխաւորներից բաժանեցէք ստորակէտներով, երկու գծով կամ փակագծով:

Գնացէք պատուիրեց Յիսուս իւր աշակերտներին քարոզեցէք հեթանոսներին և միրտեցէք նոցա:—Արածը ասում է պատմութիւնը աւելի լաւ էր համարում մեռնել քան թէ իւր ազգը օտարի լծի տակ ընկած տեսնել: Բէլը կարծում է Արիդենոս մտենագիրը սղանուեցաւ Արմենակի և ոչ Հալիի ձեռով:—Նիսոսն ու Եսամիրամը ինչպէս կարծում են մի քանի պատմաբաններ առասպելական անձեր են:—Ուրացող Վասակը այսպէս է անուանում նորան Աղիշէն միայն իւր անձի համար էր աշխատում:

§ 17. ԿԻՃԱՏԵԱԼ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ.

Ով որ իմ յանձնարարութիւնը կը կատարէ, իմ յանձնարարութիւնը կը կատարուի: Վարձատրութիւն կը ստանայ: Դասը իմացող աշակերտը իմանում է, կարող է խաղալ: Կարող է խաղալ:

Այն աշակերտը, որ դասը իմացող աշակերտը իմանում է, կարող է խաղալ: Կարող է խաղալ: Ինչ կը ցանես, այն կը հնձես: Գանձը կը հնձես:

Երբ որ մէկի հետ խօսում ես, մտածէ մտածէ թէ ինչ ես խօսում: Մէկի հետ խօսելիս, մտածէ թէ ինչ ես խօսում:

Տրդատ թագաւորը, ասում են մեր պատմիչները, զարմանալի ուժի տէր մարդ էր: Տրդատ թագաւորը, մեր պատմիչների խօսքովը, զարմանալի ուժի տէր մարդ էր:

Այս օրինակի մէջ երկրորդական նախադասութիւնները երկու ձևով են գործ գրուած.— կատարեալ և կրճատեալ ձևերով: Առաջին օրինակի մէջ Ուլ որ իմ յանձնարարութիւնը կը կատարէ ենթակալ նախադասութիւնը կրճատելով՝ պարզ ենթակալի է փոխուել: Ուլ վարձատրութիւն կը ստանալ— իմ յանձնարարութիւնը կատարողը: Երկրորդ օրինակի մէջ, Որ դասը իմանում է երկրորդական բառակազմիչ նախադասութիւնը կը բնութագրուի՝ պարզ բառակազմիչ է փոխուել: Ո՞ր աշակերտը կարող է խաղալ: Իր դասը իմացող աշակերտը: Երրորդ օրինակի մէջ Ինչ կը ցանես քացուցիչ նախադասութիւնը կրճատելով՝ պարզ քացուցիչ է փոխուել: Ի՞նչ կը հնձես.— Յանձնող: Զորքորդ օրինակի մէջ Երբ մէկի հետ խօսում ես պարագայական նախադասութիւնը կրճատեալ նախադասութեան ձև է ստացել: Ե՞րբ մտածէ թէ ինչ ես անում.— Իւրիշի հետ խօսելիս: Հինգերորդ օրինակի մէջ Ասում են մեր պատմիչները միջանկեալ նախադասութիւնը կրճատեալ ու միջանկեալ բառերի է փոխուել: Մեր պատմիչների խօսքովը կամ ասելովը:

Եթէ երկրորդական նախադասութիւնը իւր սուանձին ենթական ու ստորոգեալը ունի, կոչվում է կատարեալ նախադասութիւն, իսկ եթէ երկրորդական նախադասութիւնը կրճատուելով՝ պարզ ենթակալի, յատկացուցիչ, պարագայական կամ միջանկեալ բառերի պաշտօն է վարում, կոչվում է կրճատեալ: Երկրորդական կրճատեալ նախադասութիւնները զլիսադրից ոչ մի կէտով չեն բաժանվում: Միայն պարագայական նախադասութիւնները, եթէ քիչ շատ ընդարձակ են և կրճատուելուց յետոյ կանոնաւոր նախադասութեան ձևը պահպանում են, սովորաբար բաժանվում են բութով կամ ստորակէտով. հիանալ լինելով՝ (փոխանակ՝ որովհետև ես հիւանդ էի), շկարպացայ հանդէսին ներկայ դառնալ: Իսկ միջանկեալ բառերը միջանկեալ նախադասութիւնների պէս՝ երկուս ստորակէտի մէջ են դրվում:

1. Հետեալ առանձերի մէջ կրճատեալ նախադասութիւնները կատարեալ նախադասութիւնների փոխեցէք:

Զուրը ընկնողը անձրից չի վախենալ.— Մեզրը ծախողը մատը կը լպտի (կը լզէ):— Երազումը սովածը հաց կը տեսնի (կը տեսնէ), ծարաւը ջուր:— Դեռ չճնած երեսին շոր մի կտրել:— Տունը քանդողի տունն Սասուած կը քանդի (կը քանդէ):— Զու ածան հաւը կշիշան կը լի (կը լինի):— Քամու բերածը քամին կը տանի:— Մինչև հաստի բարակիլը, բարակի հողին դուրս եկաւ:

2. Հետեալ նախադասութիւնների մէջ երկրորդական նախադասութիւնները կրճատեցէք:

Ով որ երաժշտութեան ընդունակութիւն ունի, պէտք է շատ աշխատի որ լաւ երաժիշտ դառնալ:— Ով որ նկարելու սէր ունի, պէտք է համբերութեամբ պարապի, որ լաւ նկարիչ դառնալ:— Ով որ կը խաղալ, նա կը կաղալ:— Ով որ փող ունի, խելք չունի. ով որ խելք ունի, փող չունի:— Այն ցամաքը, որ երկու ծով միմեանցից բաժանում և երկու ցամաք իրարու հետ կապում է, կոչվում է պարանոց:— Այն մարդիկը, որոնք հողագործութեամբ են պարապում, կոչվում են հողագործ:— Դժուար է լուսալ աչն մարդկանց վրայ, որոնք շատ են խոստանում և քիչ են կատարում: Ինչ չէր տեսել պատէն կախ՝ հիմի (ալժմ) տեսաւ ճակատէն կախ:— Երբ որ Խոսրովը մեռնում էր, հրամայեց որ Անակի ցեղը անով տեղով ջնջեն:— Երբ Տրդատը Հոստից վերադարձաւ, բոլոր ժողովուրդը և նախարարները իբրև փրկիչին ընդունեցին նորան:— Այն միջոցին, որ զուք ի սում էիք, ես մի ամբողջ գլուխ կարգացի:— Գնում եմ գիւղ որ կարգի գնեմ իմ զործերը:— Մինչև չէրը կը թըջի, հիւանդի հոգին կը թռչի:— Մինչև թուրն եկաւ, լեզուն գլուխը կտրեց:— Մինչև հերթը մեզ հասաւ, լիսը (լոս) վրայ հասաւ:— Ես բաղդաւոր եմ երբ որ լաւ գիրք եմ կարդում:— Պարթևները, ասում է Մովսէս Խորենացին, իրենց ծագումը առնում են Աբրահամի երկրորդ կնոջից՝ Բետուրայից:

§ 18. ՊԱՐՁ ԵՒ ԲԱՂԱԴՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ:

Մարդիկ մանկանացու են:

Մարդիկ, որ մանկանացու են, մեծամեծ գործերի ձեռնամուխ են լինում:

Առաջին օրինակի մէջ մի ենթակայ կայ և մի ստորոգեալ, ուրեմն և մէկ նախադասութիւնից կազմուած է: Երկրորդ օրինակը կազմուած է երկու նախադասութիւնից. Մարդիկ մեծամեծ գործերի ձեռնամուխ են լինում զլիաւոր նախադասութիւն է. իսկ Որ մանկանացու են երկրորդական բառացուցիչ նախադասութիւն է:

Եյն նախադասութիւնը, որի մէջ միայն մէկ ենթակայ կայ, մէկ ստորոգեալ, մէկ յատկացուցիչ, կոչվում է պարզ: Մարդիկ մանկանացու են պարզ նախադասութիւն է: Եյն նախադասութիւնը, որ երկու կամ աւելի նախադասութիւնից է կազմուած, կոչվում է բաղադրեալ: Մարդիկ, որ մանկանացու են, մեծամեծ գործերի ձեռնամուխ են լինում բաղադրեալ նախադասութիւն է:

Բաղադրեալ նախադասութիւնը կազմվում է սովորաբար մէկ զլիաւոր և մէկ կամ աւելի երկրորդական նախադասութիւններից, որոնք զլիաւորից բաժանվում են ստորակէտներով: Բայց պատահում է որ բաղադրեալ նախադասութիւնը կազմվում է երկու կամ աւելի անկախ նախադասութիւններից, որոնք միջակէտներով են բաժանվում, եթէ ոչ մի բառով կապուած չեն. ստորակէտով և թէ էւ, քաչց և ուրիշ բառերով կապուած են: Զորօրինակ, Մայիսի զեղեցիկ զիշերներից մինն էր օդը մեղմ էր ու հանդարտ. զիշերուան թագունին լուսինը կամաց կամաց բարձրանում էր երկնքի կապուտ ամպերի վրայ, և իւր լուսով նսեմացնում էր անհամար աստղերը: Այստեղ չորս նախադասութիւն կայ, չորսն էլ անկախ և այս պատճառով միջակէտներով են բաժանուած. միայն վերջինը և ուրիշ կապուած է, ուրեմն և նախընթաց նախադասութիւնից ստորակէտով է բաժանուած:

Հետեւեալ նախադասութիւնները կապեցէք միմեանց հետ, այնպէս որ մինը զլիաւոր լինի, իսկ միւրը կամ միւսները երկրորդական:

Ծառերը ծաղկել են պարտէզում: Այդ պարտէզը գտնվում է մեր տան մօտ:—Թուղթը բամբակից են շինում: Այդ թղթի վրայ մենք գրում ենք, —Վարենի ձիւները գտնվում են Ամերիկայի ու Ասիայի անապատներում: Այդ ձիւները իրանց ազատ կամքով թափառում են:—Հայերը այժմ ցրուած են աշխարհիս ամէն կողմերը: Հայերը մի ժամանակ կենդրոնացած էին իրանց երկրում:—Սոխակը արդէն թաւաւ: Այդ սոխակը երգում էր մեր պարտէզում: Նա կը վերադառնայ մեզ մօտ գալ տարի: Զին փոքր է, լղար ու տգեղ: Այդ ձիով գիւղացին զետինը վարում է: Նա շատ թանկալին ձիւներից օգտակար է:—Սև բիբը փոքրիկ է: Այդ բիբը գտնվում է մեր աչքի մէջտեղում: Մենք այդ բբով տեսնում ենք երկինքն ու երկիրը:

§ 19. ՄԻԱԽՈՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ:

Խնձորենին ծաղկում է դարնանը.—Տանձենին ծաղկում է գարնանը:

Այս երկու պարզ նախադասութիւնները կարելի է այսպէս կապել. Խնձորենին ծաղկում է դարնանը և տանձենին ծաղկում է գարնանը. Բայց ծաղկում և գարնանը բառերը չկրկնելու համար՝ կարող ենք այս երկու նախադասութիւններից մէկ նախադասութիւն կազմել.—Խնձորենին և տանձենին ծաղկում են գարնանը:

Եյն նախադասութիւնը, որ երկու կամ աւելի նախադասութիւնների միաւորութիւնից է կազմուած, կոչվում է միաւորեալ:—Խնձորենին և տանձենին ծաղկում են գարնանը նախադասութիւնը միաւորեալ է:

Միաւորեալ նախադասութեան մէջ կարող են լինել մի քանի ենթակայ կամ մի քանի ստորոգեալ, մի քանի միատեսակ յատկացուցիչ կամ մի քանի պարագայական բառեր:

Եթէ միաւորեալ նախադասութեան մէջ երկու ենթակայ կայ, երկու ստորոգեալ և այլն, որ, և ու, կամ բառերով կապ-

ուած են, ստորակէտով շին բաժանվում, ինչպէս. Անդրն ու արծիւը որսկան թռչուններ են: Մտածում ու խօսում է: Ուրիշ ամէն զէպրերում միաւորեալ նախադասութեան մէջ մի բանի ենթականեր, ստորոգեալներ, յատկացուցիչներ և այլն բաժանվում են ստորակէտներով. — այսինքն՝ 1) եթէ ոչ մի բառով կապուած չեն, 2) եթէ կապուած են եւ-եւ, թէ-թէ, կամ-կամ, երբեմն երբեմն կրկնաւոր բառերով:

Հետեւեալ միաւորեալ նախադասութիւնների մէջ, ուր որ հարկն է, ստորակէտներ դրէք և լետոյ պարզ նախադասութիւնների փոխեցէք:

Պղինձը ոսկին ու երկաթը մետաղներ են: (Պղինձը մետաղ է: Ոսկին մետաղ է: Արծաթը մետաղ է): Կերձակը կոչակաբը ոսկերիչը արհեստաւորներ են:—Այովը ոչխարը ձին շունը չորքոտանի կենդանիներ են:—Տիգրան Երուանդեանից լետոյ հետզհետէ թագաւորեցին Վահագն Առաւան Կերես Զարեհ Արմոզ Բալգամ Վան և Վահէ:—Գիւղացին վարում է ցանում է և հնձում:—Կետը ունգեղջիւրը և զլիինը ապրում են ծովերում և կերակրվում են ծովալին բոլսերով որդերով ու ձկներով:—Բոլոր տաք և ցուրտ երկրներում ծովերում գետերում ու ճահիճներում կան կրիաներ:—Թէ ամառը թէ ձմեռը թէ աշնանը թէ գարնանը մենք ունինք մեր առանձին զուարճութիւնները: Աղքատները և հարուստները վախելում են բնութեան պարզաները:—Մենք դնում ենք զբօսնելու երբեմն պարտէզ երբեմն դաշտ երբեմն անտառ:

2) Հետեւեալ երկու կամ աւելի պարզ նախադասութիւններից միաւորեալ նախադասութիւններ կազմեցէք:

Առիւծը անգութ է: Վազը անգութ է:—Աղամանը թանկագին քար է: Զմռուխտը թանկագին քար է:—Գեղձը համեղ միրգ է: Զմերուկը համեղ միրգ է: Խաղողը համեղ միրգ է:—Կերձակը շորեր է ձևում: Կերձակը շորեր է կարում:—Տիգրանը բարի երեսխալ է: Տիգրանը աշխատասէր երեսխալ է:—Ես այսօր վաղ վերկա-

ցալ: Ես այսօր լուացուցալ: Ես այսօր աղօթք արի: Ես այսօր պատրաստեցի իմ դասերը:—Թռչունները ամառը բնակվում են անտառներում: Թռչունները ամառը բնակվում են մարդերում: Թռչունները ամառը բնակվում են ճահիճներում: Թռչունները ամառը բնակվում են լճերում: Թռչունները ամառը բնակվում են գետերում:

§ 20. ՊԱՏՄԱԿԱՆ, ՀԱՐՅԱԿԱՆ, ՊԱՏԱՍԻԱՆԱԿԱՆ, ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ և ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ:

- Արշակն ու Տիգրանը նստած էին դաստան մէջ:
- Ի՞նչ ես անում, հարցրեց Արշակը Տիգրանին:
- Ազգային պատմութեան դասս եմ գրում:
- Ե՞րբ կըլինի որ ես էլ ազգային պատմութիւն սովորեմ:
- Աշխատէ, և դու էլ շուտով կը սկսես սովորել:

Այս օրինակի մէջ ալ և ալ նախադասութիւններ կան, որոնք ցոյց են տալիս թէ խօսողը ինչ նպատակով է չափնում իր միտքը: Առաջին նախադասութեան մէջ—Արշակն ու Տիգրանը նստած էին դասատան մէջ—պարզ կերպով պատմվում է թէ ինչ էին անում Արշակն ու Տիգրանը: Երկրորդ նախադասութիւնը—Ի՞նչ ես անում—պարունակում է Արշակի առաջարկած հարցը Տիգրանին: Երրորդ նախադասութիւնը—Ազգային պատմութեան դասս եմ գրում—պատասխան է Արշակի առաջարկած հարցին: Ե՞րբ կը լինի որ աս էլ ազգային պատմութիւն սովորեմ՝ նախադասութեամբ Արշակը իր ցանկութիւնն է չափնում ազգային պատմութիւն սովորելու: Աշխատէ՛, և դու էլ շուտով կը սկսես սովորել նախադասութեամբ Տիգրանը հրամայում կամ աւելի ուղիղ, յորդորում է Արշակին աշխատելու:

Այն նախադասութիւնը, որով պարզապէս պատմվում է մի բան, կամ որիցէ միտք է յայտնվում՝ կոչվում է պատմական:—Արշակն ու Տիգրանը նստած էին դասատան մէջ պատմական նախադասութիւն է:

Այն նախադասութիւնը, որով խօսողը չիմանալով մի բան,

կամ կատկածելով մի բանի վրայ հարցմունք է անում, կոչվում է հարցական, իսկ պատասխանը—պատասխանական։ Ի՞նչ ես անում հարցական նախադասութիւն է։ Ազգային պատմութեան դասս եմ գում—պատասխանական։

Եյն նախադասութիւնը, որով խօսողը սաստիկ զգացուած լինելով՝ բացազանջում է, կոչվում է բացազանջական։— Ե՛րբ կը լինի որ ես էլ ազգային պատմութիւն սովորեմ բացազանջական նախադասութիւն է։

Եյն նախադասութիւնը, որով խօսողը պահանջում է, հրամայում կամ ցանկանում է որ գործողութիւնը կատարուի՝ կոչվում է հրամայական։—Աշխատէ՛ եւ դու էլ շուտով կը սկսես սովորել հրամայական նախադասութիւն է։

Հարցական նախադասութեան մէջ հարցական նշանը գրվում է այն բառի վրայ, որի մէջ պարունակվում է հարցը. բացազանջական նախադասութեան մէջ զարմացականը գրվում է բացազանջութիւն պարունակող բառի վրայ, ինչպէս վերևի օրինակներից երևում է։ Հրամայական նախադասութեան մէջ գործ է գրվում շեշտը, եթէ միայն հրաման կամ ցանկութիւն պարունակող բառը իրանից առաջ չեշտեալ բառ չունենայ. ինչպէս. գնա՛ տուն եւ տո՛ւն գնա. Իսկ պատմական և պատասխանական նախադասութիւններից յետոյ, մտքին ու տեղին նայելով, կարող է գրուել վերջակէտ, միջակէտ, ստորակէտ։

Պատասխանական նախադասութիւնը շատ անգամ անկատար է լինում, այսինքն պարունակում է իր մէջ միայն այն բառերը՝ որ ամենահարկաւոր են. ինչպէս. Ո՛ւր ես գնում։— Ուտումսարան։ Եյսօր դաս կայ։—Գայ։ Ուր աւելորդ կրկնութիւն կը լինէր ասել՝ Ուտումսարան եմ գնում։ Այո՛, այսօր դաս կայ։

Կրկնութիւն։ - Ո՞ր նախադասութիւնը կոչվում է զիմաւոր և որը անդէմ։ Ո՞ր նախադասութիւնը կոչվում է գլխաւոր և որը երկրորդական։ Փանֆ տեսակ են լինում երկրորդական նախադասութիւնները։ Ի՞նչ է միջանկեալ նախադասութիւնը։ Ո՞ր նախադասութիւնը կոչվում է կատարեալ և որը կրճատեալ։ Ո՞ր նախադասութիւնը կոչվում է պարզ և որը բաղադրեալ։ Ո՞րն է միաւորեալ նախադասութիւնը։ Մեկնեցէ՛ք պատմական, հարցական, պատասխանական, բացազանջական և հրամայական նախադասութիւնների մէջ եղած զանազանութիւնը։ Երկրորդական լատկացուցիչ նախադասութիւնը երբ և ի՞նչ կէտերով բաժանվում է գլխաւորից. Ե՛րբ և ի՞նչ կէտադրութեան նշաններով են բաժանվում գլխաւորից երկրորդական ենթակազ, լրացուցիչ և պարագայական նախադասութիւնները։ Ի՞նչ նշաններով բաժանվում է միջանկեալ նախադասութիւնը գլխաւորից։ Կրճատեալ նախադասութիւնները երբ և ի՞նչ կէտով են բաժանվում գլխաւորից։ Ի՞նչ կէտադրութեան նշաններ գործ են անում բաղադրեալ նախադասութեան մէջ։ Միաւորեալ նախադասութեան մէջ ալ և ալ ենթակաները, ստորոգեալները, լատկացուցիչները և ալն, երբ են բաժանվում միմեանցից ստորակէտով և երբ ոչ։ Ի՞նչ սուանձին նշաններ գործ են անում հարցական, բացազանջական և հրամայական նախադասութիւնների մէջ։

Կարգացէ՛ք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէ՛ք իւրաքանչիւր նախադասութեան տեսակը։ Լուծեցէ՛ք իւրաքանչիւր նախադասութիւնը առանձին, լիչելով նախադասութեան գլխաւոր և երկրորդական անդամները։

Հ Ա Տ ՈՒ Ա ծ Ե Ր Կ Ր ՈՐ Գ

Մասունք—Բանի:

§ 21. ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Տղայք հօթներորդ ամսում ատամ են հանում և ութերորդ տարում փոխում են:

Այս բարդորեալ նախադասութիւնը կազմուած է այլ և այլ բառերից, որոնք զանազան հասկացողութիւններ են պարունակում: Տղայք բառը շնչաւոր առարկայի անուն է, հօթներորդ բառը ցոյց է տալիս թիւ, ամսում—մտաւոր առարկայ, ատամ—նիւթական առարկայ, հանում են—գործողութիւնը, եւ բառը կապում է երկու նախադասութիւն միմեանց հետ. ութերորդ բառը ցոյց է տալիս թիւ, տարում— վերացական առարկայ, փոխում են—գործողութիւն:

Ամենայն նախադասութիւն կազմվում է առանձին բառերից, որոնք զանազան հասկացողութիւններ են պարունակում:

Բառերը իրանց պարունակած հասկացողութիւնների համեմատ՝ այլ և այլ կարգերի են բաժանվում, որոնք քերականութեան մէջ կոչվում են մասունք-բանի, այսինքն՝ խօսքի մասեր:

Ա. Գոյական անուն:

§ 22. ԻՆՁ Է ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ:

Հայկազուն նահապետների ու թագաւորների պատմութեան մէջ ուշադրութեան արժանի են Արամ եւ Տիգրան Ծրուանդեան, երկուսն էլ նշանաւոր իրանց քաջութեամբը, հայրենասիրութեամբը և քաղաքակրթական նպատակներովը:

Այս օրինակի մէջ նշանակած բառերը—նահապետների, թագաւորների, պատմութեան (մ. ջ), ուշադրութեան, Արամ, Տիգրան, քաջութեամբը, հայրենասիրութեամբը, նպատակներովը—նախադասութեան զանազան անդամների պաշտօն են վարում: (Առձեցէք այս նախադասութիւնը և ցոյց տուէք թէ ինչ պաշտօն են վարում նշանակած բառերը): Բայց ըստ նշանակութեան, այդ բառերը այլ և այլ առարկաների անուններ են. այսպէս օրինակի համար՝ մինը կոչվում է նահապետ, միւսը— թագաւոր, երրորդը—Արամ, և այլն:

Իւրաքանչիւր առարկայ ունի իւր առանձին անունը, որ քերականութեան մէջ կոչվում է գոյական անուն:—Նահապետ, պատմութիւն, Տիգրան, նպատակ գոյական անուններ են:

1. Անունեցէք զստատան մէջ գտնուած առարկաները:
 2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւալ գոյական անուններով, և ցոյց տուէք թէ որ առարկաներին տալիս ենք այդ անունները: Գոյական անունների տակ գիծ քաշեցէք:
- Կօշկակար (կօշկակար կոչվում է այն արհեստաւորը, որ ոտնամաններ է կարում): Գերձակ—ժամագործ—վաճառական—հողագործ—նկարիչ—աշակերտ—թանաքաման—աւազաման—թուղթ—գրիչ—քանոն—շուն—ձի—զայլ—մարդ:

§ 23. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

Առհասարակ բոլոր առարկաները երկուսին են բաժանվում. նիւթական և մտաւոր:

Նիւթական կոչվում են այն առարկաները՝ որոնց միմեանցից որոշում ենք մեր հինգ զգայարաններով, այսինքն տեսնելիքով, լսելիքով, շօշափելիքով, հոտոտելիքով և ճաշակելիքով. զորօրինակ. ծառ, զանգակ, քար, ծաղիկ, խնձոր:

Մտաւոր ասիում են այն առարկաները՝ որ շենք տեսնում, շենք լսում, շենք շօշափում և ոչ հոտոտում ենք կամ ճաշակում, այլ միայն մտքով ըմբռնում ենք. ինչպէս. մտածմունք, ապրուստ, իմաստութիւն:

Նիւթական առարկաների մէջ պէտք է զանազանել շքնաւորները անշունչներէց. Առաջինները կարող են իրանց ազատ կամքովը մէկ տեղից միւսը շարժուիլ. թուշուն, ձուկ, գազան, մարդ. իսկ անշունչ առարկաները չեն կարող իրանց ազատ կամքովը շարժուիլ. քոյս, քար, երկաթ:

Այսպէս և մտաւոր առարկաների մէջ կան այնպիսիները՝ որ թէև միայն մտքով ենք ըմբռնում, բայց առանձին գոյութիւն ունին, ինչպէս. Աստուած, հրեշտակ, հոգի. կան էլ որոնք ուրիշ առարկաներից առած յատկութիւններ ու գործողութիւններ են, և միայն մեր մտքում ներկայանում են մեզ իբրև առանձին յատկութիւններ. այսպէս են՝ քաջութիւն, զօրութիւն, կորուստ, հանգիստ:

Այսպիսի մտաւոր առարկաները կոչվում են նաև վերացական:

1. Ասացէք մի քանի առարկաներ, որ կարող ենք. 1) տեսնել, 2) լսել, 3) շօշափել, 4) հոտոտել, 5) ճաշակել.
2. Ասացէ՛ք մի քանի առարկաներ, որ միայն մտքով կարող ենք ըմբռնել:

§ 24. ՅԱՏՈՒԿ ԵՒ ՀԱՍԱՐԱԿ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ.

Հայոց բուն և նախնական բնակութեան տեղն էր Երասխի և Կուր գետերի մէջ պարունակուած հովիտը, որ նշանաւոր է պատմական յիշատակարաններով: Այդտեղ էր գտնվում Արմաւիր՝

Հայկազանց իշխանների ամրոցանիստը, Արտաշատ քաղաքը՝ Վաղարշապատ կամ Նոր քաղաքը՝ ինչպէս: Այստեղ էր նոյնպէս Շիրակայ բարերեր նահանգը և գինաւէտ Գողթն գաւառը:

Այս օրինակի մէջ Հայոց, Երասխ, Կուր, Արմաւիր, և միւս նշանակած բառերը այնպիսի անուններ են, որ միայն մէկ առարկայի յատուկ ու սեպհական են, այդ անունը կրող ուրիշ առարկաներ չկան: Բայց այդ առարկաները ուրիշ անուններ էլ ունին. արագէս օրինակի համար, Երասխը՝ գետ է, Արմաւիրը՝ քաղաք, Շիրակը՝ նահանգ. միայն գետ, քաղաք, նահանգ՝ այնպիսի անուններ են, որ ուրիշ գետերի, քաղաքների և նահանգների առհասարակ պատկանում են:

Գոյական անունները լինում են յատուկ և հասարակ: Յատուկ կոչվում է այն անունը, որ միայն մէկ առարկայի է պատկանում.— Երասխ, Արմաւիր, Շիրակ յատուկ գոյական անուններ են: ²⁾

Հասարակ ասվում է այն անունը, որ շատ միատեսակ առարկաների է պատկանում.— գետ, քաղաք, նահանգ հասարակ գոյական անուններ են:

Պատահում է երբեմն որ շատ միատեսակ առարկաներ մէկ տեղ հաւարուելով՝ մի ամբողջ են կազմում. ինչպէս գունդ

2) Յատուկ անուններ տալիս ենք անշունչ առարկաներին և մարդկանց: Այս վերջինների յատուկ անունները շատ անգամ միևնոյն են լինում. շատ կան օրինակի համար, Յովհաննէսներ, Տիգրաններ, Շուշաններ. Բայց երբ ասում ենք Յովհաննէս, Տիգրան, Շուշան, մեր աչքի առաջ մի նշանակած անձն ունինք, որ չէ կարելի չփոթել նոյն անունը կրող ուրիշ անձի հետ: Միայն աւելի բացատրութեան համար՝ մարդկանց անունների մօտ աւելացնում են նոցա ազգանունները, երբեմն նաև՝ առաջին, կրկրորդ, Գրիգոր Մանուկեան, Արտաւազ Արտաշեսեան, Խոսրով Ա., Տիգրան Գ.

(զինուորների հաւարում), հօտ (ոչխարների հաւարում), անտառ (ծառերի հաւարում): Այս տեսակ անունները կոչվում են հաւարական:

1. Ո՞րն է ձեր լատուկ անունը և ո՞րն է հասարակը Ո՞րն է ձեր քաղաքի, գետի, գաւառի լատուկ անունը և ո՞րն է հասարակը: Ասացէ՛ք ձեր ծանօթ երկիրների անունները, քաղաքների անունները, գետերի անունները, մարդկանց անունները:

2. Հետեւեալ լատուկ անունների մօտ գրեցէ՛ք նոցա լարմար հասարակ անուններ:

Հալաստան—Անի—Արարատ—Տիգրիս—Սևան—Տրդատ:

3. Հետեւեալ հասարակ անունների մօտ գրէ՛ք նոցա լարմար լատուկ անուններ:

Գիւղ—քաղաք—գաւառ—երկիր—նախնգ—գետ—լիճ—կըղզի—իշխան—թագաւոր—կալսր—կաթուղիկոս—կայսակոպոս:

4. Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբազան և ազգային պատմութիւնից, այլ և այլ լատուկ և հասարակ գոյականներով: Յատուկ անունները գլխատառով գրեցէ՛ք, իսկ հասարակ անունների տակ գրի՛ժ քաշեցէ՛ք:

§ 25. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԹԻԻԸ:

Մարդս մտածող արարած է:

Մարդիկ մտածող արարածներ են:

Առաջին օրինակի մէջ մարդս արարած գոյականները մէկ մէկ առարկայ են ցոյց տալիս, և այս պատճառով կզակի են ղըրուած: Երկրորդ օրինակի մէջ մարդիկ արարածներ գոյականները շատ առարկաներ են ցոյց տալիս, և այս պատճառով յոգնակի են ղըրուած:

Գոյական անունները երկու թիւ ունին՝ կզակի և յոգնակի:

Եզակի թիւը մէկ է ցոյց տալիս, և ղըրծ է ամփում, երբ խօսքը միայն մէկ առարկայի վրայ է:—Մարդ, արարած կզակի են:

Յոգնակի թիւը մէկից աւելի կամ շատ է ցոյց տալիս, և ղըրծ է ամփում, երբ խօսքը մէկից աւելի կամ շատ առարկայի վրայ է:—Մարդիկ, արարածներ յոգնակի են:

Առհասարակ յոգնակի թիւը անորոշ քանակութիւն է ցոյց տալիս, ինչպէս բաժակներ, դահլիճներ, ծակ եթէ կամենում են քանակութիւնը որոշակի լայանել, ղըրծ են ղըրում թիւական անուններ, և այն ժամանակ շատ անգամ գոյականը կզակի վերջաւորութեամբ է մնում, որովհետև յոգնակի միտքը պարունակվում է թուական անուն մէջ. հինգ բաժակ, տասը դահլիճ: Քայց կան անյոգնակի գոյականներ, այսինքն որ միայն կզակի ունին. այսպէս են լատուկ անունները, շատ մտաւոր և մի քանի նիւթական անուններ. ինչպէս. Հայկ, Արտաշատ, Պետր, նախանձ, ալիւր, ձէթ, աղ, մեղր: Այս վերջինները յոգնակի էլ են ղըրծ ամփում, երբ հարկ լինի զանազան տեսակները լայանել. այլարներ (զանազան տեսակ այլար), աղեր (կերակրի, բժշկական և այլն): Ծակ անեզակի բառեր նոր լեզուի մէջ չկան:

1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ կզակի ձևով ասածները յոգնականի փոխեցէ՛ք և յոգնակի ձևով ասածները կզականի:

Աշակերտը պատրաստում է իւր դասը:—Ընկերս կորցրել է իւր գրքերը:—Երէկ մենք ման եկանք պարտէզում:—Այսօր նամակ գրեցի իմ բարեկամին:—Երեխալքը խնձոր են քաղում:—Աղջիկները պոսկներ հիւսեցին:—Գիւղացին գետինը հերկում է:—Մշակները փալտ են կարում:—Չկնօրսները ձուկ են շքում:

2. Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբազան և ազգային պատմութիւնից ձեր ծանօթ առարկաների վրայ՝ կզակի և յոգնակի գոյական անուններով:

§ 26. ՀՈՒՈՎՆԵՐԸ ԵՒ ՆՈՅԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Տիգրան Բ. Ասորոց երկրին տէր դառնալուց յետոյ, իւր յաղթական զօրքերովը հասաւ մինչև Պաղեստին և բազմաթիւ Իսրայելացի գերիներով վերադարձաւ իւր հայրենիքը, որոնց տեղաւորեց Հայաստանի զանազան քաղաքներում:

Այս օրինակի մէջ ալ և ալ գոլականներ կան. *Տիգրան, Ասորիք, Երկիր, զօրք, Պաղեստին, զերի, հայրենիք, Հայաստան և քաղաք:* Եթէ այս բոլոր գոլականները իրանց սկզբնական ձևովը թողնէինք, ոչինչ չէինք հասկանալ: Ինչի համար.— Որովհետև չէինք իմանալ թէ ինչ յարաբերութիւններ ունին միմեանց հետ *Տիգրան, Ասորիք, զօրք, Պաղեստին և մնացած բոլոր առարկաները:* Այդ շարքերութիւնները պարզ երևում են զլիսաօրապէս գոլականների վերջին ծալրին աւելացրած աննշան մասնիկներից կամ վերջաւորութիւններից: Առաջին գոլական *Տիգրան* սկզբնական ձևով է դրած, որովհետև մեր խօսակցութեան զլիսաօր առարկան է և անկախ է միւս առարկաներից. ընդհակառակն միւս բոլոր առարկաները կախումն ունին նորանից, այս պատճառով և մեծ մասը իրանց վերջը զանազան աննշան մասնիկներ են ընդունել, որոնք խօսքի ընթացքի մէջ նշանակութիւն են ստանում: Այսպէս, *Երկիր*-ին ցոյց է տալիս թէ *ինչին* տէր դարձաւ *Տիգրան*. *Ասոր* ոչ—թէ *որ* *Երկիր*-ին. *զօրքեր*—ով ցոյց է տալիս թէ *ո՛ւմնով* *Տիգրան* հասաւ *Պաղեստին*. *նոյնպէս և զերի*—ներով, թէ *ունով* վերադարձաւ իր հայրենիքը. *քաղաք*-ներ ում թէ—*ինչ տեղ* կամ *որտեղում* տեղաւորեց գերիներին և այլն:

Առարկաների մէջ եղած յարաբերութիւնները ցոյց տալու համար՝ գոյական անունները իրանց վերջաւորութիւնները վախտում են, և այդ փոփոխութիւնները քերականութեան մէջ կոչվում են *հոլով*.—*Երկրին, զօրքերով, քաղաքներում* հոլովներ են:

Հայերէն լեզուի հոլովները եօթն են. Ուղղական, Հայցական, Սեռական, Տրական, Բացառական, Գործիական և Ներգոյական:

1. *Ուղղական* հոլովը անուան սկզբնական ձևն է, որ յայտնում է թէ ո՞վ է կամ ինչ է խօսակցութեան առարկան, և այս պատճառով պատասխանում է այս հարցերին. *ո՞վ և ի՞նչ:* Ո՞վ էր ազգի ցեղապետը.—*հայկ:* Ի՞նչ է ոսկին.—*Մետաղ* է,—*հայկ, մետաղ,* ուղղական հոլովներ են:

Ուղղականի նման է *կոչական* ասած հոլովը, որ միևնոյն հարցերին է պատասխանում (*ո՞վ և ի՞նչ*) և միայն նշանակութեամբ է դանդաղանվում նորանից, այսինքն *եթէ* ուղղականի ձևով բառը նախադասութեան մէջ ոչ ենթակայ է և ոչ ստորոգեալ, կոչական բառ է:

2. *Հայցական* հոլովը ցոյց է տալիս գլխաւորապէս թէ մէկ առարկայ ուրիշ առարկայի գործողութեանն է ենթարկվում և պատասխանում է հետեւեալ հարցերին. *ո՞ւմ և ի՞նչ:* Ո՞ւմ նպանեց *Կայէն*.—*Արէլին:* Ի՞նչ գտաւ *Գոլմբոսը*.—*Ամերիկան:*—*Արէլին, Ամերիկան,* հայցական հոլովներ են:

3. *Սեռական* հոլովը ցոյց է տալիս թէ մէկ առարկայ *ո՛ւմն* է կամ ինչից է առաջ գալիս, *սերվում* է, և պատասխանում է այս հարցերին. *ո՞ւմ և ինչի՞* կամ *ինչ քանի:* Ո՞ւմն է այս պատկերը.—*Հօրեղբօրս:* Ի՞նչ բանի տերները շորացան.—*Ծառերի:*—*Հօրեղբօրս, ծառերի* սեռական հոլովներ են:

4. *Տրական* հոլովը ցոյց է տալիս գլխաւորապէս թէ մէկ բան ո՛ւմն են ընծայում, *տալիս,* և պատասխանում է այս հարցերին.—*ո՞ւմ և ինչի՞* կամ *ինչ քանի:* Ո՞ւմ շնորհեց *Վաղարշակ* թագադրութեան իրաւունքը:—*Բագրատունեանց նախարարներին:* Ի՞նչ բանի արժանի է ծոյ աշակերտը:—*Պատժի:*—*Նախարարներին, պատժի* տրական հոլովներ են:

5. *Բացառական* հոլովը ցոյց է տալիս թէ մէկ տեղից հեռանում ենք, կամ մէկից մէկ բան ենք ընդունում, և պատասխանում է այս հարցերին. *ումի՞ց, ինչի՞ց* կամ *ո՞րտեղից:* Ո՞ւմից ստացաւ *Պարոյր* թագաւորական թագը.—*Կիաքսարից:* Ո՞րտեղից գաղթեցան *Մամիկոնեանք*.—*Չինաստանից:*—*Կիաքսարից, Չինաստանից* բացառական հոլովներ են:

6. *Գործիական* հոլովը ցոյց է տալիս թէ ումնով, ում ձեռքով կամ ի՞նչ գործիքով կատարվում է գործողութիւնը, և

պատասխանում է այս հարցերին, ո՞ւմնով կամ ո՞ւմ ծեռով
և ինչո՞ւմ: Ո՞ւմնով են միխթարվում ծնողը.—Իրանց զաւակ-
ներով: Ի՞նչով են գրում մարդիկ.—Գրչով կամ մատիտով:—
Զաւակներով, գրչով, մատիտով գործիական հոլովներ են:

7. Ներգոյական հոլովը ցոյց է տալիս թէ սրտեկ է կա-
տարվում գործողութիւնը, և պատասխանում է այս հարցե-
րին. *ինչո՞ւմ, ո՞րտեղո՞ւմ*: Ինչո՞ւմ են լողում ձկները.—*Ջրում*:
Ո՞րտեղ կամ *ո՞րտեղումն* են սովորում աշակերտները.—*Ու-*
սումնարանում:—*Ջրում, ուսումնարանում* ներգոյական հո-
լովներ են:

Եթէ հոլովների վրայ ուշադրութիւն դարձնենք, կը տեսնենք որ մի
քանի հոլովների համար միևնոյն հարցերը և հարցերի հետ միևնոյն
վերջաւորութիւնները գործ են անում. աչապէս անշունչ առարկա-
ների համար վարտող ինչ հարցը գործ է անում ուղղականի,
միանգամայն և հալցականի համար, որոնք միմեանց նման են,
այսինքն անուան սկզբնական ձևովն են գրվում. ուժ և ինչի վա-
րում են սեռականի և տրականի համար, որոնք նոյնպէս մի-
մեանց նման են վերջաւորութեամբ: Նոյն ուժ հարցը գործ է գրվում
և հալցականի համար, երբ խօսքը մարդկանց անունների վրայ
է, և այն ժամանակ հալցականը սեռականի և տրականի նման է
վերջաւորութեամբ: Այս նոյնավերջ հոլովները միմեանցից որոշելու
միայն մի հնարք կայ— քննել թէ նոյնից իւրաքանչիւրը ինչ պաշ-
տօն է վարում և՛ կամ ինչ մտքով է նախադասութեան մէջ:

Հետեւի հարցերի պատասխանները գրեցէք աչապէս, որ
կատարեալ նախադասութիւններ կազմուին: Յետոյ իւրաքանչիւր
գոյականի հոլովն ու թիւը նշանակեցէք համառօտ կերպով:

Ո՞վ է մեր ազգի ցեղապետը.—Ո՞ւմ լանձնեց Սկայորդին իւր
խիւանութիւնը: Ո՞ւմ երեցեալ Աստուած Քորեք սարի վրայ: Ո՞ւմից
ստացար այս գիրքը:—Ո՞վքեր տիրում են այսօր Հայաստանին:—
Ո՞վ էր վաղաբալակ:—Ո՞ւմ ձեռքով շինուեցաւ Արտաշատ քաղաքը:—
Ի՞նչ է երկաթը:—Ի՞նչ է ծաղկում գարնանը և չորանում աշնանը:—

Ի՞նչ շնորհեց Աստուած Իսրայելացոց Մովսէսի ձեռով:—Ի՞նչ է
լուս ապլիս ցերեկով և ինչ՞ գիշերով:—Ինչի՞ դռները բաց են:—
Ինչին դիպաւ ճաւր ու խորտակուեցաւ:—Ինչի՞ց են հանում ջու-
րը:—Ո՞րտեղից գաղթեցաւ Հայկ նահապետը:—Ինչո՞վ են փորում
հողը:—Ինչո՞վ են եփում միսը:—Ինչո՞ւմ են բնակվում քաղաքա-
ցիք:—Ինչո՞ւմ են քնակվում գիւղացիք:

§ 27. ՀՈՒՈՎՈՒՄ:

Գոյական անունները փոփոխվում են՝ 1) հոլովով և 2)
թուով: Այս փոփոխումը կոչվում է հոլովում: Զորօրինակ.

Եզ. Թիւ:

Ժուլը մեծ է քան թէ յցամաքը:	Ո. Ծով
Կուր դետը թափվում է Կասպից ծովը:	Հ. Ծով
Ժովի ջուրը աղի ու դաւն է:	Ս. Ծովի
Ժովին կգած ցամաքը կոչվում է ափ:	Տ. Ծովի
Ժովից անդադար բարձրանում է գոլորշի:	Բ. Ծովից
Ժովով պատած ցամաքը կոչվում է կղզի:	Գ. Ծովով
Կետերը բնակվում են ծովում:	Ն. Ծովում

Յոգն. Թիւ:

Ժովերը հեշտացնում են մարդկանց հաղորդակցութիւնը: Ո. Ծովեր
Ծովագնացները շատ նոր ցամաքներ ու ծովեր գտան: Հ. Ծովեր
Մր քանի ծովերի ափերը անմերձեցել են: Ս. Ծովերի
Մեծամեծ ծովերին ովկանիոս են ասում: Տ. Ծովերի
Ժովերից ամէն տեսակ խոշոր ձկներ են դուրս գալիս: Բ. Ծովերից
Շատ երկիրներ ծովերով են միանում: Գ. Ծովերով
Եւրոպական ծովերում շատ կան: Ն. Ծովերում

Գրեցէք մի քանի նախադասութիւններ այլ և այլ գոյական անուններով: Յետոյ այդ գոյականները հոլովեցէք եզակի և լոգնակի:

§ 28. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՕՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

Արեգակը փայլում է նախադասութեան մէջ արեգակը գոյական ենթակայ է:

Առիւծը զօրեղ զազան է նախադասութեան մէջ զազան (է) գոյականը ստորոգեայ է:

Փոռի կնճիթը երկար ու կախ ընկած է նախադասութեան մէջ փոռի գոյականը յատկացուցիչ է:

Տրդատ թագաւորը քաջ ու առաքինի մարդ էր նախադասութեան մէջ թագաւորը գոյականը Տրդատ լատուկ անուան քացայայտիչ է:

Բնութիւնը թռչուններին թեւեր է պարզելել օդում թռչելու համար: Այս նախադասութեան մէջ թռչուններին թեւեր գոյականները լրացուցիչ են, իսկ օդումը պարագայական ըստ:

Գոյական անունը նախադասութեան մէջ լինում է՝ ենթակայ, ստորոգեալ, յատկացուցիչ, քացայայտիչ, լրացուցիչ և պարագայական ըստ:

1. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ գոյականները լինին:

1) Ենթակայ. — սենեակ — սեղան — զրքեր — տետրակներ — քանոն — գիւղ — քաղաք — սար — ձոր — աղբիւր — զետ — ծով — անձրեւ — ձիւն — ցօղ — Հայկ — Վարդան — Արարատ: 2) Ստորոգեալ — քար — մետաղ — բոլս — ծաղիկ — ծառ — անասուն — թռչուն — վաճառական — պատկերահան — երաժիշտ:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ գոյականները լինին:

1) Ենթակայ. — ընկեր — քոյր — եղբայր — հայր — մայր — պապ — թոռ — հօրեղբայր — մօրաքոյր — Արամ — Տիգրան: 2) Բացայայտիչ — աշակերտ — վարժապետ — մօրեղբայր — հօրաքոյր — իշխան — թագաւոր — կալս — նախարար — վարդապետ — եղիսկոպոս — կաթուղիկոս:

3. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ գոյականները լրացուցիչ լինին՝ իբրև պատասխան:

1) Ո՛ւմ, ի՞նչ հարցերին. — հայր — որդի — երեխայ — ծնող — Յիսուս — Վաղարշակ — դաս — տետրակ — զորեւ — ալիւր — կտաւ — կօշիկ:

2) Ո՛ւմ, ի՞նչ հարցերին. — ընկեր — բարեկամ — հարեան — աշակերտ — վարձատրութիւն — պատիժ:

3) Ո՛ւմից, ի՞նչից հարցերին. — եղբայր — քոյր — հայր — մօրաքոյր — բարեկամ — վտանգ — նեղութիւն — ծուլութիւն:

4) Ումն՞ով, ինչն՞ով. — դուստր — փեսայ — դուակ — Մովսէս — Գրիտոս — զրիչ — կնքամոմ — կացին — բահ — դութան — մանգաղ — ասեղ — ջուր — սպասն:

4) Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ գոյականները պարագայական ըստ լինին:

Սենեակ — տուն — փողոց — անտառ — դաշտ — շաքաթ — ամիս — տարի — տաքութիւն — ցուրտ — անձրեւ — ձիւն — ընթերցանութիւն — գրութիւն — նկարչութիւն:

Կրկնութիւն. Ի՞նչից է կազմվում ամենայն նախադասութիւն: Ի՞նչ է նշանակում մասունք-քանի: Ի՞նչ է գոյական անունը: Առարկաները քանի տեսակի են բաժանվում: Ո՞ր գոյականը կոչվում է լատուկ և որը հասարակ: Ի՞նչ է հաւաքական գոյական անունը: Գոյական անունները քանի թիւ ունին և որոնք են: Ի՞նչ է հոլովը: Հալերէն լեզուն քանի հոլով ունի: Կրկնեցէք իւրաքանչիւր հոլովի նշանակութիւնը: Ի՞նչ է հոլովումը: Հոլովեցէք մի բառ եզակի և լոգնակի: Ի՞նչ պաշտօն է վարում գոյական անունը նախադասութեան մէջ:

Կարգացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք թէ իւրաքանչիւր գոյականը ի՞նչ տեսակ է, ի՞նչ պիտի առարկայի անուն է, ի՞նչ թուով ու հոլովով է գործ դրած, ի՞նչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ ալ և ալ զօրական անուններով: Յետոյ այդ զօրականները հոլովեցէք եզակի և լոգնակի:

§ 28. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՕՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

Արեզակը փայլում է նախադասութեան մէջ արեզակը գոյական ենթակայ է:

Առիծը զօրեղ զազան է նախադասութեան մէջ զազան (է) զօրականը ստորոգեայ է:

Փղի կնճիթը երկար ու կախ ընկած է նախադասութեան մէջ փղի զօրականը յատկացուցիչ է:

Տրդատ թագաւորը քաջ ու առաքինի մարդ էր նախադասութեան մէջ թագաւորը զօրականը Տրդատ լատուկ անունն քացայայտիչ է:

Բնութիւնը թռչուններին թեւեր է պարզելու օդում թռչելու համար: Այս նախադասութեան մէջ թռչուններին թեւեր զօրականները լրացուցիչ են, իսկ օդումը պարագայական ըստ:

Գոյական անունը նախադասութեան մէջ լինում է՝ ենթակայ, ստորոգեալ, յատկացուցիչ, քացայայտիչ, լրացուցիչ և պարագայական բառ:

1. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ զօրականները լինին:

1) Ենթակայ. — սենեակ — սեղան — գրքեր — տետրակներ — քանոն — դիւղ — քաղաք — սար — ձոր — աղբիւր — զետ — ծով — անձրև — ձիւն — ցօղ — Հայկ — Վարդան — Արարատ: 2) Ստորոգեալ — քար — մետաղ — բոլս — ծաղիկ — ծառ — անասուն — թռչուն — վաճառական — պատկերահան — երաժիշտ:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ զօրականները լինին:

1) Յատկացուցիչ. — ընկեր — քոյր — եղբայր — հայր — մայր — պապ — թոռ — հօրեղբայր — մօրաքոյր — Արամ — Տիգրան: 2) Բացայայտիչ — աշակերտ — վարժապետ — մօրեղբայր — հօրաքոյր — իշխան — թագաւոր — կայսր — նախարար — վարդապետ — եպիսկոպոս — կաթողիկոս:

3. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ զօրականները լրացուցիչ լինին՝ իբրև պատասխան:

1) Ո՞ւմ, ի՞նչ հարցերին. — հայր — որդի — երեսուցի — ծնողք — Յիսուս — Վաղարշակ — դաս — տետրակ — ջորեն — ալիւր — կտաւ — կօշիկ:

2) Ո՞ւմ, ի՞նչի հարցերին. — ընկեր — բարեկամ — հարեան — աշակերտ — վարձատրութիւն — պատիժ:

3) Ո՞ւմից, ինչից հարցերին. — եղբայր — քոյր — հայր — մօրաքոյր — բարեկամ — վտանգ — նեղութիւն — ծուլութիւն:

4) Ումնով, ինչով. — դուտր — փեսայ — դուակ — Մովսէս — Գրիստոս — գրիչ — կնքամոմ — կացին — բահ — դաթան — մանգաղ — ասեղ — ջուր — սագոն:

4) Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ զօրականները պարագայական բառեր լինին:

Ահնեակ — տուն — փողոց — անտառ — դաշտ — շաքաթ — ամիս — տարի — տաքութիւն — ցուրտ — անձրև — ձիւն — ընթերցանութիւն — գրութիւն — նկարչութիւն:

Կրկնութիւն. Ինչից է կազմվում ամենայն նախադասութիւն: Ի՞նչ է նշանակում մասունք-քանի, Ի՞նչ է զօրական անունը: Առարկաները քանի տեսակի են բաժանվում: Ո՞ր զօրականը կոչվում է լատուկ և որը հասարակ: Ի՞նչ է հաւաքական զօրական անունը: Գոյական անունները քանի թիւ ունին և որոնք են: Ի՞նչ է հոլովը: Հայերէն լեզուն քանի հոլով ունի: Կրկնեցէք իւրաքանչիւր հոլովի նշանակութիւնը: Ի՞նչ է հոլովումը: Հոլովեցէք մի բառ եզակի և լոգնակի: Ի՞նչ պաշտօն է վարում զօրական անունը նախադասութեան մէջ:

Կարդացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք թէ իւրաքանչիւր զօրականը ինչ տեսակ է, ինչպիսի առարկայի անուն է, ինչ թուով ու հոլովով է գործ դրած, ինչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ:

Բ. Ածական անուն:

§ 29. ԻՆՉ Է ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ.

Անին, Բազրատունեաց աթոռանիստը, մեծ ու զեղեցիկ քաղաք էր, ամուր պարսպով ու քարձր աշտարակներով պատած:

Այս օրինակի մէջ բոլոր նշանակած բառերը առարկաների ալ և ալ յատկութիւններն են ցոյց տալիս ու որոշում են նոցա ուրիշ նորմատեսակ առարկաներից: Այսպէս՝ մեծ, զեղեցիկ բառերը գրուելով քաղաք գոյականի մօտ՝ ցոյց են տալիս նորա որպիսի լինելը և որոշում են նորան փոքր ու տզեղ քաղաքից. ամուր բառը գրուելով պարսպով գոյականի մօտ՝ զանազանում է նորան թոյլ պարսպից. քարձր գրուելով աշտարակ գոյականի մօտ՝ զանազանում է նորան ցածր աշտարակից:

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների յատկութիւնները, կոչվում են **ածական անուն**—մեծ, զեղեցիկ, ամուր, քարձր ածական անուններ են:

Ածական բառը կազմուած է հին ածել բառից, որ նշանակում է բերել.—որովհետև ածականը բերվում է ու գրվում է գոյականի մօտ:

1. Ի՞նչ յատկութիւններ կարող են ունենալ հետեւեալ առարկաները

Փիրք—գրիչ—թուղթ—թանաք—սեղան—աթոռ—ճրագ—դանակ—զգալ—աղուկ—ոչխար—առիւծ—մարդ—հող—քար—ձառ—փայտ—ցերեկ—գիշեր—հողագործ—վաճառական—աշակերտ—երաժիշտ—նկարիչ:

2. Ի՞նչ առարկաների կարող են պատկանել հետեւեալ յատկութիւնները:

Սպիտակ—կարմիր—կապուտ—փալլուն — արթուն — պինդ — կարծր—թանձր—աւազոտ—տղմոտ—արծաթէ—պղնձէ—երկաթէ — սոկէ—բարի—խեղճ—բնական—հանճարեղ:

3. Փրեցէք մի քանի նախադասութիւններ և զործ գրէք հետեւեալ գոյականները ածականների հետ:

Ջանասէր աշակերտ—ծուլ աշակերտ—բարի մարդ—աւազոտ հող—սև հող—կարմիր վարդ—պարզ երկինք—ամպած օր—մութ գիշեր—մանրամասն նկարագրութիւն—կարճառօտ պատմութիւն:

§ 30. ՅԱՏՈՒԿ ԵՒ ՀԱՍԱՐԱԿ ԱԾԱԿԱՆՆԵՐ.

Պիրենեան լեռները բաժանում են Փրանսիան Սպանիայից:—Փրանսիային օրերը զուարճալի են:

Առաջին օրինակի մէջ Պիրենեան ածականը աջնպիսի յատկութիւն է ցոյց տալիս, որ միայն նշանակած լեռների սեպական է: Երկրորդի մէջ զարնանային ածականը աջնպիսի յատկութիւն է ցոյց տալիս, որ ուրիշ շատ առարկաների կարող է պատկանել, զոր օրինակ, կարող ենք ասել զարնանային եղանակ, զարնանային անձրև, զարնանային ծաղիկ և այլն:

Ածական անունները գոյականների պէս լինում են յատուկ և հասարակ:

Յատուկ ածական անունը ցոյց է տալիս այնպիսի յատկութիւն, որ միայն մէկ առարկայի է պատկանում. իսկ հասարակ ածական անունը ցոյց է տալիս այնպիսի յատկութիւն, որ կարող է շատ առարկաների պատկանել:—Պիրենեան յատուկ ածական անուն է, զարնանային—հասարակ:

Ինչպէս որ հասարակ գոյականները մականուն դասնայով յատուկ անուն նշանակութիւն են ստանում.—ինչպէս՝ Աշոտ Երկաթ, Արտաշէս Մանուկ,—այսպէս և հասարակ ածականները մի մասնաւոր առարկայի յատկութիւն ցոյց տալով յատուկ ածական անուն նշանակութիւն են ստանում. ինչպէս՝ նոր Աշխարհ, Կարմիր ծով, Արագածեցիկ, Ռիքարդ Ասիւծասիրտ:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբադան և արտաքին պատմութիւնից լատուկ ամական անուններով:

§ 31. ՈՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ.

Երկրագունդը այնպէս հարթ ու հաւասար չէ, ինչպէս մի որ և իցէ քարէ գնդակ:

Այս օրինակի մէջ հարթ ու հաւասար ամականները այնպիսի լատութիւն են ցոյց տալիս, որ երկրագունդ առարկայի ընտելանից առնուած է, իսկ քարէ և սպակէ ամականները ցոյց են տալիս թէ ինչ յարաբերութիւն ունի գունդ առարկան քարի ու սպակիի հետ, այսինքն թէ քարից, սպակիից է շինած: Այսպէս, երբ ասում ենք՝ զնդնցիկ լեզու, լաւ ժամացոյց, զնդնցիկ եւ լաւ ամականները ցոյց են տալիս լով թէ ինչպիսի են լեզուն և ժամացոյցը, իսկ եթէ ասենք՝ հայկական լեզու, ոսկի ժամացոյց, հայկական ցոյց է տալիս թէ լեզուն ունի է պատկանում, ոսկի թէ ինչից է շինած ժամացոյցը:

Ամականները իրանց ցոյց տուած լատութիւններին նայելով՝ երկուսի են բաժանուում. որակական և յարաբերական:

Որակական ամականը ցոյց է տալիս ամականի այն որպիսութիւնը, որ նորա բնութիւնից առնուած է, իսկ յարաբերական ամականը ցոյց է տալիս մէկ առարկայի ունեցած յարաբերութիւնը ուրիշ առարկայի հետ, այսինքն՝ նիւթը ինչից շինուած է, ում պատկանելը, ժամանակը ու տեղը, թէ ե՛րբ կամ ո՛րտեղ է գտնվում առարկան: — Հարթ, հաւասար որակական ամականներ են. — քարէ, սպակէ — յարաբերական:

Որակական և յարաբերական ամականների մէջ եղած մէկ մեծ դասադասութիւնն էլ այն է, որ առաջինների ցոյց տուած լատութիւնը կարող է աւելի կամ պակաս երեւել առարկայի մէջ. ինչպէս՝ Այս պարտէզը գեղեցիկ է, երկրորդը աւելի գեղեցիկ է, իսկ յարաբերական ամականների ցոյց տուած լատութիւնը չէ կարող ոչ աւելանալ, ոչ պակասիլ. չէ կարելի ասել աւելի սպակէ գունդ, աւելի հայկական լեզու:

1. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւալ որակական ամականներով, որոնք իրարու հակառակ որպիսութիւններ են ցոյց տալիս:

Աշխատասէր — ծուլ (Աշխատասէր աշակերտը կը վարձատրուի, իսկ ծուլը կը պատժուի): Մեծ — փոքր, երկար — կարճ, լայն — նեղ, բարձր — ցածր, հաստ — բարակ, ծեր — երիտասարդ, բարի — չար, զօրաւոր — տկար, հարուստ — աղքատ, սաք — սառն, ցամաք — թաց, ծանր — թեթեւ, սուր — բութ, հաւատարիմ — անհաւատարիմ:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւալ յարաբերական ամականներով և ցոյց տուէք ամականների նշանակութիւնը:

Փայտէ կլամ՝ փայտի — երկաթէ կլամ՝ երկաթի — արծաթէ կլամ՝ արծաթի — պղնձէ — քարէ — չողէ — կաւէ — ալսօրուսն — երէկուան — վաղուան կլամ՝ էղուցուան — ալժմեան — աշնանային — հալրական — որդիական — եղբայրական — բարեկամական — ընկերական — հակական:

§ 32. ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱՍԽԻՃԱՆՆԵՐԸ:

Իւրաքանչիւր առարկայի որպիսութիւնը երեք կերպով կարող է համեմատուիլ ուրիշ առարկաների որպիսութեան հետ: Այս երեք կերպ համեմատութիւնից առաջ են գալիս որակական ամականների համեմատութեան աստիճանները:

Համեմատութեան աստիճանները երեք են. դրական, ըստղատական եւ զերառական:

Դրական աստիճանը առարկայի որպիսութիւնը պարզապէս յայտնում է, առանց բաղդատելու նորան ուրիշ առարկաների հետ: Այս ծառը մեծ է: Արշակը աշխատասէր աշակերտ է: Վազրը կատաղի գազան է:

Բաղդատական աստիճանը երկու առարկայ իրարու հետ համեմատում կամ բաղդատում է, ցոյց տալով մէկի որպիսու-

Թեան առաելութիւնը կամ նուազութիւնը. Տիգրանը աւելի աշխատասէր է քան թէ Արշակը: Գարնանը ու աշնանը կզանակը աւելի անհատատ է քան թէ ամառն ու ձմեռը:

Գերադրական աստիճանը ցոյց է տալիս՝ թէ մէկ առարկայ որպիսութեան կողմից բոլոր իւր նման առարկաներից գերազանց կամ ստոր է: Ամենաըարժը լեռները յաւիտենական ձիւնով պատած են: Կոլիբրին ամենափոքր թռչունն է:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ բազդատական և գեղարական ածականներով աշխարհագրութիւնից, սրբազան և ազգային պատմութիւնից և ձեր ծանօթ անձերի ու առարկաների վրայ:

§ 33. ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՅՈՒՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷջ:

Բարի գործը անվարձ չի մնալ նախադասութեան մէջ ըարի ածականը գործ գոյականի յատկացուցիչն է:

Երկիրս կլոր է նախադասութեան մէջ կլոր (է) ածականը ստորոգեալ է:

Հարուստները օգնում են աղքատներին նախադասութեան մէջ հարուստները և աղքատներին ածականները գոյականաբար են վարուած և այս պատճառով առաջինը ենթակայի, իսկ երկրորդը լրացուցի պաշտօն են վարուած: Ո՞վ է օգնում աղքատներին.—Հարուստները. (այսինքն հարուստ մարդիկը): Ո՞ւմ են օգնում հարուստները.—Աղքատներին. (այսինքն աղքատ մարդկանց):

Ներսէս Մեծը բազմաթիւ հիւանդանոցներ հիմնեց կաղերի, ըորոտների և ամէն տեսակ հիւանդների համար: Այս նախադասութեան մէջ կաղերի, ըորոտների և հիւանդների ածականները նույնպէս ցոյց են տալիս գործողութեան նպատակը, ուրիմն պարագոյական բառեր են:

Ածական անունը նախադասութեան մէջ լինում է վերաբերակէս յատկացուցիչ, երբեմն էլ ստորոգեալ: Բարի գործը անվարձ չի մնալ: Հայաստանի օդը ըստնխառն է:

Բայց երբ որ ածականը գոյականի մտքով է վարվում, կարող է լինել ենթակայ, լրացուցիչ և պարագայական ըստ: Կուշտը քաղցածին մանր է բրդում (լրաց.): Ներսէս Մեծը բազմաթիւ հիւանդանոցներ շինեց կաղերի, ըորոտների և ամէն տեսակ հիւանդների համար (պար. բառեր):

Կրկնութիւն. —Խնչ է ածական անունը: Ո՞ր ածականը կոչվում է լատուկ և ո՞րը հասարակ: Խնչ դանազանութիւն կալ որակական և լարաբերական ածականների մէջ: Քանի աստիճան ունին որակական ածականները և ո՞րոնք են:

Կարգացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք թէ իւրաքանչիւր ածական ինչ տեսակ է, լատուկ թէ հասարակ, որակական թէ լարաբերական: Ցոյց տուէք թէ իւրաքանչիւր ածական ինչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ:

Գ. Բար:

§ 34. ԻՆՉ Է ԲԱՅՐ:

Աշակերտները նստած են դաստան մէջ և իրանց դասերը պատրաստում են:

Այս բաղադրեալ նախադասութեան մէջ նստած են ստորգեալը ցոյց է տալիս՝ թէ ինչ զրուածեան մէջ են աշակերտները (նստած են և ոչ թէ կանգնած). իսկ պատրաստում են ստորգեալը ցոյց է տալիս թէ ինչ գործողութիւն են կատարում աշակերտները:

Եյն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկայի գործողութիւնը կամ զրուածիւնը, կոչվում են ըայ:—Նստած են, պատրաստում են բայեր են:

Հայերէն բառ արմատ է բան, բառ բառերի և նշանակում է խօսք կամ ասացում, որովհետեւ բայը ցոյց է տալիս թէ առարկան ինչ է անում և թէ ինչ կարող են ասել նորա վրայ:

1. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ բայերով և ասացէք թէ որ բառերը գործողութիւն են ցոյց տալիս և որոնք զրուածիւն:

Սողալ—լողալ—թռչել—վազել—գնալ—զբօնել—պառկել—նստել—քնել—սովորել—հաջել—ոռնալ—մլաւել—բառանչել—մուրնչալ—խրխնջալ—բզզալ—երգել—խօսել—մտածել—գրել—կարդալ:

2. Ի՞նչ գործողութիւններ կարող են կատարել և ինչ զրուածեան մէջ կարող են զանուիլ հետեւեալ առարկաները:

Արեգակ—լուսին—աստղեր—ծով—գետ—ցամաք—ծառ—ձի—կով—ոչխար—ձուկ—ճանճ—հաւ—սոխակ—աշակերտ—վարժապետ—հողագործ—գերձակ—կօշկակար—գօրավար:

§ 35. ԲԱՅԵՐԻ ՍԵՌԸ:

Կեսարը յաղթեց Պոմպէոսին: Պոմպէոսը յաղթուեցաւ Կե-

սարից: Երեք հարիւր Սպարտացի քաջութեամբ զնացին Պարսից դէմ և բոլորն էլ ընկան իրանց հայրենիքի ազատութեան համար:

Առաջին նախադասութեան մէջ յաղթեց բայը ցոյց է տալիս Կեսարի գործողութիւնը, որ անցնում է Պոմպէոսի վրայ: Երկրորդ նախադասութեան մէջ յաղթուեցաւ բայն աչնպիսի գործողութիւն է ցոյց է տալիս, որ Պոմպէոսը կրում է ուրիշից: Երրորդ օրինակի մէջ զնացին բայը ցոյց է տալիս աչնպիսի գործողութիւն, որ չէ անցնում ուրիշ առարկայի վրայ, այլ մնում է ներգործողների (Սպարտացոց) մէջ: իսկ ընկան բայը ոչ աչնպիսի գործողութիւն է ցոյց տալիս, որքան մի լոկ զրուածիւն: Արեմն բայերը զանազան տեսակ գործողութիւն են ցոյց տալիս և ալ գործողութեան զանազանութիւնը քերականութեան մէջ կոչվում է սեր:

Բայերը երեք սեռ ունին. ներգործական, կրատրական և չէզոք:

Ներգործական բայը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ անցնում է ուրիշ առարկայի վրայ:—Յաղթեց ներգործական բայ է:

Կրատրական բայը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ մի առարկայ կրում է ուրիշ առարկայից:—Յաղթուեցաւ կրատրական բայ է *):

Չէզոք բայը ցոյց է տալիս առարկայի զրուածիւնը, կամ այնպիսի գործողութիւն, որ չէ անցնում ուրիշ առարկայի վրայ, այլ գործողի մէջ է մնում:—Գնացին, ընկան չէզոք բայեր են:

*) Ներգործական խօսքի մէջ միշտ երկու առարկայ կայ: մինը գլխաւոր (ենթակայ), որ զրվում է միշտ ուղղական հոլովով, իսկ միւսը երկրորդական (լրացուցիչ), որ զրվում է հայցական հոլովով: Տիգրանը նուաճեց Ասորոց երկիրը նախադասութեան մէջ Տիգրանը ուղղական հոլով է, երկիրը հայցական:

Կրատրական խօսքի կազմութիւնը ներգործականի հակառակն է, բայց միտքը մէկ է. միննուն է ասել Տիգրանը նուա-

Տեց Ասորոց նրկիրը, և Ասորոց նրկիրը նուաճեցաւ Տիգրանից կամ Տիգրանի ծնող: Այս օրինակից երևում է թէ՛ 1) երբ ներգործական բաւը կրաւորականի է փոխվում, ենթական դառնում է լրացուցիչ, և լրացուցիչը ենթական: 2) թէ՛ ամենայն ներգործական բաւ ունի իր կրաւորականը:

1. Հետեւեալ նախադասութիւնների մէջ ներգործական բաւերը կրաւորականի փոխեցէք, աչնպէս որ ամբողջ նախադասութիւններ կազմուին: Կրաւորական բաւերի տակ գիծ քաշեցէք:

Մեղուները մեզր են շինում: (Մեղրը շինվում է մեղուներից): Կատուն մուկ է բռնում:—Սուրբ Մեսրոպը դտաւ հայերէն լեզուի տառերը:— (Սահակ Պարթեւը Սուրբ Գիրքը հայերէն թարգմանեց:— Կայէն սպանեց Աբէլին:— Անտոնիոսն Արտաւազդին գերի տարաւ Եգիպտոս:— Պատմաբանները ասում են թէ՛ Հաւոց նախարարները թունաւորեցին Տրդատին:

2. Հետեւեալ նախադասութիւնների մէջ կրաւորական բաւերը ներգործականի փոխեցէք: Ներգործական բաւերի տակ գիծ քաշեցէք:

Երկիրը ծածկուեցաւ ձիւնով: Երկինքն ու երկիրը ստեղծուեցան Աստուածանից:— Գալիլիան նուաճեցաւ Էսաբի ձեռով:— Յովսէփ Գեղեցիկը ծախուեցաւ իւր եղբայրների ձեռով:— Երուսաղէմը պաշարուեցաւ և առնուեցաւ Տրտոսի ձեռով:— Ժան Գ' Արքը ալրուեցաւ Ռուան քաղաքումը Անգլիացոց ձեռով:

3. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ չէղոք բաւերով:

Նստել—կանգնել—վազել—սառկել—քնել—լուսալ—վախենալ—ամաչել—ուրախանալ—նայել—զողալ—աղաղակել—լուել—ծիճաղել—լալ:

§ 36. ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ:

Երեկոյեանները լաւ է գնալ փոքր խնջ գրօսներու:

— Տիգրանը գնաց պարտէզ. գնացէք և դուք, ասաց մայրը Արշակին:

— Ես կը գնայի, պատասխանեց Արշակը, և թէ՛ գրելու բան չունենայի:

— Կըստասեմ քեզ մինչև գրելը աւարտես, ասաց Ռուբէնը, որ միտսին գնանք:

Այս օրինակի մէջ ենթակաների գործողութիւնը զանազան նշանակներով կամ ձևերով է բացատրուած: Առաջին օրինակի մէջ գործողութեան լոկ անունը գրուած է, առանց չափոնելու թէ ով է ներգործում կամ երբ: Երկրորդ լոկ անունը գրուած է, առանց անել երեկոյեանները:— գրօսներու գնալ: Երկրորդ օրինակի մէջ որոշակի պատմում է թէ ինչ արաւ Տիգրանը:— գնաց պարտէզ: Երրորդի մէջ մայրը հրամայելով ասում է Արշակին և Ռուբէնին:— գնացէք և դուք: Չորրորդի մէջ Արշակը պայմանով է չափոնում իր խօսքը:— Ես կը գնայի, և թէ՛ գրելու բան չունենայի: Վերջապէս հինգերորդ նախադասութեան մէջ Ռուբէնը չափոնում է իր ցանկութիւնը Արշակի հետ միասին գրօսներու:— Կը սպասեմ, ասաց Ռուբէնը, որ միտսին գնանք:

Առարկաների գործողութեան վրայ խօսելիս՝ մենք կարող ենք նոցա գործողութեան լոկ անունը տալ, կամ որոշակի մի բան պատճել նորա վրայ, կամ հրամայել, խնդրել որ գործողութիւնը կատարուի, կամ պայմանով յայտնել գործողութիւնը, կամ վերջապէս անորոշ խօսել, յայտնելով մեր կասկածը, ցանկութիւնը գործողութիւնը կատարելու մասին: Սորանից առաջ են գալիս բայերի հինգ նշանակները, կամ միտք յայտնելու ձևերը. անորոշ, սահմանական, հրամայական, պայմանական և ստորադասական:

1. Անորոշ եղանակը բայի սկզբնական ձևն է, ինչպէս ուղղական հոլովը գոյականների մէջ: Այս եղանակով առարկայի գործողութեան լոկ անունը յիշվում է, առանց որոշելու

Թէ ո՞վ կամ երբ է ներգործում. այս պատճառով էլ կուշվում է անորոշ: Գնալ անորոշ եղանակ է:

2. Սահմանական եղանակը որոշ պատճառով է՝ թէ ինչպէս է կատարվում, կատարուել է կամ պիտի կատարուի առարկայի գործողութիւնը:—Գնաց սահմանական եղանակ է:

Եյս եղանակը ունի երեք ժամանակ, երեք դէմք և երկու թիւ:

3. Հրամայական եղանակը յայտնում է խօսողի հրամանը կամ խնդիրը, խորհուրդը, որ գործողութիւնը կատարուի:—Գնացէ՛ք հրամայական եղանակ է:

Եյս եղանակը ունի մէկ ժամանակ և մէկ դէմք—երկրորդը, որովհետև չի կարելի որ մարդ ինքն իրան հրամայէ, այլ միայն նորան՝ ում հետ խօսում է:

4. Պայմանական եղանակը խօսքը պայմանի տակ է գրնում, յայտնելով թէ գործողութիւնը կարող էր կատարուիլ, բայց մի որևիցէ պատճառով չէ կատարուել:—Ես կը գնայի պայմանական եղանակ է:

Եյս եղանակը ունի երկու ժամանակ, երեք դէմք և երկու թիւ:

5. Ստորադասական եղանակը յայտնում է խօսողի կատարածը, ցանկութիւնը գործողութեան կատարուելու մասին:—Կըստական որ միայն գնանք նախադասութեան մէջ որ գնանք ստորադասական եղանակ է:

Եյս եղանակը ունի շարս ժամանակ, երեք դէմք և երկու թիւ:

1. Յոյց տուէք Տեսեալ բաբերի եղանակները:
Իմէլ—կեր—քննել—գրոնում էր—կը կարգամ—կը գրէի...
Եթէ—արի—գալիս եմ—աղօթել—աղօթում է—նալում ենք—նալէ—

նա կամենում է որ ես խօսիմ—կարծեմ եթէ նոքա գնան—նա կը գար... եթէ տեսնել—տես—տեսաւ—գալ—ելէք—եկան:

2. Հետեալ նախադասութիւնների մէջ գտէք բաբերի եղանակները. յետոյ նոցանից նոր նախադասութիւններ կազմեցէք մնացած շարս եղանակներով: Ահաւասիկ մէկ օրինակ: Պէտք է հաց ուտել. (Անորոշ եղ.): Ես հաց եմ ուտում. (Սահմանական եղ.): Հաց կէ. (Հրամայական եղ.): Ես հաց կ'ուտէի, եթէ քաղցած լինէի. (Պայմանական եղ.): Գրիգորը ցանկանում է որ իր հետ հաց ուտեմ. (Ստորադասական եղ.):

Տիրանը լաւ է սովորում.— Մենք կարդում ենք ալդ գիրքը.— Դու չը սովորեցիր քո դասը.— Նա ամեն օր ուսումնարան է գնում:

§ 37. ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ:

Արշակը նամակ է գրում:—Արշակը նամակ գրեց:—Արշակը նամակ կը գրէ:

Առաջին նախադասութեան մէջ խօսքը այժմեան կամ ներկայ ժամանակի վրայ է, երկրորդի մէջ—անցած ժամանակի վրայ, երրորդի մէջ—ապագայ կամ ապանի ժամանակի վրայ:

Ամենայն գործողութիւն կատարվում է մի որևիցէ ժամանակ. այդ ժամանակները երեք են. ներկայ, անցեալ և ապանի:

Ներկայ ժամանակը ցոյց է տալիս թէ գործողութիւնը այժմ է կատարվում:—Գրում է ներկայ ժամանակ է:

Անցեալը ցոյց է տալիս թէ գործողութիւնը անցեալումն է կատարուել:—Դրեց անցեալ ժամանակ է:

Ապանին ցոյց է տալիս թէ գործողութիւնը յետոյ պիտի կատարուի:—Կը գրէ ապանի ժամանակ է:

1. Հետեալ նախադասութիւնների մէջ ցոյց տուէք բաբերի ժամանակները:

Ռուբէնը սխոր լաւ է պատասխանում.— Տիգրանը էգուց պարզն կըստանայ:— Երէկ մենք ձուկ բռնեցինք:— Վաղը մենք գիւզ կը գնանք:— Ասոր բոլոր օրը անձրև է գալիս:— Շուշանը սիրում է երաժշտութիւն:— Աշնանը մրգեր կը հասնին:— Ելակը անտառումն է բունում:— Գիւղացիք խոտը հնձեցին:— Գիշերը մութ կը լինի:

2. Հետեւալ նախադասութիւններից նոր նախադասութիւններ կազմեցէք անցեալ և ապառնի ժամանակներով:

Իմ եղբայրը սովորում է ազգային պատմութիւն:— Այս աշակերտը լաւ է նկարում:— Մարիամը գեղեցիկ է գործում:— Իմ ընկերները գնում են ուսումնարան:

3. Ասացէք մի քանի նախադասութիւններով. 1) թէ ինչ էք անում այժմ, 2) թէ ինչ էք արել երէկ և 3) թէ ինչ կ'անէք երեկոյան կամ էգուց:

§ 38. ԲԱՅԻ ԴԷՄՔԵՐԸ,

Ամենայն խօսակցութեան համար երեք բան է հարկաւոր. նախ՝ պէտք է որ մէկը խօսի, երկրորդ՝ հարկաւոր է որ մէկ ուրիշն էլ լինի նորան լսող. վերջապէս մի երրորդ առարկայ էլ է հարկաւոր, որի վրայ կարելի լինի մի բան ասել: Սորանից առաջ են գալիս բայի երեք դէմքերը, որոնք որոշվում են միմեանցից առանձին վերջաւորութիւններով:

Առաջին դէմքով գրվում է խօսող անձը և նորա գործողութիւնը: Ես գիրք եմ կարդում:

Երկրորդ դէմքով գրվում է նա՝ ում հետ առաջինը խօսում է: Դու նամակ նս գրում:

Երրորդ դէմքով գրվում է ա՛ն անձը կամ առարկան, որի վրայ խօսվում է: Աշակերտը դաս է պատրաստում: Վարդին ծաղկում է:

Բայց պատահում է երբեմն որ գործողը անյայտ է մնում,

և այն ժամանակ բայերը գրվում են երրորդ դէմքով՝ որ այս պատճառով կոչվում են միադէմ կամ ռիմազուրկ բայեր՝ ինչպէս. Լուսանում է: Միժնում է: Մնձրնում է:

1. Հետեւալ նախադասութիւնների մէջ ցոյց տուէք բայերի դէմքերը և միւս դէմքերի փոխեցէք:

Ես գնում եմ զբօսնելու:— Դու կը գնաս ուսումնարան:— Նա նկարում է:— Իմ եղբայրը սովորում է Ֆրանսերէն:— Նորա ընկերը լաւ է կարդում:— Մեր բարեկամը սրինգ է անում:— Արշակը երաժշտութիւն չէ իմանում:

2. Ասացէք մի քանի նախադասութիւններով. 1) թէ ինչ էք անում սովորաբար առաւօտ ու երեկոյ, 2) թէ ինչ էք անում ուսումնարանում և 3) թէ ինչ էք անում դասերից լիտոյ:

3. Ասացէք ձեր ընկերներից մէկին՝ 1) թէ ինչ է անում այժմ, 2) թէ ինչ չէ իմանում և 3) թէ ինչպէս պէտք է վարէ իրան դասատան մէջ:

4. Ասացէք մի բան ձեր ազգականների, ծանօթների և ընկերների վրայ:

§ 39. ԲԱՅՆՐԻ ԹԻՒԸ,

Բայերը անունների նման երկու թիւ ունին. եզակի և յոգնակի:

Եզակին ցոյց է տալիս մէկի գործողութիւնը: Ըսւնը հաջում է: Չկնորսը ձուկ է քոնում:

Յոգնակին ցոյց է տալիս մի կամ անկի առարկաների գործողութիւնները:— Էները հաջում են: Չկնորսները ձուկ են քոնում:

1. Հետեւալ նախադասութիւնների մէջ գտէք իւրաքանչիւր բայի ժամանակը, դէմքը և թիւը: Յետոյ եզակի նախադասութիւնները լոգնակի փոխեցէք, իսկ լոգնակիները՝ եզակի:

Մենք երէկ գնացինք թատրոն:— Ես նամակ կը գրեմ:— Դուք

պատրաստեցիք ձեր դասը:—Նա լաւ չէ նկարում:—Աշակերտը
կորցրել է իւր գիրքը:—Երեխայքը միտք են քաղում:—Աղջիկները
փնջեր են շինում:—Մշակները փայտ են կտրում:

2. Հետեալ եղակի գոյականների մօտ մի մի բալ զրէք ներկայ
ժամանակում, աչնպէս որ նախադասութիւններ կազմուին: Յետոյ
ալդ եղանակի նախադասութիւնները լոգնակիի փոխեցէք:

Մուկ — կատու — քաղաք — հաւ — ձի — կով — երեխայ — աշակերտ —
ընկեր — բարեկամ — մարդ:

3. Հետեալ լոգնակի գոյականների մօտ մի մի բալ զրէք ներկայ
ժամանակում: Յետոյ ալդ նախադասութիւնները եզականի փոխեցէք:

Տները — ծառերը — թռչունները — չորքոտանիքը — գազանները —
ձիաները — խնձորները — տանձերը — դեղձերը:

§ 40. ԽՈՆԱՐՀՈՒՄ:

Բայերը փոփոխվում են՝ 1) եզանակներով, 2) ժամանակներով, 3) դէմքերով և 4) թուով: Բայերի այս փոփոխութիւնը կոչվում է խոնարհում: Զորօրինակ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ:

Ներկայ ժամանակ

Եզակի թիւ

- | | |
|-------------------------|-------------------|
| Ես գիրք եմ կարդում. | 1. ես կարդում եմ |
| Դու գիրք ես կարդում. | 2. դու կարդում ես |
| Նշքալրս գիրք է կարդում. | 3. նա կարդում է. |

Յոգնակի թիւ

- | | |
|-----------------------------|---------------------|
| Մենք գիրք ենք կարդում. | 1. մենք կարդում ենք |
| Դուք գիրք էք կարդում. | 2. դուք կարդում էք |
| Նշքալրներս գիրք են կարդում. | 3. նոքա կարդում են. |

Անցեալ ժամանակ

Եզակի թիւ

- | | |
|----------------------|-----------------|
| Ես գիրք կարդացի. | 1. ես կարդացի |
| Դու գիրք կարդացիր. | 2. դու կարդացիր |
| Նշքալրս գիրք կարդաց. | 3. նա կարդաց |

Յոգնակի թիւ

- | | |
|---------------------------|-------------------|
| Մենք գիրք կարդացինք. | 1. մենք կարդացինք |
| Դուք գիրք կարդացիք. | 2. դուք կարդացիք |
| Նշքալրներս գիրք կարդացին. | 3. նոքա կարդացին |

Ապստնի ժամանակ

Եզակի թիւ

- | | |
|-------------------------|------------------|
| Ես գիրք կը կարդամ. | 1. ես կը կարդամ |
| Դու գիրք կը կարդաս. | 2. դու կը կարդաս |
| Նշքալրս գիրք կը կարդայ. | 3. նա կը կարդայ |

Յոգնակի թիւ

- | | |
|----------------------------|--------------------|
| Մենք գիրք կը կարդանք. | 1. մենք կը կարդանք |
| Դուք գիրք կը կարդաք. | 2. դուք կը կարդաք |
| Նշքալրներս գիրք կը կարդան. | 3. նոքա կը կարդան |

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզակի թիւ

- | | |
|--|--------------------|
| Ես գիրք կը կարդայի, եթէ ժմեկ. ունենայի. | 1. ես կը կարդայի |
| Դու գիրք կը կարդալիր, եթէ ժմեկ, ունենալիր. | 2. դու կը կարդալիր |
| Նշքալրս գիրք կը կարդար, եթէ ժմեկ, ունենար. | 3. նա կը կարդար |

Յոգնակի թիւ

Մ. գիրք կը կարդայինք, եթէ ժմեկ. ունենալին: 1. մենք կը կարդայինք
Գ. գիրք կը կարդայինք, եթէ ժմեկ. ունենալին: 2. զուք կը կարդայինք
Եղբ. գիրք կը կարդայինք, եթէ ժմեկ. ունենալին: 3. նոքա կը կարդայինք

Ս Տ Ո Ր Ա Դ Ա Ս Ա Կ Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Եզակի թիւ

- Պէտք է որ ես գիրք կարդամ: 1. որ ես կարդամ
- Պէտք է որ զու գիրք կարդաս: 2. որ զու կարդաս
- Պէտք է որ եղբայրս գիրք կարդայ: 3. որ նա կարդայ

Յոգնակի թիւ

- Պէտք է որ մենք գիրք կարդանք: 1. որ մենք կարդանք
- Պէտք է որ զուք գիրք կարդաք: 2. որ զուք կարդաք
- Պէտք է որ եղբայրներս գիրք կարդան: 3. որ նոքա կարդան

Ջ Ր Մ Մ Ա Յ Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Եզակի թիւ

Եղբայր, գիրք կարդա: կարդա

Յոգնակի թիւ

Եղբայրներ, գիրք կարդացէք: կարդացէք

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետեւեալ
բառերը գործ դրուին բոլոր ժամանակներով, 3 ղէմքով ու 2 թուով,
և չետոյ իւրաքանչիւր բառ առանձին խոնարհեցէք:

Գրել — սովորել — նկարել — ուտել — խմել — տալ — լուստել —
հաջնուիլ — շինել — փակել

§ 41. ԲԱՅԵՐԻ ՊԱՇՏՈՆԸ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

Օձերը սողում են նախադասութեան մէջ սողում են բայը
ստորոգեալ է:

Աշխատելը օգտակար է նախադասութեան մէջ աշխա-
տել բայը աշխատութիւն կամ աշխատանք գոյականի տեղ է
վարուած, և այս պատճառով ենթակայի պաշտօն է վարում. Ի՞նչ է
օգտակար — աշխատելը — աշխատութիւնը:

Ես սիրում եմ աշխատել նախադասութեան մէջ աշխա-
տել բայը նույնպէս գոյականի մտքով է վարուած և լրացնում է
սիրում եմ բառի միտքը. Ի՞նչ եմ սիրում ես. — աշխատել:

Աշխատելու ժամանակ պէտք է աշխատել նախադա-
սութեան մէջ աշխատելու բայը նույնպէս գոյականաբար է վար-
ուած և յատկացուցի պաշտօն է վարում.

Մարդիկ ստեղծուած են աշխատելու համար նախադա-
սութեան մէջ աշխատելու բայը ցոյց է տալիս գործողութեան
նպատակը, ուստի և պարագայական բառ է:

Բայց նախադասութեան մէջ իսկապէս ստորոգեալ է
լինում, ինչպէս. Օձերը սողում են:

Բայց շատ անգամ բայը գոյական, երբեմն նաև ածա-
կան անուան մտքով է վարվում, և այն ժամանակ լինում է
ենթակայ, լրացուցիչ, յատկացուցիչ եւ պարագայական բառ:

Այսպիսի ղէպքերում վարվում է անորոշ եղանակը:

Աշխատելը օգտակար է (ենթ.): Ես սիրում եմ աշխա-
տել (լրաց.): Աշխատելու ժամանակ պէտք է աշխատել (պոյ.
յատկ.): Խեղճերը ուտելու հաց չունին (ած. յատ.): Մարդիկ
ստեղծուած են աշխատելու համար (պարագ.):

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ բայերը լինին՝ 1) ստորոգեալ, 2) ենթակալ, 3) շատկացուցիչ, 4) լրացուցիչ և 5) պարագայական բառեր:

Կրկնութիւն.— Ի՞նչ է բայը: Քանի սեռ ունին բայերը: Քանի եղանակ ունին: Քանի ժամանակ ունին: Քանի դէմք ունին: Քանի թիւ ունին: Ի՞նչպէս են փոփոխվում բայերը: Խոնարհեցէք մի բայ: Ի՞նչ պաշտօն են վարում բայերը նախադասութեան մէջ:

Կարգացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք խրաքանչիւր բայի սեռը, եղանակը, դէմքն ու թիւը: Յոյց տուէք թէ խրաքանչիւր բայ ինչ պաշտօն է վարում նախադասութեան մէջ:

Գ. Մակրայ:

§ 42. Ի՞նչ է ՄԱԿՐԱՅ:

Արշակը միշտ լաւ է պատրաստում իր դասերը:

Այս օրինակի մէջ նշանակած բառերը ցոյց են տալիս Արշակ ենթակալի գործողութեան հանգամանքները կամ պարտղանքը. միշտ ցոյց է տալիս թէ ԱՐՔ Արշակը պատրաստում է իր դասերը, ԼԱՎ — թէ ինչպէս է պատրաստում:

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների գործողութեան կամ գրութեան զանազան հանգամանքները, կոչվում են մակրայ.— միշտ, լաւ մակրայինք են:

Մակրայ նշանակում է բայի վրայ գրուող բառ: Քայց երբեմն մակրայը գրվում է անականի և նոյն իսկ մակրայի վրայ՝ ինչպէս. Գրիգորը սաստիկ անհամբեր տղայ է: Մտիւնները շատ լաւ են երգում:

§ 43. ՄԱԿՐԱՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

Մակրայները իրանց նշանակութեան համեմատ այլ և այլ

տեսակների են բաժանվում, որոնցից գլխաւորներն են. տեղական, ժամանակական, որակական և քանակական:

Տեղական մակրայները ցոյց են տալիս գործողութեան տեղը. ինչպէս. ո՞ր, հետո, մօտիկ, այստեղ, այնտեղ և այլն:

Ժամանակական մակրայները ցոյց են տալիս գործողութեան ժամանակը. ե՞րբ, այժմ, յետոյ, երէկ, այսօր:

Որակական մակրայները ցոյց են տալիս գործողութեան որակի ստիճանը. ի՞նչպէս, այնպէս, սաստիկ, ըննի, կամայ, ահամայ *):

Քանակական մակրայները ցոյց են տալիս գործողութեան շափն ու թիւը. ո՞րչափ, այսչափ, շատ, սակաւ, մէկ անգամ, երկու անգամ և այլն:

*) Որակական մակրայները, եթէ որակական անականներից են — առաջ եկած, նոյապ պէս ունին համեմատութեան աստիճաններ. ինչ պէս. աւելի (սաստիկ), ամենից վատ (ղրել):

Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ հետեւալ մակրայներով:

- 1) Տեղական. հետո—մօտիկ—ներս—դուրս—վերև—ներքև աջ—ձախ:
- 2) Ժամանակական.—Այսօր—երէկ—էգուց—վաղ—ուշ—միշտ—երբեմն—վաղուց—գիշեր—ցերեկ—օրէցօր—տարէցտարի:
- 3) Որակական. լաւ—վատ—ձրի—կամաւ—չուտ—ընտանեկար—հալիւն—ամենին—բարբառիկ:
- 4) Քանակական. Ո՞րքան—որչափ—աչնքան—ալիչափ—շատ—քիչ—սակաւ:

§ 44. ՄԱԿՐԱՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԸ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

Մակրայները, ինչպէս յայտնի է, նախադասութեան մէջ գործ են անվում միայն իրրև պարագայական բառեր. ինչպէս. Այսօր ես վաղ վեր կացայ: Մենք միշտ հայերէն ենք խօսում:

Մակրայներից լիտոյ գոյական անունները լաճախ վարվում են ալլ և ալլ պարագաներ ցոյց տալու: Մակրայները գոյականներից զանա-

զանեւու մէկ միջոցն այն է, որ նոքա միայն պարագայական բաւեր են լինում, իսկ գոյականները լինում են թէ ենթակայ, թէ լատկացուցիչ և թէ լրացուցիչ:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ աշխարհագրութիւնից, սրբազան և ազգային պատմութիւնից և ձեր ծանօթ սուրբակաների վրայ ալ և ալ մակբայներով:

Կարդացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք մակբայների տեսակները:

Ե. Դերանուն:

§ 45. Ի՞նչ է ԴԵՐԱՆՈՒՆԸ:

—Ո՞վ առաւ իմ զրիչը, հարցրեց Տիգրանը իւր ընկերներին:

—Ես, պատասխանեց Արշակը, իմ՞ը տանը մոռացայ:

Այստեղ առաջին նախադասութեան մէջ ո՞վ բառը հարցական է և զրուած է մարդը գոյականի տեղ. իմ՞ եւ իւր ցոյց են տալիս թէ ո՞ւմն են վերաբ. ու՞ գիրքն ու ընկերները—Տիգրանին: Ես, իմ՞ը զրուած են Արշակ գոյականի տեղ:

Այն բառերը, որոնք գոյական ու ածական անունների տեղ են զրվում, կոչվում են դերանուն: —Ո՞վ, իմ, ես, իւր, իմը դերանուններ են:

Այն դերանունները որ գոյական անունների տեղ են զրվում, ասվում են գոյական դերանուններ. նորա որ ածական անունների տեղ են զրվում—ածական դերանուններ:

Հետեւալ նախադասութիւնների մէջ գոյական անունների տեղ, ուր որ կարելի է, դերանուններ գրէք: Դերանունների տակը գիծ քաշեցէք:

Տիգրանն ու Արշակը գնացին պարտէզ դռաներու: Տիգրանն ու Արշակը սաստիկ թրջուեցան անձրեից, աչնպէս որ Տիգրանն ու Արշակը հիւանդացան:—Շուշանը աշխատասէր աղջիկ է, բայց Շուշանը իւր ընկերներից լիտ է մնացել, որովհետև Շուշանը երկար ժամանակ տկար է եղել: Մեր հայրն ու մայրը մեծ խնամք ունին մեզ վրայ, մեր հայրն ու մայրը մեծացնում են մեզ, մեր հայրն ու մայրը կերակրում են մեզ, մեր հայրն ու մայրը հազցնում են մեզ, մեր հայրն ու մայրը կրթութիւն են տալիս մեզ:—Վարդան Մամիկոնեանը եկաւ Տղմուտ գետի ափը Վարդան Մամիկոնեանի զօրքով և կռուեցաւ Պարսից զէմ:

§ 46. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

Դերանունները իրանց նշանակութեանը նայելով այլ և այլ տեսակների են բաժանվում, հարցական, անձնական, ցուցական, ստացական, յարաբերական և անորոշ:

1. Հարցական դերանունները գործ են ասվում իբրև հարցմունք գոյական և ածական անունների տեղ, ուստի և լինում են.

- 1) Գոյական. ո՞վ:—Ո՞վ է այս մարդը:
- 2) Ածական ո՞ր, ո՞րպիսի:—Ո՞ր պարտէզը զնանք:
- 3) Ածական և գոյական միանգամայն. ի՞նչ:—Ի՞նչ ես կամենում (գոյ.): Ի՞նչ փոյթ. ի՞նչ վիաս. ի՞նչ օգուտ (ած.):

2) Անձնական դերանունները անձերի տեղ են զրվում և գործ են ասվում խօսակցութեան մէջ:

Ես, մենք գործ են զրվում խօսող անձերի անուան տեղ և կոչվում են անձնական դերանուններ առաջին դէմքի:— Ես եմ յարութիւն և կեանք, ասաց Քրիստոս: Մենք բոլորս էլ մի հասարակաց հօր որդիք ենք:

Դու, զուր զործ են զրվում այն անձի անուան տեղում հետ առաջինը խօսում է:

Դուք էք աշխարհի լոյսը:

Ինքը, իրանք զործ են զրվում այն անձի անուան տեղում վրայ խօսվում է:

Իրանք են իրանց թշուառութեան պատճառը:

Ենձնական դերանունները միշտ գոյական են:

3. Յուցական դերանունները զործ են զրվում առարկաները ու նոցա որպիսութիւնները ցոյց տալու համար, ուստի և լինում են.

1) Գոյական. սա, դա, նա:—Ո՞վ է սա որ քամին էլ, ծովն էլ հնազանդվում են սորան:

2) Ածական. այս, այդ, այն. այդպիսի, այնպիսի, այսքան, կամ այսչափ, այդչափ, այնքան:

Սա, դա, նա և այս, այդ, այն ցուցական դերանունները միաբեր մէկ է, բայց առաջինները գոյական են և միշտ մեծակ են վարվում, իսկ երկրորդները ածական են և սովորաբար գոյականների հետ են. չէ կարելի ասել սա մարդը, նա մարդը, բայց պէտք է ասել այս մարդը, այն մարդը: Այս, այդ, այն երբեք գոյականաբար էլ են վարվում: Այդ էր իր ուզածը:

4) Ստացական դերանունները զործ են զրվում ածական անունների տեղ, և յայտնում են թէ մէկ առարկայ նմն է պատկանում. իմ, քո, իւր, մեր, ձեր, իրանց:—Մեր պարտէզը ձեր պարտէզից մեծ է ու զեղեղիկ:

5) Յարաբերական դերանունը մէկ է—որ: Այս դերանունը զործ է զրվում երկրորդական նախադասութիւնը գլխաւորի հետ կապելու և ցոյց է տալիս այն առարկան, որ մեկնվում է երկրորդական նախադասութեամբ:—Այն ջուրը որ ամէն կողմից ցամաքով պատած է, կոչվում է լիճ:

6. Անորոշ դերանունները վարվում են գոյական և ածա-

կան անունների տեղ անորոշ, երբեմն էլ բացառական մըտքով. իւրաքանչիւր, ամէն, միւս, ուրիշ, ոմանք, նոյն, որմին, իքմին, ոչինչ:

Անորոշ դերանունների մեծ մասը թէ՛ գոյականաբար են վարվում և թէ՛ ածականաբար. գոյականաբար են՝ եթէ մեծակ են, ածական են՝ եթէ գոյականի հետ են*):

Իւրաքանչիւր մարդ իր տունը գնաց (ած.): Իւրաքանչիւրը իր տունը գնաց (գոյ.):

*) Այս է պատճառը որ ոմանք միջական անուն են անուանում այս դերանունները:

1. Գրեցէք մի նախադասութիւն հարցական, անձնական և ցուցական դերանուններով:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ ստացական դերանուններով:

3. Գրեցէք մի քանի բաղադրեալ նախադասութիւններ որ լարաբերական դերանունով:

§ 47 ԳԻՄՈՐՈՇ ԿԱՄ ԳԵՐԵՆՈՒԱՆԱԿԱՆ ՅՕԳԵՐ:

Գերանունների երեք արմատական տառերը—ս, դ, ն, (ը) հոլովական բառերի վրայ գրուելով՝ որոշում են նոցա և կոչվում են ղիմորոշ կամ ղերանուանական յօդեր:

Ս որոշում է առաջին ղէմբի վերաբերեալ բանը, դ,— երկրորդ և ն կամ ը երրորդ ղէմբը:

Եթէ դերանուանական յօդը տնձնական դերանուան տեղ կամ նորա հետ զործ ածուի, կոչվում է անձնական յօդինչպէս (ես) ուռույցիչս, (դու) աշակերտդ, (ինքը) տէրը:

Եթէ դերանուանական յօդը ցուցական դերանուան տեղ կամ նորա հետ վարուի, ասվում է ցուցական յօդ: (Այս)՝ մարդս, (այն) այգին:

եթէ դերանուանական յօդը ստացական դերանուան տեղ
կամ նորա հետ վարուի, կոչվում է ստացական յօդ. (իմ)
հարայրս, (քո) քոյրդ, (իւր) ձին:

§ 48. ԴԵՐԱՆՈՒՆԵՐԻ ՊԱՇՏՕՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Դերանունը, իբրև գոյական ու տծական անունների տեղ
վարուող մասն-բանի, նախադասութեան մէջ կարող է լինել
ենթակայ, յատկացուցիչ և լրացուցիչ: Չորօրինակ. Մեղու-
նների փեթակի մէջ կայ մի զլիսաւոր մեղու, որի (յատկ.) իշ-
խանութեան տակ են գանվում միւս ըողոր (ած. յատկ.) մե-
ղուները, նա (ենթ.) չէ աշխատում, այլ միայն ձու է գնում,
որոնցից (լրաց.) նոր մեղուներ են ծնում:

Այս օրինակից երևում է, որ գոյական դերանունները
փոխվում են հոլովով և թուով:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ դերանուն-
ները լինին. 1) ենթակայ, 2) յատկացուցիչ և 3) լրացուցիչ:

Կրկնութիւն. — Ի՞նչ է դերանունը: Ի՞նչպէս են կոչվում
գոյականների տեղ վարուող դերանունները և ինչպէս ածական-
ների տեղ վարուողները: Քանի են բաժանվում դերանունները և
ճորճք են ալդ տեսակները: Ո՞րոնք են դերանուանական յօդերը և
ինչ գործողութիւն ունին: Ի՞նչ պաշտօն են վարում դերանուն-
ները նախադասութեան մէջ:

Կարգացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք
իւրաքանչիւր դերանուան և դերանուանական յօդի տեսակը: Յոյց
տուէք թէ իւրաքանչիւր դերանուն ինչ պաշտօն է վարում:

Զ. Թուական անուն:

§ 49. Ի՞ՆՉ Է ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ ԵՒ ՔԱՆԻ՝ Է ԲԱԺԱՆՎՈՒՄ.

Տարին ունի տասներկու ամիս, ամիսը չորս շաբաթ և
շաբաթն եօթն օր: Առաջին օրուայ անունն է կիրակի, երկ-
րորդինը — երկուշաբթի, եօթներորդինը — շաբաթ:

Առաջին օրինակի մէջ տասներկու ցոյց է տալիս ամիսների
թիւը, չորս՝ շաբաթների թիւը. իսկ եօթն՝ օրերի թիւը: Երկ-
րորդ օրինակի մէջ՝ առաջին, երկրորդ, եօթներորդ, ոչ միայն
օրերի թիւն են ցոյց տալիս, նաև թէ ինչ կարգով հետևում են
միմեանց շաբաթուան օրերը:

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների թիւը,
կոչվում են թուական անուն: Տասներկու, չորս, եօթը, առա-
ջին, երկրորդ, եօթներորդ, թուական անուններ են:

Առարկանները կարելի է թուել երկու նպատակով. այս-
ինքն՝ կամ նոցա թիւը յայտնելու կամ նոցա կարգը, դա-
սը՝ ցոյց տալու համար: Այս պատճառով թուական անուն-
ները երկուսի են բաժանվում:

1. Զանազան, որ առարկաների պարզ թիւն են ցոյց
տալիս: — Տասներկու, չորս, եօթը քանակական թուական
անուններ են:

2. Դասական, որ ցոյց են տալիս թէ առարկաները ինչ
կարգով են հետևում միմեանց: Առաջին, երկրորդ, եօթ-
ներորդ դասական թուական անուններ են:

1. Համարեցէք բոլոր քանակական և դասական թուական
անունները:

2. Հետեալ հարցերի պատասխանները գրեցէք ահպէս որ

ամբողջ նախադասութիւններ կազմուին: Թուական անունների տակը գիծ քաշեցէք:

Քանի ոտք ունի ձին:—Քանի սչք ունի մարդս:—Քանի ամիս ունի տարին, քանի՞ շաբաթ, քանի՞ օր:—Քանի՞ տարեկան էք:—Քանի ժամ կալ օրուան մէջ:—Քանի րոպէ կալ ժամուան մէջ:—Քանիսի՞ն են սկսվում ձեր դասերը, քանիսի՞ն աւարտվում:—Ո՞ր թուականին էք ծնուել:

§ 50. ԹՈՒԱՎԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՏՈՒՆԸ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

Թուական անունները, իբրև հասարակ ածականներ, իսկապէս միմիայն յատկացուցիչ կարող են լինել նախադասութեան մէջ. ինչպէս. *Երկու մարդ հայ ազգի երախտագիտութեան արժանի եկան իբրև հինգերորդ դարու մտաւոր շարժման պարագլուխներ. այդ երկու մարդիկն էին Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը:*

Բայց երբ որ թուական անունը մեռակ է՝ գոյականապէս է վարվում, և այն ժամանակ կարող է ենթակայի, լրացուցիչ և պարագայական բառի պաշտօն վարել. ինչպէս. *Հինգը տասնի կէսն է (ենթ. և լրաց.):* Հայերը քրիստոնէութիւնն ընդունեցին *երեք հարիւր մէկին (պարագ.):*

Այս օրինակներից երևում է որ գոյականապէս վարուող թուականները փոխվում են հոլովով և լծուով:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ քանական և դասական թուական անուններ լինին. 1) յատկացուցիչ, 2) ենթակալ, 3) լրացուցիչ և 4) պարագայական բառի:

Է. ԴԵՐՔԱՅ:

§ 51. ԻՆՉ Է ԴԵՐՔԱՅՆ ԵՒ ԲԱՆԻ Է ԲԱԺԱՆՎՈՒՄ:

Այնպիսի զարմանալի բան իմ օրումը չեմ տեսած:

Տեսած բաներս շատ զարմանալի էին:

Տեսածներս շատ զարմանալի բաներ էին:

Առաջին օրինակի մէջ չեմ տեսած բայ է, երկրորդի մէջ նոյն տեսած բառը ըմբռնլս գոյականի ածական է, երրորդ օրինակի մէջ տեսածներս ենթակալ է և գոյականի պաշտօն է վարում:

Այն բառերը, որոնք գործ են ածվում իբրև բայ և միանգամայն իբրև գոյական կամ ածական անուն, կոչվում են դերբայ:— Չեմ տեսած բայ է, տեսած (բաներս)—ածական, իսկ տեսածներս գոյական:

Դերբայները չորս են. անորոշ, ներկայ, անցեալ, ապառնի:

1. Անորոշ դերբայը բայի անորոշ եղանակն է, որ հոլովվում է (միայն եզակի*) և յօդ ընդունում, Մենք գիտենք որ հարկաւոր չէ ծուլանալ (բայ): Ի՞նչ օգուտ քեզ ծուլանալուցը (այսինքն՝ ծուլութիւնիցը):

*) Իսկ լոգնականում միայն ուղ. կարող է վարուիլ: Չեմ հասկանում թէ ինչի գնալ զայնքը կտրեցիք մեր տանից:

Ներկայ դերբայը իբրև բայ օգնական բայով է վարվում, իբրև ածական անփոփոխ է մնում, իսկ իբրև գոյական հոլովում է և յօդ ընդունում. ինչպէս. Ես նորա մօտ գնացողը չեմ (փոխանակ՝ ամենին չեմ գնալ): Երէկուան գնացող մարդիկը (կամ՝ երէկուան գնացողները) արդէն յետ դարձան:

3. Անցեալ դերբայը երկու է. 1. ած. և 2. նլ. Ածանցեալը իբրև բայ օգնական բայով է վարվում, իբրև ածական

անփոփոխ է մնում, իսկ իբրև գոյական հոլովում է և յօդ ընդունում. Պատմեմ ձեզ ինչ որ տեսած ու լսած եմ: Պատմեմ ձեզ տեսած ու լսած բաներս, կամ տեսածներս ու լսածներս:

Իսկ ել անցեալը մենակ չէ գործ ամփում, այլ միայն օգնական բայով է վարվում՝ իբրև բայ, և երբէք չէ փոխվում. նամակը կարողացել ու պատասխանն էլ գրել եմ:

Ել անցեալի հին ձևն է եալ, որ ալժմ մի քանի դէպքերում միայն վարվում է ածականաբար. լուսատրեալ ժողովուրդ, անցեալ տարի, ուսեալ մարդ. Հանգուցեալ եւ ննջեցեալ գոչականաբար են վարվում:

4. Ապառնի դերբայը իբրև բայ օգնական բայով է վարվում, իսկ իբրև ածական գոյականի հետ՝ անփոփոխ. ինչպէս. Եյս երեկոյ թատրոն եմ զնալու (բայ): Գիւղ զնալու օրդ իմաց տուր ինձ որ միասին զնանք (ած.):

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ դերբայները գործ դրուին իբրև ածական կամ գոյական անուններ.

Լեւել — լսող — լսած — լսելու: Կնալ — գնացող — գնացած — գնացել — գնալու: Տեսնել — տեսնող — տեսած — տեսել — տեսնելու: Ասել — ասող — ասած — ասել — ասելու: Խօսել — խօսող — խօսած — խօսել — խօսելու: Իմանալ — իմացող — իմացած — իմացել — իմանալու:

Ը. Նախադրութիւն:

§ 52. Ի՞նչ է ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Գրիգորը Յովհաննէսի հետ զնացին պարտէզ կաղնի ծառի տակը հանգստանալու օրական աշխատանքից յետոյ:

Այս օրինակի մէջ զլխաւոր առարկան է Գրիգորը Յովհաննէսի հետ. հետ բառը դրուելով Յովհաննէս բառի մօտ, որ իբր վերջաւորութիւնը փոխել է, ցոյց է տալիս՝ թէ ինչ յարաբերութիւն ունին միմեանց հետ Գրիգորն ու Յովհաննէսը—միասին են: Տակը գրուելով ծառ բառի մօտ՝ ցոյց է տալիս՝ թէ Գրիգորն ու Յովհաննէսը ինչ յարաբերութիւն ունին ծառի հետ—նորա տակը են նստած: Աւերջապէս յետոյ բառը ցոյց է տալիս Գրիգորի ու Յովհաննէսի և աշխատանքի մէջ եղած յարաբերութիւնը:

Եյն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների փոխադարձ յարաբերութիւնները, կոչվում են նախադրութիւն:— Հետ, տակ, յետոյ նախադրութիւններ են:

Արդէն գիտենք (§ 26)—և օրինակից էլ երևում է— որ հոլովներն էլ նախադրութիւնների պէս ցոյց են տալիս առարկաների մէջ եղած յարաբերութիւնները, ուրիմ հոլովների և նախադրութիւնների պաշտօնը միևնույն է, այս պատճառով նախադրութիւնը միշտ հոլով է պահանջում, և միայն այն ժամանակ նշանակութիւն ունի, երբ գոչականի հետ է: Միևնույն օրինակը ցոյց է տալիս որ ոչ նախադրութիւնները առանց հոլովների, և ոչ հոլովները առանց նախադրութիւնների կարող են ցոյց տալ առարկաների մէջ եղած բոլոր յարաբերութիւնները: Հոլովները ցոյց են տալիս առհասարակ առարկաների մէջ եղած ընդհանուր յարաբերութիւնները. իսկ նախադրութիւնները նուցա մասնաւոր յարաբերութիւնները: Այսպէս վերևի օրինակի մէջ եղած հոլովները ցոյց կը տալին մեզ միայն թէ Գրիգորը զլխաւոր առարկայ է, և մնացածները երկրորդական. իսկ նախադրութիւնները բացի սորանցից ցոյց տալին թէ հրտեղ է գտնվում մի առարկայ միաների վերաբերմամբ. միասին, մօտ, տակը, յետոյ և այլն: Նախադրութիւնները բաական չեն առարկաների մէջ եղած բոլոր յարաբերութիւնները բացատրելու, այս պատճառով շատ մակրայներ ու գոչական անուններ գործ են դրվում նախադրութեան մտքով, այսպէս վերևի օրինակի մէջ տակը գոչական անուն է, լետոյ մակրայ:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ հետևեալ բառերը ցոյց տան. 1) ալ և տլ պարագաներ և գործ դրուին մակրայի մտքով, 2) բառերի մէջ եղած յարաբերութիւնները և գործ դրուին իբրև նախադրութիւն.

Մէջ — դուրս — ներս — մտ — հեռու — առաջ — լատու — տակ — վրայ:

Կարգացէք մի քանի հատուածներ ձեր ընթերցարանից և ցոյց տուէք նախադասութիւնները:

Թ. Շաղկապ:

§ 53. Ի՞նչ է ՇԱՂԿԱՊԸ:

Պարսիկները ևւ արաբացիք մեծամեծ հայածանրներ հանեցին հայոց դէմ, ըստ հայերը հաստատ մնացին իրանց հաւատին:

Այդ օրինակի մէջ երկու նախադասութիւն կայ. 1) Պարսիկները և Արաբացիք մեծամեծ հալածանքներ հանեցին Հայոց դէմ. 2) Հայերը հաստատ մնացին իրանց հաւատին. Բայց բառ այդ նախադասութիւնները միմեանց հետ կապում է. նույնիսկ ևւ բառը կապում է երկու ենթակայները (Պարսիկները և Արաբացիք) միմեանց հետ:

Եյն բառերը, որոնք նախադասութիւնները և նախադասութեան անդամները միմեանց հետ կապում են, կոչվում են շաղկապ:— Եւ, ըստ շաղկապներ են:

Շաղկապները կապում են. 1) անկախ նախադասութիւններ մեմեանց հետ. ինչպէս. Ձկները լողում են, իսկ թռչունները թռչում են. 2) երկրորդական նախադասութիւնը զլխաւորի հետ. Մենք գիտենք որ երկիրս կլոր է. 3) միաւորեալ նախադասութեան մէջ երկու միատեսակ անդամներ, այսինքն ենթակայն ենթակաի հետ, ստորոգեալը ստորոգեալի հետ, և այլն. Եուն ու կառուն չարքտանի անասուններ են:

1. Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ շաղկապներով.

Եւ — կամ — որ — թէ — իսկ — բայց — եթէ — թէպէտ, բայց — թէն, այնու ամենայնիւ — եթէ, — ուրեմն — որովհետեւ — վասնզի:

2. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց մէջ շաղկապներ կայն. 1) անկախ նախադասութիւններ միմեանց հետ, 2) երկրորդական նախադասութիւնը զլխաւորի հետ և 3) միաւորեալ նախադասութեան անդամներ:

§ 54. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

Չաղկապները իրանց ընդհանուր նշանակութեան համեմատ՝ երկուսի են բաժանվում. քաղճիւսական ևւ ներճական:

Քաղճիւսական շաղկապները այնպիսի նախադասութիւններ են կապում, որոնք մտքի կողմից իրարու համաձայն են. ևւ, ու, այլև, նաև, միանշամայն, էլ:—Մյսօր իմ բարեկամին տեսայ ու նորա հետ իօսեցայ:

Ներճական շաղկապները այնպիսի նախադասութիւններ են կապում, որոնք մտքի կողմից համաձայն չեն, այլ ներճակ են միմեանց. իսկ, ըստ, այլ, սակայն:—Մարդուս մարմինը մեռնում է, իսկ հոգին կենդանի մնում:

Քերականները ուրիշ այլ ևւ այլ շաղկապներ անուններ են տալիս. ինչպէս են՝ պատճառական (վասն զի, որովհետեւ). թէպէտ (թէ, եթէ), մակարեբական (ուրեմն, այսպէս ուրեմն), մեկնական (այսինքն, այն է) ևւ այլն: Բայց այս երկրորդական բաժանմունքները աւելորդ ծանրարեւութիւն ենք համարում աշակերտներ համար:

Կարգացէք մի հատուած ձեր ընթերցարանից և ցոյց տուէք թէ իւրաքանչիւր շաղկապ ինչ տեսակ նախադասութիւններ է կապում:

Ժ. Չալնարկութիւն:

§ 55. Ի՞նչ է ՉԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ:

Եյն հնչիւններն ու բառերը, որոնք մեր հոգու կրքերն են

արտայայտում, այսինքն՝ դարձանքը, երկիւղը, բարկութիւնը, ուրախութիւնը, ցանկութիւնը և այլն, կոչվում են ճայնարկութիւն. ինչպէս՝ ո՛հ, ա՛խ, վա՛յ, երանի՛ք թէ, ափսո՛ս, մնո՞ք որ:

Չայնարկութիւնները ակամայ ու ընդամենը զգացմունքներ լինելով՝ յաճախ ոչինչ միտք չեն բացատրում, և այսպատճառով նախադասութեան մէջ նշանաւոր տեղ չունին:

§ 56. ՓՈՓՈՒԱԿԱՆ ԵՒ ԱՆՓՈՓՈՒ ՄԱՍՈՒՆՔ-ԲԱՆԻ.

Բանի մասունքը տասն են, որոնցից վեցը փոփոխական են, չորսը անփոփոխ:

Փոփոխական

Անփոփոխ

- | | |
|-------------------|-------------------|
| 1. Գոյական անուն. | 1. Մակբայ. |
| 2. Ածական անուն. | 2. Նախադրութիւն. |
| 3. Գերանուն. | 3. Հաղկապ. |
| 4. Թուական անուն. | 4. Չայնարկութիւն. |
| 5. Բայ. | |
| 6. Գերբայ. | |

Փոփոխական սասանց-բանի փոփոխութիւններն են՝ հոլովում եւ խոնարհում:

Հոլովում են զոյական և ածական անունները, զերանունները և թուական անունները խոնարհում են բայերը՝ հոլովում և խոնարհում ունին միանգամայն զերբայները:

Ամսիկ զարկածիւց . 6

25444400915505 4 254 . 22 ?

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄՈՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՍՏՈՒԳՍԲԱՆՈՒԹԻՒՆ.

Այս մասը որոշակի նպատակով հարմար է կիրառել հարմար դասերում, որտեղ քառերը և հարմար դասերը կամ հարմար:

Ուրեմն քառերը նշանակում են. բայց լեզուի նշանակումը բարձրագույն ցանկացածում են ցուցնում մեջ լուրջ անուն տեսակ նշանակմանից, որովհետև կարող են լուրջ անունաբանության մասերի. Սյուզետ սրբապետի համար Մարդ բառի մեջ խկարելու մէջ նշանակում է լուրջ, բայց այդ նշանակումը կարող ենք ցանկանել անունաբանական նշանակմանից. մ. և. ք. ք.

5 2 1 3 2 5 4 3 2 1

Անունով քառերը արտաբերվում է երկու անգամով և լուրջ անուն է կերպով մաս. 4) և 5) նման.

Բառի այն մասը, որ մէկ անգամով է արտաբերվում, կոչվում է վանկ:—Սենեակ բառը երկու վանկից է կազմուած. 1) սե 2) նեակ:

Մի վանկ ունեցող բառը կոչվում է միավանկ, երկու վանկ ունեցողը՝ երկավանկ, իսկ երեք կամ ավելի վանկ ունեցողը՝ թաղմավանկ. ինչպէս՝ մայր, զաւակ, թարեկամ, խոնարհութիւն:

Իրեցէք 10 միավանկ, 10 երկավանկ և 10 թաղմավանկ բառ:

§ 3. Ի՞նչ է բառը և ինչ է վանկը:

Աշակերտ բառի մէջ առաջին վանկը ա մէկ հնչիւնից է բաղկացած, երկրորդը — շա երկու հնչիւնից, իսկ երրորդը — կերտ չորս հնչիւնից. ա, և հնչիւնները առանձին առած՝ կարող են արտաբերուիլ, իսկ շ, կ, ր, տ հնչիւնները մենակ չեն կարող արտասանուիլ:

Իւրաքանչիւր վանկ բաղկացած է մէկ կամ ավելի հընչիւնից: Այն հնչիւնները, որոնք իրանցից կարող են արտաբերուիլ, ասվում են ծայնաւոր. նորա, որոնք իրանք չիրանցից ձայն չունին ու ձայնաւորների օգնութեամբ են արտասանվում, կոչվում են թաղածայն:—Աշակերտ բառի մէջ ա, Ե ձայնաւոր են, իսկ շ, կ, ր, տ թաղածայն:

Իւրաքանչիւր բառի մէջ որքան ձայնաւոր լինի, այնքան էլ վանկ կունենայ այն բառը: Բայց երբեմն երկու ձայնաւոր միասին մէկ վանկ են կազմում, և այդպիսի վանկերը կոչվում են երկբարբառ:—Համբաւ, անծրել, հիւթ, սուր, կեանք բառերի մէջ աւ, ևւ, իւ, ու, եւ երկբարբառներ են:

կարգացէք ձեր անցկացած հատուածներից մինը և բառերը վանկերի բաժանեցէք:

Յոյց տուէք ձախաւորները, բաղաձայններն ու երկբարբառները:

§ 4. Ի՞նչ է բառը:

Յորեւն բառի ցո ևւ ընն վանկերը առանձին առած ոչինչ միտք չունին, իսկ միասին—ցորեն կոչվում են այն հատիկները, որոնցից շինուած են ալիւր և հաց:

Մէկ կամ ավելի վանկ, որ ինքն իրան մի միտք կամ նշանակութիւն ունի, կոչվում է բառ:—Յո, ընն վանկեր են, իսկ ցորեն բառ:

կարգացէք անցկացած հատուածներից մէկը և մեկնեցէք իւրաքանչիւր բառի ներքին նշանակութիւնը:

§ 5. ՉԱՑՆԱԻՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՈՒ ԿՈՐՈՒՄՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

Սէր բառը փոխուելով սիրել բառի, նորա է ձախաւորն էլ փոխվում է ի:

Անասուն բառը փոխուելով անասնական բառի, նորա ու երկբարբառը բոլորովին անլատացել է:

Բառերը փոխուելու ժամանակ՝ նոցա վերջին վանկի ձայնաւորներից ոմանք փոխվում են ուրիշ ձայնաւորների, երբեմն էլ բոլորովին անյայտանում են:—Սիրել բառի մէջ է փոխուել է ի. անասնական բառի մէջ ու անյայտացել է:

Չայնաւորներն ու երկբարբառները հետեւալ կանոններով են փոխվում.

1. է փոխվում է ի ձայնաւորի, ինչպէս. հանդէս.— հանդիսաւոր, զէնք—զինաւոր:
2. եւ երկբարբառը փոխվում է ւ ձայնաւորի. մատնան—մատնագիր, կեանք—կենդանի:

- 3. Ի՞նչ փոխվում է ու թիւ—թուել, հաշիւ—հաշուատես—
- 4. Ո՞՞՞ փոխվում է ու. լոյս—լուսաւոր—լուսատու:
- 5. Ի՞նչ և Ո՞՞ բոլորովին անյայտանում են. ճշմարիտ—ճշմարտութիւն, սամիկ—սամ'կորէն—սամ'կական—ջուր—ջ'րել, դարուն—դարնանային:

Այս կանոնից խոտորում են ի, ու ձայնաւորով սկսուող միավանկներից ոմանք. իր—իրական, ուխտ—ուխտաւոր:

Իսկ ա, ն, ո, օ ձայնաւորները անփոփոխ են մնում:

Ընտանեկան լեզուի մէջ ա երբեմն անյայտանում է կամ բազմաձայների խառնութիւնը մեղմացնելու համար ը է փոխվում. ինչպէս. շարաթ—շար'թական, քաղաք—քաղ'քըցի. նոչնպէս անյայտանում է երբեմն ե. ա ս ե ղ. աս'զաման:

1. Հետեւեալ բառերից մէկ կամ արեւի բառեր կազմեցէք և ձայնաւորները, վերևի կանոնների համաձայն, փոխեցէք կամ դուրս թողէք.

Պէզ—կէս—տէզ—տէր—օրէնք—պէսպէս: — Սենեակ—կեանք—վարկեան—ատեան—կոխ—հովիւ—պատիւ—անլու—Բոլս—լոյս—գոյն—ծոլլ—համբուլլ—Սիրտ—գիծ—երկինք—երկիր—պարսիկ—Ջուր—սուր—աշուն—տուն—կերակուր:

2. Կտէք թէ ինչ ձայնաւոր կամ երկբարբառ փոփոխուած կամ անյայտացած է հետեւեալ բառերի մէջ.

Գիտել, գիտակ, գիտանոց, ալսպիսի, այնպիսի, որպիսութիւն. կենդանի, կենսատու, կենարար, ատենաբան, ստենակալ, ստենադպիր. թուարսն, թուանան. կոտել, կոտարար, կոտասէր, լուանագէտ, լուանական, լուանարէն. տաճկերէն, տաճկական, տաճկարան. գրել, գրաւոր, գլագէտ, գրակալ. տխրել, տխրութիւն. քնել, քնաթաթախ:

Բ. Բառերի կազմութիւնը և նշանակութիւնը:

§ 6. ԲԱՌԵՐԻ ԱՐՄԱՏԸ:

Շարժ-ուել շարժ-ուն, շարժ-ական, շարժ-ողութիւն բառերի մէջ շարժ վանկը մնում է անփոփոխ:

Բառի այն մասը որ անփոփոխ է մնում և որի մէջ պարունակվում է նորա բուն նշանակութիւնը, կոչվում է արմատ: Շարժ է արմատ շարժել, շարժուն, շարժական, շարժողութիւն բառերի:

Ջառ անգամ ներդաշնակութեան համար արմատի ձայնաւորը կամ երկբարբառը փոխվում կամ դուրս է ընկնում: Այսպէս՝ վերատր, յուսալի, լծել բառերի արմատներն են վէր, յոյս, լուծ:

Կտէք հետեւեալ բառերի արմատները.

Գովեստ, գովելի, գովական. տեսնել, տեսիլ, տեսուչ, տեսարան. փախչել, փախուստ, փախստական. մեռնիլ, մեռել, մեռած, մեռելութիւն. պաշտօն, պաշտպան, պաշտել. գիտնալ, գիտուն, գիտութիւն. խմել, խման, խմիչք. բռնի, բռնաւոր, բռնել. ծնունդ, ծնող, ծնել. գթութիւն, գթալ, գթած. ազնուական, ազնուութիւն, ազնուապետութիւն:

§ 7. ՆԱԽԱՏԻՊ ԵՒ ԱՄՈՆՅԵԱԼ ԲԱՌԵՐ:

Վտանգ արմատական բառ է: Վտանգ-ա-ւոր կազմուած է վտանգ արմատական բառից, վերջու՛՛՛ը ւոր մասնիկն ընդունելով: Անվտանգ կազմուած է նոյն վտանգ արմատականից, սկզբու՛՛՛՛՛՛՛՛՛՛՛՛՛ն ան մասնիկն առնելով:

Արմատական բառը կոչվում է նախատիպ, այսինքն այնպիսի բառ որ իւր սկզբնական տիպը կամ կերպարանքը

անխորհուրդ է պահել:—Վտանգ նախատիպ բառ է: Իսկ եթէ նախատիպ բառը վերջից կամ սկզբից այլ կ'այլ մասնիկներ է ընդունում, ասվում է *ածանցեալ*:—Վտանգաւոր, ան-վտանգ ամանիկալ բառեր են:

Ածանցեալ բառերի կազմութեան համար հետեւեալը պէտք է իմանալ. 1) Եթէ մասնիկը բաղաձայնով է սկսվում, ա-ով կազմում է բառի հետ. իսկ եթէ ձայնաօրով, ուղղակի կազմում է բառին, ինչպէս. ա շ խ ա ր հ-ա-կ-ան, հ-ան ձ-ա-ր-ե-ղ: 2) Եթէ քառք-ի ձայնաօրով վերջանում է,—ի սովորաբար փոխվում է-ե, երբեմն էլ բաց է թողվում, ինչպէս տար-ե-կան, հող-ե-ւոր, թեր' ատ. (փոխանակ' տարիական. թեր-ի-ատ): Խոտորում են որդ-ի-ական և բոլոր ի-ով միավանկները. մ-ի-ակ, թ-ի-ակ, ձ-ի-ւոր: 3) Ք տառը, եթէ միայն արմատական չէ, անցման մէջ զուրա է ընկնում. ինչպէս (փառ-ք) փ ա ո աւ ո ր, (մեղք) մ ե ղ աւ ո ր, անմեղ, (խելք) խ ե լ ա զ ի: Չարտուղում են անշնորք, անխելք, մեղքանալ և այն բոլոր բառերը, որոնց մէջ ք-արմատական է, քաղաք-ական, թք-ք-այլին: 4) Արտուման և փոփոխման կանոնը ճշգրտութեամբ պահվում է:

Աշխատեցէք անցեալ բառեր կազմել հետեւեալ նախատիպ բառերից.

- Աշխարհ — գաւառ — նահանգ — թագ — դէնք — աս — վախ — սրժ — հողի — որդի — եղբայր — մայր — հայր — հիւսիս — արեւելք — պարտէզ — դուռ — նաւ — թռչուն — Շուշան — տեսք — գիրք:

§ 8. ՊԱՐՁ ԵՒ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ.

Հաւատարիմ բարեկամը թանկագին գանձ է մարդու համար:

Բարեկամ բառը կազմուած է երկու նշանակութիւն ունեցող բառերից ու երկու հասկացողութիւն է պարունակում. *բարի և կամ*. այսինքն *բարութիւն կամեցող*: Գանձ բառը ոչ մի բառի հետ կազմուած չէ:

Այն բառը որ ուրիշ բառի հետ բաղադրուած չէ,

կոչվում է *պարզ*: Այն բառը որ երկու կամ աւելի նշանական բառից է կազմուած, կոչվում է *բարդ*:—*Գանձ* պարզ բառ է, *բարեկամ*—բարդ:

Բարդ բառերի կազմութեան մէջ միեւնոյն կանոններն են պահվում որ անցեալ բառերի համար չիշեցինք: Միայն նկատելու է, որ 1. Երբեմն երկու բառ բարդվում են միմեանց հետ առանց ա-ի, ինչպէս ձ ե ո ն տ ու, ար իւ ը-լ ու ա լ: 2. Երբեմն պատահում է ա ի տեղ ու շարկապ գործ դնել. աղ-ու-հաց, կեր-ու-խում: 3. Ու շարկապով բարդուած բառերի մէջ կորուածան կանոնը չէ պահվում. ց ի-բոցան թ. ու. քումոր:

Աշխատեցէք բարդ բառեր կազմել հետեւեալ բառերից. Բարի, սիրտ — սառն, սիրտ — զօրք, գլուխ — զօրք, պետ — փիղ, ոսկր—երկիր, զունդ — քախքր, ձայն—բարձր, հասակ—փօքր, հասակ — անց, դարձ - վար, ցան—գիրք, տուն — ժամ, գիրք:

§ 9. ԲԱՌԵՐԻ ԲՈՒՆ ԵՒ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Սուր դանակ—սուր միտք:

Ի՞նչպէս ենք անուանում այն դանակը որ լաւ է կտրում.— Սուր դանակ, Ի՞նչպէս ենք անուանում այն աշակերտին, որ շուտ քմբռնում և հասկանում է վարժապետի ասածը. Սուր միտք ունեցող կամ *սրամիտ* աշակերտ: Ի՞նչպիսի լատկութիւն է գոյց տալիս սուր բառը, նիւթական թէ վերացական: Ուրեմն *սուր դանակ* խօսքի մէջ *սուր* բառը իր քուն կամ սեպհական մտքով է գործ գրուած: Իսկ *սուր միտք* խօսքի մէջ նոյն *սուր* բառը գոյականի նշանակութիւնը փոխել է և վերացական առարկային նիւթական առարկայի կերպարանք է տուել, որպէս զի աւելի լաւ հասկացուի:

Լեզուի մէջ բառերը գործ են գրվում իրանց ըուն կամ սեպհական նշանակութեամբ և փոխաբերական մտքով:— Սուր դանակ խօսքի մէջ *սուր* բառը սեպհական նշանակութեամբ է գործ անուած, Սուր միտք խօսքի մէջ—փոխաբերական մտքով:

Փոխարեութիւնը առաջ է եկած լեզուի աղքատութիւնից: Լեզուի մէջ աւելի իմաստ կալ քան բառ, և այս թերութիւնները յրացեելու համար, 1. Նիւթական ասարկաների շատկութիւններն ընծալում են վերացական ասարկաներին: Ինչպէս ծառի պտուղ, աշխատութեան պտուղ: 2. Ծնչաւոր ասարկաների շատկութիւններն ու դործողութիւնները ապրիս են անշունչ ասարկաներին և անշունչները շնչաւորներին, այսպէս, Երկինքը տխրում է: Լուսինն ու աստղերը տեսնում են իրանց պտուղները Զրի մէջ: Պրկւս խաւարեցաւ: Վեանքս թագաւորացաւ:

Հետեւեալ օրինակներին մէջ ցոյց տուէք սեպհական և փոխաբերական մտքով գործ դրուած բառերը.

Բուժ կամ գուլ կացին. Բուժ միտք. Սուր կացին. Սուր լիշողութիւն: Վառ կրակ: Վառ երեսկալութիւն: Պտուղ իմաստութեան: Պտուղ գիտութեան: Վարդագոյն ծաղիկ. Վարդագոյն կերպարանք: Լուսաւոր լապտեր. Լուսաւոր միտք: Մարդիկ քնում են. Քնում են երկինքն ու երկիրը: Մոլի ալիքները կատաղում են. Շունը կատաղում է: Անասունը բաց է անում իւր բերանը. Անգղանգը բաց է անում իւր բերանը: Վատուն լափում է կերակուրի միացորդը. Կրակը ամեն բան է լափում: Սարը բարձրացնում է իւր գլուխը:

§ 10 ՆՈՅՆԱՆՇԱՆ ԲԱՌԵՐ:

Ինչպէս ենք անուանում այն մարդուն, որ ծածուկ և առանց մեր կամքի լափչտակում, տանում է մը բան մեզանից, որ իրան չէ պատկանում—Գող: Ինչպէս ենք անուանում այն մարդուն, որ գիշերով մտնում է մեր տունը, կամ ճանապարհին պատահում է մեզ, մեր ունեցածը խլում է և եթէ ընդդիմութիւն ցոյց տանք, պատրւատ է մինչև անգամ գրկել մեզ կեանքից.—Աւազակ: Ինչ նմանութիւն կալ գողի ու աւազակի մէջ.—Յրկուան էլ առանց մեր կամքի լափչտակում են մեր ստացուածքը: Ինչ գանազանութիւն կալ նոցա մէջ: Գողը թաքուն անում է իր գողութիւնը, այնպէս որ մենք չիմանանք. իսկ աւազակը լափտի, համարձակ լարձակվում է մեզ վրայ և մեր կեանքին սպառնում:

Ինչպէս որ միևնոյն բառը այլ և այլ մտքով գործ է անվում, այնպէս էլ երբեմն երկու կամ աւելի բառեր միևնոյն նշանակութիւնն ունին: Այս տեսակ բառերը կոչվում են նոյնանշան.—Գող և աւազակ բառերը նոյնանշան են:

Նոյնանշան բառերը միևնոյն ժամանակ թէ նման են միմեանց և թէ գանազանվում են միմեանցից:

Նոյնանշան բառերի մէջ կալ որ ալլ և ալլ մտքով կարող են վարուիլ, կալ էլ որ միայն մէկ մտքով. այսպէս՝ ասում ենք բարի կամ լատողալ, շար կամ վատ մարդ. բաց չենք կարող սեղ բարի թուղթ, շար գրիչ, այլ լատ թուղթ, վատ գրիչ: Երբեմն մի բառի վրայ իւր նոյնանշանը աւելանում է միայն զարդարանքի համար. ինչպէս, լողնած, դադրած. շէնք, շնորհք. հալիլ, մաշիլ, կամ հալ ու մաշ լինել:

Աշխատեցէք հետեւեալ բառերի նոյնանշանները գտնել.
 Վարժապետ — աշակերտ — միբոգ — անասուն — տունկ — ջերմ — տխուր — տխրել — քանդել — ջնջել — քննել — վերջացնել — գժալ — բանալ:

Գ. Ուղղագրութեան ընդհանուր կանոնները:

§ 11 ԳՐԵՐԸ ԵՒ ՆՈՅԱ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ ՀՆՉԻՆՆԵՐԻՑ:

Լեզուի իւրաքանչիւր հնչիւնը կոչվում է տառ, որ եթէ թղթի վրայ ձևակերպենք, գիր է ասվում: Գրերը առանձին սլայմանական նշաններ են, որ տեսնելով ենք որոշում միմեանցից, իսկ հնչիւնները՝ լսելով:

Հայերէն լեզուն երեսունութ գիր ունի, որոնցից ութը ձայնաւոր. ա, ե, է, ը, ի, ո,ւ,—իսկ երեսունը բաղաձայն. ք, գ, ղ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ժ, ղ, ժ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ո, ս, վ, տ, ը, ց, փ, ք, ֆ:

1—տառը երբեմն ձայնատր է, երբեմն բաղաձայն և երբեմն էլ անձայն. ինչպէս մ ա-լ-ր, լաջողութիւն, կաթսա-լ:

Ուղղագրութեան համար գրերը պէտք է դանդաղանել հինչիւններին, որովհետև հնչիւններն ու գրերը միշտ իրարու նման չեն. արտաբերութեամբ շատ անգամ մէկ հնչիւն ուրիշի է փոխվում, իսկ ուղղագրութիւնը սովորաբար անփոփոխ է պահում բառերի արմատական հնչիւնները: Այսպէս գրում ենք՝ յարմար. գաւակ, մարդ, որդի, եղբայր, բայց կարգում ենք՝ հարմար, գաւակ, մարժ, վօրժի եխպայր:

§ 12. ՁԱՅՆԱԻՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

Ձայնաւորների արտաբերութեան և ուղղագրութեան համար հետեւել կանոնները իմանալու է.

1. Ա և ռ ձայնաւորները բառերի վերջը մենակ չեն մնում, այլ միշտ անձայն յ են ընդունում, ինչպէս վկայ, քահանայ, կը մնայ, դշխոյ, հաճոյ: Խտորում են յատուկ անունները. Յուդա, Ամերիկա. դերանունները. սա, նորաբո, և բայերի հրամայականները. առն, կարգն:

2. Ե և ռ ձայնաւորները բառի վերջը չեն մնում, այլ և փոխվում է է. գորօրինակ. կը գրեմ, կը գրես, կը գրէ: Իսկ օ-ից յետոյ միայն բաղաձայն կարող է լինել. օր, ածն, գրօջ:

Միայն օտար բառերի վերջում կարող է օ մենակ մնալ. Մօռօ, Կոանօ, Անն օ. Թէև այս դէպքի մէջ էլ աւելի ընտիր է համարվում օ փոխել ա յ, մանաւանդ հարմարում. Մուսօւ Մօռոյի. Պոյից գրոյով:

3. Ե և ռ ձայնաւորները բառերի սկիզբը արտաբերվում են իբրև իէ և ուօ, նրկիր, ոսպ. բացի ով, ովկիանոս և առհասարակ օտար բառերը: Իսկ բառերի մէջ

ե և ռ արտաբերվում են կարճ է և օ. ձմեռ, Աւտիրք նորոգել:

Սառջին դէպքում ե-ի ուղղագրութիւնը արտաբերութիւնից պարզ երևում է, իսկ երկրորդ դէպքում բառի քերականական կազմութիւնից: Այսպէս ս-ե ա եւ ս-է-ր նմանձայն բառերից կազմելով ս-ե-բունդ և ս-ի-եյի բառերը. կը տեսնենք որ սառջինը ե-ով գրելու է, իսկ երկրորդը է-ով (Ռ-ի ուղղագրութիւնը միայն երկօրատես կրթութեամբ կարելի է իմանալ):

4. Ե գիրը իրանից յետոյ միայն ա և լ ձայնաւոր կարող է ընդունել և նա, նւ երկբարբառներ կազմել. մանեակ, թնւաւոր:

Մէկ երկու տեղ պատահում է ե-ից յետոյ օ-նօ. նօթը, կարծեօք, արգեօք:

5. Ը ձայնաւորը միայն բաղմավանկ բառերի սկիզբը կարող է լինել. ընտիր, ընդունակ, ըմբռնել, երբեմն ե բառի վերջը, որ նոր լեզուի մէջ փոխուած է ը. մարգը (փոխանակ մարդն), անձը, դառը:

Բառի առաջին վանկի մէջ, ուր երկու կամ երեք բաղաձայն է սրտահում, առաջին բաղաձայնից յետոյ կարճ ը է լսվում, բայց չէ գրվում. հնազանդ (կարգա՝ հընազանդ), դուխ, բրտնել, զրպարտութիւն:

Բառի սկիզբը եթէ ա, զ, շ բաղաձայններից յետոյ ալ, լ, տ, ք, գ պատահի, կարճ ը է լսվում, բայց նոյնպէս չէ գրվում. ինչպէս. սպասել (կարգա՝ ըսպասել), սկիհ, գրադմունք, շտապել:

6. Յ գրից առաջ միայն ա և ռ ձայնաւորները կարող են լինել և ալ, ոյ երկբարբառները կազմել, որոնք բառերի մէջ կարգացվում են իբրև կարճ ի. հայր, եղբայր, երկայն, լոյս, մակշկ: Իսկ բառերի վերջը, ինչպէս ասացինք, յ անձայն է, բացի մի քանի միավանկ շրառերից. հայ, վայ, խոյ:

7. Ի գրից առաջ կարող են միայն ա, ե, ի, ո, ձայնաւորները գալ և աւ, եւ, իւ, ու երկրարբանները կազմել թագաւոր, արեւելք, հիւսիս, ժողովուրդ:

Իւ և ու երկրարբանների արտաբերութեան համար հետեւեալը գիտելու է. Իւ երկրարբանը ի ու է արտաբերվում, եթէ իրանից յետոյ բաղաձայն ունի, և ի վ եթէ բաղաձայն չունի. Մնչպէս հիւր, իւրաքանչիւր հաշիւ, հովիւ և երկրարբանը, եթէ իրանից յետոյ ոչինչ տես կամ բաղաձայն չունենայ, սովորական արտաբերութիւնը պահում է, իսկ եթէ ձայնաւոր, համարեա՛ վ ի ձայն է ընդունում, թթ-տեւ, լ ե գ-ու, լ ե գ-ու-պէս.

Հետեւեալ բառերի մէջ տառասխալները ուղղեցէք.

Եղթա — ընծա — քայնա — հրէա — հըսիա — հետո — նալ — սոցայ — գնայ, — հաւատայ — Եւրոպայ — գնում ե — բրնում ե — Ռուսոսի — Բորգոլից — տերունական — փոխարէն — դենք — էրկինք — էրկիր — սենէակ — որդէակ — արգիօք — սընունդ — սընընդարար — ծընունդ — ծընընդական — հըլու — աղալ — թըթու — թըշնամի — ըսպիտակ — ըզգալունը — դրօտանք — ըշտեմարան — ալիս — ծալիր — ձառագալիթ — մալիր — քուիր — լուիս — ողջին — հանձնել — հառաջաբան — հետադեմ — ագուալ — հալ — հալասար — թեթեվ — արեվ — թագավոր — կրօնավոր — թիվ — հովիվ — հիվանդ — մեղվի խալիթոց, հեււան — հաշիվը:

§ 13. ԲԱՂԱԶԱՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

Բաղաձայնների ուղղագրութեան վրայ նոյնպէս մէկ երկու գիտելիք կայ:

1. Վ բաղաձայնը միայն բառերի սկիզբը կարող է գրուիլ, իսկ բառերի մէջ միայն ո ձայնաւորներից յետոյ. (ուրիշ ամէն տեղ լ կամ ու է գրվում, ուր վ—ի ձայն է գրվում.) Վարժ, վերին, ժողովել, խորոված:

Չարտուղում են բարդ ու ամանցեալ բառերը, որոնց մէջ վ պատահամար կարող է ուրիշ ձայնաւորներից և

նոյն իսկ բաղաձայնից յետոյ գալ. նաւավար (նաւ և վարելք բառերից), հոգեվարք, անվաւեր. նոյնպէս սովորութիւն կգաժ է բայերի մէջ գրել հաշվում էին, կալում էին, ու երկրարբանը չկրկնելու համար: Բայց պոյականների մէջ սովորաբար պահվում է ու. աղնուութիւն, ձեռնառութիւն:

2. Բ տառով բառ չէ սկսվում հայերէն, այլ գրվում է հը. հըեշտակ, հրապարակ:

Չարտուղում են՝ ըարունի, ըոպէ օտարազգի բառերը:

3. Բ գրից յետոյ, եթէ ն պատահի, գրվում է միշտ ու, թէ հալ և թէ օտար բառերում. առնել, Փառնակ, Պոռնելիոս*:

Չարտուղում են բարդ ու ամանցեալ բառերը և հսլովները, որոնց մէջ ը-ից յետոյ պատահամար ն է գալիս. վերնատուն (վերին տուն), գարնանային, ընկերներ:

* Այս է պատճառը որ ամառ, ձմեռ, գոռ, ձեռ և ուրիշ սոցա նման բառերի մէջ ո է գրվում, որ ն արմատական ատար դուրս է ընկել. հին ժամանակ ասում էին՝ ձմեռն, ամառն, ձեռ և բեռն:

4. Ռ տառով բառ չէ սկսվում հայերէն, այլ գրվում է հո, մինչև անգամ օտար բառերի մէջ. հոշակաւոր, հոռմ. Բացի ռոճիկ և մի քանի օտարազգի բառեր. ռաբրի, Ռուբէն, Ռոբուլամ:

5. Բ. պ. փ. շրթնաձայններից առաջ պատահում է երբեմն ն տառը մ' ի փոխել. ամբաւ (փոխանակ անբաւ), ամփոփ, ուսմամբ:

6. Հայերէն լեզուի մէջ միննոյն գիրը չէ կրկնվում, թէ ձայնաւոր լինի և թէ բաղաձայն: Մինչև անգամ օտար անունների մէջ կրկնուած բաղաձայնները հայերէն

մէկ տառով են գրվում. *ինչպէս, Թաղէս (փոխանակ Թաղ-
դէս), Աբաս, Թեոսդիա:*

Միայն պատահամբ կարող են երկու նոյնաճնչիւն տառ
միասին գրուիլ. *դննել (զննել արմատից), աններելի, խրատ-
տու (խրատ տալ), երրորդ, ամաններ:*

Հետեւել բառերի մէջ ուղղագրութեան սխալները ուղղեցէք
Իարդան—ւարժապետ—ւարդապետ—գորաւոր—օրաւար—կա-
ռաւար—անւարձ—բրնել—դարնալ—դառնանամուտ—ամարնամուտ
—բերնակիր—Զմիւրնիա—Ռողոս—Ռիփոսիմէ—Ռոմայեցի—անբիժ—
նեղութեամբ—բաջութեամբ—Ռուսաստան—չորորդ—փթել—
անման, անախանձ:

§ 14. ՏՈՂԱԴԱՐՁԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

Բառերը մէկ տողից միւսը փոխադրելու կանոնը կոչ-
վում է *տողադարձ:*

Տողադարձի կանոնները հիմնվում են բառերի վանկ առ
վանկ բաժանուելու վրայ. Այս հիման վրայ՝

1. Միավանկ բառերը չեն կարող մէկ տողից միւս տողը
փոխադրուիլ: Այսպէս անբաժան են՝ *մարտ, սիրտ, քար,
ծառ:*

2. Երկրարբանները նոյնպէս չեն բաժանվում, որովհե-
տե մէկ վանկ են կազմում. *տուն, սին, եղ—բայր, գու-
նաւ—որ, հայ—ե—բէն:*

3. Երկու ձայնաւորներից մինը առաջին տողի վերջում
և միւսը յաջորդի սկզբումն է գրվում. է—աղ, դի—աղ, տի-
նգերք:

4. Մի բաղաձայնը բառի մէջ միշտ փոխադրվում է.
բա—ըն, ծա—ղիկ, դե—ղե—ցիկ:

5. Երկու բաղաձայներից մինը առաջին տողի ծայրը,
միւսը յաջորդի սկզբն է գրվում. *եր-կիր, պատ—կեր, հաի-
գիստ:*

6. Եթէ բառի մէջ երեք բաղաձայն պատահի, միայն
վերջինը անցնում է յաջորդ տողը. *թարգ—ման, պաշտ—պան,
քաղց—բութիւն:*

7. Եթէ բառի մէջ երկու—երեք բաղաձայնի մօտ լըս-
վում է ը, անողագարձի մէջ ը գիրը ներգործութեամբ գըր-
վում է, թէ տողի սկիզբը լինի և թէ վերջը. *ինչպէս.
գը—լուխ, գըր—կանք, բըս—նել, տըր—տընջել, մը—կըր-
տել:*

8. Բառերը մէկ տողից միւսը փոխադրելու ժամանակ
կապվում են այս նշանով (-), որ կոչվում է *ենթամտայ* և
գրվում է տողի վերջը. *սե-դան, տախ-տակ:*

Հետեւել բառերը բաժանեցէք վերեւի կանոնների համաձայն:
Ծով—ցամաք—ծեր—ժամ—հալ—հայեր—տղալ—ձալն—ձալ-
նաւոր—լուսաւոր—բարեկամ—ձիւն—ձիւնապատ—ուտել—խմել—
սովորել—գրկել—միաբան—որդիական—կը խօսէի—եթէ աշխատէին
—ժամանակ—խորովել—խռովել—դառնալ—արդարութիւն—մաս-
նակից—թշնամի—ընկզմել:

§ 15. ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆ:

Գրութեան, ինչպէս նաև տպագրութեան մէջ, շատ ան-
գամ պատահում է բառի մէկ մասը միայն գրել, և այս
կոչվում է համառօտագրութիւն: Զորօրինակ. *գոյ. ան. (գո-
յական անուն), հարց. նախագ. (հարցական նախադասու-
թիւն):*

Համառօտագրութեան նշանն է մի պարզ կէտ (.), որ գրվում է համառօտուած բառի մօտ, ինչպէս վերեր ցոյց տուինք:

Համառօտագրութեան համար բառական է որ բառի առաջին մասը բազմաշնով վերջանայ, կամ միայն էական տառերը նշանակուին, իսկ ձայնաւորներն ու այլ և այլ վերջաւորութիւնները գուրս թողուին. ինչպէս Յովհ. Մանու. (Յովհանն Մանգակունի) Զըր. կաթղ. (Զարարիա կաթողիկոս). զրըր. (գրարար):

Կան բառեր, որոնց մէջ բառական է միայն առաջին տառը գրել. ինչպէս Պ. (պարոն), Տ. (տիկին): Նոյնպէս առաջին, երկրորդ և այլն տեսլու համար՝ գործ են անում թուանշանները կամ գրերը. գլուխ Ա. Լեոն Զ.

Համառօտեցէք նետեալ բառերը.

Եզակի — լողնակի — ամական — մեկրայ — աշխարհաբար — ներսէս — Շնորհալի — ներսէս — Լամբրոնացի — Մովսէս — Խորենացի — Պազար — Փարպեցի — Յովհաննէս — Կաթողիկոս — Տիգրան — Երկրորդ — Արտաշէս — Երրորդ — գիրք — տասներորդ — զլս խ քսաներկուերորդ:

§ 16. ԳԼՈՒԽ ԵՒ ՄԱՆԻ ՏԱՌԵՐ.

Լեզուի գրերը երկու տեսակ են. ԳԼՈՒԽ կամ մեծ տառեր և 2. մանր կամ փոքր տառեր. Ա, ա, Բ, բ, և այլն:

Գլխատառով սկսում են՝

1. Իւրաքանչիւր նոր խօսքի առաջին բառը: Զորօրինակ. «Նինգերորդ դարու Հայերը քաջութեամբ կռուեցան Պարսից պէմ ազգի անկախութեան համար»:

2. Ոտանաւորների մէջ իւրաքանչիւր տողի առաջին բառը: Զորօրինակ.

Լեոնուգագածները
Հանգստանում են,
Ծառերի ճիւղերը
Բնու շարժվում շեն.
Անտառում թռչնիկը
Չէ հանում ծպտուն,
Կոյ. կը հանգստանաս
Գու ևս իսկոյն:

3. Յատուկ անունները. Մահակ Պարթև, Արա Գեղեցիկ, Երասխ, Արագած, Էջմիածին և այլն:

4. Սրբազան անունները. ինչպէս նաև պատուանունները և տիտղոսները. Աստուած, Արարիչ, Փրկիչ, Պատրիարք, Պաթողիկոս, Վեհափառ Տէր, Վսեմափայլ Կոստ և այլն:

5. Գրուածների անունները. զորօրինակ, Վէրք Հայաստանի (Խաչատուր Աբովեանի), Բլրուլ Աւարայրի (Նահապետի), Պատմութիւն Վարդանանց (Եգիշէի):

Գ. ԳՈՂԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՂՈՒԹԻՒՆԸ:

§ 17. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ:

Հայերէն լեզուում արմատական գոյական անուններ չափիչ են. այսպէս են տուն, հող, միրգ, սիրտ, մարդ նիւթականները և գործ, խաղ, ծեծ, ողբ, զին վերացականները: Միայն զգոյականների մեծ մասը կազմվում են՝

1. Ածական անուններից. լայնք, ղեղնուց, սպիտակուց, մեծութիւն, օգտակարութիւն:

2. Բայերի արմատներից և բայերից. ծաւք, բերք, գրութիւն, աշխատանք, քանալի, խաղալիկ:

3. Գոյական անուններից. ծեղնոց, հիւրանոց, թազուհի, Պարսկաստան:

4. Թուական անուններից. միութիւն, սուաշուութիւն, հինգանոց, տասանոց:

5. Գերանուններից. նոյնութիւն:

§ 18. ՆԻԻԹԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԱԾԱԿԱՆ ՎԵՐՋԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Արուեստ կամ պաշտօն ցոյց տուող գոյական անունները կազմվում են որդ և պան ածանցական վերջաւորութիւններով. որսորդ, պարաիգպան:

2. Գործիք ցոյց տուող անունները կազմվում են ան, ոց, նոց մասնիկներով. գութան, սղոց, մատնոց:

3. Տեղ ցոյց տուող գոյականները, ուր մի որ և իցէ բան կատարվում կամ գտնվում է, կազմվում են ոց, նոց, քան, ստան մասնիկներով, գպրոց, ալքատանոց, ճեմարան, հայաստան, բուրաստան:

Ստան մասնիկը գործ է ասվում մասնաւորապէս հին երկրների համար և իա նոր երկրների համար. Յունաստան, Պարսկաստան, Ռուսաստան կամ Ռուս-իա, Գերման-իա, Անգլ-իա:

4. Հայրենիք ու ծագում ցոյց տուող անունները կազմվում են ցի, ի/ի, կան մասնիկներով. երևանցի, քաղաքացի, պարսիկ, զիւզական, ռամիկ, ազնուական:

5. Իգական գոյականները կազմվում են արականների ուհի վերջաւորութեամբ. թագուհի, Վարդուհի:

6. Նուազական և փաղաքական անունները կազմվում են ալ և իկ մասնիկներով. տնակ, սրպեակ, թռչնիկ, Չուշանիկ:

1. Հետեւալ գոյ. ու ած. անուններից և բայերից կազմեցէք արուեստ կամ պաշտօն ցոյց տուող գոյականներ.

Գուռ—ճանապարհ—ալգի—միջին—առաջին—ուզա—ձի—քանա—պահլ—բաժանել:

2. Հետեւալ բառերից ու գոյականներից կազմեցէք գործիք ցոյց տուող անուններ.

Տափել—կտրել—քերել—հաջել—քշել—կապել—խթել—ջնջել—ձեռ—գող—սկ:

3. Հետեւալ գոյականներից և բայերից կազմեցէք տեղ ցոյց տուող անուններ.

Ծաղիկ—ձմեռ—ամառ—որբ—հիւր—ժողով—բղ—ուսումն—բնակել—ջնջել—վարժել—վառել—Պարսիկ—Տաճիկ—կոլս:

4. Հետեւալ գոյականներից կազմեցէք հայրենիք ու ծագում ցոյց տուող անուններ.

Աշտարակ—Անի—Վան—Թիֆլիզ—Վաղարշապատ—Վեննա—Փարիզ—Անդրիա—Գերմանիա—լեռոն—գաշա—կղզի:

5. Հետեւալ արական գոյականներից իգական անուններ կազմեցէք:

Իշխան—կալսր—կոմս—գուքս—քուրմ—աշակերտ, Տիգրան:

6. Հետեւալ գոյականներից կազմեցէք նուազական ու փաղաքական անուններ.

Նաւ—հալր—մալր—քոլր—թաթ—գրօշ—Հալկ:

§ 19. ՎԵՐԱՑԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԱԾԱՆՑԱԿԱՆ ՎԵՐՋԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Վերացական գոյական անունները, եթէ որպիսութիւն են ցոյց տալիս, կազմվում են որական ածականներից ութիւն մասնիկով. մարրութիւն, գտնութիւն, ուրախութիւն:

2. Վերացական գոյականները, եթէ գործողութիւն և դրութիւն են ցոյց տալիս, կազմվում են բայերից դանազան մասնիկներով, որոնց վրայ հայերէն լեզուի յատկութեամբ շատ անգամ աւելանում է ք տառը: Այսպէս պատահում է.

1) Բայի արմատի վրայ լոկ ք. տեսք, զիրք, ելք, Կամ անցեալ կատարեալի վրայ. փնացք, լուացք:

2) Ած և ուած մասնիկներից վերջինի վրայ. կոտորած, դիպորած, գրուած կամ գրուածք, նայուածք:

3) Լի վերջով բայածականների վրայ ք կամ բայի արմատի վրայ իք. հազնելիք, ուտելիք, կարծիք:

4. Ան և մանաւանդ անք. կարկատան, տանջանք, պարծանք:

5) Ում մասնիկի վրայ, սր այն ժամանակ փոխվում է մունք յոգնական ձևի. խաւարում, ուտում կամ սւամունք, մտածմունք:

Իսկ ութիւն, ունդ, ուստ, ոց մասնիկները ք չեն առնում. սովորութիւն, սնունդ, խառնուրդ, կորուստ, խըշխոց:

Բայերից առաջ եկած գոյական անունները կոչվում են քայանուն, որովհետեւ բայի միտք ունին. Օտարի խօսուածքը նշանակում է օտարի խօսիր:

1. Հետեւեալ անականներից կազմեցէք վերացական որպիսութիւն ցոյց տուող գոյականներ:

Առողջ — հիւանդ — առաքինի — կարմիր — սպիտակ — հարուստ — աղքատ — բարի — գեղեցիկ — խոր — լս (ն — երկալն — ծանր — թեթեւ:

2. Հետեւեալ բայերից կազմեցէք վերացական գործողութիւն ցոյց տուող գոյականներ:

Մտնել — խնդրել — թռչել — կոտորել — խօսել — կենալ — չարչարել — աղաչել — պաղատել — զարմանալ — պարծենալ — զրկել — հալածել — բամբակել — մխրթարել — աւետել — սպառնալ — հարցնել — համոզել — վարուել — զգալ — օծել — քննել — մատնել — տեսնել — ձանձրանալ — ծնել — ժողովել — փախչել — ապրել — գողգողալ — թրթրթրիկալ — փսփսալ — կռկռալ:

§ 20 ԲԱՐԳ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ.

Բարգ գոյականների մէջ երկրորդ բառը միշտ գլխաւոր տեղն է բռնում. իսկ առաջինը կախում ունի նորանից և լինում է՝

1. Յատկացուցիչ, երբ գոյականը գոյականի հետ է բարդվում. ինչպէս. երկնահամար (երկնքի կամար):

2. Հրացուցիչ, երբ գոյականը բայի արմատի հետ է բարդվում. ինչպէս. ծինորս (նա որ ձուկ է սրտում կամ պարզ՝ ձուկ սրտոյ):

Այս տեսակ գոյականները շատ անգամ անականապէս են վարվում:

Պատահում է երբեմն որ երկու գոյականները միմեանցից անկախ են, ինչպէս. ազգատոհմ (ազգ և տոհմ), լծրունաճանձ (թռչուն և ճանձ): Այսպէս են մանաւանդ ուշադկապով բարդուածները. թուրքումուր, վարուցան:

Հետեւեալ գոյականներից կազմեցէ՛ք բարգ գոյականներ.

Ձօրք, զլուխ — պար, զլուխ — մարդ, զլուխ — տարի, զլուխ — հալը, պետ — մալը, պետ — նաւ, պետ — ժամ, գիրք — գիրք, տուն — հաւ, տուն — փրկ, ոսկր — մանուկ, գեղ — քուր, շուն — գարի, քուր — չողի, նաւ — հարց, փորձ — հալը, եղբայր — մայր, քուր — քուր որդի — տուն, աէր — ահ, դոդ — որր, ալրի:

2. Հետեւեալ գոյականներից ու բայերից կազմեցէ՛ք բարգ գոյականներ.

Հող, գործել — երկիր, գործել — մատեան, գրել — առակ, խօսել — նաւ, վարել — գիրք, վաճառել — օրէնք, դնել — մարդ, սպանել — քուր, վիժել կրակ, պաշտել — կուռք, պաշտել — քուր, օրհնել:

§ 21. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՆԵՐԸ.

Գոյական անունները երեք հոլովում ունին, որոնք միմեանցից որոշվում են զլխաւորապէս եզակի սեռականի վերջաւորութիւններով: Միւս հոլովները ընդհանրապէս իրարու նման են, կամ շատ քիչ են զանազանվում միմեանցից, ինչպէս որ կարելի է տեսնել հետևեալ պատկերի մէջ.

	Եզակի		Յոգնակի	
	Ա. Հոլ.	Բ. Հոլ.	Գ. Հոլ.	Բոլոր Հոլ.
Ուղ. Հայց.	—	ի	—	ինքն եր (ներ)
Սեռ. Տր.	ի	ու	ան, եան	երի
Բացառական ից	ուց	ից	անց	երից
Գործիական տլ	ուլ	ուլ	ով, ամբ, եամբ	երով
Ներգոյական ում	ում	ում	ում	երում

Այս պատկերից երևում է որ եզականում հայցականը սուղականի նման է, և տրականը սեռականի նման: Գործիական և ներգոյական հոլովները ամէն հոլովների մէջ միակերպ են. իսկ բացառականը երկրորդ հոլովման մէջ խտտորվում է:

Յոգնականում հոլովումների զանազանութիւն չկայ, այլ եր կամ ներ մասնիկը եզականի վրայ աւելադնելուց յետոյ՝ բոլոր բառերը միակերպ հոլովում են առաջին հոլովման վրայ:

Եր մասնիկը ընդունում են միավանկ բառերը. ինչպէս քար, քարեր, ծառ-ծառեր, տուն-տներ, քոյր-քոյրեր:

Ներ մասնիկ ընդունում են բաղմավանկ բառերը. պատկեր-պատկերներ, բարեկամներ:

Նոյնպէս ներ մասնիկ տունում են՝ 1) այն միավանկ բառերը, որոնց արտաբերութեան մէջ ը տառը մտնում ու մէկ վանկից իբր երկու վանկ է կազմում, ինչպէս. ճրագ—ճրագներ, բլուր—բլուրներ, պսակ—պսակներ, կայսր—կայսրներ: 2) Այն միավանկերը՝ որոնց վերջին արմատական ն առնչադասիլ է *) Կուռ—կուրներ, ձեռ—ձեռներ, եղ—եղներ, մուկ—մկներ:

* Գաւառական բարբառներում այս կարգի բառերը ընդունում են ը. կզը, գառը, նուռը, Բայց ասում են՝ ձեռ, ոտ կամ ձեռք, ոտք:

Սորա հակառակ կան միավանկ զոյականներ, որոնք բարդ բառերի կազմութեան մէջ մտնելով՝ յոգնականում եր մասնիկ են ընդունում: Այսպէս են՝ կարգ, տուն, հայր, մայր, քոյր, տէր. դասակարգեր, զրատներ, հորաքոյրեր, և այլն:

§ 22. ԱՌԱՋԻՆ ՀՈՂՈՎՈՒՄ Ի ՍԵՌԱԿԱՆՈՎ.

	Եզակի	Յոգնակի	Եզակի	Յոգնակի
Ուղ. Հայց.	Բանտ	Բանտեր	Սեզան	Սեզաններ
Սեռ. Տրակ.	Բանտի	Բանտերի	Սեզանի	Սեզանների
Բացառական	Բանտից	Բանտերից	Սեզանից	Սեզաններից
Գործիական	Բանտով	Բանտերով	Սեզանով	Սեզաններով
Ներգոյական	Բանտում	Բանտերում	Սեզանում	Սեզաններում

Այսպէս հոլովում են զոյական անունների մեծ մասը:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետևեալ զոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ դիժ քաշեցէք:

Բաժակ—զանակ—կացին—սոց — խարտոց — մանգաղ—բլուր — անտառ — տերև — թռչուն — ագռաւ — սոխակ — վանդակ — աղուէս—փիղ—գունդ—զօրք—բանակ — պատերազմ—ղինուօր—զօրափար—երգ—ձախ—երաժիշտ—բժիշկ—պատկերահան:

§ 23. ԵՐԿՐՈՐԳ ՀՈՒՈՎՈՒՄ ՈՒ ՍԵՌԱԿԱՆՈՎ.

	Նզակի	Յոզնակի	Նզակի
Ուղ. Հայց	Մատանի	Մատանիք, մատանիներ	ձի
Սևո. Տրակ.	Մատանու	Մատանիների	ձիու
Բացառական	Մատանուց	Մատանիներից	ձիուց
Գործիական	Մատանով	Մատանիներով	ձիով
Ներգոյական	Մատանում	Մատանիներում	ձիում

Այս հոլովման պէս հոլովում են բոլոր ի վերջացած բառերը. միավանկերը ի տառ պահում են:

Կան մի քանի ի վերջացած բազմավանկ բառեր, որոնք ի պահում են և հոլովում են առաջին հոլովման վրայ՝ այսպէս. հայելիի, ածելիով, բանալիից և այլն, որ եթէ կանոնաւոր հոլովենք՝ ածելու, բանալով, կարող են շփոթուիլ ածել և ըսնալ բայերի հետ:

Այպէս հոլովում են հայ և մանաւանդ օտարազգի յատուկ անունները. Անիի հազար ու մէկ եկեղեցին. Գարիբաղիի հայրենասիրութիւնը. Նապօլիից է գալիս:

Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ հետեւել զուգահաներով և հոլովական վերջաորութիւնների տակ գիծ քաշեցէ՛ք:

Կենդանի—աղաւնի—ծերունի—եկեղեցի—քաղաքացի—որդի—գինի—թշնամի—խնձորենի—տանձենի—իշխանուհի—թաղուհի—կայսրուհի—աշակերտուհի Վահան Ամատունի—Գարիբաղի—Ռոսինի—Նապօլի:

§ 24. ԵՐԿՐՈՐԳ ՀՈՒՈՎՈՒՄ ԱՆ ԵՒ ԵԱՆ ՍԵՌԱԿԱՆՈՎ.

	Նզակի		
Ուղ. Հայց.	Չուկ	Հարցում	Ընկերութիւն
Սևո. Տրակ.	Չկան	Հարցման	Ընկերութեան

Բացառական	Չկից	Հարցումից	Ընկերութիւնից
Գործիական	Չկնով	Հարցմամբ	Ընկերութեամբ, թիւնով
Ներգոյական	Չկում	—	—*

	Յոզնակի		
Ուղ. Հայց.	Չկներ	Հարցումներ	Ընկերութիւններ
Սևո. Տրակ.	Չկների	Հարցումների	Ընկերութիւնների
Բացառական	Չկներից	Հարցումներից	Ընկերութիւններից
Գործիական	Չկներով	Հարցումներով	Ընկերութիւններով
Ներգոյական	Չկներում	—	—

* Աւստրալիայի վերջացած զուգահաների ներգոյականների տեղ վարվում է սովորաբար սեռական հոլով մէջ նախադասութեամբ. ինչպէս. ուսման մէջ, ներդրեալ մէջ, տեղութիւնների մէջ:

Չուկ՝ բառի պէս հոլովում են նախ՝ ուն վերջացած բառերը, ինչպէս տուն, զարուն: Խոտորում են հուն և բուռ միավանկները, նոյնպէս և այն գոյականները, որոնց մէջ ուն արմատական չէ, այլ ածանցական մասնիկ. ինչպէս թռչուն, սողուն:

Երկրորդ, այնպոյականները, որոնց վերջին արմատական ն տառը անյայտացել է, ինչպէս. դուռ (զուռն), դուռն, մկան, լեռան թոռան, նուան և այլն:

Այս կարգի բառերի մէջ կան որ խառն հոլովում են առաջին և երկրորդ հոլովման վրայ միանգամայն. վերջին ձեւը երեւում է աւելի ընտանեկան լեզուի մէջ: Այսպէս ասում են՝ լիսան հաց և լիսնի հաց. զառան միս և զառնի միս: Կան էլ որ միատեսակ հոլովում են առաջին հոլովման վրայ, բայց յովանականում ն տառը կրկին երեւում է: Ահաւասիկ այդ բառերի ցանկը. ոտ, ձեռ, մատ, անձ, մաս, եզ—ստի, ստներ, մատի, մատներ, եզներ:

Հարցում բառի պէս հոլովում են ում (օւմն) վերջա-

ցած բառերը, սրոնք կարող են անխտիր հոլովիլ եւ առաջին կանոնաւոր հոլովման վրայ. վերջինը աւելի ընտանեկան լեզուի մէջ. օծման եւ օծումի, խաւարման եւ խաւարումի, խոստամար եւ խոստումով: Ամէն մարդ ճանաչում է ուսման օգուտը: Որդուս ուսումի տուի:

Բայց աւելի սուգական է այս տեսակ բառերին ունը յոգնական վերջաւորութիւնը տալ եզականում, եւ յետոյ ներ աւելացնելով՝ կրկին հոլովել յոգնակի. զգացում— զգաց'մունք, զգաց'մունքներ, հարց'մունք, հարց'մունքներ, վար'մունք, վար'մունքներ: Ահաւասիկ մի օրինակ այսպիսի հոլովման.

	Նզակի	Յոգնակի
Ուղ. Հայց.	Մտածմունք	Մտածմունքներ
Սեռ. Տրակ.	Մտածմունքի	Մտածմունքների
Բացառական	Մտածմունքից	Մտածմունքներից
Գործիական	Մտածմունքով	Մտածմունքով

Ըկերութիւն բառի պէս հոլովում են բոլոր ութինս վերջացած գոյականները:

Յարութիւն, Համբարձում եւ սոցա նման մարդկանց շատուկ անունները Ա հոլովման վրայ են հոլովում. Յարութիւնի գիրքը. Համբարձումի գրիչը— Իսկ եկեղեցական մտքով ասում են Յարութեան օրը, Համբարձման տօնը:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւալ գոյականներիով եւ հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք.

Չուկ—մուկ—փուռ—գառ — լեռ — նուռ — ուսում — օծում— խոստումունք—վարմունք—մտածմունք—կարդացմունք—առաքինութիւն—նեղութիւն—տէրութիւն—պաշտպանութիւն:

§ 25. ԺԱՄԱՆԱԿ ՅՈՅՅ ՏՈՒՈՂ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ

	Նզակի	Յոգնակի
Ուղ. Հայց.	Օր	Օրեր
Սեռ. Տրակ.	Օրուան օրուայ	Օրերի
Բացառական	Օրուանից	Օրերից
Գործիական	Օրով	Օրերով
Ներդրյական	Օրում	Օրերում

Ժամանակ ցոյց տուող բառերը հոլովում են երրորդ հոլովման վրայ, փոքր ինչ փոփոխութեամբ, այսինքն՝ սեռուան կամ ուայ, բացառ. ուանից, ոմանք նաև առաջին կանոնաւոր հոլովման պէս: Եյսպէս անխտիր գործ է ամփում ամսի եւ ամսուան, շաբաթի եւ շաբաթուան, կէսօրի եւ կէս օրուան, գիշերից եւ գիշերուանից: Իսկ յոգնակին բոլորովին կանոնաւոր է:

Ահասարակ ուան վերջաւորութեամբ վարուողները ամականի զօրութիւն ունին. ինչպէս. Ամառուան շաբթ (փոխանակ ամառուային շաբթ). գիշերուան անձրեւը. այս տարուան առատութիւնը:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւալ գոյականներիով եւ հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք. Զմեռ—ամառ—գիշեր—ցերեկ—տարի—ամիս—շաբաթ—ժամ—առաւօտ—երիկունս—կէսօր—կէս գիշեր:

§ 26 ԱԶԳԱԿՑՈՒԹԻՒՆ ՅՈՅՅ ՏՈՒՈՂ ԲԱՌԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ

	Նզակի	Յոգնակի		
Ո. Հ.	Հայր	Քուր	Հայրեր	Քուրեր
Ս. Տ.	Հօր	Քրոջ	Հայրերի	Քուրերի
Բցու.	Հօրից	Քրոջից	Հայրերից	Քուրերից
Գործ.	Հօրով	Քրոջով	Հայրերով	Քուրերով

Ազգակցութիւն ցոյց տուող գոյականների սեռականը ըստ մեծի մասին անկանոն է լինում—օր կամ ոչ, որոնցից կազմվում են բացառական եւ գործիական հոլովները: Յոգնակին կանոնաւոր է:

Հալրերով, քուրերով և մանաւանդ հօրով, քրոջով գործիականները շատ շեն գործ անում, այլ ասում է հօր հետ, քրոջ հետ: Յահասարակ շնչաւոր առարկաների գործիականի համար հետեւելը նկատելու է: Եթէ գործողութիւնը շնչաւոր առարկայի ձեռով կամ միջնորդութեամբ է կատարվում, բուն գործիական է գրվում. իսկ եթէ շնչաւոր առարկան գործողութեան մասնակից է, այն մասնակի հետ նախադրութեամբ սեռական է վարվում. ինչպէս. Յովսէփ իր եզրայրներին հետ թարգմանով էր խօսում: Այսպէս գարձեալ ձիով այսինքն ձի նստած վազ տալ և ձիու հետ վազ տալ: Բայց ընամանկան լեզուի մէջ գործածական է հօրով մօրով ապրիս — փոխանակ հօրդ հետ, մօրդ հետ ապրիս:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւել գոյական անուններով, և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք.

Հալր — մալր — քուր — եղբայր — կին — տէր — աներ — սկեսոր — հօրեղբայր — մօրեղբայր — հօրաքուր — մօրաքուր — նախահայր — կնքահայր — կնքամայր — անտէր — տանտիկին — տալ — բնկեր:

§ 27. ԲԱՂԱԴՐԵԱԼ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ.

Նզակի

Ո. Հ.	Հաց	ու ջուր	Ողբ ու լաց
Ս. Տ.	Հացի	ու ջրի	Ողբ ու լացի
Քցո.	Հացից	ու ջրից	Ողբ ու լացից
Գործ.	Հացով	ու ջրով	Ողբ ու լացով

Նայն կամ մօտիկ նշանակութիւն ունեցող (ըստ մեծի մասին միայնակ) գոյականները ու շարկապով կազմում

են բաղադրեալ գոյականներ, որոնք եթէ իբրև առանձին բառեր նկատուին, կարող են երկուսն էլ հոլովի, իսկ եթէ իբրև մէկ բառ ընդունուին՝ միայն վերջինը, որ աւելի սովորական է: Այս տեսակ բառերը ընդհանրապէս յոգնակի շեն գործածվում, այլ յոգնակների մտքով եղակի են վարվում. ինչպէս. Ականջ դիր քո հօր խօսք ու խրատին (փոխանակ խօսքերին ու խրատներին):

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւել բաղադրեալ գոյականներով, փոխելով երկու բառն էլ, կամ միայն վերջինը, նախելով թէ որ ձևը լարմար է.

Սուգ ու լաց — լաց ու կոծ — ազգ ու տակ — խօսի ու արօր — լուծ ու կամ — օր ու գիշեր — չափ ու սահման — հարց ու պատասխան — փող ու բաժինք — դուստր ու փեսայ:

§ 28. ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ.

Յատուկ անունները առհասարակ հոլովում են առաջին հոլովման պէս: Բայց կան յատուկ անուններ, որոնց մի քանի հոլովները զրաբար ձևով են լինում: Սորանով մեկընվում են այն անկանոն ձևերը, որ երևում են երբեմն հասարակ գոյականների և զլխաւորապէս անձների անունների մէջ:

1. Մարդկանց և քաղաքների յատուկ անունները հոլովում են առաջին հոլովման վրայ. ինչպէս. Գրիգորի, Յովհաննէսին, Սմբատից, Թիֆլիսից, Էջմիածնում:

Բայց հայ պատմական անունները սովորութիւն է եղել հին ձևով էլ հոլովել, այսինքն այ սեռականով, նոյնպէս և մի քանի ժանոթ քաղաքների անունները այ և ու սեռականով. այսպէս.

Եզակի

Ո. Հ.	Տրդատ	Երևան	Թաւրիզ
Ս. Տ.	Տրդատայ*	Երևանայ**	Թաւրիզու
Բցո.	Տրդատից	Երևանից	Թաւրիզուց
Գործ.	Տրդատով	Երևանով	Թաւրիզով
Ներդ.	—	Երևանում	Թաւրիզում

* Հայցականը սովորաբար տրականի պէս է լինում (տես § 31):

** Գաւառական բարբառներում բացառականը սեռականի պէս է լինում հին և ն. վ. Երևան-այ, Աշտարակ-այ է գալի, այսինքն Երեւան-ից, Աշտարակ-ից:

2. Ազգերի յատուկ անունները, բացի կանոնաւոր հոլովումից, յոգնականում ունին և մի անկանոն հոլովում, ուղղականի և հայցականի համար ք, իսկ սեռ. և տր. հոլովների համար ոյ, ից, աց վերջաւորութիւնները: Ահաւասիկ երբերից էլ մէկ մէկ օրինակ.

Յոգնակի

Ո. Հ.	Յոյնք (Յոյներ)	Հալք	Հրէալք
Ս. Տ.	Յունաց	Հալոց	Հրէից
Բացո.	Յոյներէց	Հալերից	Հրէաներից
Գործ.	Յոյներով	Հալերով	Հրէաներով

Հասարակ գոյականներից Յոյնք բառի պէս հոլովում է ծնողք, ծնողաց, իսկ Հայք բառի պէս՝ տղայք (տղայոց), երբեմն նաև՝ երեխայք, երեխայոց:

3. Յեղի ու հայրենեաց յատուկ անունները յոգնակի ուղղական հոլովում ունին այս վերջաւորութիւնները. եանք, ունիք, ցիք (ացիք, եցիք), սեռ. և տր. հոլովներում եանց, եաց, ցոց. ինչպէս.

Յոգնակի

Ո. Շ.	Մամիկոնեանք	Արշակունիք	Կարնեցիք
Ս. Տ.	Մամիկոնեանց	Արշակունեաց	Կարնեցոց

Հասարակ գոյականներից Մամիկոնեանք բառի պէս հոլովում են՝ մարո, կին, աղջիկ, երբեմն և երեխայ բառերի յոգնակին. մարդիկ, մարդկանց, մարդկանցից, կանայք, կանանց, կանանցից, աղջկանցից, երեխանցով:

Արշակունիք բառի պէս հոլովում են՝ ընտանիք, ընտանեաց, նախնիք, նախնեաց, հայրենիք, հայրենեաց:

Կարնեցիք բառի պէս հոլովում են ըլուր ցի վերջացած յատուկ և հասարակ գոյականները. քաղաքացիք, քաղաքացոց, տնեցոց, երկրացոց, Երևանցոց, Ազուլեցոց. նոյնպէս և որդիք, որդոց:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւալ լատուկ ու հասարակ գոյականներով և հոլովական վերջաւորութիւնների տակ գիծ քաշեցէք:

Արամ—Տիգրան—Սահակ—Մեսրոպ—Արտաշատ—Վաղարշապատ—Թիֆլիզ—Ռուս—Տաճիկ—տղայք—երեխայք—մարդիկ—կանայք—Արծրունիք—նախնիք—ղաշտեցիք—Վանեցիք—որդիք:

§ 29. ԿՈՐՈՒՄՄԱՄԲ ԵՒ ՓՈՓՈԽՄԱՄԲ ՀՈՒՈՎՈՒՄ:

Չայնաւորների կարուման և փոփոխման կանոնը գոյականների հոլովման մէջ մի քանի խտորմունքներ ունի.

1. Ի ձայնաւորը եղականում միշտ դուրս է ընկնում, իսկ յոգնականում միայն միավանկ բառերի մէջ, իսկ բաղմավանկերի մէջ սովորաբար պահպանում է. ինչպէս.

Եզակի

Յոգնակի

Ո. Հ.	Միրա	Անկողին	Մ'րաեր	Անկողիններ
Ս. Տ.	Մ'րաի	Անկող'նի	Մ'րաերի	Անկողինների
Բցո.	Մ'րայ	Անկող'նից	Մ'րաերից	Անկողիններից
Գործ.	Մ'րով	Անկող'նով	Մ'րաերով	Անկողիններով
Ներգ.	Մ'րում	Անկող'նում	Մ'րաերում	Անկողիններում

Խոտորում են ի վերջացած միավանկերը. ձի, ձիու, թիով, որոնց յոգնակին անկանոն ձևով լինում է՝ ձիան, կամ ձիաներ, ձիաներից, թիաներով:

2. Ու երկրարբառը միավանկ բառերի մէջ միշտ գուրս է ընկնում. բազմավանկերի մէջ միշտ ազատ է պահել կամ չպահել եզանակում, իսկ յոգնականում գրեթէ միշտ պահվում է. գործընկ.

Եզակի

Յոգնակի

Ո. Հ.	Ջուր	Թաչուն	Ջ'րեր	Թաչուններ
Ս. Տ.	Ջ'րի	Թաչ'նի	Թաչ'ների	Թաչունների
Բցո.	Ջ'րից	Թաչ'նից	Թաչ'ներից	Թաչուններից
Գործ.	Ջ'րով	Թաչ'նով	Թաչ'ներով	Թաչուններով
Ներգ.	Ջ'րում	Թաչ'նում	Ջ'րերում	Թաչուններում

Խոտորում են ու վերջացած բառերը. ինչպէս. լեզու, լեզուի, մեղրով. որոնցից միավանկերի յոգնակին անկանոն է. ձու, ձուաներից, լու, լուաներով:

3. Ա կ այ մի քանի գործածական բառերում գուրս են ընկնում, և այն միայն եզականում. այսպէս են՝

Եզակի

Յոգնակի

Ո. Հ.	Բերան	Փեսայ	Բերաններ	Փեսաներ
Ս. Տ.	Բեր'նի	Փես'ի	Բերանների	Փեսաների

Բացո.	Բեր'նից	Փես'ից	Բերաններից	Փեսաներից
Գործ.	Բեր'նով	Փես'ով	Բերաններով	Փեսաներով
Ներգ.	Բեր'նում	—	Բերաններում	—

Ս. երկրարբառի պահվում է յոգնականում միայն զրարար հոլովման մէջ. ազ աչ-ոց, երեխ-այ ոց:

4. Իւ երկրարբառը եզականում փոխվում է ու, իսկ յոգնականում անփոփոխ է մնում. բայի թիւ, թուեր:

Եզակի

Յոգնակի

Ո. Հ.	Հաշիւ	Հաշիւներ
Ս. Տ.	Հաշուի	Հաշիւների
Բացո.	Հաշուից	Հաշիւներից
Գործ.	Հաշուով	Հաշիւներով
Ներգ.	Հաշում	Հաշիւներում

* Եզակի ներգոյականում սովորութիւն է եղել գրել ոււււ փոխանակ ուււււ. ու երկրարբառը չկրկնելու համար:

5. Է, եւ, ոյ առհասարակ անփոփոխ են մնում. հանդէս, հանդէսի, հանդէսներ, սննեակ, սննեակի, սննեակներ. վարագոյր, վարագոյրի, վարագոյրներ. Բայց սէր, յոյս, և լոյս միավանկերը սովորութիւն է եղել գրաբարի ձևով, այսինքն փոփոխմամբ հալովել. սիրոյ, սիրով. յուսոյ, յուսով. լուսոյ, լուսով: Այսպէս երբեմն և կեանք, կենաց (բաժակ):

Գրեցէ՛ք մի քանի նախադասութիւններ հետեւալ գոյականներով:

Գիրք—միս—գետին—երկինք—մարմին—թուղթ -- պտուղ — օգուտ—կերակուր—ժողովուրդ—մեղու—քաղաք—Աստուած — աղւջ — երեխալ—թիւ—հովիւ—հանդէս—ծէս—վարկեան — խնձոր — լոյս — սէր:

§ 30. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՅՕԳԸ.

Յօդ ասվում է այն տառը կամ մասնիկը, որ գոյական անուան վրայ գրուելով՝ որոշ նշանակութիւն է տալիս նորան և ընդհանուր միտքը մասնաւորի է ամփոփում: Այսպէս ընդհանուր միտք կունենան գոյականները, եթէ ասենք՝ Ես գիւրք եմ կարգում. Քոյրս սոխակն ունի, որովհետև չէ իմացվում թէ նր գրքի կամ սոխակի վրայ է խօսքը, կամ կարող է հասկացուիլ թէ ես գիրք եմ կարգում, քոյրս սոխակներ ունի: Քայց միևնոյն գոյականների միտքը որոշվում և մասնաւորի է ամփոփվում, եթէ ասենք՝ Ես քս տուած գիրքն եմ կարգում: Քոյրս մի սոխակ ունի:

Երկու տեսակ յօդ կայ՝ որոշեալ յօդ, որ գոյականից յետոյ է գրվում, և անորոշ յօդ, որ գոյականից առաջ է գրվում:

Որոշեալ յօդն երկու է՝ ն^ա և ը. առաջինը ձայնաւոր տառով վերջացած բառերի վրայ է գրվում, երկրորդը բազաձայնով վերջացածների վրայ. ինչպէս. ձին, բաղէն, քերխան*, ծովը, տունը, անտառը:

* Ն յօդը բազաձայնով վերջացած բառերի վրայ էլ է գրվում, երբ լաջորդ բառը ձայնաւորով է սկսվում. գորօրինակ. Այն մարդն է գովութեան արժանի, որ իր լուսն ուրիշի վրայ չէ դնում: Այսպիսի դէպքերում կարող է ը յօդ գործ գրուիլ, եթէ հարկ լինի խօսքին աւելի որոշութիւն տալ, կամ երբ յօդ ունեցող բառը լաջորդ բառի հետ կից չէ: Աւստի սխալ չի լինիլ, եթէ ասենք՝ Այն մարդը է գովութեան արժանի, որ իր լուսը ուրիշների վրայ չէ դնում: Նոյնպէս՝ Բաբեկամները բաժանուեցան ու գնացին՝ որը աջ, որը ձախ:

Որոշեալ յօդը գործ է ամփում. 1) երբ խօսքը ծանօթ և յայտնի առարկայի վրայ է. գորօրինակ. Հայոց լեզուն շատ հին է: Այստեղ խօսքը ծանօթ (հայոց) լեզուի վրայ է, որ անկարելի է շփոթել ուրիշ լեզուի հետ: 2) Երբ հարկ է ցոյց տալ թէ առարկան մի առանձին ցեղի կամ դասի ներկայացուցիչ է. ինչպէս. Հայը աշխարհիս ամեն կողմերը ցրուած է. այսինքն Հայ ազգը առհասարակ, բոլոր հայերը ցրուած են:

Անորոշ յօդն է մի, որ գործ է ամփում այն ժամանակ՝ երբ հարկ է առարկայի վրայ եղած ընդհանուր հասկացողութիւնը մասնաւորի ամփոփել. գորօրինակ. Մի խտլացի գտաւ նոր Աշխարհը՝ և մի գերմանացի տալաբուծեան արհեստը.— այսինքն մի անհատ այն ազգից որ կոչվում է խտլական, գերմանական ազգ:

Սորանից պարզ երևում է որ մի և ն (ը) յօդերը միևնոյն ժամանակ չեն կարող գործ գրուիլ՝ կամ որոշեալ բառը անյօդ թողնել. չէ կարելի ասել Մի մշակը կամ երեկուան մշակ եկաւ, այլ մի մշակ, երեկուան մշակը:

§ 31. ՈՐՈՇԵԱԼ ԵՕԳՆՎ. ՀՈՒՈՎՈՒՄ.

	Եզակի	Յոգնակի
Մ. հ.	Պարտէզը	Պարտէզները
Սեռակ.	Պարտէզի	Պարտէզների
Տրական	Պարտէզին	Պարտէզներին
Բացառ.	Պարտէզիցը	Պարտէզներիցը
Գործիակ.	Պարտէզովը	Պարտէզներովը
Ներգոյակ.	Պարտէզումը	Պարտէզներումը
Ուղղական	Որսորդը	Որսորդները
Սեռական	Որսորդի	Որսորդների

Տր. Հայց.	Որսորդին	Որսորդներին
Քացառ.	Որսորդիցը	Որսորդներիցը
Գործիակ.	Որսորդովը	Որսորդներովը

Որոշեալ յօդով հոլովման վրայ մի քանի հարկաւոր պիտելիք կայ.

1. Մեռական հոլովը երբէք որոշեալ յօդ չէ ընդունում. ինչպէս. պարտէզի դուռը, ուսորդի հրացանը:

2. Միւս հոլովները առանց բացառութեան կարող են յօդ առնել. միայն գրաւոր լեզուի մէջ բացառական, գործիական և ներգ. հոլովները աւելի անյօդ են վարվում, քան թէ յօդով. գործիական. Իմ բարեկամը մարդասիրական ընկերութիւնից օգնութիւն ստացաւ: Հոգազործները կերակրվում են գաշտերի ընտրելով և ծառերի պտուղներով: Աշակերտները խաղում են ուսումնարանի ջակում:

Ուրիշ են դերանունական յօդերը, որ ամեն հոլովների վրայ գրվում են անխտիր, ինչպէս որ յետոյ կը տեսնենք:

3. Յատուկ անունները իրանք իրանցից որոշուած լինելով՝ միշտ որոշեալ յօդ են պահանջում. Գրիգորը գնացւ. Մարիամին պատահեցանք: Արագածը գեղեցիկ սար է: Բայց գրաբար ձևով հոլովօդ բառերը առհասարակ որոշեալ յօդ չեն ընդունում. Վաղարշակը նոր օրէնքներ տուեց Հայոց (և ոչ Հայոցը): Իշխանի մահը յայտնեցին լաղաբացոց: Արահամը յօժար էր իր միակ սրդուն նուիրել Աստուծոյ (կամ Աստծուն):

4. Բաղադրեալ բառերի մէջ (§ 27) անորոշ յօդ շատ անգամ միայն առաջինի վրայ է գրվում, և որոշեալ յօդ վերջինի վրայ: Մի տղայ ու աղջիկ սնի որ աշխարհի հետ շի փոխիլ: Խեղճի ուր ու լացը: Գնալ գալը կտրեց

մեր տանից: (Վերջին օրինակի մէջ ու շարկապը դուրս է ընկած):

5. Անձի անունները որոշեալ յօդով հոլովելիս՝ հայցականը արականի հետ նոյնանում է: Սյուզէս ասում են՝ հայրը սիրում է որդուն: Կիրակոսը տեսաւ Մարկոսին. որ կթէ ասէինք՝ Կիրակոսը տեսաւ Մարկոսը, չէր իմացուիլ թէ կերակում է տեսնողը թէ Մարկոսը:

Գրեցէք ձեզանից մի քանի նախադասութիւններ և գործ գրէք որոշեալ և անորոշ լօզերը:

Ե. Ածական անունների կազմութիւնը:

§ 32 ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ.

Արմատական ածական անունները, ինչպէս և գոյականները, շատ սակաւ են. ինչպէս՝ մեծ, ծանր, խոր, ծոյլ, սուս. Մնացած ածականների մեծ մասը կազմվում են.

1. Բայերի արմատներից. շարժուն, վախկոտ, ազու, ընդունակ:
2. Գոյական անուններից. նախանձոտ, ևղջայրական, տնային, խելացի:
3. Ածական անուններից. փոքրիկ, կարմրադոյն:
4. Մակբայներից. այժմեան. երեկուան. հեռաւոր:

§ 33 ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱԾԱՆՑՍԿԱՆ ՎՈՐՁԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Որակական ածականները, կթէ հասարակ որպիսութիւն են ցոյց տալիս, կազմվում են բայերի արմատ-

Ներից և գոյական անուններից ուն, տըր, կան մասնիկ-
ներով. պիտուն, զօրաւոր, բանական:

Ան և տըր մասնիկներով կազմուածներից գոյական են ալժ
Յոչուն, զինուոր, թագաւոր:

2. Որակական ածականները, եթէ որպիսութեան օտտ-
կութիւն են ցոյց տալիս, կազմվում են.

1. Բայերի արմատներից ան, ուղ, կան, կոտ մասնիկ-
ներով. հարբան, բնուղ, մրսկան, ամաշկոտ:

2. Գոյական անուններից ոտ, եղ, աւէտ մասնիկներով.
կրակոտ, զօրեղ, պտղաւէտ:

3. Որակական ածականները, եթէ փոքրութիւն և
փաղաքշանք են ցոյց տալիս, կազմվում են իկ մասնիկով.
փոքրիկ, հեզիկ, քաղցրիկ:

1. Հետեեալ բաւերից ու գոյականներից կազմեցէք հասարակ
որպիսութիւն ցոյց տուող ածականներ.

Շարժել—աճել—գնալ—սահել—փալլել—որիւղ—խօսել—բաղդ
—նշան—փառք—թոյն—ահ—աաղանդ—հանճար—պատիւ—(էոր և
ճլան մասն.)—բան—ուսում:

2. Հետեեալ գոյականներից ու բաւերից որպիսութեան սաստ-
կութիւն ցոյց տուող ածականներ կազմեցէք.

Ածել—կշկշալ—քնել—խրտնել—կտրել—լալ—մրսել—վախե-
նալ—(լուղ և կոտ մասն.)—երկնչել—պարծենալ—մոռաւալ—ամա-
շել—եզ—արիւն—միս—տիղմ—աւաղ—ճահիճ—ժպլա—քար—ժանգ,
հիւանդ—ոլժ—զօր—ահ—համ—հանճար—չահ—օգուտ—խոտ—
պտուղ—ծաղիկ—կանաչ:

§ 34 ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱԾԱՆՅԱԿԱՆ ՎԵՐՋԱԻՈՒ
ՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Յարաբերական ածականները, եթէ ազգանուն են
ցոյց տալիս, կազմվում են հօր կամ ուրիշ յատուկ անու-

նից, նոյնպէս և հասարակ անուններից և մինչև ածա-
կաններից եան, եանց վերջաւորութիւններով. Տիգրան Ե-
րուանդեան, Գրիգոր Հայրապետեանց, Ստեփան Կապուտի-
կեան:

Այս եան, եանց գրոց եզ. և լոգ. սեռ. վերջաւորութիւններ են:

2. Յարաբերական ածականները, եթէ ցոյց են տալիս
թէ մէկ բան ումն է պատկանում, կամ ինչ անձի և
իրի է վերաբերում, կազմվում են յատուկ և հասարակ
գոյականներից կան, պին, տըր, անի մասնիկներով. հայկա-
կան, աստուածային, մարմնաւոր. երեք մասնանի (եզան).
մեծ գլխանի (երեսայ):

Անի մասնիկով կազմուած ածականները իրանցից առաջ միշտ
մի թուական անուն կամ ածական են պահանջում: Գրաբար կաշ
երկսայլի սուր (երկու բերնանի սուր):

3 Յարաբերական ածականները, եթէ ցոյց են տալիս
թէ մէկ բան ինչ նիւթից է շինուած, կազմվում են գոյ-
ական անուններից ի, է (զրբր. եայ), եղէն մասնիկներով.
երկաթի, պղնձէ, հողեղէն:

Եղէն մասնիկով աշխարհարար լեզուի մէջ կազմվում են շատ
գոյական անուններ. կերակրեղէն, ձկնեղէն, կաթնեղէն, մսեղէն,
հաւեղէն և այլն:

4. Յարաբերական ածականները, եթէ ցոյց են տալիս
թէ մէկ բան որ տեղի կամ ժամանակի է վերաբերում,
կազմվում են գոյական անուններից ու մակբայներից եան,
ուան (ուայ), ին մասնիկներով. արևմտեան, վաղուան,
երկնային, վերջին:

1. Հետեեալ գոյականներից կազմեցէք պատկանելութիւն
ցոյց տուող ածականներ.

Հայր—մայր—որդի—բարեկամ—ընկեր—քրիստոնեակ—հեթա-
նոս—լոյն—պարսիկ—Ֆրանսիա—Անգլիա—Գերմանիա—հոգի—մար-
մին—միաք—գիր—երկինք—երկիր—երկու բերան (թուր)—մեծ պոչ
(ձի)—վեց թև (հրեշտակ)—երկու երես (մարդ)—հարիւր զուլա
(հրէշ)։

2. Հետեակ գոյականներից կազմեցէք նի թ ցոյց առող ա-
ծականներ.

Երկաթ—պղինձ—ոսկի—ապակի—փայտ—բուրդ—մաղ—փուշ
ծաղիկ—կաւ—հող—հուր—բոց։

2. Հետեակ գոյականներից և մակբայներից կազմեցէք անոց
ու ժամանակ ցոյց առող ածականներ։

Արեւելք—արեւմտք—հիւսիս—հարաւ—գարուն—աշուն—
ձմեռ—ամառ—երկինք—երկիր—ղաշտ—լեռ—անտառ—տուն—ե-
րէկ—ալսօր—վաղը—էգուց—հիմա—առաջ—լետ—վերջ—վերև—
ներքև։

§ 35. ԳԵՐԲԱՅՆԵՐԻ ԱԾԱՆՅԱԿԱՆ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Ներկայ դերբայը կազմվում է. 1) ող մասնիկով
պարզ արմատից, եթէ Ա և Բ վերջաւորութեան բայ է,
և 2) անցեալ կատարելից, եթէ Գ և Դ վերջաւորու-
թեան բայ է. ինչպէս. սպասել—սպասող, խօսիլ—խօսող,
գնալ, գնացի—գնացող, խոստանալ, խոստացայ—խոստացող։

Եւ և իլ վերջացած բայերի մէջ ն, շ, ցն եկամուտ
տառերը պահվում են. գտնել—գտնող, փախչիլ—փախչող,
կորցնել—կորցնող։

2. Անցեալ դերբայն կազմվում է եւ և ած մասնիկ-
ներով. 1) Ա և Բ վերջաւորութեան բայերում պարզ ար-
մատից. 2) Գ և Դ վերջաւորութեան բայերում կատար-
ելից. ազատել, ազատած. բնակիլ, բնակել*—բնակած.—
խաղալ, խաղացիլ—խաղացել, խաղացած. հասկանալ, հաս-
կացայ—հասկացած։

Եկամուտ տառերը դուրս են ընկնում. տեսնել—տե-
սնել, տեսած. կորչիլ—կորել, կորած. զարմացնել—զարմացել,
զարմացած։

3. Ապառնի դերբայը կազմվում է ու մասնիկը տե-
լացնելով անորոշ դերբայի վրայ. գովել, գովելու, աշխատել,
աշխատելու, մնալ—մնալու, լուանալ—լուանալու, մտնել—
մտնելու, թռչիլ—թռչելու։

* Յ վերջաւորութեան բայերում ի ձայնաօրը վտարվում է և։

Հետեակ բայերից կազմեցէք ներկայ, անցեալ և ապառնի
դերբայներ.

Լսել—հանել—կանչել—գովել—բռնել—ուտել—խմել—աշ-
խատիլ—նստիլ—համարիլ—բնակիլ—խաղալ—մեալ—գնալ—խըր-
ձալ—հազալ—զոզանալ—իմանալ—տեսնիլ—գտնիլ—հասնիլ—
հազնիլ—մոռնիլ—կպչիլ—թռչիլ—դպչիլ—մեծացնել—չորացնել—
սովորցնել—վերցնել—մուսացնել։

§ 36. ԲԱՅԱՍԱԿԱՆ ՍԱՍՆԻԿՆԵՐԸ.

Բացասական մասնիկները դրուելով ածական անունների
վրայ հակառակ նշանակութիւն են տալիս նոցա և շատ ան-
գամ ածականից գոյական են կազմում։

Բացասական մասնիկներն են.

- 1. Ան. անմիտ, անխոհեմ, անհոգ (անհոգութիւն)։
- 2. Ապ. ապուշ, ապերախտ (ապերախտութիւն)։
- 3. Տ. տղէտ, տհաս, տմարդի (տմարդութիւն)։
- 4. Դժ. դժգոհ, դժբաղդ (դժբաղդութիւն)։

Հետեակ բայերից բացասական ածականներ կազմեցէք, ածա-
կաններից էլ, եթէ կարելի է, (բացասական) գոյականներ.

ա) Ան, հոգի— մարմին— սիրտ — հալը — մալը — զաւակ —
պտուղ— արժանի— վախ— երկիւղ— մեղք — օրէնք— կարգ — շարժել
— շափել— թառամել— քնասել.— բ) Ասլ, արդիւնք — օրէնք, — գ)
տ, կարող— գեղեցիկ— ձև.

§ 37. ԲԱՐԳ ԱԾԱԿԱՆՆԵՐ.

Ածական անունների բարդութեան համար երկու գըլ-
խաւոր կանոն կայ.

1. Ածականը գոյականի հետ կամ երկու գոյական իրա-
րու հետ բարդութեամբ մի ածական են կազմում, որ նշա-
նակում է ունեցող. ինչպէս քարեսիրտ (քարի սիրտ ունե-
ցող), առիծասիրտ (առիծի սիրտ ունեցող):

2. Ածական անունը բայի արմատի հետ բարդութեամբ
մի ածական է կազմում, ածականը մակբայի միտք է ստա-
նում, իսկ բայի արմատը գերբայի միտք. արագաշարժ (ա-
րագ շարժող):

Հետևեալ բառերից բաղդ ածականներ կազմեցէք.

Արի, սիրտ— թուլ, սիրտ— մեծ, սիրտ— հաստ, գլուխ— բաց,
բերան— քաղցր, ձաւն— թերի, հաստ— սուր, միտք— բարի, հոգի
— վեհ, փառք— բարձր, հասակ— օձ, լեզու— շատ, խօսիլ— քաղ-
ցըր, խօսիլ— գանդաղ, շարժել— արագ, սահել— թանձր, հոսել—
հեռու, տեսնել— սուր, տեսնել.

§ 38 ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՐԱԴՐՈՒԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԿԱԶ-
ՄՈՒԹԻՒՆԸ.

Որակական ածականների համեմատութեան աստիճան-
ների կազմութեան վրայ հետևեալ գիտելիքները կան.

1. Դրական աստիճանը ածականի սկզբնական ու ան-
փոփոխ ձևն է. ինչպէս. Տիգրանը քարի երեխայ է: Ծիծեռ-
նակը զնդեցիկ թռչուն է:

2. Բազդատական աստիճանը կազմվում է գրականից

առաջ դնելով աւելի մակբայը. ինչպէս. Տիգրանը աւելի
քարի է քան թէ Արշակը: Ծիծեռնակը աւելի գեղեցիկ է
քան թէ ճնհողակը:

Բայց շատ անգամ բազդատական աստիճանը վարվում
է գրականի ձեւով, և այն ժամանակ բազդատուող առար-
կաներից մէկը սովորաբար բացառական հոլով է գրվում,
իրև ածականի լրացուցիչ. Ծիծեռնակը ճնհողակից զնդե-
ցիկ է: Վիեննան Փարիզից փոքր է:

3. Գերադրական աստիճանը կազմվում է գրականի
սկիզբը դնելով ամենա մասնիկը. Աստուած ամենաբարի է:
Գէտը ամենամեծ ձուկն է: Կոլիբրին ամենափոքր թռչունն է:

Քիչ անգամ պատահում է գերադրական կազմել զոյն մաս-
նիկներով, որ որ ամենա մասնիկը անչարմար է. գերադոյն էակ-
բարձրազոյն իշխանութիւն. ծայրազոյն պատրիարք:

Գերադրականի տեղ էլ գրական ածականը վարվում է
այլ և այլ սաստկացուցիչ բառերով. ինչպէս. Ասիւծը շատ
գորաւոր գազան է: Տորք իշխանը սաստիկ տգեղ մարդ էր:
Ջուշանը շափազանց երկշոտ աղջիկ է:

Սյս երկու տեսակ ձեւերը բացարձակ գերադրա-
կան են, որովհետեւ շնն ցոյց տալիս ուրիշների համեմա-
տութեամբ ամենից աւելի գորաւորը, կամ տգեղը: Բայց
կայ համեմատութեամբ — գերադրական էլ, որ կազմ-
վում է գրականից առաջ դնելով ամենից բառը և ածա-
կանի կամ գոյականի վրայ դերանուանական լօգ. այսպէս.
ամենից ընտիրը. ամենից հաւատարիմը. ամենից ստորը:
Պէքինը աշխարհիս ամենից բազմամարդ քաղաքն է (այսինքն
ամէն քաղաքներից աւելի բազմամարդ քաղաք):

Վերջապէս կայ մի տեսակ գերադրական էլ, որ կազմ-
վում է գրական ածականից առաջ դնելով նոյն ածականի
յովնակի սեռական հոլովը իբր յատկացուցիչ. վատերի վատ,

անալիտանների անպիտան. յիմարների յիմարը. դժբաղդների դժբաղդը. կամ հեզնական ձևով՝ խելջքների խելջքը. Եւ նմանութեամբ գոյականը ածականի տեղ՝ օձերի օձ (փոխանակ խորամանկների խորամանկ):

Հետեւեալ որակական ածականներից կազմեցէք բազմաթիւն և գերագրական աստիճաններ վերեր չ'ընտած ձևերով.

Ծեր — բազդոտոր — դժբաղդ — օգտակար — զուարճալի — բարակ — հաստ — թանձր — բարձր — զօրաւոր — ակար — խեղճ — մաքուր — կեղտոտ — խիտտ — հզարտ — աղքատ — կորուստ:

§ 29 ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ.

Ածականը միշտ իր գոյականից առաջ է գասվում եւ հստակման մէջ անփոփոխ է մնում թէ եզակի և թէ յոգնակի. զօրօրինակ:

Եզակի

Եոգնակի

Ո. Հ.	Լաջն հրապարակ	Լաջն հրապարակներ
Ս. Տ.	Լաջն հրապարակի	Լաջն հրապարակների
Քացո.	Լաջն հրապարակից	Լաջն հրապարակներից
Գործիակ.	Լաջն հրապարակով	Լաջն հրապարակներով
Ներգոյակ.	Լաջն հրապարակում	Լաջն հրապարակներում

Նոյնպէս որոշեալ յօդը միայն գոյականի վրայ է դրբվում, իսկ անորոշը ածականից նախադաս. այսպէս. Ազնիւ մարդը. դեղեցիկ խնձորները. սիրելի բարեկամներին. մի ծանր գործ. մի հաստ փայտով, և այլն:

Քայց եթէ ածականը մենակ է, յոդով կամ առանց յօդի, գոյականի զօրութիւն ունի և հոլովում է նայելով իր վերջաւորութեան. այսպէս.

Եզակի

Եոգնակի

Ո. Հ.	Աղքատ	Աղքատներ
Ս. Տ.	Աղքատի	Աղքատների
Քացո.	Աղքատից	Աղքատներից
Գործ.	Աղքատով	Աղքատներով
Մոլ.	Ողորմելին	Ողորմելիք
Սեռ.	Ողորմելու	Ողորմելիների
Տ. Հ.	Ողորմելուն	Ողորմելիներին
Քացո.	Ողորմելուց	Ողորմելիներից
Գործ.	Ողորմելով	Ողորմելիներով

Ածականը գոյականաբար վարվում է՝ 1) երբ գոյականը մտրով է իմացվում, կամ մի անգամ յիշուելով միւս անգամ զօրութեամբ է իմացվում. զօրօրինակ. Քաղաքակիրթ մարդը կամ քաղաքակիրթը ամէն բանով գանազանվում է անկերթից. 2) երբ առարկայի վրայ վերացական կերպով է խօսվում. ինչպէս. Պէտք է նախադասել օգտակարը զուարճալից—այսինքն օգտակար բանը կամ ինչոր օգտակար է, զուարճալի է:

Գոյականաբար վարուող ածականները հոլովում են Ա և Բ հոլովման պէս. Երբորդ հոլովման պէս հոլովող ածական չկայ:

Քայց շատ անգամ անսովոր է լի վերջացած ածականները Ք հոլովման պէս հոլովել. այսպէս. զուարճալի, սիրելի ածականները հոլովում են զուարճալիի, զուարճալից, սիրելիից և այլն, և ոչ զուարճալու, սիրելուց, որ շատ անգամ հոլոված անորոշ դերբայի հետ կարող է չփոթուիլ:

Գան ածականներ, որոնք չեն կարող հսկովիլ. այսպէս են՝
քարի, թանգ, առաքինի և այլն:

Հետեալ նախադասութիւնների մէջ գրականաբար վարուող
ածականները պէտք եղած հոլովով ու թուով դրէք.

Աշխատասէր աշակերտը կը վարձատրուի, ծոյլ կը պատժուի
— Հարուստ պարտական են օգնել խեղճի:— Իմաստուն հետ քար-
կրի, յիմար հետ փլաւ մի ուտիլ (առած):— Խելօք մին (ասն):
անխելք քանի կուզես (տր.): Փոքր (բցո.) սկսիք որ մեծ հաս-
նիս:— Կոյր չեն կարող տեսնել, կաղ չեն կարող ման դալ, համը:
չեն կարող խօսիլ:— Երոպայում կոյր և համը համար ուսումնա-
րաններ կան:— Տգէտ սովորութիւնն է գիտնական չհաւանել
(դգ.):— Գեղարուեստի մէջ մշմարիտ զեղեցիկ է, սուտ տգեղ է:—
Ծիւթական աչքով ենք տեսնում, վերացական մտքով ըմբռնում:
— Սեւ ու սպիտակ մէջ մեծ տարբերութիւն կալ:— Ազնիւ պէտք
է զանազանել ստոր (բցո.), զեղեցիկը տգնել:

2. Թուական անունների կազմութիւնը:

§ 40. ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՒ ԴԱՍԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ.

Թուական անունները երկու գլխաւոր տեսակի են բա-
ժանվում.

- | | |
|--------------|--------------------|
| 1. Զանազական | 2. Դասական |
| 1. Մէկ, մի | Առաջին, (մէկերորդ) |
| 2. Երկու | Երկրորդ |
| 3. Երեք | Երրորդ |
| 4. Չորս | Չորրորդ |

- | | |
|-------------------------|---------------------------|
| 5. Հինգ | Հինգերորդ |
| 6. Վեց | Վեցերորդ |
| 7. Եօթը | Եօթներորդ |
| 8. Ութ, ութը | Ութերորդ |
| 9. Ինը | Իններորդ |
| 10. Տասը | Տասներորդ |
| 11. Տասնամէկ, տասնեմէկ | Տասնամէկերորդ |
| 12. Տասներկու | Տասներկուերորդ |
| 13. Տասներեք | Տասներեքերորդ |
| 14. Տասնչորս | Տասնչորսերորդ |
| 15. Տասնհինգ | Տասնհինգերորդ |
| 16. Տասնվեց | Տասնվեցերորդ |
| 17. Տասնեօթը | Տասնեօթերորդ |
| 18. Տասնութը | Տասնութերորդ |
| 19. Տասնիներ | Տասնիներորդ |
| 20. Քսան | Քսաներորդ |
| 21. Քսանամէկ և ալն | Քսանամէկերորդ և ալն |
| 30. Երեսուն | Երեսուներորդ (երեսներորդ) |
| 40. Քառասուն | Քառասուներորդ |
| 50. Յիսուն | Յիսուներորդ |
| 60. Վաթսուն | Վաթսուներորդ |
| 70. Եօթանասուն | Եօթանասուներորդ |
| 80. Ութսուն | Ութսուներորդ |
| 90. Ինըսուն | Ինըսուներորդ |
| 100. Հարիւր | Հարիւրերորդ |
| 101. Հարիւր մէկ և ալն | Հարիւրմէկերորդ |
| 200. Երկու հարիւր | Երկու հարիւրերորդ |
| 500. Հինգ հարիւր | Հինգ հարիւրերորդ |
| 1000. Հազար | Հազարերորդ |
| 1001. Հազարու մէկ և ալն | Հազարամէկերորդ և ալն |
| 10000. Տասը հազար | Տասը հազարերորդ |
| 100000. Հարիւր հազար | Հարիւր հազարերորդ |
| 1000000. Միլիօն | Միլիոներորդ |

1. Քանակական թուականները մէկ-ից մինչև տասը, նոյնպէս և քսան, հարիւր, հազար միլիոն պարզ են, տասնամէկից մինչև տասնութնը բարդ. իսկ երեսուն, քառասուն, յիսուն և այլն, թէպէտ իսկապէս բարդ են, այսինքն երեք տասր, հինգ տասր, բայց որովհետեւ երկու բառերը որոշ չեն երևում, կարող են ամանցեալ համարուիլ:

2. Դասական թուականները, բացի առաջին, ամանցվում են քանակական թուականներից նորոք մասնիկով*. հինգերորդ, հոթներորդ, հարիւրերորդ:—Մէկերորդ զործ է ամվում միայն ուրիշ թուականի հետ. քսանումէկերորդ, ութսունումէկերորդ:

* երկրորդ, նորրորդ, չորրորդ ընդունում են ըորդ մասնիկ.

3. Քանակական թուականները ն յօդ և էլ մասնիկ ընդունելով կազմում են նոր ձևով թուականներ. երկուսն էլ, չորսն էլ, տասն էլ, հազարն էլ և այլն, որ նշանակում է՝ երկուսը միասին, հազարը միասին:

Գրք. երկուսեան կամ երկօքին, չորեքին, երկուսասանքին:

4. Քանակական թուականները նոց մասնիկ ընդունելով կազմում են արժէք ու շափ ցոյց տուող անուններ. երեքանոց, հնգանոց, հարիւրանոց.

Հետեալ թուանշանները տառերով գրեցէք և ցոյց տուէք ուղղագրութեան առանձնութիւնները.

- 1. 1 ին. 2. 2-րդ. 30. 30-րդ. 4. 4-րդ. 40. 40-րդ. 5. 5-րդ. 50. 50-րդ. 6. 60-րդ. 7. 70-րդ. 8. 80-րդ. 9. 9-րդ. 90. 90 րդ. 10. 15. 17. 18. 18-րդ. 19-րդ.

§ 41 ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ.

Թուական անունները, իբրև հասարակ ամականներ, գոյականից առաջ են դասվում և անփոփոխ մնում. Եր-

կու մարդու. Եթը զինուորից. Հարիւր հոգով. Տասներորդ օրը:

Իսկ եթէ մենակ մնան, գոյականի պօրութիւն ունին և հոլովում են առաջին հոլովման պէս: Միայն նկատելու է որ՝

1. Մի թուականը՝ եթէ յօդ ունենայ կամ հոլովի, ն տառն է ընդունում, իսկ երկու — ս տառը. մինի, մինից, մինով, մինում. երկուսը, երկուսի, երկուսից երկուսով:

2. Եթը և ութը թուականները հոլովելիս ը տառը կորցնում են. եթի, ութի, ութից:

3. Ինը, տասը թուականները ը տառը փոխում են ն. ըննի, տասնի, տասնով:

4. Երկու և աւելի բառից բաղկացած դասական թուականներից առաջինը քանակականի ձև է ընդունում, վերջինը նորոք մասնիկ է առնում և հոլովում է. Հարիւր—քսանում-երորդին. Հազար—վեցհարիւր-երորդից:

5. Բացարձակ թուականները դասականների տեղ վարվում են տարբերի և ամսաթիւ ցոյց տալու համար. ինչպէս. Լեոն Զ մեաւ Փարիզում հազար երեք հարիւր իննուսուն երեքին, նոյեմբերի տասնուիննին (փոխանակ 1393-րդին, նոյեմբերի 19-րդին):

Հետեալ նախադասութիւնների մէջ թուանշանով գրած թուականները տառերով գրեցէք.

- 2 × 2=4, 7 × 7=49. Հինգը 10-ի կէսն է. — 50-ի կէսը 25 է. Ժամը 9¹/₂ է. Պատարազը սկսվում է 10¹/₂-ին. Մենք ճաշ ենք ուտում ճիշտ 2-ին. Փարոսը սկսվում է սովորաբար երեկոյեան 7¹/₂-ին. Շարաթուան մէջ 6 օր աշխատում ենք և 7-րդ օրը հանգստանում. — Չատիկ 40-րդ օրը Համբարձում է, իսկ 50-րդ օրը Հոգեգալուստ: — 56-ը որ 7-ով բաժանենք, կը ստանանք 8: — 99-ին 1 պակաս է որ 100 ստանանք. — Մեծ Մա-

սիւր 16000 ոսնայափ բարձրութիւն ունի—12-ը 2 շնգամ
աւելի է 6-ից, 4 անգամ աւելի է 3-ից և 6 անգամ աւելի է
2-ից:—Կոլոմբոսը գտաւ Ամերիկան 1492 թուականին:—Տպագրու-
թիւնը գտնուեցաւ 1440-ին:

° Շատերը սովորութիւն են արել 9 1/2-ը (ինն ու կէս) կար-
գալ տասնի կէս, որ սխալ է:

Է. Դերանունների կազմութիւնը:

§ 42. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

Դերանունները գործ են ածվում հարցական, պա-
տասխանական և պատմական նախադասութիւնների մէջ:
Հարցական նախադասութիւնների մէջ գործ են դրվում
հարցական դերանունները, իսկ պատասխանական և պատ-
մական նախադասութիւնների մէջ նոցա համապատասխա-
նող անձնական ցուցական, ստացական և անորոշ դերա-
նունները:

հարցական

Պատասխանական

ՈՎ, Ի՞նչ.

Անձնական

ես, դու, ինքը.

Ցուցական

սա, դա, նա.

Անորոշ

որմին, իքմին, ոմանք.

Քաղաքական

ոչոք, ոչինչ.

Ո՞ր.

Ցուցական

այս, այդ, այն,

Անորոշ

միւս, ուրիշ, իրաքանչիւր, ամէն,
ամենայն, նոյն, միևնոյն, որեւիցէ:

(Ո՞ւմ.)

Ստացական
իմ, քո, իւր, մեր, ձեր, իրանց.

Անորոշ

Ո՞րպիսի.

միմեանց, մէկզմէկու, իրարու-
այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյն-
պիսի, որպիսի ևլ իցէ.

Ո՞րքան, քանի՞.

այսքան, այդքան, այնքան, նոյնքան,
մի քանի.

Քացի սորանից երկրորդական նախադասութիւնների
մէջ գործ է ածվում որ յարաբերական դերանունը, երբ որ
երկրորդական նախադասութիւնները կապում է գլխաւոր-
ների հետ:

§ 43. ԳՈՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ.

1. Հարցական

Եզակի (անլոգնական)

Պ.	Ո՞վ	Ի՞նչ
Հայց.	Ո՞ւմ	Ի՞նչ
Ս. Ց.	Ո՞ւմ	Ինչի, ինչին
Քացո.	Ումից, ումից	Ինչից
Գործ.	Ումով	Ինչով
Ծերգ.	—	Ինչով

2. Անձնական

Եզակի

	1-ին դէմք	2-րդ դէմք	3-րդ դէմք
Ուղ.	ես	Դու	Ինքը*
Սեռ.	իմ	Քո	Իր, իւր
Տ. Հ.	ինձ	Քեզ	Իրան

Բացո.	Ինձանից, ինձնից	Քեզանից, քեզնից	Իրանից
Գործ.	Ինձանով	Քեզանով	Իրանով
Ներգ.	Ինձանում	Քեզանում	Իրանում

* Ի ն ք ը, ի ր ա ն ք անձնականների մտքով գործ են անում լաճախ նա ն ո ք ա ցուցականները:

Յոգնակի

Ուղ.	Մենք	Գուք	Իրանք
Սեն.	Մեր	Ձեր	Իրանց
Տ. չ.	Մեզ	Ձեզ	Իւանց
Բացո.	Մեզանից, մեզնից	Ձեզանից, ձեզնից	Իրանցից
Գործ.	Մեզանով	Ձեզանով	Իրանցով
Ներգ.	Մեզանում	Ձեզանում	Իրանցում

3. Յուցական

Նշակի

Յոգնակի

	(Նոր ձև)	(Հին ձև)	(Նոր ձև)	(Հին ձև)
Ուղ.	Սա*	Սա	Սրանք	Սոքա
Սեն.	Սրա	Սորա	Սրանց	Սոցա
Տ. չ.	Սրան	Սորան	Սրանց	Սոցա
Բացո.	Սրանից	Սորանից	Սրանցից	Սոցանից
Գործ.	Սրանով	Սորանով	Սրանցով	Սոցանով
Ներգ.	Սրանում	Սորանում	Սրանցում	Սոցանում

Այսպէս հոլովում են դա և նա գուցականները:

* Երկու ձևն էլ անխափր գործ են անում, առաջինը աւելի բնական է լեզուի մէջ, երկրորդը գրատրի մէջ:

Գոյական գերանունների հոլովման և գործածութեան վրայ հետևեալ գիտելիքները կան.

1. Ո՛վ և ինչ հարցականները յոգնակի չունին, միայն ուղղականները երբեմն գործ են անում: Ո՛վքեր եկան մեղ մօտ: Ի՞նչքան շանցան գլխով:

2. Անձնակառի գերանունների տրականը երբեմն կրկնութեամբ գործ է անում. *ինձ ու ինձ, չեզ ու քեզ, իրան իրան, մեզ ու մեզ, ձեզ ու ձեզ, իրանց իրանց*: Ինձ ու ինձ մտածում էի անցած օրերիս վրայ:

3. Անձնական գերանունների տրականը գործ է անում երբեմն ստացական գերանունների հետ. *ի՞նչ ինձ, քոնք քեզ, իրանը իրան, մերը մեզ, ձերը ձեզ, իրանցն իրանց*: Մինչև որ այս բանը գլուխ հանեմ, *ի՞նչ ինձ կը հասնի*:

4. Ինքը երրորդ գէմը գերանունական յոգով վարվում է միւս հարմիրների հետ էլ եղակի և յոգնակի, խօսքին աւելի ոյժ տալու համար. *ևս ինքս, դու ինքդ, մենք ինքներս, դուք ինքներդ*: Մենք ինքներս լաւ ենք իմանում մեր օգուտն ու վնասը: (Զօրութեամբ իմացվում է՝ ձեր խորհրդին կարօտ չենք:)

Նոյն գործածութիւնը երևում է երբեմն և ցուցական գերանունների հետ. *սա, ինքը, նա ինքը, նոքա իրանք*:

5. Անձնական և ցուցական գերանունների մօտ աւելագրութեամբ գործ են անում երբեմն եմ՝ բայի ներկան ու անց. անկատարը որ յարարեցականով, խօսքին աւելի սրաշուժիւն տալու համար. *ևս եմ որ, մենք ենք որ, դուք եմ որ, և այլն*: Գուք էք որ ամէն բանի առաջ դժտարութիւններ էք հանում: Սա է որ մեզ այնքան վնասներ հասցրեց: (Այսինքն դուք և ոչ ուրիշները, սա եւ ոչ մի այլ մարդ:)

6. Անձնական և ցուցական գերանունների գործածականը վարվում է, երբ հարկ է ցոյց տալ թէ գործողութիւնը ում ձեռով կամ միջնորդութեամբ է կատարվում.

ինչպէս. Եղբայրս քեզանով կամ սրանով փրկուեցաւ վտանգից: Իսկ եթէ պէտք լինի զորոժողութեան մասնակցութիւնը ցոյց տալ, վարվում են սեռ. և տրակ. հոլովները հետ նախադրութեամբ. Եղբայրս քեզ հետ կամ սորա հետ փրկուեցաւ վտանգից:

7. Անձնական և ցուցական դերանունների յոգնակի ներգոյականը գործ է ածվում երբեմն անշունչ առարկաների վերաբերութեամբ: Մեզանում ամառը աւելի շար է լինում քան թէ ձնը: Սրանցում լաւ մրդեր կան:— այսինքն մեր, ձեր երկրում, սրանց պարտէզում:

8. Անձնական դերանունների տեղ կամ նոցա հետ միասին գոյականների վերջին ծայրը աւելացնում են երբեմն ս, ռ, ն, գիմորոջ յօդերը. 1) խօսքին աւելի ոյժ տալու համար. ինչպէս. Երարածներս չենք կարող պատմել Երարչի բոլոր փառքն ու մեծութիւնը.—այսինքն՝ մենք արարածներ: Ես ուսուցիչս քանի ու քանի անգամ պատուիրեցի ձեզ աշակերտներին որ ժամանակին ուսումնարան գաք: 2) համեստութիւն ցոյց տալու համար, այսպէս ասում են՝ անարժանս, մեղաւորս. խեղճիս գլխին ինչե՛ր բերաւ:

Հետեանալ նախադասութիւնների մէջ գտէք իւրաքանչիւր դերանուն տեսակը և հոլովը:

Ո՞ւմ վրայ էք խօսում: Ո՞ւրքեր եկան մեզ մօտ:—Ո՞ւմ մօտ էք գնում:—Ո՞ւմ հետ գնացիք ուսումնարան:—Դու ինձ հետ տանը կը մնաս: Ինչո՞ւ էք պարապում: Ինչի՞ց էք վախենում:—Ո՞ւմից ստացար ալդ գրքերը:—Ինչն՞ խօսեցան ինձ վրայ:—Ես կ'ուղարկեմ քեզ հայերէն գրքեր, իսկ դու ինձ ուղարկէ՛ ֆրանսերէն գրքեր:—Ես ձեր մասին շատ լաւ բաներ եմ լսել:—Մի խնդրէ՛ք մեզ. ձեզ համար առանց խնդիրքի պատրաստ ենք ամէն բան ա-

նելու:—Մենք գնում ենք գրասենյակ. դուք չէք կամենում ինձ հետ գալ:—Ես խնդրում է քեզ որ իրան շուտ շուտ համակ գրես:—Իրանք էլ չեն իմանում թէ ինչ են անում: Դուք ինքներդ էք ձեր թշուառութեան պատճառը:—Թող ամէն մարդ իւր համար խօսի:—Բեզանից չէի սպասում այդպիսի ապերախութեան:—Ի՞նչ լանցանք տեսար սրանում:—Նստի՛ր նորա կողքին:—Դորանից կարող ես իմանալ մեր գործի գրութիւնը:—Ես իմ քոլոր գործերը լանձնեցի սոցա ևւ նոցա:—Դոցա համար է իմ քոլոր աշխատանքը:—Իորա՞ն տեսար թէ դորա եղբօրը:

§ 44. ԱՅՄԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ:

Ածական դերանունները, հասարակ ածականների պէս, գոյականից նախադաս են վարվում և հոլովման մէջ անփոփոխ են մնում. իսկ եթէ մենակ մնան, գոյականի զօրութիւն ունին և հոլովում են: Այսպէս՝

1. Ո՞ր հարցականը յօդով կամ անյօդ գոյական է պահանջում. ո՞ր մարդը, ո՞ր մարդու, ո՞ր մարդով. ո՞ր տները, ո՞ր տներից և այլն:

Ուղղականը և հայցականը գոյականաբար են վարվում. եզակին յօդով, իսկ յոգնակին անյօդ. Ո՞րն է ձեր եղբայրը: Ո՞րը տամ, ո՞րը պահեմ: Որո՞նք են ձեր բարեկամները:

2. Ո՞ր հարցականից առաջ է գալիս որ յարաբերական գոյական դերանունը, որ հոլովում է այսպէս.

Ո. Հ.	Որ	Որո՞նք
Ստո.	Որի	Որո՞նց
Տրակ.	Որէն	Որո՞նց
Բացո.	Որից	Որո՞նցից
Գործ.	Որով	Որո՞նցով
Ներգ.	—	Որո՞նցում

Այս, այդ, այն ցուցականների գոյականը որոշեալ յօդ է պահանջում և ոչ գերանունական (ցուցական). ուստի չէ ասվում այս գիրքս, այս գրքիս, այս գրքիցս, այլ՝

Այս գիրքը	Այս գրքերը
Այս գրքի	Այս գրքերի
Այս գրքին	Այս գրքերին
Այս գրքիցը	Այս գրքերիցը
Այս գրքովը	Այս գրքերովը
Այս գրքումը	Այս գրքերումը

Քիչ անգամ է պատահում ցուցական գերանուն և որոշեալ յօդի տեղ գերանունական յօդ դնել սաստիկութեան համար. ինչպէս, Աշխարհիս փառքն ու պատիւները անցաւոր են: Երկիրս պտտում է ինքն իր վրայ և արեգակի շուրջը: Նոյնպէս. այսօրուան օրս, այժմեան ժամանակս:

Այս, այդ, այն շատ անգամ մենակ էլ են վարվում իրրեւ գոյական, բայց միշտ անփոփոխ են մնում. Այս է ձեր հաշիւը: Այդ էր իմ ուղածը: Այս թնոգ, այն տար:

3. Ստացական գերանունները որոշեալ յօդով գոյական են պահանջում, որ միայն հոլովում է այսպէս.

1. իմ, քո, իւր եզակի ստացականները եզակի գոյական են պահանջում, եթէ ստացուածը մէկ է. իմ այգին, իւր այգին. յոգնակի գոյական՝ եթէ ստացուածը շատ է. իմ այգիքը, իւր այգիքը:

2. Մեր, ձեր, իրանց յոգնակի ստացականները եզակի գոյական են պահանջում, եթէ ստացուածը մէկ է. մեր այգին, ձեր այգին, իրանց այգին. յոգնակի գոյական՝ եթէ ստացուին էլ, ստացածն էլ շատ է. մեր այգիքը, ձեր այգիքը, իրանց այգիքը:

Աւելի բացայայտութեան համար դնենք այստեղ ստացական անունների հոլովման պատկերը իրանց գոյականների հետ:

1. Իմ, Քո, Իւր.

Եզակի (եզ. ստացող և եզ. ստացուած)

Ո. Հ.	Իմ	Քո	Իւր	Գիւղը
Ս. Տ.	Իմ	Քո	Իւր	Գիւղին*
Քացո.	Իմ	Քո	Իւր	Գիւղիցը
Գործ.	Իմ	Քո	Իւր	Գիւղովը
Ներգ.	Իմ	Քո	Իւր	Գիւղումը

Յոգնակի (եզ. ստացող և յոգնակի ստացուած)

Ո. Հ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերը
Ս. Տ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերին
Քացո.	Իմ	Քո	Իւր	Գիւղերիցը
Գործ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերովը
Ներգ.	Իմ	Քո	Իւր	Գիւղերումը

2. Մեր, Ձեր, Իրանց

Եզակի (յոգ. ստացող և եզ. ստացուած).

Ո. Հ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղը
Ս. Տ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղին
Քացո.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղիցը
Գործ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղովը
Ներգ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղումը

Յոգնակի (յոգն. ստացող և յոգն. ստացուած)

Ո. Հ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերը
Ս. Տ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերին
Քացո.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերիցը

Գործ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերովը
Ներգ.	Մեր	Ձեր	Իրանց	Գիւղերումը

ն որոշեալ լօրը այս եւ յաջորդ օրինակների մէջ տրականին է վերաբերում եւ ոչ սեռականին (§31)

Հատ անգամ բաւական է համարվում իմ, քո, իւր ստացականների տեղ միայն դերանուանական (ստացական) յօդ դնել գոյականի վրայ. ինչպէս. գիւղս, գիւղերս, փոխանակ իմ գիւղը, իմ գիւղերը*):

Ահաւասիկ այս տեսակ հոլովման ամբողջ օրինակը.

Նզական

Ո. Հ.	Գիւղս	Գիւղը	Գիւղը (ս. քինքն իւր գիւղը)
Ս. Տ.	Գիւղիս	Գիւղիդ	Գիւղի
Բացո.	Գիւղիցս	Գիւղիցը	Գիւղիցը
Գործ.	Գիւղովս	Գիւղովը	Գիւղովը
Ներգ.	Գիւղումս	Գիւղումը	Գիւղումը

Յոգնական

Ո. Հ.	Գիւղերս	Գիւղերը	Գիւղերը
Ս. Տ.	Գիւղերիս	Գիւղերիդ	Գիւղերին
Բացո.	Գիւղերիցս	Գիւղերիցը	Գիւղերիցը
Գործ.	Գիւղերովս	Գիւղերովը	Գիւղերովը
Ներգ.	Գիւղերումս	Գիւղերումը	Գիւղերումը

* Աւելորդ կրկնութիւն է ստացական լօրի հետ ստացական դերանուն գործ դնել. Իմ տունս ծախեցի. Քո հօրիցդ լուր ունիս.

Իսկ մեր, ձեր, իրանց ստացականների գոյականը միայն այն ժամանակ կարող է այս ձեւով վարուիլ, երբ նախադասութեան միւս բառերից իմացվում է թէ որ դերանունը գորութեամբ է իմացվում. ինչպէս. ճանապարհին աւազակներ պատահեցան մեզ եւ ունեցածներս ձեռնե-

րիցս խլեցին. այսինքն մեր ունեցածները մեր ձեռներիցը. Ստացական դերանունները, եթէ մենակ մնան, գոյականի գորութիւն ունին եւ յօդ առնելով հոլովում են այսպէս.

Իմս կամ իմը, իմին, իմիցը, իմովը, իմումը, իմերը, իմերին, իմերիցը, իմերովը, իմերումը:

Քոնդ կամ քոնը, քոնին, քոնիցը, քոնովը, քոնումը, քոները եւ այլն:

Իւրը կամ իրանը, իրանին, իրանիցը, իրանովը, իրանումը, իրանները եւ այլն:

Մերը, մերին, մերիցը, մերովը, մերումը, մերերը եւ այլն:

Ձերը, ձերին, ձերիցը, ձերովը, ձերումը, ձերերը եւ այլն:

Իրանցը, իրանցին, իրանցիցը, իրանցովը, իրանցումը, իրանցները եւ այլն:

Այսպէս ասում են՝ Իմս ու քոնս տուն է քանդում. Մենք մերովը գոհ ենք, գուք էլ ձերովը:

Բացի սորանից, մեր, ձեր առանձին ձեւով յոգնակի են լինում. մերոնք, մերոնց, մերոնցից. ձերոնք, ձերոնց ձերոնցից.—Այսօր մերոնք գիւղ գնացին. այսինքն՝ մեր ընտանիքը կամ մերձաւորները:

Հետեւել նախադասութիւնների մէջ գտէք իւրաքանչիւր դերանուն տեսակը եւ հոլովը.

Ո՞ր աշակերտը կամ աշակերտներից ո՞րը արժանացաւ առաջին մրցանակը ստանալու.—Ո՞ր քարեկամները կամ քարեկամներից որո՞նք արտեց են. Այս գրքերից ո՞րն առնեմ, ո՞րը տամ. Ահա այն զօրավարը, որին պարտական է քաղաքը իւր ազատութիւնը.—Մեր պարտէզումը շատ պտղատու ծառեր կան,

որոնց մեծ մասը հօրս տնկածն են:—Քարեկամս, որընց ստացայ այս նամակը, արժանաւոր մարդ է: Ես պատիւ չունիմ ճանաչելու ոչ ձեր հօրը, ոչ ձեր մօրը:—Իմ գրիչը քոնիցը լաւ է գրում:—Ձեր կաշուածները ծախու են:—Այս տունը իմն է:—Ձերոնց հետ տեսնուեցայ ու խօսեցայ:—Իմ թողութիւնը պրծաւ, տո՛ւր ինձ քոնիցը մէկ-երկու թերթ: Իմ գրածի մէջ աւելի սխալ կայ քան թէ քոնի մէջ:—Այս գիրքը իմն է թէ քոնն է: Ան՛րն են թէ ձերն են այս մատիտները:

§ 45. ԱՆՈՐՈՇ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ

Անորոշ դերանունների մէջ կան որ գոյական են, կան որ ածական են, կան էլ որ միանգամայն գոյական և ածական են, այսինքն կարող են լի է գոյականաբար և լի ածականաբար վարուիլ:

1. Գոյական անորոշ դերանուններ. որմին (կարգն օգմին), իքմին, ոչոք, ոչինչ, ոմանք, ի ար, մէկզմեկ, միմնացն:

	Եզակի		Յոգնակի	
Ո. Հ.	Ոքմին	Իքմին	Ոքմիններ (մեեր)	Իքմիններ (մեեր)
Ո. Տ.	Ոքմինի (մեի)	Իքմինի (մեի)	Ոքմինների	Իքմինների
Քացո.	Ոքմինից	Իքմինից	Ոքմիններից	Իքմիններից
Գործ.	Ոքմինով	Իքմինով	Ոքմիններով	Իքմիններով
Ներգ.	—	—	—	—

	Եզակի (անյոգնական)		Յոգնակի (անեզական)	
Ո. Հ.	Ոչոք	Ոչինչ	Ոմանք	
Ո. Տ.	Ոչոքի	Ոչնչի	Ոմանց	
Քացո.	Ոչոքից	Ոչնչից	Ոմանցից	
Գործ.	(Ոչոքով)	Ոչնչով	—	
Ներգ.	—	Ոչնչում	—	

Եզականի տեղ գործ է ասվում մէկը կամ երբեմն նաև մարդ գոյականը. Մարդ չէ իմանում թէ ինչ խօսի:

	Եզակի	Յոգնակի
Հայց.	Իրար	Մէկզմէկ
Ո. Տ.	Իրարու	Մէկզմէկու
Քացո.	Իրարուց	Մէկզմէկուց
Գործ.	Իրարով	Մէկզմէկով
		Միմեանց
		Միմեանց
		Միմեանցից
		Միմեանցով

2. Ածական անորոշ դերանունները իրանցից յետոյ միշտ գոյական են պահանջում ու երբէք չեն հօլովում. ինչպէս. Ամենայն մարդ պէտք է իր վերջը մտածէ: Աշխատելու է որեւիցէ կերպով վերջ տալ այս գործին: Որպիսի եւիցէ գործեր:

3. Միացած բոլոր անորոշ դերանունները ածական են՝ եթէ գոյականի հետ են, գոյական են՝ եթէ մենակ են և այն ժամանակ որոշեալ յօդ են առնում և հօլովում են այսպէս.

Միւսը, ուրիշը, իւրաքանչիւրը կանոնաւոր են հօլովում, վերջինը միայն եզակի. Միւսը, միւսին, միւսիցը, միւսովը, միւսումը, միւսները և այլն:

Ուրիշը, ուրիշին, ուրիշիցը, ուրիշովը, ուրիշումը, ուրիշները և այլն:

Ամէն կամ քով ամէնը հօլովում է եզակի, բայց յոգնականի միտք ունի. Ամէնը, ամէնին, ամէնից կամ ամէնիցը.

Որպիսի, այսպիսի և այլն միայն յոգնակի են հօլովում: Այսպիսիքը կամ այսպիսիները, այսպիսիներիցը, այնպիսիքը, այնպիսիներին, նոյնպիսիներիցը:

Որքանը, այսքանը, նոյնքանը հօլովում են եզ. և յոգն.

Միքանի, քանի յօդից առաջ ո տառ են բնդունում և հօլովում են եզակի և յոգնակի, բայց միշտ յոգնակի նշանակութիւն ունին:

Մի քանիսը, մի քանիսին, մի քանիսիցը, մի քանիսու-
վը, մի քանիսումը. քանիսները, քանիսներին, քանիսների-
ցը, քանիսներովը, քանիսներումը:

Նոյնը, միևնոյնը սովորաբար միայն ուղղական և հայ-
ցական են գործածվում:

Հետևեալ նախադասութիւնների մէջ անորոշ դերանունները
հոլովները ցոյց տուէք.

Ալէքսանդրապօլի նոր եկեղեցին համարեա ոչնչով չէ զանա-
զանվում Անիի մայր եկեղեցուց.— Որմինի հետ տեսնուեցար ալսոր.
— Որմինի վրայ խօսեցար նորա հետ.— Ոչոքի չեմ տեսել և ոչնչի
վրայ չեմ խօսել.— Երէկ ես տեսայ ոմանց կամ մէկ քանիսին
իմ առաջուան ընկերներից.— Բանով զնեցիր այս գիրքը.— Այս-
երեխայքը զանազանվում են միմեանցից կամ մէկզմէկուց թէ
ընտարութեամբ, թէ ընդունակութեամբ.— Աշակերտներից մի քա-
նիսին պատճեցին, միւսներին ներեցին.— Բանիսը կան որ
տառերը չեն իմանում.— Իւրաքանչիւրից իւր կարողութեան չափ
է պահանջվում:

Ը. Բայերի կազմութիւնը:

§ 46. ԲԱՅԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ:

Բայերը ցոյց են տալիս գործողութիւն և զրուծիւն,
կամ նաև որպիսութիւն որ հետզհետէ փոխվում է, ուս-
տի և կազմվում են.

1. Բայերի արմատներից. ըերել, կարդալ, խոստանալ.
2. Գոյական անուններից. ջրել աղալ, փրփրիլ, լուսա-
նալ:

3. Ածական անուններից. դողիլ, կարմրիլ, ծերանալ:
4. Մակբայներից. հեռանալ, մտանալ, ուշանալ:

§ 47. ԲԱՅԵՐԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— ՊԱՐՉ, ԲԱՐԳ ԵՒ ԲԱՂԱԿՐԵԱԼ ԲԱՅԵՐ:

Բայերը ունին չորս վերջաւորութիւն. ել, իլ, ալ, անալ-
որոնց վրայ հիմնվում են բայերի չորս կանոնաւոր խո-
նարհմունքը: Եյս վերջաւորութիւնները գրուելով բայերի
արմատների վրայ՝ կազմվում են.

1. Պարզ բայեր. ինչպէս, գովել, բնակել, կարդալ,
բարկանալ:
2. Բարդ բայեր. ինչպէս. պատուասիրել, կառավարել,
վարձատրել:

Գ. Բազադրեալ բայեր, որոնք կազմվում են գոյականով
և մանուանց բայի արմատով ու բայով. գործընկալ. ծայն
տալ, աչք ածել, պար գալ, կուլ զնալ և այլն:

Չատ անգամ բայի արմատի ու վերջաւորութեան մէջ
զանազան տառեր ու մասնիկներ են մտնում և կազմում
են ամանցեալ բայեր. այսպէս.

1) Ն տառը, որ անցեալ ժամանակում, հրամայականում
և անցեալ գերբայում դուրս է բնկնում. ինչպէս. գտնել,
գտայ, գտիր, գտել, գտած:

2) Շ տառը, որ միևնոյն ժամանակներում դուրս է ընկ-
նում. փախելի, փախայ, փախիր, փախել, փախած:

3) ցն մասնիկը, որ չէզոք բայից ներգործական է կազ-
մում. խաղալ-խաղացնել, շորանալ-շորացնել, իսկ ներգործա-
կան բայից կրկին ներգործական կամ անցողական. մո-
ռանալ-մոռացնել, սովորիլ-սովորեցնել:

4) ոտ, տ մասնիկները, որ ցոյց են տալիս գործողու-

Թեան մանր կրկնողութիւնը կամ թէ գործողութիւնը, որ շատ միատեսակ առարկաների վրայ է կատարուում. բռնութիւն, մորթոտել, կտրտել, կտրտել:

Չատ անկամ նոյն մտքով բայերի արմատն է կրկնուում. այսպէս են՝ ծղձկել, թափել, շափել. և մանաւանդ հնչիւնների նմանողութեամբ. խշխշալ, մոմալ, փսփոալ, մրթմրթալ, վնգնգալ, ղմրղմրալ:

Նկատելու է որ բարդ բառի երկրորդ մասը պարզ արմատ պիտի լինի. այսպէս՝ կարգողով բարդուած է կարգ գոյականով և զնկ բառով, որի արմատն է վիթ. քտե.ել բարդուած է լուր գոյ. և տեսնել բառով, որի արմատն է տես:

Բաղադրեալ բայերի մէջ կան որ պարզ ձևով էլ գործ են անում, բայց նշանակութիւնները փոխուում է. այսպէս են թսփել և թափ տալ, քաշել և քաշ տալ:

1. Հետեւեալ արմատներից պարզ բայեր կ' զմեցէք.

Աս — խօս կար — գործ — շարժ — ծնծ — բեր — սպան — հան — շէն — սէր — աէր — զիծ — զին — լուծ — սուր — ջուր — կուլ — հաշիւ — թիւ — հաւան — նիստ — աշխատ — խաղ — խեղճ — զեղջ — հազ — սղթ — մեծ — փոքր — ծանր — զօր — գող — սև:

2. Հետեւեալ արմատներից ու բայերից կազմեցէք անանցեալ բայեր.

Տես — հաս — գետ — մուտք — մեռ — հատ — (Ն տառով) — փսխ — կոր — սառ — հալ — (Հ տառով) — կարգալ — ուտել — խմել — ճանաչել — մոռանալ — հաւանել — մեծանալ — չորանալ — տաքանալ — (ցնկել մասն.):

3. Հետեւեալ բայերից կազմեցէք գործողութեան կրկնողութիւն ցոյց տուող բայեր.

Կայել — բռնել — նստել — պոկել — խոցել — կտրել — կտրել — պատռել — (ՈՍ, ՍՈ մասն.) — ձգել — քաշել — թափել — վազել — շափել — կայել — ծակել — ճաքել — տրաքել — (արմատի կրկնութեամբ):

4. Յոյց տուէք հետեւեալ պարզ ու բաղադրեալ բայերի նշանակութիւնը.

Քաշել, քաշ տալ — թափել, թափ տալ — շափել, շափ տալ — մանել, ման ածել — զիծել, զէմ անել:

§ 48. ԲԱՅՅՐԻ ՊԱՐՁ ԵՒ ԲԱՂԱԳԻՆԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ:

Բայերը երկու տեսակ ժամանակ ունին՝ պարզ և ըաղաղրեալ:

Պարզ ժամանակները կազմուում են բայի արմատի վրայ այլ և այլ վերջաւորութիւններ աւելացնելով. ինչպէս. սպասեցի, սպասէ, սպասող:

Բաղադրեալ ժամանակները կազմուում են զերբայներով և նմ ու յինիմ շէղոք բայերով, որ այս պատճառով կոչվում են օժանդակ կամ օգնական բայեր. սպասել նմ, սպասելու էի, սպասած կը յինի:

Ահաւասիկ պարզ և բաղադրեալ ժամանակների անունները իրանց խոնարհման կարգով.

Ա. Սահմանական եղանակն ունի եօթը ժամանակ.

1. Ներկայ. Ես տեսնում եմ:
2. Անցեալ անկատար. Ես տեսնում էի:
3. Անցեալ կատարեալ. Ես տեսայ:
4. Վաղակատար. Ես տեսել եմ:
5. Գերակատար. Ես տեսել էի:
6. Ապառնի պարզ. Ես կը տեսնեմ:
7. Ապառնի ըաղաղրեալ կամ անցեալ. Ես տեսած կը լինիմ:

Բ. Պայմանական եղանակն ունի երկու ժամանակ.

1. Ներկայ. Ես կը տեսնէի:
2. Անցեալ. Ես տեսած կը լինէի:

Գ. Հրամայական եղանակն ունի միայն մի ժամանակ, որ թէ ներկայի և թէ ապառնի միտք ունի. Տես, տեսէր:

Դ. Ստորագասական եղանակն ունի չորս ժամանակ.

1. Ներկայ կամ ապառնի. նա կամենում է որ ես տեսնեմ:

2 Անկատար. նա կամենում էր որ ես տեսնէի:

3. Կատարեալ. նա կատարեց որ ես տեսամ լինիմ:

4. Գերադատար. նա կատարեց որ ես տեսամ լինէի:

Ե. Գերբայն ունի երեք ժամանակ.

1. Ներկայ. Տեսնող. 2. Անցեալ. Տեսիլ, տեսած: 3. Ապառնի. Տեսնելու:

Սահմ. ներկ. և անց. անկատարի ում մասնիկը գոյ. տեսնելու ներդրականի վերջաւորութիւնն է, այնպէս որ ես տեսնում եմ, իսկայէս նշանակում է ես տեսնելու մէջ եմ, ես տեսնելու էի.— ես տեսնելու մէջ էի:

Ապառնի և պայմ. ժամանակների կը մասնիկը առաջ եկած է է համարվում կամ բայի եզ. 3-րդ դեմքից ա շաղկապով, այսինքն կայ ու, որ կըճատուել, եղել է նախ կ'ու, կու և վերջապէս կը.— Չաշնաւորով սկսող բայերից առաջ ը դուրս է ընկնում և նորա տեղը ապաքարց զրվում. կ'երթամ, կ'ասէի:

Բազադրեալ ժամանակների օգնական բայերը կարող են բուն բայից բաժանուել, լետ ու առաջ դասուել, բաց թողուել, որով խօսքը առաձին ոլթ ու կենդանութիւն է ստանում:

Առհասարակ եթէ խօսողը կամենում է խօսքի բոլոր ոլթը գործողութեան մէջ կենդանացնել, բուն բաշն առաջ է դասվում և օժանդակը լետու. ինչպէս. Ես տեսնել եմ քո եղբորը և նորա հետ խօսել (եմ): Իսկ եթէ խօսքի զօրութիւնը ուրիշ որեիցէ բառի մէջ է կենդանացած, աշն բառը օժանդակ բայի հետ նախադասվում են, իսկ բուն բայը լետադաս է մնում. Ես քո նորորն եմ տեսել և նորա հետ (եմ) խօսել. այսինքն քո եղբորն եմ տեսել և ոչ մի

ուրիշի: Այս է պատճառը որ հարցական, բացազանչական և բացասական նախադասութիւնների մէջ հարցական և բացասական բառերը օժանդակ բայի հետ առաջ են դասվում, և բուն բառ լետու. ինչպէս. Ո՛ր ես գնում: Ո՛վ է եկել. ինչե՛ր եմ լսում: Չեմ իմանում թէ ի՛նչ է կամենում:

§ 49. Եմ և լինել ԲԱՅԵՐԸ ՈՒ ՆՈՑԱ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ:

Եմ և լինել բայերը, որ ըստ սեռի շէզօր են, նախադասութեան մէջ կրկնակի պաշտօն են վարում. երբեմն ստորոգեալ են, երբ առարկայի էութիւնը կամ գոյութիւնն են յայտնում, և այն ժամանակ կոչվում են էական բայեր. ինչպէս. Ո՛վ է. ես էի. նա կը լինի: Երբեմն էլ ենթական ու բայի իրարու հետ կապակցում են, կամ օգնում են միւս բայերը խոնարհելու, և այն ժամանակ կոչվում են օժանդակ կամ օգնական բայեր:

Միւս բայերի խոնարհմանը ծանօթանալուց առաջ հարկաւոր է իմանալ օգնական բայերի խոնարհումը, նախ՝ որովհետեւ միւսներից աւելի գործածական են և երկրորդ՝ որ բոլոր բայերի խոնարհման մէջ մտնում են: Ահաւասիկ նոցա խոնարհմունքը:

Ա. Եմ:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզակի	Ես եմ, դու ես, նա է.
Յոգնակի	Մենք ենք, դուք էք, նոքա են:
	Այցեալ անկատար
Եզակի	Ես էի, դու էիր, նա էր.
Յոգնակի	Մենք էինք, դուք էիք, նոքա էին:

Բ. Լինել

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

- Ներկայ** Ես լինում եմ, դու լինում ես, նա լինում է.
Մենք լինում ենք, դուք լինում էք, նոքա լինում ենք.
- Անցեալ անկ.** Ես լինում էի, դու լինում էիր, նա լինում էր.
Մենք լինում էինք, դուք լինում էիք, նոքա լինում էին.
- Անցեալ կատ.** Ես եղայ, դու եղար, նա եղաւ.
Մենք եղանք, դուք եղաք, նոքա եղանք.
- Ղաղաղատար** Ես եղել եմ, դու եղել ես, նա եղել է.
Մենք եղել ենք, դուք եղել էք, նոքա եղել ենք.
- Գերակատար** Ես եղել էի, դու եղել էիր, նա եղել էր.
Մենք եղել էինք, դուք եղել էիք, նոքա եղել էինք.
- Ապառ. պարզ** Ես կը լինիմ, դու կը լինիս, նա կը լինի.
Մենք կը լինինք, դուք կը լինիք, նոքա կը լինինք.
- Ապ. քաղաղոր.** Ես եղած կը լինիմ, դու եղած կը լինիս, նա եղած կը լինի.
Մենք եղած կը լինինք, դուք եղած կը լինիք, նոքա եղած կը լինինք.

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

- Ներկայ** Ես կը լինէի, դու կը լինէիր, նա կը լինէր.
Մենք կը լինէինք, դուք կը լինէիք, նոքա կը լինէինք.
- Անցեալ** Ես եղած կը լինէի, դու եղած կը լինէիր, նա եղած կը լինէր.
Մենք եղած կը լինէինք, դուք եղած կը լինէիք, նոքա եղած կը լինէինք.

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկ. կամ ապառ. եղիր դու, եղէք դուք:

ՍՏՈՐԱԴԱՍՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

- Ներկայ** (որ) Ես լինիմ, դու լինիս, նա լինի.
(որ) Մենք լինինք, դուք լինիք, նոքա լինինք.
- Անկատար** (որ) Ես լինէի, դու լինէիր, նա լինէր.
(որ) Մենք լինէինք, դուք լինէիք, նոքա լինէինք.
- Կատարեալ** (որ) Ես եղած լինիմ, դու եղած լինիս, նա եղած լինի.
(որ) Մենք եղած լինինք, դուք եղած լինիք, նոքա եղած լինինք.
- Գերակատար** (որ) Ես եղած լինէի, դու եղած լինէիր, նա եղած լինէր.
(որ) Մենք եղած լինէինք, դուք եղած լինէիք, նոքա եղած լինէինք.

Գ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ. Լինել. Ներկ. եղող. Անց. եղել, եղած. Ապռ. լինելու.

Հետեւեալ նախադասութիւնները լրացրէք իւրաքանչիւրի մօտ աւելացնելով հիւանդ լինել ստորոգեալը.

Երբ Արշակը աշխատում է, հիւանդ է լինում, վաղը եթէ Արշակը աշխատէր... Երբ Արշակը աշխատում էր... Արշակը շատ կը ծանձրանար. Արշակը միշտ ծանձրացել է, երբ որ... Արշակը միշտ կը ծանձրանալ, երբ որ... Բարեկամ, դու շատ ես ծանձրանում, երբ... Դու շատ էիր ծանձրանում, երբ որ... Որպէս զի Արշակը ծանձրանալ, պէտք է... Որպէս զի Արշակը ծանձրանար, պէտք է...

§ 50. ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ ԵՂ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

- Ներկայ* Ազատում եմ, ազատում ես, ազատում է.
 Ազատում ենք, ազատում էք, ազատում են:
- Անցեալ անկ.* Ազատում էի, ազատում էիր, ազատում էր.
 Ազատում էինք, ազատում էիք, ազատում էին:
- Անցեալ կատ.* Ազատեցի, ազատեցիր, ազատեց.
 Ազատեցինք, ազատեցիք, ազատեցին:
- Վարդակատար* Ազատել եմ, ազատել ես, ազատել է.
 Ազատել ենք, ազատել էք, ազատել են:
- Գերակատար* Ազատել էի, ազատել էիր, ազատել էր.
 Ազատել էինք, ազատել էիք, ազատել էին:
- Ազատնի պարզ* Կ'ազատեմ, կ'ազատես, կ'ազատէ.
 Կ'ազատենք, կ'ազատէք, կ'ազատեն:
- Ասլ. բաղադր.* Ազատած կը լինիմ, ազատած կը լինիս, ազատած կը լինի.
 Ազատած կը լինինք, ազատած կը լինիք, ազատած կը լինին:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

- Ներկայ* Կ'ազատէի, կ'ազատէիր, կ'ազատէր.
 Կ'ազատէինք, կ'ազատէիք, կ'ազատէին:
- Անցեալ* Ազատած կը լինէի, ազատած էր լինէիր, ազատած կը լինէր.
 Ազատած կը լինէինք, ազատած կը լինէիք, ազատած կը լինէին:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկ. և *ապրանի* Ազատէ՛ կամ՝ ազատիր, ազատեցէ՛ք:

ՍՏՈՐԱԿԱԹԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ (որ) Ազատեմ, ազատես, ազատէ.
 (որ) Ազատենք, ազատէք, ազատեն:

Անկատար (որ) Ազատէի, ազատէիր, ազատէր.
 (որ) Ազատէինք, ազատէիք, ազատէին:

Կատարեալ (որ) Ազատած լինիմ, ազատած լինիս, ազատած լինիս.
 (որ) Ազատած լինինք, ազատած լինիք, ազատած լինին:

Գերակատար (որ) Ազատած լինէի, ազատած լինէիր, ազատած լինէր.
 (որ) Ազատած լինէինք, ազատած լինէիք, ազատած լինէին:

Գ Ե Ր Բ Ա Յ

Անցեալ. Ազատել. *Ներկ.* ազատող. *Անց.* ազատել, ազատած, *Ազատնի* ազատելու:

Եյսպէս խոնարհվում են պարզ ել վեջացած ներք. և չէզոք բայերը, որոնց անց. կատարեալը լինում է *եցի*, հրամայականը է և *եցէք*. Իսկ սպառնիլի, պայմանականի և ստորադասականի պարզ ժամանակները կազմվում են *եմ* բաղի ներկ. և անց. անկատար ժամանակներով:

1. Հետեւեալ եղակի նախադասութիւնները լոգնակի փոխեցէք:

Կատուն մլաւում է:—Շունը հաջում է:—Կովը բառանչում է:—Նրեխան աղաղակում է:—Սոխակը երգում է:—Մարդս մտածում է:—Այս մատաղ գառը մալում է, մալում էր, մալեց, մալել էր:—Ես պատմում էի և դու լսում էիր:—Խղուր լանդիմանեցիր այս աշակերտին:—Յանկանում եմ որ փորձես սլո գրիչը:—Կը ցանկալի որ փորձէիր այս գրիչը:—Ես աղօթում եմ, ես աղօթում էի, ես աղօթեցի, ես աղօթել եմ, ես միշտ կ'աղօթեմ Աստծուն, դու էլ աղօթէ:

2. Հետեւեալ լոգնակի նախադասութիւնները եղակի փոխեցէք:

Ձիւները խրխնջում են:—Առիւծները մոնչում են:—Տերենները խշխշում են:—Հողագործները արտերը վարում, ցանում և հնձում են:—Մոլլ աշակերտները սիրում են խաղալ և առում են ուսումը:—Գերձակները ձևեցին և կարեցին մեր շորերը:—Տաւն անգամ չափեցէք, մէկ անգամ կարեցէք:—Նամակը գրեցինք, կընքեցինք և ուղարկեցինք:—Անկարելի է որ ալսպէս շուտ գրած լինիք ձեր նամակը:—Պէտք էր որ մինչև այժմ պատրաստած լինէիք ձեր դասերը:

§. 51 ԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ ԻՆ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

- Ներկայ Համարում եմ, համարում ես, համարում է. Համարում ենք համարում էք, համարում են:
- Անցեալ անկ. Համարում էի, համարում էիր, համարում էր. Համարում էինք, համարում էիք, համարում էին:
- Անցեալ կատ. Համարեցայ, համարեցար, համարեցաւ. Համարեցանք, համարեցար, համարեցան:
- Վաղակատար. Համարել եմ, համարել ես, համարել է. Համարել ենք, համարել էք, համարել են:

Գերազատար Համարել էի, համարել էիր, համարել էր. Համարել էինք, համարել էիք, համարել էին:

Ապառնի պարզ. Կը համարիմ, կը համարիս, կը համարի. Կը համարինք, կը համարիք, կը համարին:

Ապառնի քաղաղր. Համարած կը լինիմ, համարած կը լինիս, համարած կը լինի. Համարած կը լինինք, համարած կը լինիք, համարած կը լինին:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Կը համարէի, կը համարէիր, կը համարէր. Կը համարէինք, կը համարէիք, կը համարէին:

Անցեալ Համարած կը լինէի, համարած կը լինէիր, համարած կը լինէր. Համարած կը լինէինք, համարած կը լինէիք, համարած կը լինէին:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Համարէ կամ համարիք, համարեցէք:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

- Ներկայ (որ) Համարիմ, համարիս, համարի. (որ) Համարինք, համարիք, համարին:
- Անկատար (որ) Համարէի, համարէիր, համարէր. (որ) Համարէինք, համարէիք, համարէին:
- Կատարեալ (որ) Համարած լինիմ, համարած լինիս, համարած լինի. (որ) Համարած լինինք, համարած լինիք, համարած լինին:

Գերակատար

(որ) Համարած լինէի, համարած լինէիր, համարած լինէր.

(որ) Համարած լինէինք, համարած լինէիք, համարած լինէին:

Գ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ համարիլ (համարել). Ներկ. համարող. Անց. համարել, համարած. Ապր. համարելու:

Այսպէս խոնարհվում են իւր վերջացած ըստ մեծի մասին չէզոք բայերը, որոնց անց. կատարելալը լինում է *եցայ*, հրամ. է, *եցէք*: Անորոշ դերբայը սովորութիւն է եղել առաջին խոնարհման բայերի պէս ել վերջաւորել*, ընակել, ապրել, աշխատել. փոխանակ ընակիլ, աշխատիլ:

*) Այս է պատճառը որ ոմանք պարզ ապառնին և ստորագասական ներկան առաջին խոնարհման պէս եմ են վերջացնում, կը խօսեմ, որ ընակեմ, փոխանակ կը խօսիմ, որ ընակիմ, եւէ անց. կատարելալ շատ անգամ առաջին խոնարհման պէս են վարվում. համարեցի, խօսեցիր, ապրեցինք, աշխատեց:

1. Հետեւալ եզակի նախադասութիւնները լոզնակի փոխեցէք.

Մտը կանաչում է:—Մաղիկը ծաղկում էր:—Երեխան չօքից քրտնեցաւ ու կարմրեցաւ:—Գաշտը սպիտակել է ձիւնից:—Նա սովորած չեմ այդպիսի անգործ կեանք վարել:—Եթէ աշխատած լինէիր, այժմ կը վախելիր:—Նա չեմ կարծում որ դու չաջողիսքո ձեռնարկութեան մէջ:—Եթէ պատահիմ, հետը կը խօսիմ:—Եթէ պատահած լինէի, հետը խօսած կը լինէի:—Քանի փոքր ես աշխատէ՛ որ երբ մեկանաս, կորցրած ժամանակիդ համար չցախօ:

2. Հետեւալ լոզնակի նախադասութիւնները եզակի փոխեցէ՛ք.

Մենք նստած ենք:—Դուք պառկած էք:—Մեր բարեկամները լոզնած են:—Կամաց գնացէք որ չը դադրիք:—Մենք պարապում ենք, պարապեցանք և միշտ կը պարապինք մեր գործով:—Պարապեցէք ձեր դասերով:—Մենք կը պարապէինք մեր դասերով, եթէ դադրած չլինէինք:—Եթէ հետը խօսած լինէիք, կը հաւանէիք նորան:

§ 52. ԵՐՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ ալ ՎԵՐՋԱՆՈՐՈՒԹԵԱՄԲ.

Ս Ա Հ Մ Ը Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Ներկայ Կարդում եմ, կարդում ես, կարդում է.
Կարդում ենք, կարդում էք, կարդում են:

Անցնալ անկատար Կարդում էի, կարդում էիր, կարդում էր.
Կարդում էինք, կարդում էիք, կարդում էին:

Անցնալ կատարելալ Կարդացի, կարդացիր, կարդաց.
Կարդացինք, կարդացիք, կարդացին:

Վաղակատար Կարդացել եմ, կարդացել ես, կարդացել է.
Կարդացել ենք, կարդացել էք, կարդացել են:

Գերակատար Կարդացել էի, կարդացել էիր, կարդացել էր.
Կարդացել էինք, կարդացել էիք, կարդացել էին:

Ապառնի պարզ Կը կարդամ, կը կարդաս, կը կարդալ.
Կը կարդանք, կը կարդաք, կը կարդան:

Ապր. ջաղաղրելալ Կարդացած կը լինիմ, կարդացած կը լինիս,
կարդացած կը լինի.
Կարդացած կը լինինք, կարդացած կը լինիք,
կարդացած կը լինին:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Կը կարդաի, կը կարդաիր, կը կարդար.
Կը կարդաինք, կը կարդաիք, կը կարդայինք:

Անցեալ կարդացած կը լինէի, կարդացած կը լինէիր, կարդացած կը լինէր.
 կարդացած կը լինէինք, կարդացած կը լինէիք, կարդացած կը լինէինք.

ՀՐԱՄԱՅՈՒԿԱՆ ԵՂԱՆԱԿ

կարդան կարդացէք:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Շերիայ (որ) կարդամ, կարդաս, կարդալ.
 (որ) կարդանք, կարդաք, կարդանք:

Հաստարեալ (որ) կարդալի, կարդալիր, կարդար.
 (զր) կարդալինք, կարդալիք, կարդալինք:

Անխատար (որ) կարդացած լինիմ, կարդացած լինիս, կարդացած լինի.
 (որ) կարդացած լինինք, կարդացած լինիք կարդացած լինինք:

Գերախատար (որ) կարդացած լինէի, կարդացած լինէիր, կարդացած լինէր.
 (որ) կարդացած լինէինք, կարդացած լինէիք, կարդացած լինէինք:

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ կարդալ. Շերի. կարդացող. Անց. կարդացել, կարդացած, Ապո. կարդալու:

Եյսպէս խոնարհւում են ալ վերջացած ներք. ու շէզոր բայերը, որոնց անց. կատարեալը լինում է անց, հրամ. ան եւ. ացէ՛ք:

1. Հետեւեալ հզակի նախադասութիւնները լրգնակիր փոխեցէք

Ով կը խաղայ, նա կը կաղալ:—Առաջ կարդան, լիտոլ խաղան:—Գու կը խաղաս, եթէ տանը մնաս:—Ջաղացպանը ցորենը աղում է, աղաց, կ'աղայ:—Խղճան քո նմանին, որ ուրիշն էլ քեզ խղճալ:—Եթէ դու գնաս, ես կը մնամ, եթէ դու մնաս, ես կը գնամ:—Գնան ուր պիտի գնալիր, ես կը մնամ արտեղ:

2. Հետեւեալ լրգնակի նախադասութիւնները հզակիր փոխեցէք:

Մշակները ցորենը աղացին:—Մենք գնացինք պարտէզ:—Գուք ինչի տանը մնացիք: Մենք գիրք կը կարդանք, եթէ տանը մնանք:—Մենք գիրք կը կարդալինք, եթէ .. Մենք գիրք կարդացած կը լինէինք, եթէ... Պէտք է գնանք ուսումնարան:—Պէտք է գնալիք եկեղեցի: Պէտք է տուն գնալին:

§ 53. ԶՈՐՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ անալ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ.
ՍՍՀՄԱՆՈՒԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Շերիայ խոստանում եմ, խոստանում ես, խոստանում է, խոստանում ենք, խոստանում էք, խոստանում են:

Անցեալ անկ. խոստանում էի, խոստանում էիր, խոստանում էր. խոստանում էինք, խոստանում էիք, խոստանում էին:

Անցեալ կատ. խոստացալ, խոստացար, խոստացաւ. խոստացանք, խոստացաք, խոստացան:

Հարախատար խոստացել եմ, խոստացել ես, խոստացել է, խոստացել ենք, խոստացել էք, խոստացել են:

Գերախատար խոստացել էի, խոստացել էիր, խոստացել էր. խոստացել էինք, խոստացել էիք, խոստացել էին:

Ապառնի պարզ կը խոստանամ, կը խոստանաս, կը խոստանալ. կը խոստանանք, կը խոստանաք, կը խոստանանք:

Ապո. ըստադ. Խոստացած կը լինիմ, խոստացած կը լինիս, խոստացած կը լինի.

Խոստացած կը լինինք, խոստացած կը լինիք, խոստացած կը լինին:

ՔԱՑՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ կը խոստանալի, կը խոստանալիր, կը խոստանար. կը խոստանալինք, կը խոստանալիք, կը խոստանալին:

Անցեալ խոստացած կը լինէի, խոստացած կը լինէիր, խոստացած կը լինէր.

Խոստացած կը լինէինք, խոստացած կը լինէիք, խոստացած կը լինէին:

ՀՐԱՄԱՑԱԿՆ ԵՂԱՆԱԿ

Խոստացիր. խոստացէք:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ (որ) Խոստանամ, խոստանաս, խոստանալ. (որ) Խոստանանք, խոստանաք, խոստանան:

Անկատար (որ) Խոստանալի, խոստանալիր, խոստանար. (որ) Խոստանալինք, խոստանալիք, խոստանալին:

Կատարեալ (որ) Խոստացած լինիմ, խոստացած լինիս, խոստացած լինի. (որ) Խոստացած լինինք, խոստացած լինիք, խոստացած լինին:

Գերակատար (որ) Խոստացած լինէի, խոստացած լինէիր, խոստացած լինէր. (որ) Խոստացած լինէինք, խոստացած լինէիք, խոստացած լինէին:

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ. Խոստանալ, Ներկ. խոստացող. Անցեալ խոստացել, խոստացած. Ապառնի խոստանալու:

Մյսսլէս խոնարհովում են անալ և մի քանի ննալ վերջադուում ներգ. և շէղոք բայեր, որոնց անցեալ կատարեալը լինում է աջայ, հրամ. աջիւր, աջէք:

1. Հետեալ եղանակի նախադասութիւնները լրգնակիի փոխեցէք.

Ասուցիչը ցանկանում է որ միշտ լաւ իմանամ իմ դասերը— Յանկալի կը լինէր որ ես նամակ ստանալի, որ դու առածս հասկանալիր, որ նա ամեն դատարկ բանից չվախենար— Ծերանաս, ծերի զաղը լմանաւ— Եթէ բարեկամս եկած լինէր, մինչև հիմա իմացած կը լինէի: Այս երկիրը հարստացաւ վաճառականութեամբ:

2. Հետեալ լրգնակի նախադասութիւնները եղակիի փոխեցէք.

Փիլիսոփաները քչով բաւականանում են— Ինչ որ խոստացել ենք՝ կը կատարենք.— Եթէ կամենում էք որ ձեզ խնայեն, խնայեցէք ուրիշներին.— Հարուստները աղքատացան, աղքատները հարստացան.— Հարուստները աղքատացած են, աղքատները հարստացած են.— Հարուստները կ'աղքատանան, աղքատները կը հարստանան:

§ 54. ԿՐԱԻՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Ազատվում եմ, ազատվում ես, ազատվում է. Ազատվում ենք, ազատվում էք, ազատվում են:

Անցեալ անկ. Ազատվում էի, ազատվում էիր, ազատվում էր. Ազատվում էինք, ազատվում էիք, ազատվում էին:

Անցեալ կատ. Ազատուեցալ, ազատուեցար, ազատուեցաւ.
Ազատուեցանք, ազատուեցաք, ազատուեցանք.

Վարդակատար Ազատուել եմ, ազատուել ես, ազատուել է.
Ազատուել ենք, ազատուել էք, ազատուել ենք.

Գերակատար Ազատուել էի, ազատուել էիր, ազատուել էր.
Ազատուել էինք, ազատուել էիք, ազատուել էինք.

Ապառնի պարզ Կ'ազատուիմ, կ'ազատուիս կ'ազատուի.
Կ'ազատուի՞նք, կ'ազատուի՞ք, կ'ազատուինք.

Ապառ. քաղաղ. Ազատուած կը լինիմ, ազատուած կը լինիս, ազատուած կը լինի.
Ազատուած կը լինինք, ազատուած կը լինիք, ազատուած կը լինինք.

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Կ'ազատուէի, կ'ազատուէիր, կ'ազատուէր.
Կ'ազատուէինք, կ'ազատուէիք, կ'ազատուէինք.

Անցեալ Ազատուած կը լինէի, ազատուած կը լինէիր, ազատուած կը լինէր.
Ազատուած կը լինէինք, ազատուած կը լինէիք, ազատուած կը լինէինք.

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ազատուէ՛ կամ՛ ազատուի՛ք. ազատուեցէ՛ք.

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ (որ) Ազատուիմ, ազատուիս, ազատուի.
(որ) Ազատուինք, ազատուիք, ազատուինք.

Անկատար (որ) Ազատուէի, ազատուէիր, ազատուէր.
(որ) Ազատուէինք, ազատուէիք, ազատուէինք.

Կատարեալ (որ) Ազատուած լինիմ, ազատուած լինիս, ազատուած լինի.
(որ) Ազատուած լինինք, ազատուած լինիք, ազատուած լինինք.

Գերակատար (որ) Ազատուած լինէի, ազատուած լինէիր, ազատուած լինէր.
(որ) Ազատուած լինէինք, ազատուած լինէիք, ազատուած լինէինք.

Դ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ Ազատուիլ. Ներկ. ազատուող. Անց. ազատուել, ազատուած. Ապառ. ազատուելու:

Գրաւորական բայերը կազմվում են ներգործականներից անորոշ դերբայի *ել, իլ, ալ, անալ* վերջաւորութիւնները փոխուելով *ուիլ, (վիլ), միայն* երրորդ և չորրորդ վերջաւորութեան բայերում *ուիլ* մասնիկը գրվում է անցեալ կատարեալի վրայ. այսպէս.

Ներդ.	Ազատել	Կրտ.	Ազատուիլ
»	Համարիլ	»	Համարուիլ
»	Կարդալ, կարդացի	»	Կարդացուիլ
»	Խոստանալ, խոստացալ	»	Խոստացուիլ:

Գրաւորական բայերը խոնարհվում են միակերպ երկրորդ խոնարհման պէս, անորոշ դերբայի *ուի* մասնիկը պահելով բոլոր ժամանակների մէջ:

Միայն ած անցեալ դերբայը կարող է ներգործական ձևով վարուիլ. դոյնդոյն ներկած դարբաններ. նոր կոխած գինի. ծաղիկներով զարդարված սրահ. (Փոխանակ՝ ներկուած, կոխուած, դարդարուած):

Արտիճեան զառասկան բարբառներում իլ վերջացած բա- լերը խոնարհում են միակերպ իլ վերջացածների պէս, այսինքն եց, փոխանակ՝ եցայ (կանցնեցի, խօսեցի, ապրեց, ծնեց), կրա- լորականներն էլ լինում են առհասարակ ուեցի, կնքուեցի, քան- ղուեցին, օժուեց:

Գրեցէք ձեզանից մի քանի նախադասութիւններ հետեւալ կրաւորական բայերով.

Բռնուիլ — փորձուիլ — տանջուիլ — չարչարուիլ — պատրաստուիլ — ուղարկուիլ — բերուիլ — կարգացուիլ — մոռացուիլ — իմացուիլ — խօստացուիլ:

§ 55. ԲԱՅԱՍԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ.

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

- Ներկայ Զեմ խօսում, չես խօսում, չէ խօսում.
Զենք խօսում, չէք խօսում, չեն խօսում.
- Անցեալ անկատար Զէի խօսում, չէիր խօսում, չէր խօսում.
Զէինք խօսում, չէիք խօսում, չէին խօսում.
- Անցեալ անկատար Զխօսեցալ, չխօսեցար, չխօսեցաւ.
Զխօսեցանք, չխօսեցաք, չխօսեցան:
- Չարդակատար Զեմ խօսել, չես խօսել, չէ խօսել.
Զենք խօսել, չէք խօսել, չեն խօսել:
- Գերակատար Զէի խօսել, չէիր խօսել, չէր խօսել.
Զէինք խօսել, չէիք խօսել, չէին խօսել:

- Ապանի պարզ Զեմ խօսիլ, չես խօսիլ, չի խօսիլ.
Զենք խօսիլ, չէք խօսիլ, չեն խօսիլ.
- Ապառ. քաղաղերեալ Խօսած չեմ լինիլ, խօսած չես լինիլ, խօսած չի լինիլ.
Խօսած չենք լինիլ, խօսած չէք լինիլ, խօսած չեն լինիլ.

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

- Ներկայ Զէի խօսիլ, չէիր խօսիլ, չէր խօսիլ.
Զէինք խօսիլ, չէիք խօսիլ, չէին խօսիլ.
- Անցեալ Խօսած չէի լինիլ, խօսած չէիր լինիլ, խօսած չէր լինիլ.
Խօսած չէինք լինիլ, խօսած չէիք լինիլ, խօսած չէին լինիլ.

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Մի խօսիր կամ մի խօսիք:

ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

- Ներկայ (որ) Զխօսիմ, չխօսիս, չխօսի.
(որ) Զխօսինք, չխօսիք, չխօսին:
- Անկատար (որ) Զխօսէի, չխօսէիր, չխօսէր.
(որ) Զխօսէինք, չխօսէիք, չխօսէին:
- Չատարեալ (որ) Խօսած չլինիմ, խօսած չլինիս, խօսած չլինի.
(որ) Խօսած չլինինք, խօսած չլինիք, խօսած չլինին:
- Գերակատար (որ) Խօսած չլինէի, խօսած չլինէիր, խօսած չլինէր.
(որ) Խօսած չլինէինք, խօսած չլինէիք, խօսած չլինէին:

Գ Ե Ր Բ Ա Յ

Անորոշ Զխօսել. Ներկ. չխօսող. Անց. չխօսած. Ապառ. չխօսելու.

Այս օրինակից երևում է որ՝

1. Բացասական բայը կազմվում է ընդհանրապէս իրարքանչիւր ժամանակի սկիզբը չ գնելով, պարզ ժամանակներում բուն բայի վրայ, բաղադրեալներում օգնականբայի վրայ. չխօսիմ, չեմ խօսում, խօսած չլինիմ կամ չլինիմ խօսած

2. Միայն պարզ ապառնին և պայմ. ներկան կազմվում են կը մասնիկի տեղ գնելով կմ՝ բայի բացասական ձևերը և բուն բային իր սկզբնական ձևը տալով. չեմ խօսիլ, չեմ գնալ*, չէի իմանալ**:

3. Մի և ոչ բացասական մասնիկները կարող են աւելի սաստկութեան համար բայից յետոյ էլ դասուիլ. ուտիլ մի՛, ամաշիլ մի՛, մեռնիս ոչ, եկաւ ոչ, խօսում չէ՛գտել չէ՛:

4. Բացասական բայերի կրաւորականը հասարակ կրաւորականների կանոնով է խոնարհվում. չեմ համարվում, չէի համարվում, չեմ համարուեցայ, չեմ համարուիլ, մի համարուիլ կամ մի համարուիր, որ չհամարուիմ, չհամարուեյ, չհամարուող:

* Ապառնիի եզ. Զորդ գէմբը լինում է չի խօսիլ, չի գնալ (և ոչ թէ՛ չէ խօսիլ, չէ գնալ): Գատակական բարբառներում ՚յ ձևը երևում է և ուրիշ ժամանակներում. չի խօսում, չի լռեցի, չի մնացել, թուղ չի նեղանալ:

** Գատակական բարբառներում երբեմն լ տառը բաց է թողվում. չեմ խօսի, չեմ ուշանայ, չէի ասի, չէի գնայ, մի գնալ, վազի, —ումանք դրասորի մէջ էջէն գործածում:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ բացասական բալերով.

Չլսել — չսպանել — չգովել — չազատել — չխօսիլ — չհաւանիլ — չապրիլ — չաշխատիլ — չղաղաբիլ — չմնալ — չխաղալ — չիմանալ — չվախենալ:

§ 56. Նիւ եի չիւ ՎԵՐՋԱԻՈՐՈՒԱԾ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ-

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ Հասնում եմ և ալլն Փախչում եմ և ալլն
Անցեալ անկ. Հասնում էի և սլլն Փախչում էի և ալլն

Անցեալ կատ. Հասայ Փախալ
 Հասար Փախար
 Հասաւ. Փախաւ.
 Հասանք Փախանք
 Հասաք Փախաք
 Հասան. Փախան.

Վաղակատար Հասել եմ և ալլն Փախել եմ և ալլն

Գերակատար Հասել էի և ալլն Փախել էի և սլլն
Ապառնի պարզ կը հասնիմ և ալլն կը փախչիմ և սլլն
Ապառ. քաղ. Հասած կը լինիմ և ալլն Փախած կը լինիմ և ալլն

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ կը հասնէի և ալլն կը փախչէի և ալլն
Անցեալ Հասած կը լինիմ և ալլն Փախած կը լինէի և ալլն

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Հասիր. հասէք. Փախիր. փախէք.

ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ (որ) Հասնիմ և ալլն (որ) Փախչեմ և ալլն
Անկատար (որ) Հասնէի և ալլն (որ) Փախչէի և ալլն
Գատարեալ (ով) Հասած լինիմ և ալլն (որ) Փախած լինիմ և ալլն
Գերակատար (որ) Հասած լինէի և ալլն (որ) Փախած լինէի և սլլն

Գ Ե Ր Բ Ա Յ

Ատորոշ Հասնիլ. Ներկ. հասնող. Ատորոշ Փախելի, Ներկ. փախ-
Անցնալ Հասել. հասած. Ապառնի չող, Անց. փախել, փախած.
հասնելու Ապառ. փախչելու.

Նիւ և չիւ վերջաւորուած շէղոր բայերը և մի քանի
նիւ վերջով ներգործականներ խոնարհվում են երկրորդ վեր-
ջաւորութեան բայերի պէս, ն և շ տառերը դուրս թող-
նելով անց. կատարեալում, հրամայականում և անց. դեր-
բայիներում:

Կրաւորականները կանոնաւոր են տեսնուիլ տեսնուե-
ցալ, տեսնուել եմ, տեսնուած:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւեալ բաւերով.
Գանել—տեսնել—մտնել—զառնալ—հատնիլ—հագնել—մեռ-
նիլ—թռչել—դիպել—կայել:

§ 57. Ցնել ՎԵՐՋԱՅԱԾ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ:

Սահմ. անց. կառոր. Հագցրի, հագցրիր, հագցրեց (հագցրուց*);
Հագցրինք, հագցրիք, հագցրին:

Հրամայական Հագցրու. հագցրէք;
Դերբայ անցնալ Հագցրել, հագցրած:

* Կան գրողներ նունպէս հագցրեցի, հագցրեցինք և
հրամ. հագցրեցէք: Միւս ժամանակները կանոնաւոր են. հագ-
ցնում եմ, կը հագցնեմ, հագցնող:

Ցնել վերջացած բայերը խոնարհվում են առաջին վեր-
ջաւորութեան բայերի պէս ն տառը ը փոխուելով անց. կա-
տարեալում, հրամայականում և անց. դերբայիներում:

Չէղոր բայերի մեծ մասը ցնել առնելով ներգործական
են դառնում. ինչպէս՝ վերցնել, մեծացնել, ծաղկեցնել, յոգ-
նեցնել:

Իսկ ներգործականներից քիչ բայ ցնել մասնիկ ընդու-
նելով անցողական է դառնում, այլ սովորաբար նոյն մտքով
վարվում է ներգործական բայը տալ բայով. կանչել տալ,
կարել տալ, բերել տալ, դնել տալ: Իսկ եթէ հարկ լինի
յայտնել թէ գործողութիւնը երրորդի ձևով է կատարվում,
տալ բայը կրկնվում է. գրել տալ տուի, կարել տալ տուինք:

Ցնել վերջաւորութիւնից առաջ իբրև լողակապ կարող են
պատահել ա և ե ձայնաւորները. եցնել կը լինին Ա և Բ վերջա-
ւորութեան բայերից կազմուածները. ուտեցնել, խօսեցնել, ացնել,—
Գ-ից և Դ-ից կազմուածները. կարգացնել, տաքացնել, Պարզ ցնել,
լինում են նիւլ, չիլ, բաւերից կազմուածները. հասցնել թոցնել:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ հետեւալ բաւերով.
Խմեցնել—աշխատեցնել—կարգացնել—գործնել—ամաչեցնել
—վախեցնել—խաղացնել—թացնել—սովորեցնել:

§ 58 ԿՐԿԻՆ ԿԱՏԱՐԵԱԼ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ:

Կան մի քանի բայեր, որոնց անց. կատարեալը և նո-
քանից կազմուած ժամանակները ոչ միայն անկանոն են, այլ
և երկու ձև կատարեալում են:

Ահաւասիկ նոցա ցուցալը.

Բերել կրաւորական բերուիլ:

Անցնալ կատ. (Բերի, բերիր, բերաւ, բերինք բերիք, բերին:
Բերեցի, բերեցիր, բերեց, բերեցինք, ցիք, ցին:

Հրամայ. եղ. Բէք. բեբէ՛ք. Մի բերիւ կամ մի բերիք. մի բէրէք՝
Դերբայ Ներկայ բերող. Անցեալ բերիւ, բերած:

Դնել կրաւորական դրուիլ:

Անցեալ կատ. { Գրի, գրիր, գրաւ. գրինք, գրիք, գրին:
Դբեցի, գրեցիր, գրեց. գրեցինք, գրեցիք, գրեցինք:

Հրամայ. եզ. Դքր. Դրէք. Մի գնիւ կամ մի գնիր. մի գնէք՝
Դերբայ Ներկայ գնող. Անցեալ գրիւ, գրած:

Անել կրաւորական չունիլ:

Անցեալ կատ. { Արի, արիր, արաւ. արինք, արիք, արին:
Արեցի, արեցիր, արեց. արեցինք, արեցիք, արեցինք:

Հրամայ. եղ. Աբա. ալէք. Մի ա՛նիւ կամ մի ա՛նիր. մի ա՛նէք՝
Դերբայ Ներկայ ա՛նող. Անցեալ արիւ, արած:

Ասել կրաւորական ասուիլ:

Անցեալ կատ. { Ասի, ասիր, ստաւ. ասինք ասիք. ասին:
Ասացի, ասացիր, ստաց. ստացինք, ասացիք, ցինք:

Հրամայ. եղ. Ասա. աւէք կամ ասացէ՛ք. Մի ասիւ կամ մի աս-
սիր. մի ասէք:

Դերբայ Ներկայ ասող. Անցեալ ասիւ, ասած:

Թողնել կրաւորական թողնուիլ:

Անցեալ կատ. { Թողի, թողիր, թողաւ. թողինք, թողիք, թողին:
Թողեցի, թողեցիր, թողեց. թողեցինք, ցիք, ցինք:

Հրամայական Թող. թողէք. Մի թողնիւ կամ մի թողնիր. մի
թողնէք:

Դերբայ Ներկայ թողնող. Անցեալ թողիւ, թողած:

Տայ կրաւորական տրուիլ:

Անցեալ կատ. { Տաի, տաիր, տաաւ. տաինք, տաիք, տաին:
Տաեցի, տաեցիր, տաեց. տաեցինք, ցիք, ցինք:

Հրամայ. եղ. Տաբ. տաէք: Մի տալ կամ մի տար. մի տաք:
Դերբայ Ներկայ տաող. Անցեալ տաիւ, տաած:

Սկսել կրաւորական սկսուիլ:

Անցեալ կատ. { Սկալ, սկար, սկաւ. սկանք, սկարք, սկան:
Սկսեցի, սկսեցիր, սկսեց. սկսեցինք, ցիք, ցինք:

Հրամայ. եղ. Սկսէ, (սկսիր). սկսէք (սկսեցէք). մի սկսիւ կամ
մի սկսիր. մի սկսիք:

Դերբայ Ներկայ սկսող. Անցեալ սկսիւ, սկսած:

Աննել կրաւորական աննուիլ:

Անցեալ կատ. { Առալ, առար, առաւ. առանք, առարք, առան:
Առի, առիմ, առեց. առինք, առիք, առին:

Հրամայական Առ. առէք: Մի առնիւ կամ մի առներ. մի
առնէք:

Դերբայ Ներկայ առնող. Անցեալ առիւ, առած:

Տանիլ կրաւորական տարուիլ:

Անցեալ կատ. { Տարալ, տարար, տարաւ. տարանք, բարք, բան:
Տարի, տարիր, տարեց. տարինք, տարիք տարին:

Հրամայ. եղ. Տար. տարէք: Մի տանիւ կամ մի տանիր. մի
տանիք:

Դերբայ Ներկայ տանող. Անցեալ տարիւ, տարած:

Առաջին ձևը ժողովրդական բարբառներում գործ է ան-
լում գնել բալի մտքով:

Թէև անցեալ կատարեալի երկու ձևն էլ անխտիր վարվում են, բայց աւելի սովորական է առաջին ձևը, միայն եզերրորդ դէմքում *եց* վերջաւորութեամբ. *քերի, քերիք, քերեց, քերինք* և այլն: *Դրի, դրիք, դրեց, դրինք* և այլն:

Կրաւորականների մէջ կան որ կանոնաւոր են. ինչպէս. *բերել, քերուիլ, առնել, առնուիլ*. կան էլ որ անկանոն են՝ *տալ, տրուիլ, դնել, դրուիլ*: Բայց խոնարհումները կանոնաւոր են. *քննվում եմ, քննուեցայ, կը քննուիմ, քննուող քննուած*. *Դրվում եմ, դրուեցայ, դրուող, դրուիլ*:

Բոլորովին անկանոն խոնարհում ունին *զալ* և *ուտել* բայերը, որոնց կատարեալի արմատը ներկայի արմատի հետ ոչինչ նմանութիւն չունի:

Գալ

Անցեալ կատ. Եկալ, եկար, եկաւ. *եկանք, եկաք, եկան.*
Հրամայ. եղ. եկ, կամ արթ, եկէք.
Դերբայ Եներկայ եկող. *Անցեալ* եկել, եկած:

Ուտել կրաւորական ուտուիլ:

Անցեալ կատ. Կերայ, կերար, կերաւ. *կերանք, կերաք, կերանք.*
Հրամայ. նղ. կեր, կերէք.
Դերբայ Եներկայ ուտող. *Անցեալ* կերել, կերած:

Գրեցէք մի քանի նախադասութիւններ վերոյիշեալ բայերի անկանոն ժամանակներով:

§ 59. ԱՆԴԷՄ ԲԱՅԵՐ

Անդէմ կամ միադէմ կոչվում են այն բայերը, որոնք միայն եզ. դէմքով են վարվում:

Կան ջուն անդէմ բայեր, և կան *պատահական անդէմներ*. —

1. *Բուն* անդէմ են այն բայերը որ միայն եզ. երրորդ դէմք ունին. *ինչպէս. պէտք է, հարկ է, բաւ է, հերիք է, մեղք է, և այլն*:

2. Պատահական անդէմ կոչվում են այն դիմաւոր բայերը, որոնք առանձին մտքով վարվում են իբրև անդէմ. այսպէս են ընտրեան երեւոյթները և կենդանիների ձայները. *ամպել, անձրեւել, որոտայ, զայլատակել, մշաւել, քառանչել, մոնչել, զռալ*: Բայց նմանութեամբ կարող են ամէն դէմքերով գործածուիլ:

Կան շէգոք և մանաւանդ կրաւ. բայեր որ անդէմի մտքով վարվում են. *այսպէս են՝ երեւում է, թվում է, մնում է, հետեւում է, ասվում է, լսվում է, կարծվում է*:

§ 60. ԳԻՏԵԼԻՔ ԲԱՅԵՐԻ ՎՐԱՅ

1. *Գալ, տալ, լալ*, միավանկ բայերի ներկան ու անցանկատարը լինում են *իս* վերջաւորութեամբ, որ անորոշ վերբայի ներգոյականն է. *գալիս եմ, տալիս է, լալիս էին*: Հարցական և բացասական նախադասութիւնների մէջ *եմ* օգնական բայը նախադասուելով *ս* տաւը բաց է թողվում, բայց և կարող է պահուիլ: Այսպէս ասում են՝ *Ո՞վ է գալիս և Ո՞վ է գալի*: 2-եմ *տալիս* և 2-եմ *տալի*:

2. *Եմ, կամ, ունիմ, գիտեմ, բայերի սահմ. ներկան* և անցեալ անկատարը զբաբար ձեւով է լինում. *կամ, կաս, կայ, կանք, կաք, կան*. *Ունիմ, ունիս, ունէինք, ունէիք*. *Գիտեմ, գիտենք, գիտէի, գիտէինք*. Երբեմն նաեւ՝ *Ասացէք խնդրեմ*: *Կարծեմ* թէ իրաւունք ունիմ: *Յուսամ* թէ շոստմունքդ կը կատարես: (*Փոխանակ՝ խնդրում եմ, կարծում եմ*):

Սորա խկապէս պակասաւոր են և լրանում են իրանց յոյնանշաններով. եւ, լինել էական բայով. կամ—կենալ, ունիւմ—ունենալ, գիտեմ—գիտենալ, սրտք խոնարհւում են Գ վերջաւորութեան բայերի պէս.

3. Բաղադրեալ բայերի մէջ բուն բայն է խոնարհւում և կը մասնիկ ընդունում. անց սմ կենում. ման կ'ածէի. ծախ կը տամ. շաղ կը տային, և այլն: Միայն պիտի կամ պէտք է անդէմ բայը միշտ առաջին բառի վրայ է գրվում. պիտի շաղ տանք, պիտի ման գայինք:

4. Ներգործական և կրաւորական բայերը չէզոքի միտք են ընդունում, եթէ իրանցից յետոյ լրացուցիչ բառեր չունին. ինչպէս. Ջարտեակ կարդում է: Մարդիկ ուտում ու խմում են: Այս տունը ծախվում է: Արմաւիրը շինուեցաւ Երասխի վրայ:

5 Կրաւորականի ուել մասնիկը ընդունում են մի քանի ներգործական բայեր, որոնք ցոյց են տալիս. 1) փոխադարձ գործողութիւն, որով երկու կամ աւելի առարկայ միմեանց վրայ ներգործում են. տեսնուիլ, թակուիլ (ծեծուիլ), այսինքն միմեանց տեսնել, թակել: Այս տեսակ բայերը կոչվում են փոխադարձ: 2) Այնպիսի գործողութիւն, որով առարկան ինքն իր վրայ է ներգործում. ինչպէս. սըքուիլ, տանդուիլ, լուացուիլ, խեղուիլ, այսինքն ինք իրան սըքել, խեղդել: Այս տեսակ բայերը կոչվում են անդրադարձ:

Փոխադարձ և անդրադարձ բայերը խոնարհւում են Կրաւորական բայերի պէս:

Թ. Մակբայների կազմութիւնը:

§ 61. ԲՈՒՆ ՄԱԿԲԱՅՆԵՐԸ:

Բուն մակբայները կամ պարզ բառեր են, ինչպէս՝ ե՛րբ, տե՛ր, այո, ո՛չ, կամ պարզ բառերից առաջ եկած են այլ և այլ մասնիկներ ու հին հոլովական վերջաւորութիւններ ընդունելով:

1. Եմս, էք մասնիկները ժամանակական մակբայներ են կազմում. երբեմս, ոչ երբէք:

2. Բար, ըէն, պէս, կի մասնիկները որակական մակբայներ են կազմում, եղբայրաբար, հայերէն, վերջապէս, անկարծաղի:

3. Իւ, աւ, ուլ գործիականի վերջաւորութիւնները որակական մակբայներ են կազմում. հազիւ, կամաւ, շտապով, քարով:

4. Անց, ուց բացառականի վերջաւորութիւնները որակական և ժամանակական մակբայներ են կազմում. սրբաւնց, երեսա՛ց, վաղուց, հաւուց:

§ 62. ԱՆՈՒՆՆԵՐԻՑ ՈՒ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻՑ ԱՌՆՈՒԱԾ ՄԱԿԲԱՅՆԵՐ:

Հայերէն յեղուի մակբայների մեծ մասը փոխ են առած գոյական ու ածական անուններից և զերանուններից, սրնցից շատը յօդ են ընդունում և հարվում են:

1. Գոյական անուններից առնուած մակբայները, եթէ տեղական են, կարող են յօդ ընդունել և հարվիլ Ա. հարվման պէս եղ. և յօդ. ինչպէս վերել կամ վերելք, վե-

երիցը, վերևումը. ներքեւ, ներքեից, ներքեով, ներքե-
ւում. դուրս կամ դուրսը, դրոնցը, դրսումը, դրոնքը. ետև-
ները, ետևներիցը, ետևներովը, ետևներումը*: նոյնպէս և
տեղ ու կողմ գոյականներով և այս, ո՞ր գերանուններով ու
մէջ նախադրութեամբ. այստեղ, ո՞րտեղ կամ որ տեղ, որ
տեղից կամ որ տեղաց, այն տեղից, մէջ տեղը, մէջ տեղից,
մէջ տեղումը. մէջ տեղերը, մէջ տեղերից, և այլն:

* Սոցա սեռականներից կազմում են տականները նապատակի-
առաջի ու ետևի սաները. դէմուդէմի տունը. վերևի յատակը. դրսի
պատահանը:

Ժամանակականները հոլովում են միայն եզ. բացա-
ռական ուանից վերջաւորութեամբ. այսօր, այսօրուանից.
երէկ, երէկուանից. վաղը, վաղուանից. հիմա հիմիկուանից:

2. Ամական անունները բայի վրայ դրուելով մակբայ
են դառնում, առանց ուրիշ օրերիցէ փոփոխութեան. ուղիղ
խօսել կամ ծանր լսել. խոր քնել. քարակ մտածել. քարծ-
րածայն աղաղակել. կեւալ գոյականի գործիական հոլովով-
լսելացի կերպով գործ կատարել. ծանր կերպով քննել:

3. Գերանուններից կազմուած մակբայները սակաւ են.
Այսպէս են՝ այս, այդ, այն գերանուններից՝ այսպէս, այդ-
պէս, այնպէս, որոնք և գործիական հոլովով վարվում են.
այսպէսով, այդպէսով այնպէսով. Իսկ սոյն, նոյն գերանուն-
ներից՝ սոյնպէս, նոյնպէս:

Գաւատական բարբառներում կան բազմաթիւ գերանու-
նական մակբայներ, որոնք գրաւոր լեզուի մէջ մտաք չեն գտել,
կամ շատ հազիւ գործ են անում. Այսպէս են. հօրէս, հօրէի,
հօրէն կամ կրճատուած. հրէս, հրէի, հրէն, (գրոց առախիկ, առաղիկ,
առանիկ). էւսի, էնդի, (այսք, անդք, կամ աստ, անդ). էսդից, էն-

դից (աստի, անդի). դէս, դէն կամ դէսուդէն (կրճատուած և ամ-
փոփուած գրոց՝ դ այս, դ այն, այսինքն՝ ընդ այս, ընդ այն, նախ-
դրի հոլովներից):

4. Վերջապէս կան գոյ. ու ամ. անուններ և նոյն իսկ
մակբայներ, որ կրկնութեամբ են վարվում, անփոփոխ կամ
հոլոված գրաբարի ձևով. տեղ տեղ նստել. կարգ կարգ շա-
րուիլ. թել թել բաժանել. մանր մանր կտրել. մեծ մեծ
խօսիլ. կամաց կամաց շարժել. շուտ շուտ առաջ գնալ.—
օրէցօր, ծայրէ ի ծայր, դռնէ դուռը, հետզհետէ, դէմ առ
դէմ և այլն:

§ 63. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

Մակբայները գործ են անում հարցական, պատմական
և պատասխանական նախադասութիւնների մէջ: Հարցական
նախադասութիւնների մէջ գործ են զրվում հարցական մակ-
բայները. պատասխանականների մէջ նոցա համապատասխա-
նող պատասխանական մակբայները:

Հարցական Գաւատասխանական

1. Տեղական

ա) Ո՞ր կամ ո՞րտեղ. այս տեղ, այն տեղ, շատ տեղ. ամէն
տեղ, ոչ մի տեղ. վերև, ներքև, դուրս,
հերս, ետև, առջև, տակը, վրան, և
այլն:

բ) Ո՞ր տեղից. այս տեղից, այն տեղից, ամէն տեղից,
հեռուից, ներքևից, դրսից, հերսից,
և այլն:

2. Ժամանակական.

ա) Ե՞րբ. այժմ, միշտ, երբեմն, վաղ, ուշ, կա-

նուխ, արդէն, առաջուց, լետու, եր-
բէք, ոչ երբէք:

բ) Ո՞ր ժամանակից. հերուանից, ալտորուանից, առա-
ջուանից, առաւօտուանից:

գ) Մինչեւ ո՞ր ժա- մրնչեւ այժմ՝ իմ՝ մրնչեւ հիմա, մրն-
մանակ. չե վաղը:

3. Որակական. ալսպէս, նոյնպէս, չայտնի, հարբա-
րար, կամալ ակամա, սիրով, արագ
արագ, ծուռ ծուռ, և այլն:

4. Քանակական. Բանի՞, ո՞րչափ. ալսքան, արչափ, նոյնքան, շատ,
սակաւ, քիչ քիչ, շատ շատ:

Քացի սորանից հարցական մակբայները գործ են ամ-
վում իբրև յարաբերական մակբայներ, երբ որ երկրորդական
նախադասութիւնները կապում են գլխաւորների հետ. ինչ-
պէս. Որ տեղ գնաս, այն տեղի գլխակը ծածկիր:

Ժ. Նախադրութիւնների կազմութիւնը:

§ 64. ԲՈՒՆ ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Հայերէն լեզուի մէջ բուն նախադրութիւն շատ բիշ
կայ, և դասվում են ոմանք հոլովական բառերից յետոյ, ո-
մանք էլ առաջ:

1. Յետադաս նախադասութիւնները տրական հոլովով
դաս են պահանջում իրանցից առաջ. այնպէս.
Այս գրքերը քեզ համար են: Ինձ պէս տկարին յազ-

թեց: Ո՞ւմ հետ տեսնուեցար: Մեզ մօտ է բնակվում: Կամ
ստացական յօդով՝ հետս, չեառ, հետը, մօտս, մօտը, մօտը,
կամ մօտին. հետներս, մօտներդ:

Չեր ուզածին չափ*: Նորա պատուէրներին համեմատ:
Քաղմութեան կամքին հակառակ:

* Կան գրողներ սեռականով մեր համար, ձեր մօտ, ձեր
պէս, իմ չափ:

2. Նախադասները նոյնպէս տրական հոլով են պահան-
ջում. ոմանք ուրիշ հոլովներ էլ:

Առանց ինձ չգնար: Առանց բան ասելու հեռացաւ:
Փոխանակ օտարին տալու: Դէպի մեզ են գալիս: Մինչեւ
քեզ կը հասնի:

Դէպի, մինչեւ, մինչի նախադրութիւնների հոլովը, ե-
թէ գոյական է կամ անորոշ դերբայ, հայցական է գրվում.
գնացին ղէպի տուն: Մինչեւ ձեր գալը, մինչի գեշեր սպա-
սեցինք:

Քացի պահանջում է բացառական հոլով. Ամէները թո-
ղին ու գնացին, քացի ինձանից ու ձեզանից:

Իբրև, ինչպէս՝ խօսքի խմատին նայելով կարող են
ամէն հոլով առնել. Իբրև կամ ինչպէս թշնամի վարուեցաւ:
Իբրև օտարից հեռանում է: Նուիրում եմ ձեզ իմ աշխա-
տանը, իբրև ամենամօտ քարեկամի:

§ 65. ԳՈՅԱԿԱՆԻՑ ՈՒ ՄԱԿԲԱՅԻՑ ԱՌՆՈՒԱԾ ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Կան շատ գոյական անուններ ու մակբայներ որ նախա-
դրութեան մտքով են վարվում.

1. Գոյական անուններից առնուած նախադրութիւնները
իրանցից առաջ սեռական հոլով են պահանջում և կարող են
յօդ առնել ու հոլովիլ, զորօրինակ.

Անտառի մէջը, անտառի միջի (ծառերը), անտառի միջին, անտառի միջիցը, անտառի միջովը, անտառի միջումը: Նոյնպէս և յովնակի. անտառի մէջերը, տան ետեմները, պարսպների վրաներիցը, քաղաքների առաջներումը և այլն:

Ահա և ուրիշ օրինակներ. տան մէջ, տան ետեւ, պարսպի վրայ, սեղանի տակ: Կամ ստացական յօդով՝ ետեւ, մէջը, տակը, վրաները:

2. Մի քանի հարկած դոյականներ կան (գործիական հոլովով), որ նախադրութեան մտքով են վարվում. զորօրինակ.

Ատուածաշնչի մեծ մասը թարգմանուեցաւ սուրբ Սահակի ձեռով:

Լրագրների միջոցով հրատարակուած լուրերը միշտ չեն ճշմարտվում:

Վիճակագրական տեղեկութիւններին նայելով, Հայոց թիւը հասնում է միւշն շորս ու կէս միլիան:

3. Մակբայներից առնուած նախադրութիւնները իրանցից առաջ բացառական հոլով են պահանջում*. ինչպէս. Եօսելուց առաջ պէտք է մտածել: Ծաշից յետոյ սովորութիւն ունի հանգստանալու: Դռնից ներս մտաւ: Բանտից դուրս փախաւ: Օգուտից անցի ոչինչ վնաս չկրեց: Ամէն քանից հետո է: Մօրիցը ծածուկ ճանապարհ բնկաւ:

* Սորանով զանազանվում են նախադրութիւնները մակբայներից:

ԺԱ. Շաղկապների կազմութիւնը:

§ 66. ԱՐՄՍԱԱԿԱՆ ԵՒ ԱԾԱՆՅԵԱԼ ՇԱՂԿԱՊՆԵՐ:

Շաղկապների պաշտօնն է նախադասութիւնները միմեանց հետ կապել:

Ըստ կազմութեան շաղկապները լինում են *արմատական* եւ *ածանցեալ*:

Արմատական շաղկապներն են՝ *եւ, ու, էլ, ու, թէ, կամ, քայց, իսկ*:

Իւրաքանչիւր մասն-բանի շաղկապի նշանակութիւն է ստանում, եթէ խօսքը խօսքի հետ կապում է: Այս պատճառով շաղկապները ամանցվում են.

1. Գոյական անուններից՝ անփոփոխ կամ չօրոված նախադրութիւններով, *անգամ, ըստ մասին, գործիական*:
2. Գերանուններից և թուական անուններից, *այսինքն, այնուամենայնիւ, ըստ որում, առաջին, երկուսը և այլն*:
3. Բայերից, *կարծես թէ, ասես թէ, թող թէ*:
- 4) Մակբայներից, *այսպէս, ինչպէս որ, այնպէս որ*:
5. Նախադրութիւններից, *երբեւ թէ, որպէս թէ*:

§ 67. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ:

Շաղկապների գործածութիւնը կախուած է նախադասութիւնների նշանակութիւնից: Բայց կան մի քանի հարկաւոր գիտելիքներ ամենագործածական շաղկապների վրայ.

1. *Եւ, ու*.—Այս շաղկապները ընդհանրապէս նոյնանշան են. բայց կայ տեղ, որ աւելի մէկն է գործածվում, և կայ տեղ որ միւսը:

Եւ շաղկապը սովորաբար նախադասութիւն նախադասութեան հետ է կապում, իսկ ու նախադասութեան անդամները իրարու հետ. ինչպէս. Բազմութիւնը գիմեց քաղաքից դուրս, եւ մարդ ու կին, մեծ ու փոքր անհամբերութեամբ սպասում էին գիմաւորելու իշխանին:

Ու շաղկապը գործ է անում մանաւանդ ն յօդով բա-

ների հետ. Մարզն ու կենդանին. Չեւն ու ոտը. Օգտակարն ու զուարճալին:

Միևնոյն բայը կրկնուելով ու շարկապով, կապում է գործողութեան կրկնութիւնը յայտնելու համար, այսպէս. Պարապ նստած խօսում է ու խօսում: Խեղճերը կերան ու կերան սինչի լաւ կշտայան: Գնաց ու զնաց: Փախաւ ու փախաւ:

2. Թէ և ո՛ր շարկապները շատ անգամ միմեանց տեղ կարող են վարուիլ, բայց առհասարակ սահմանական եղանակի հետ թէ է վարվում. ստորադասականի հետ ուր, ինչպէս. Խոստացաւ թէ կը գայ, կը տեսնէ մեզ: Խոստացաւ որ գայ, տեսնէ մեզ:

Նւ, այլ շարկապներից յետոյ, ուր գլխաւոր նախադասութեան բայն գործութեամբ է իմացվում, թէ շարկապ է գրվում թէև խօսքը որ շարկապով սկսած լինի. այսպէս. ճշմարիտ է որ ամենակատապի գագաններն անգամ կերակրում են իրանց ձագերը, և թէ մօր պէս են հոգում նոցա բոլոր պիտոյքը: (Այսինքն՝ ճշմարիտ է որ մօր պէս...)

3. Չարկապները խօսքի մէջ գործ են անում մէկ մէկ, ինչպէս նւ, էլ, որ, և այլն. կամ երկու նոյն և նման շարկապներ կրկնվում են. ոչ—ոչ, թէ—թէ, կամ—կամ, նւ—նւ. և կամ վերջապէս ուրիշ ուրիշ շարկապներ երկու երկու են գրվում, այնպէս որ նոցանից մինը պատասխանում է միւսին. եթէ—ուրեմն, թէպէտ նւ—բայց, ոչ միայն—այլև, և այլն:

4. Միևնոյն շարկապը գասաւորութեան նայելով այլ և այլ նշանակութիւն կարող է ունենալ. ինչպէս. Անօգնական մնացինք և՛ ես, և՛ դու, կամ ես էլ, դու էլ (այսինքն թէ՛ ես, թէ՛ դու). Իսկ դուր ո՛ւր էիր: Թշնամին

իսկ խոստովանում է նորա արժանաւորութիւնները (այսինքն՝ թշնամին անդամ):

էլ (գրք. այլ) շարկապ է, եթէ բնագոյն վարուի, և և մակրալ: եթէ նախագոյն տեսալ էլ, ճանաչեցի էլ: էլ շտեմայ ձեր սաստ մարդուն (այսինքն այլ նւ):

ԺԲ. Չարկապութիւնների կազմութիւնը:

§ 68. ՉԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

Չարկապութիւնները, իբրև բոլորական զգացմունքներ բացատրող հնչիւններ, իսկապէս ոչինչ իմաստ չեն պարունակում. նորա ակամայ հնչիւններ են՝ նման թռչունների երգին, շան շաջելուն, մլաւելուն և այլն: Այս վերջին հնչիւններն էլ մենք ընդունում ենք և ձայնարկութիւններով արտայայտում: Սորանից առաջ են գալիս երկու տեսակ ձայնարկութիւններ. նմանաձայն և բացազանչական ձայնարկութիւններ:

1. Նմանաձայն ձայնարկութիւններով մենք արտայայտում ենք անշունչ առարկաների և կենդանիների հնչիւնները. ինչպէս. շր՛իսկ, թր՛իսկ, Ծ՛ուռ, շր՛իսկ, զ՛նգ—զ՛նգ, զա՛ռ (ազուարի), հա՛ւ (շուն), մԾ՛աւ (կատուի), և այլն:

2. Բացազանչական ձայնարկութիւնները արտայայտում են մարդու այլ և այլ զգացմունքները, այսինքն ուրախութիւն. ո՛ճ, ւ՛հ: Տրտմութիւնն ու ափսոսանքը. — վայ, վա՛ր, վա՛խ, ո՛հ, ա՛հ, ա՛ւաղ, ափսո՛ս: Ցանկութիւնը. — երանի՛ր, երանի՛ր թէ, երնն՛կ, ո՛ւր է թէ: Բարկութիւնը.

— ա՛յ, հա՛յ: Զգուանք.— ո՛հ, է՛հ: Կոչական ձայնարկու-
թիւններ. — ո՛ւ, ո՛ւ՛, ա՛, է՛: Յուցական՝ ահա՛ն և ընտանեկան
լեզուի մէջ՝ հօրէ՛ս, հօրէ՛ն:

§ 69. ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄՏՔՈՎ ԳՈՐԾ ԴՐՈՒԱԾ ՄԱՍՈՒՆՔ-
ԲԱՆԻ:

Իւրաքանչիւր ձայնարկութիւն կարող է մեկնուիլ մի
որեկիցէ նշանական բառով և մինչև ամբողջ նախադասու-
թեամբ: Զորօրինակ. ղէ՛նը.—նշանակում է՝ «զին աշտեղից»:
ե՛—«արի աշտեղ»:
հը՛—«ինչ ես ատում»:
սո՛ւս — «լուս
կաց»:

Այս պատճառով ձայնարկութիւնների մտքով շատ ան-
գամ վարվում են

1. Գոյական անուններ. մե՛ղք, զարմա՛ցք, ողջո՛յն,
լոռութի՛ւն:
2. Ածական անուններ. սնալիտա՛ն, պիղծ, քարե՛ւ:
3. Բայեր. ապրի՛ս, մե՛ղայ, կէցցէ՛ (զրրր. կեալ բայից):
4. Մակբայներ. հեոո՛ւ, ղէնը՛, ղո՛ւրս, առա՛ջ:
5. Դերանուններ. ի՛նչ (ինչ ես ատում):
6. Ամբողջ նախադասութիւններ. Աստուանձ տար: Փա՛նք
Աստուծոյ:



ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Բ Ա Ղ Դ Ա Ս Ո Ւ Թ Ի Ն

ատութիւնների մէջ:
Եւ հիման վրայ բաղդատութիւնը բաժանվում է

— 186 —
— 186 —
— 186 —

— 186 —
— 186 —
— 186 —

— 186 —
— 186 —
— 186 —

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

— 186 —
— 186 —
— 186 —

— 186 —
— 186 —
— 186 —

— 186 —
— 186 —
— 186 —

— 186 —
— 186 —
— 186 —

— 187 —
— 187 —
— 187 —

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Բ Ե Ղ Դ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

— 187 —
— 187 —
— 187 —

§ 1. ԲԱՂԴԱՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՐԱ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Ստուգարանութիւնը իւրաքանչիւր մասն-բանի առան-
ձին առած քննում է ու նոցա կազմութիւնը ցոյց տալիս.
բայց թէ ինչպէս պէտք է բառերը կարգաւորել որ հասկա-
նալի խօսք կազմուի, այդ ուսուցանում է մեկ ըստըհասու-
թիւնը:

Ուրեմն ըստըհասութիւնը քերականութեան այն մասն է,
որ ուսուցանում է թէ ինչպէս պէտք է առանձին բառերը
միմեանց հետ կապակցել, որ հասկանալի ու կարգաւորեալ
նախադասութիւն կազմուի, նախադասութիւններից էլ ամ-
բողջ խօսք:

Առանձին բառերից ու նախադասութիւններից հասկա-
նալի խօսք կազմելու համար, լեզուն երկու միջոց է տալիս
մեզ. 1. փոփոխական մասանց-բանի վերջաւորութիւնները
փոխել, և 2. շաղկապները ու նոցա մտքով դարձ դրուած
դերանունները և մաղբայները: Առաջին միջոցը տեղի ունի
դիւտաւորապէս պարզ նախադասութիւնների մէջ, երկրոր-
դը — բազաղբեալ նախադասութիւնների մէջ:

Եյս հիման վրայ բազաղասութիւնը բաժանվում է

երկու գլխաւոր մաս: Առաջին մասը ցոյց է տալիս՝ թէ երբ և ինչի համար պէտք է փոխել փոփոխական մասանց-րանի վերջաւորութիւնները: Նաղդասութեան այս մասը կոչվում է *Կապակցութիւն մասանց-քանի*: Երկրորդ մասը ուսուցանում է՝ թէ երբ և ինչ շաղկապներ (դերանուններ և մակրայներ) պէտք է դորձ դնել նախադասութիւնները յարմարաւոր կերպով կապելու համար: Համաձայնութեան այս մասը կոչվում է *Կապակցութիւն նախադասութիւնների*:

Բայց բառերը միմեանց հետ կապվում են երկու եղա-նակով. կամ մէկ բառ միւսի հետ համաձայն է գրվում թուով, հոլովով կամ դէմքով, և կամ պահանջում, խընդ-րում է որ իրանից կախում ունեցող բառը այս կամ այն հոլովով գրուի: Եյս պատճառով մասանց-քանի կապակցու-թիւնը բաժանվում է երկու առանձին մաս. 1. *Համաձայ-նութիւն մասանց-քանի*, և 2. *Խնդրառութիւն մասանց-քանի*:

Եյսպէս և նախադասութիւնների կապակցութիւնը եր-կու տեսակ է չինում, նայելով թէ բաղադրեալ նախադա-սութիւնը կազմուած է մի գլխաւոր և մի կամ աւելի երկ-րորդական նախադասութիւններից, թէ այնպիսի նախադա-սութիւններից, որոնք քերականօրէն կախում չունին մի-մեանցից, այլ ընդհակառակն իւրաքանչիւրն առանձին ա-ռած՝ ամբողջ ու անկախ միտք է պարունակում իւր մէջ: Եյս պատճառով նախադասութիւնների կապակցութիւնը բա-ժանվում է նոյնպէս երկու մաս. 1. *Երկրորդական նախա-դասութիւնների կապակցութիւնը*, 2. *Անկախ նախադասու-թիւնների կապակցութիւնը*:

Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Կապակցութիւն մասանց-քանի:

Ա. Համաձայնութիւն Մասանց-Քանի:

§ 2. ԲԱՅԻ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՆԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՐՋ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

1. Պարզ նախադասութեան մէջ* բայը համաձայնում է ենթակայի հետ դէմքով և թուով. այսինքն՝

Ա. Եթէ ենթական առաջին դէմքի է, բայն էլ առաջին դէմքով է գրվում, եթէ երկրորդ կամ երրորդ դէմքի է, նոյնպէս բայն էլ երկրորդ կամ երրորդ դէմքով է գրվում. զորօրինակ. *Ես գնում եմ գիւղ: Դու կը մնաս այստեղ. Լե-ւոն Ձ մտաւ Փարիզում:*

Բ. Եթէ ենթական եղակի է, բայն էլ եղակի է գրվում, իսկ եթէ յոգնակի է՝ յոգնակի. ինչպէս. *Արեգակը խաւարե-ցաւ: Գարնանը ծառերը ծաղկում են:*

* Պարզ ասելով այստեղ հասկանում ենք և այնպիսի նա-խադասութիւն, որ կազմուած է երկու կամ աւելի նախադասու-թիւնից, որոնցից իւրաքանչիւրը մէկ ենթակալ ունի և մէկ ստո-րոգեալ (բայ):

2. Հաւաքական բառերը, թէև յոգնակի նշանակութիւն ունին, սովորաբար եղակի բայ են պահանջում. ինչպէս. *Մեծ ջազմութիւն հաւաքուեցաւ փողոցում: Ժողովուրդը սօփ կանգ-նեցաւ և իւր շնորհակալութիւնը յայտնեց նախազահին:*

Բայց երբեմն յոգնակի է գրվում բայը, մանաւանդ

Թէ ենթակայի մօտ յոգնակի սեռ. յատկացուցիչ լինի. զօրօրինակ. Բոլոր ժողովուրդը միաբերան ըողոքեցին դատաւարի անկրաւութեան դէմ: Աշակերտներն կէսը վարձատրութիւն ստացան. Հայոց պատմագրների մեծ մասը թարգմանուած են եւրոպական լեզուներով:

3. Եթէ եզակի ենթակայի հետ թուական անուն լինի, բայր կարող է գրուիլ թէ եզակի և թէ յոգնակի. ինչպէս. Երկու մարդ բանտից փսխու: Հինգ թնդանօթ առնուեցաւ թշնամիների ձեռից: Վարդանանց պատերազմում հազար երեսունուվեց հոգի ընկան Հայոց ազգի անկախութեան համար:

4. Եթէ եզակի ենթակայի մօտ երկրորդական առարկայ լինի հետ նախադրութեամբ սեռական հոլովով, որ գլխաւոր առարկայի գործողութեան մասնակցութիւն ունենալն է յոյց տալիս, բայր յոգնակի է գրվում, եթէ կամենանք որոշակի յայտնել երկրորդական առարկայի մասնակցութիւնը, եզակի՝ եթէ բոլոր գործողութիւնը կենդրոնացնում ենք ենթակայի մէջ. ինչպէս. Հայրս մօրս հետ գիւղ գնացին: (Եյսինը՝ հայրս ու մայրս գնացին): Եղբայր նղթօր հետ հաշտ չէ ապրում՝ կամ չեն ապրում:

1. Հետեւեալ նախադասութիւնները գրաբարից աշխարհարար թարգմանեցէք և ցոյց տուէք երկու լեզուների համաձայնութեան մէջ եղած նմանութիւններն ու զանազանութիւնները:

Հովիւք արածեն զխաչինս.—Արեգայն յուսաւորէ զամենայն փրկեհրս: Ատրք իմ որպէս հովանի անցին և ևս որպէս խոտ ցումաբեցայ: — Իուք էք աղ երկրի. ապա թէ աղն անճամի իւ չազիցի: Միտք զբանս քնսնն և քի՛ք զկերակուրս մաշակեն: — Ի բառնալ ազգին Արշակունեաց տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Պասանալ Պարսկի: — Ամենայն մարդ աչօք բացօք տեսանէին: Ժո-

ղովուրդն ակն ունէր Զաքարիայ և զարմատային ընդ բամբուլն նորա: Հինգ ձագ երկուց զանդաց վաճառիւ էին անդ երկուտառան աղբիւր ջուրց:— Բաջալընք զիւրաքանչիւր ոք ի մեծամեծ աւագանոյն Հայոց սուրբ Ղեոնդ հանդերձ երանելեաւն Յովսէփաւ: — Մարմնոյ ի սուրբ օդս վայելելալ առողջագոյն էինի:— Թողելալ ծեղ զԱստուած քարանց պաշտօն մատուցանէիք:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ենթակալի ու բազմի համաձայնութեան պարզ նախադասութեան մէջ:

§ 3. ԲԱՅԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՄԻԱԻՈՐԵԱՒ ԵՎ ԵԱԲԱԳԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

1. Միաւորեալ նախադասութեան մէջ, ուր երկու և աւելի եզակի կամ յոգնակի ենթականեր կան, բայր յոգնակի է գրվում, եթէ բոլոր ենթականերին է վերաբերում. այսպէս. Աղքատն ու հարուստը հաւասարապէս վայելում են բնութեան պարգևները: Հայոց նախարարներն ու հոգևորականները մեծամեծ արտօնութիւններ ունէին:

2. Երկու և աւելի եզակի ենթակաների բայր եզակի է գրվում.

Ա. Երբ ենթակաները նոյն կամ նման նշանակութիւն ունին. ինչպէս. Մարդուս կեանքն ու գոյութիւնը հանգամանքներից է կախուած: Ամէն բանի մէջ շափ ու սահման կայ:

Բ. Երբ հետզհետէ դասուած ենթակաները պարունակվում են վերջին ենթակայի մէջ, որ սովորաբար անորոշ դերանուն է լինում. այսպէս. Փռք, պատիւ, հարստութիւն՝ ըողորը կորաւ: Հարուստ, աղքատ, մեծ կամ փոքր՝ ոչ ոք ազատ չէ մահից:

Գ. Երբոր ենթակաները կապուած են ոչ միայն—այլև, կամ կամ, թէ-թէ և այլն շղկապներով, որովհետև այդպի-

սի տեղերում բայր միւս ենթակաների մօտ դորութեամբ է իմացվում. Ոչ միայն *Եւրոպան*, այլ և *Ասիան ծանաչեց հոռմայեցոց իշխանութիւնը*: (*Եյսիներն՝ ոչ միայն Եւրոպան ճանաչեց*): *Պատմութիւնը*, ինչպէս նաև *ընագիտութիւնը* տարնվեցերորդ դարու վերջերից սկսաւ մշակուիլ:

3. Եթէ ենթակաները զանազան դէմքի են, զորօրինակ՝ առաջին և երկրորդ դէմքի միանգամայն, բայր զրվում է յոգնակի առաջին դէմքով. եթէ երկրորդ կամ երրորդ դէմքի են, բայր զրվում է յոգնակի երրորդ դէմքով. *Դու, նս և եղբայրդ որսի կը գնանք*: Յոյս ունիմ թէ դուք և ձեր ծանօթը կը գաք մեր տունը:

4. Բայց եթէ այլադէմ ենթակաները կապուած լինին ոչ-ոչ, թէ-թէ, ոչ միայն-այլև և այլն շարկալներով, բայր համաձայնում է մտիկ ենթակայի հետ. Ոչ նոքա դասերը զիտնն և ոչ դու: Թէ դու պարզ և ըստանաս և թէ մենք Կամ նս, կամ դուք պարտէզ պիտի գնանք:

1. *Թարգմանութիւն*.— Գինի և ալքեցութիւն ապականնն զարս իմաստունս:— Գողն և գողակիցն ի միւս պատմի են:— *Մտիկ Մովսէս* և Ահարոն առաջի Փարաւոնի և ասնեցնաւ:— *Եկն Ագրիպաս* և Բերենիկէ բազում երևելի սպասուք և մտին լատեանս:— Դու և նս մի եմք:— *Պատիս* և շատ պարզևս գտաննք լարքայից արքայէ և դու և մեք: *Նս* և դու և ամենայն ըագմութիւնդ աշակերտեսցուք աստուածային գրոց:— *Մեղար* դու և ամենայն տուն քո. զի ոչ խօսեցարուք առաջիմ ճշմարիտ:

2. Գլեցէք ձեզանից մի քանի օրինակներ ենթակալի ու բալի համաձայնութեան միաւորեալ նախադասութեան մէջ:

§ 4. ԲԱՏԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԳՈՒԹԻՒՆԸ:

1. Սահմանականի ներկան գործ է ամփում՝ 1) երբ հարկ է յայտնել թէ գործողութիւնը մեր խօսակցութեան ժամանակն է կատարվում. *ինչպէս*. Չեր հայրը *գայիս* է: *Նա ընակվում է մեր տան մօտ*: 2) Երբ հարկ է յայտնել մի ընդհանուր ճշմարտութիւն, մի սովորական բան. *ինչպէս*. Մարդիկ մահկանացու են: Ծառերը ձմեռը հանգստանում են, վարնանք ծաղկում են, ամառը պտուղ բերում և աշեանք հասցնում են:

2. Ներկայ ժամանակը գործ է ամփում նոյնպէս *անցեալ կատարեալի* տեղ պատմական նկարագրութիւնների մէջ, երբ կամենում ենք անցեալ գործողութիւնը իբր աչքի առաջ բերել, որով խօսքը աւելի կենդանութիւն է ստանում: Զորօրինակ. Այն միջոցին երբ դաշնակիցները անհոգ կացած իրանց յաղթութեան վրայ էին ուրախանում, յանկարծ թըշնամին է վրայ հասնում ու անխնայ ջարդում, կոտորում է առաւօտեան յայթողներին:

3. Ներկան վարվում է և *ապառնիի* տեղ, երբ հարկ լինի մերձաւոր սպագայ գործողութեան ստուգութիւնը յայտնել. *ինչպէս*. Եյսօր ճանապարհ եմ ընկնում: Էգուց մայր եկեղեցում մեծ հանդէս կայ:

4. Անցեալ անկատարը գործ է ամփում երբ կամենում ենք յայտնել այնպիսի գործողութիւն որ տեսում էր տակալին, երբ մի ուրիշ գործողութիւն սկսաւ ու ընդհատեց նորան. զորօրինակ. Մենակ նստած գիրք էի կարդում, երբ որ բարեկամս ներս մտաւ: Աշակերտները խաղում էին, երբ որ ուսուցիչն եկաւ:

5. Անկատարը վարվում է նոյնպէս երկու կամ աւելի

ժամանակակից գործողութիւններ յայտնելու, որոնց ոչ սկիզբը յայտնի է և ոչ տեղութիւնը. ինչպէս. Ծաղիկ էր քաղում և լսելու, բաժանում էր բոլոր ծանօթներին:

6. Անկատարը գործ է անում դարձեալ երբ հարկ է նկարագրել բնութեան տեսարանները, մարդկանց և իրերի յատկութիւնները, բարեն ու սովորութիւնները, և այլն: Երկիրս այդ միջոցին մի գրաւիչ տեսարան էր ներկայացնում, լուսինը թափանցում էր ծառերի տերևների միջով և ամենաթանձր մթութեան մէջ լոյս էր տալիս:—Վարդան Մամիկանեանը քաջ զօրավար էր և առաքինի մարդ: Հայր շատ հին ժամանակ պաշտում էին արեգակն ու լուսինը:

7. Անկատարը վարվում է երբեմն կատարեալի տեղ մերձաւոր անցեալը յայտնելու համար. Ի՞նչ էի ասում: Փոքրը ինչ առաջ ձեր եղբայրը այստեղ էր:

8. Անցեալ կատարեալը գործ է դրվում պատմական նկարագրութիւնների մէջ, երբ հարկ է հետզհետէ շարել պատահած անցքերը, որոնց սկիզբն ու վերջը որոշվում է. ինչպէս.

Օրն էր տարածած. մարդիկ դադարած,
Փողը հնչեցին՝ մարտին կատարած.
Մութը տարածուեց, աստեղք ցուացին.
Երկնից ցօղն իջաւ արնակից գետնին...
Յեռ դարձան Պարսիկը իրանց բանակը
Նորից նոր սրբել սուրն ու դանակը...

9. Անց. կատարեալը վարվում է վաղակատարի տեղ, երբ հարկ է յայտնել մի պատմական իրողութիւն առանձին առած, որի ժամանակը ճիշդ յայտնի է. Քրիստո-

նէութիւնը տարածուեցաւ Հայաստանում շորորդ գարու սկզբում: Գրիգոր Լուսաւորիչը ծնաւ 257-ին: Սահակ Մեծը մեռաւ 440-ին: (Փոխանակ՝ տարածուել է, ծնել է, մեռել է):

10. Վաղակատար ժամանակը կազմվում է *և* և *աժ* անցեալ գերբայներով: Սոցանից առաջինը վարվում է երբ անցած բանի վրայ օտարի վկայութեամբ է խօսվում, կամ թէ անցեալ գործողութեան հետեանքը ներկայումս երևում է. այսպէս. Լսեցի թէ հայրդ եկել է: Ասում են թէ իշխանը հրամանագրել է: Այս երկխան շատ վատ բաներ է սովորել: Իսկ երկրորդը յայդ է տալիս թէ գործողութիւնը մի ժամանակ անշուշտ կատարուած է կամ չէ կատարուած. Բոլոր գործերս աւարտած եմ: Իմ օրումը այս տեսակ բան ոչ տեսած եմ, ոչ լսած:

Ե՛մ օժանդակի տեղ երբեմն կամ բայն է վարվում սովորարար հարցական ձևով. Տեսած կա՞ս այսպիսի գեղեցիկ գեղձեր: Գնացած կա՞ս Ա. քաղաքը: (Այսինքն՝ պատահել է է քեզ գնալ, տեսնել):

Արեւտեան լեզուի մէջ այսպիսի գէպերում գործ է անվում ունիմ՝ բալը: Ազտէս նպն մտքով ասում են. Տեսած ունի՞ս այսպիսի գեղեցիկ գեղձեր:

11. Երկու գերակատար ժամանակները վարվում են հեռաւոր անցեալ ժամանակը յայտնելու, առաջինը անորոշ մտքով, իսկ երկրորդը որոշեալ. թէ և երբեմն երկուսն էլ միմեանց փոխանակ գրվում են: Նոյն է ասել՝ Տուն էի գնացել և Տուն էի գնացած: Բարեկամներս եկել էին ինձ տեսնելու: Լսել էի թէ այս երկրումը մեծ անձրևներ են գալիս, բայց չէի տեսած:

Առաջին գերակատարը երբեմն պայմանականի մտքով

է վարվում, թէ, որ շողկապներով կամ առանց այդ շողկապների. ինչպէս. Եթէ իմացել էի թէ դու այստեղ ես, վաղ կը գայի: Մէկ էլ հետո խօսել էր, բանը գրուիս կը գար:

12. Պարզ սպաննին գործ է ամփում սովորական ապագայ գործողութիւնը բացատրելու, ինչպէս.

Բայց ախ, երբ որ կ'անցնի ամիս ու տարի,
Կը մամնտտի գերեզմանը այն բարի,
Հետքը անգամ չի մնալու իմ իրաչին,
Իմ անուշը, իմ յիշատակը կը կորչին:

Կը մասնիկի տեղ գործ է գրվում պիտի կամ պէտք է անդէմ բայը, երբ հարկ է յայտնել թէ գործողութիւնը անշուշտ կատարուելու է. Այս ամառ երկար ճանապարհորդութիւն պիտի անենք: Պէտք է գնամ տուն:

13. Ապառնին գործ է ամփում երբեմն հրամայական եղանակի մտքով. երեք դէմքով էլ. գործընթակ. Կ'երթաս արհեստաւորին կ'ասես որ գործիքները բերէ, և երկուսդ կը սպասէք մինչև որ ես գամ:

14. Եթէ ապառնին հարցական ձևով է, կամ իրանից առաջ ունի ո՛ւր, ո՛վ, ի՞նչ, ի՞նչպէս և այլն հարցականները կամ որ թէ՛կական շողկապը, կը մասնիկը շատ անգամ բաց է թողվում: Այսպէս ասում են՝ Գնա՛նք թէ բիշ էլ սպասենք: Որ գնանք լաւ կը լինի: Ի՞նչ խօսինք ձեր ասած մարդուն:

15. Պայմանական եղանակը յայտնում է մի գործողութիւն որ մի որևիցէ պայմանից կախում ունի, և այն ժամանակ եթէ, թէ որ շողկապներից յետոյ կը մասնիկը բաց է թողվում: Զորքը ինակ. Ուսուցիչը կը ներքէր աշակերտներին, եթէ իրանց յանցանքը խոստովանէին: Եթէ թուղթ

ու գրիչ ունենայի, իսկոյն կը պատասխանէի նորան:

Նոյն ձևով ու մտքով գործ է ամփում և ապառնին. Կը գամ ձեզ մօտ, եթէ ժամանակ ունենամ:

Երբեմն երկրորդական նախադասութիւնը գործութեամբ է իմացվում, և այն ժամանակ պայմանականը ցանկութիւն կամ փափագ է յայտնում. Կը ցանկանայի իմանալ թէ ինչ է ձեր տխրութեան պատճառը: (Այսինքն կը ցանկանայի, եթէ հնար լինէր) Կ'ուզէի գնալ տեսնել նորան:

16. Ապառնիի ու պայմանականի բաղադրեալ ժամանակները արտայայտում են մի գործողութիւն, որ ներկայի վերաբերութեամբ ապառնի է, բայց անցեալ է՝ ուրիշ ապառնի ժամանակի վերաբերութեամբ: Այս երկու ժամանակները շատ անգամ թէ՛ականի կամ պայմանականի միտք ունին: Սխալ գաղափար տուած կը լինինք մեր նախնեաց կեանքի վրայ, եթէ վերացական դատողութիւններով բաւականանանք և չենք նորոգիլ մեր մէջ անցեալ ժամանակների յիշատակները: Եթէ երէկ ճանապարհ ընկած լինէիք, այժմ ձեր տեղը հասած կը լինէիք:

Երբեմն ապառնի բաղադրեալը ենթադրութիւն կամ կարծիք է ցոյց տալիս. ինչպէս. Անշուշտ մեր նամակը ստացած ու կարդացած կը լինի:

17. Ստորադասական եղանակը գործ է ամփում՝ 1) կամք և զգացմունք յայտնող բայերի հետ. ինչպէս. Ցանկանում եմ որ ինձ հետ գաք: Վախենում եմ որ անձրև չգայ և շատիպուենք գիշերն անցկացնել այս խրճիթի մէջ: 2) Անդէմ և բացասական նախադասութիւնների հետ.— Զեմ կտրծում որ ձեր քոյրը ձեր ձայնը լսած լինի: Անկարելի է պատասխանած չլինի ձեզ:

18. Ստորագտական ներկան համապատասխանում է

սահմանական ներկային և ապառնիին, իսկ ստորագրական անկատարը սահմ. անկատարին ու պայմանականին. ինչպէս Խնդրում եմ (կամ կը խնդրեմ) որ զատ ինքզ ամէն բանքս ձեռովը կարգի դնես: Մարդ չկայ որ պակասութիւններից ազատ լինի: Մենք չէինք ցանկանում (կամ չէինք ցանկանալ) որ թշնամին տեսնէր ու յարճակուէր մեզ սրայ:

Քայց առհասարակ նկատելու է որ ստորագրական անկատարի տեղ գրիթէ միշտ ներկան է վարվում, մանաւանդ յոյնականում. Սպասում էինք որ զան, մեզ տեսնեն (եւ ոչ զային, տեսնէին): Նոյնպէս սահմ. անցեալ ժամանակներէ հետ ստորագրական ներկայ է դրվում. Գատարը հրամայեց (հրամայել է, հրամայել էր) որ վկաների ասածները լսեն, լննեն և այնպէս վճիռը տան:

19. Ստորագրականը գործ է ամվում երբեմն հրամ. եղանակի նշանակութեամբ. Գնամ տեսնեմ կամ զնամք տեսնեմք թէ ինչ են անում: Ինչ էս նստել. վեր կենաս, գրբերդ հւարքես:

Քայց շատ անգամ աւելի սաստկութեան համար աւելացնում են թող շողկապը, մանաւանդ անկատարի հետ. Թող կարգան ու գրեն: Թող իրանց գլխին բան չբռնէին:

20. Եթէ, թէ որ շողկապների հետ ապառնի ու պայմանականի տեղ վարվում են ստորագ. ներկան ու անկատարը՝ թէ կանի նշանակութեամբ. ինչպէս. Եթէ չգամ ու շտեսնեմ քեզ, ինքզ արի ինձ մօտ: Պատմէր իւր գլխի անցրը, վախենում էր որ հօր սիրտը շվտացնէ, թէ չլատմէր՝ գիտէր որ բանը ծածուկ չի մնալ:

1. Եւ մինչդեռ անցանէր (Յիսուս), Ետես այր մի կուր Ի ծնէ. և հարցանէին ցնա աշակերտքն նորա և ասին. Ռաբբի ո՛ր փնաս է, սորն թէ հօր և թէ մօր խրոյ, զի կուր ծնցի: Պատասխանի նա Յիսուս. Ոչ դորա և ոչ հօր և մօր խրոյ, այլ զԻ չալտնի լինիցին գործքն Աստուծոյ ի դմա: Զայս ասաց, և թուլի ի գետին, և արար կաւ ի թքոյն, և ծնվեաց զկաւն ի վերայ աչաց կուրին և ասէ ցնա. Ե՛րթ, լումն չաւազանին Աելովմայ, որ թարգմանի առաքեալ. Չոգաւ, լուացաւ, և ին և տեսանէր: Իսկ դրացիքն որոց անսակալն էր զնա չառջ. գոյն թէ մարացիք էր, ասէին. Ե՛հ սա էր որ նստէրն և մուրանայր: Կէսքն ասէին. Նա է, ալքն ասէին. Ոչ, այլ նման է նմա. և ինքն սուր թէր Ես եմ:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բայի զանազան եղանակներով ու ժամանակներով:

§ 5. ԴԼԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄԱԾ ՈՒՐԻՇ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ.

1. Եղև անցեալ դերբայն վարվում է դիմաւոր բայի ժամանակների հետ, երբ առարկայի գործողութեան վրայ օտարի վիպումթեալը է խօսվում. Տեսնում է եղև. Տեսած է եղև. Գր տեսնէ կամ պիտի տեսնէ եղև — նշանակում է՝ Ասում են թէ տեսնում է, տեսել է, պիտի տեսնէ: — Ամէն առաւօտ ու երեկոյ զնամ է եղև լողանալու:

2. Լիս վերջաւորութեամբ անորոշ դերբայի ներգոյականը լինիմ օժանդակ բայի ժամանակներով վարվում է գործողութեան հաւանականութիւնը ցոյց տալու: Կարողալիս է լինում. կարողալիս է եղել. կարողալիս կը լինի (ներկ. և ապա). Որ կարողալիս լինի — նշանակում է՝ հաւանական է որ կարգում է, կը կարգայ և այլն:

Նայն մտրով գործ է ամվում ներկայի ուժ վերջաւորութիւնը: Միևնոյն է ասել՝ նա այժմ հայ ուտելիս կը լինի, կամ նա այժմ հայ կը լինի ուտում:

3. Ող ներկայ դերբայն եմ՝ բայի բացասական ձևով գործ է անվում երբեմն ներկայի և ապառնիի տեղ. Ես նորա հետ խօսողը չեմ—նշանակում է՝ ախնաբան կամ քրեք չեմ խօսիլ:

4. Հու ապառնի դերբայն գործ է դրվում եմ և լինիմ բայերի զանազան ժամանակներով, երբ կամենում ենք յայտնել թէ ղիտատրուծին կայ գործույթիւնը կատարելու. Գնալու եմ. Գնալու էի. Գնալու կը լինիմ. Թէ գնալու լինէի և այլն, նշանակում է՝ ղիտատրուծին ունիմ, ունէի, կ'ունենամ գեալու:— Թէ գիւղ գնալու լինիմ, քեզ իմաց կը տամ:

Երբեմն էլ հարկադրականի մտքով է վարվում, մանաւանդ եթէ բայն բացասական է. Երբ և իցէ մեռնելու ենք: Աշխարհս մեզ մնալու չէ:

4. Ած անցեալ լինիմ բայով կազմում է միատեսակ հրամանացեալի նշանակութեամբ, Տեսած եղիր. Տեսած եղէր:— Գնա, դու էլ հանդէտը տեսած եղիր. Ինչ հետ արդ՝ մասին խօսած մի՛ լինիր:

6. Նոյն ած անցեալը պիտի կամ պէտք է անդէմնեցող վարվում է անսրտչ դերբայի տեղ՝ խօսքին աւելի որոշութիւն տալու համար. ի՞նչ պէտք է արած: Մեղաւորը պէտք է պատժած: Պաս օրին միս շալտը է գէրած (փոխանակ՝ շալտը է ուտել):

Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ վերոյիշեալ ձևերով:

§ 6. ԲԱՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԱՆԴԷՄ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

1. Անդէմ նախադասութեան մէջ առհասարակ գործ է անվում անդէմ բայն՝ 1. Ստորադասական եղա-

նակով. ինչպէս. Պէտք է որ տուն գնամ, դասերս պատրաստելու: 2. Անորոշ եղանակով, և այն ժամանակ ենթական շատ անգամ տրական հոլովի ձև է ստանում. Հարկաւոր է վաղ քնել և վաղ զարթնել: Ամօթ է մեզ մեր ձեռից եկած օգնութիւնը շահել խեղճերին:

Երեւանայ բարբառին շատուկ ձև է գիմաւոր բալի մաս անորոշ դերբայի տեղ ստոր. եղ. գործ գնել. ինչպէս. Ուզում եմ գնա՛լ, տեսնե՛մ իմ բարեկամներին: Պատրաստ է հօգին տայ քեզ համար:

2. Անդէմ բայի մտքով գործ է անվում երբեմն՝ 1) դիմաւոր բայի յոգնակի 3-րդ դէմքը, երբ որ զօրութեամբ է իմացվում ուժանք կամ շատ մարդիկ ենթական. ինչպէս. Կարծում են թէ լուսնի վրայ բնակիչներ կան: Ասել են առ ու տուր, ոչ թէ առ ու կնւլ: 2) Գիմաւոր բայի եղ. 2-րդ դէմքը, երբ որ զօրութեամբ է իմացվում ըողոր մարդիկ կամ իւրաքանչիւր մարդ ենթական. ինչպէս. Սգաւոր մարդ տեսնելիս՝ ուզում ես մխիթարել նորան, բայց չես իմանում թէ ինչ ասես կամ որ տեղից սկսիս:

Գաւառական բարբառներում ունիմ բայի ենթական արական հոլովի փոխուելով, անդէմ նախադասութիւն է կազմվում: Այսպէս ասում են. Խնջին հաց չունի ուտելու. Ի՞նչ երկու եղբայր ունիմ և մէկ քոյր: Այս մտքով գրքը. գործ է անվում եմ բայը, որի ենթական սեռ. հոլովի ձև է ստանում. Են իս եղբարք հինգ:

1. Թարգմանութիւն.—Պարտ է մանկանց ունել բարբառ չափաւոր և հեզ.— Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել լարքալութիւն երկնից.— Անհնար է խոսող և ջրոյ ի միա-

սրնկիւտ:—ՉՀայկակ ասնն լինել առ Բելոքոսիւ.—Քանի ուղիք
լցնն նորաւ է՞ ոք քո աստ բարեկամ.—Անն ուրումն էին
զանձք բազումք:—Չնն նորա ծնողք:

2. Գրեցէք ձեզանից մի քանի աղէմ նախադասութեան օրինակներ:

§ 7 ԲԱՂԱԿՐԵԱԼ ԲԱՅԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՆՔԱԿԱՅԻ ՀԵՏ:

1. Բաղադրեալ բայի մէջ ածականը կամ զոյականը սովորաբար անփոփոխ են մնում և միայն օգնական բայը համաձայնում է ենթակայի հետ ղէմքով և թուով. ինչպէս. Ես հայ եմ: Հայաստանի օղջ բարեխառն է: Գուք մեզաւոր էք: Ծառայ ննք քո տէրութեանը:

Մեր քերականները այս տեսակ նախադասութիւնները այսպէս են մեկնում. Ես մարդ եմ.—ես տէր բայի (ենթ.), եւ բառ (ստորոգ.), մարդ ուղ. հորովով խնդիր (լրաց.): Բայց այդ ճիշդ, չէ. որովհետեւ այսպիսի տեղերում զլրատոր միտքը զօյականի կամ ածականի մէջ է, և ոչ եւ բայի մէջ, որ միայն գոյ. և ածականին բայի ձեւ է տալիս, և այս պատճառով օգնական բայ է, և ոչ էական:

2. Բայց շատ անգամ բաղադրեալ բայի զոյականը թրւով համաձայնում է ենթակայի հետ, այսինքն յոգնակի է գրվում. թէ մէկ յոգնակի ենթակայ լինի և թէ շատ եզակի ենթականեր. դորօրինակ. Հայկազանց առաջին իշխանները լոկ նահապետներ էին: Առիծն ու վագրը կատաղի զազաններ են:

3. Միաւորեալ նախադասութեան մէջ ուր երկու կամ աւելի բաղադրեալ բայեր կան, օգնական բայն բաւական է միայն մի անգամ յիշել սկզբումը կամ վերջումը. ինչպէս. Մեր քաղաքների փոկոցները երկար են ու լայն: Մովսէս Խորենացին Հայոց գրականութեան փառքն

ու պարծանքն է: Երաժշտութիւնը մարդու համար օգտակար, հարկաւոր ու զուարճալի է:

4. Բաղադրեալ բայի մէջ օգնական բայի պաշտօն են վարում, բայի եւ՛ բայից, լինել, դառնալ, մնալ եւ ուրիշ սոցա նման բայեր. Պարոյրը լծագաւոր եղաւ: Քոյրդ մեծ աղջիկ դառաւ: Խեղճը սառած մնաց:

1. Թարգմանութիւն.—Սուղ է կենցաղս:—Փառնուկ և ղիւրադարձ է լեզու:—Յորժամ պտղս լից իցէ ծառ, լայնժամ գեղեցիկ է:—Այստա՛ր Հայոց մեծ է և արգասանդ: Վարդապետք է իք սառքելական քարոզութեանցն, արդ աշակերտք լինիցիք մուր խարէութեանն: Ուսուցիչք է իք ճշմարտութեանն, արդ ուսուցանիցէք զպատիր խարէութիւն մոզաց Զարոզք է իք արարչական զօրութեանն, արդ զտարերս աստուածս խոստովանիք: Փառանգ է իք արքայութեանն, արդ անձամբ զանձինս արարէք ժառանգ զեմնոցն:—Լն՛ր դու ինձ յորով:—Եղիջիք դուք մեզ ի ծառայս Եղիցին ամենախ զժուարինք ի ղիւրինս և առաջարքն ի դաշտս:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բաղադրեալ բայի համաձայնութեամբ:

§ 8 ԱԾԱԿԱՆ ՅԱՏԿԱՅՆՈՒՅՉԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՏԿԱՅԵԱԼԻ ՀԵՏ:

1. Ածական յատկացուցիչը միշտ իր յատկացեալից առաջ է գրվում և անփոփոխ մնում. ինչպէս. Բարձր մարդը իւր քաղի գործերից է ճանաչվում:

2. Եթէ նախադասութեան մէջ այլ և այլ ածականներ լինին, առաջ գտնվում են աւելի որոշեալները, ինչպէս են ցուցական և ստացական դերանունները և թուական անունները, յետոյ անորոշ դերանունները, որակ. և յարար. ածականները. այսպէս. Մեր գեղեցիկ քաղաշէն տունը ծախեցինք: Այս մի քանի ազատ օրերը անգործ պիտի

մանք: Իմ բոլոր սրտակից բարեկամները այստեղ են: Առաջին լաւ համբարը մեզ կը հասնի:

3. Ածականը կարող է երբեմն իր գոյականից յետոյ դասուիլ, կրճատեալ նախադասութեան ձեւով. այսպէս. Մի շուն ունիմ զարմանալի հաւատարիմ: Սալչեր տեսանք ամեն տեսակ մրգերով յի: (Այսինքն՝ մի շուն որ հաւատարիմ է. սայլեր որ չի են):

4. Առանձին ձեւով ածականը երբեմն իր գոյականից յետոյ է դասուում տեսակ ցոյց տալու համար, եւ այն ժամանակ գոյականը սեռ. յատկացուցչի ձեւ է ստանում. այսպէս ասում են՝ Գեղձի ընտիրը Երեւան կը գտնես: Կտաւի լաւը հոլանդիայումն են գործում: (Այսինքն՝ ընտիր գեղձը, լաւ կտաւը):

5. Հատ անգամ յոգնակի գոյականի մօտ միեւնոյն ածականը կրկնվում է սասակութեան համար, այսպէս. սուք սուք խօսքիք. ծանր ծանր գանգատներ. մանր մանր հատիկներ. մեծ մեծ խոստամունքներ. լայն լայն փեշեր:

Նոյն մտքով եւ գոյական անունն է վարվում կրկընուած՝ տեսակ տեսակ բոյսեր. գոյն գոյն ծաղիկներ. շարք շարք մարգարիտներ:

6. Եթէ հետզհետէ երկու ածական լինին, երկբորդը գոյականի գորութիւն ունի եւ հարվում է ու յօդ ընդունում. Խնդ՞ ողորմելիքը օրուան հացի կարօտ են:

7. Եթէ գոյականը գորութեամբ է իմացվում, ածականը նորա հարվը ու թիւն ընդունում է. ինչպէս Կարմիր վարդերը աւելի ախորժելի են քան թէ սպիտակները ու դեղինները:

8. Ածականի տեղ շատ անգամ վարվում են գոյական անունները այլ եւ այլ մտքով.

Ա. Պարզ ածականի մտքով. այսպէս ասում են՝ ցուրտ

եղանակ. շուաք տեղեր. սուա վկայութիւն. ծակ ամաններ =

Բ. Չափ ու ձեւ ցոյց տուող գոյականները՝ առաջինները թուական անունով միասին. երկբորդները ածականով. այսպէս. մի ըածակ շայ. երկու յիտը շաքար. տասը կանգուն կտաւ. մի քանի սայլ խոտ. նոր տեսակ ճարտարապետութիւն. հին ձեւ զարդարանքներ:

Գ. Նմանութեամբ եւ փոխաբերական մտքով. ծաղիկ հասակ. ապստամբ քարեր. կրակ մարդ. հրէջ մարդ:

1. Թարգմանութիւն.— Երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ եւ մեծաւ քարկութեամբ զարմանալին ե զազանացեալ զօրութեամբ փրեարս լարձակէին երկոքեան եւ ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց իբրև ի մէջ անկոց շիտթելոց ճալթմունս գործէր:— Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս գործեաց ի տեղուքն, յորում անդունջ ե ինքն իսկ ալ ժանի եղև առնուլ զկատարեալ նանատակութեանն պսակ:— Խոստովան լիցուք զզազանիս սրտից մերոց ծածկազէտին Աստուծոյ: Աւաղ փառացս անցաւորի: Պսական փշեայ զարգայեցին զգլուխ թագաւորին երկնաւորի:— Արէլ ի հարազատէն իւրսէ սպանաւ յնդբօրէ:— Ի վերայ այլը վիմի (կամ վիմիղ այլորիկ) շինեցից զեկեղեցի իմ:— Որ ելանէ ի բերանու, ի սրտէ անտի գաւ:— Ընդէր տեսանեմք զարև լիս մերոց սիրելիացն:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ածական լատկացուցչի գործածութեան վրայ:

§ 9. ԳՈՅԱԿԱՆ ՅԱՏԿԱՅՈՒՅՁԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՏԿԱՑՆԱԼԻ ՀԵՏ:

1. Գոյական յատկացուցիչը ածականի պէս լատկացեալից նախադաս է վարվում, եւ յատկացեալը մտքին նայելով կարող է ստացական յօդ առնել եւ շառնել. ինչպէս. Հայաստանի կլիման բարեխառն է. Մեր պարտէզը ծառերը պտղատու են: Մարիամը վարդերի ու մեխակները մարգեր ունի:

2. Գոյական յատկացուցիչը երբեմն կարող է իր յատկացեալից յետոյ գատուիլ. գորօրինակ. Մովսէս Խորենացին իրաւամբ կոչվում է հայր պատմութեան հայոց: Նոյնպէս և գրքերի անունները՝ Պատմութիւն Յունաց, Աշխարհագրութիւն Հայաստանի:

Միայն եթէ յատկացեալը որոշեալ է, այս տեսակ գատաւորութիւնը անընդունելի է. ուստի չէ կարելի ասել՝ Եղիշէի պատմութիւնը Վարդանանց հին հայկաբանութեան օրինակ է, այլ՝ Եղիշէի Վարդանանց պատմութիւնը:

3. Գոյական յատկացուցիչը ցոյց է տալիս գլխաւորապէս թէ մէկ առարկայ ումն է պատկանում կամ վերաբերում. այսպէս. Իմ եղբոր գրատան մէջ (այսինքն՝ այն գրատան մէջ, ուր իմ եղբօրն է պատկանում) շատ օգտակար գրքեր կան: Հայրենեաց յիռչը քաղցր է քան թէ օտարի վարդը: (Այսինքն՝ հայրենեաց վերաբերող վիռչը):

Այս տեսակ սեռական յատկացուցիչը յարբերական ամականի միտք ունի. նոյն է ասել՝ մօր օրհնութիւն և մայրական օրհնութիւն. հայոց լեզու և հայկական լեզու:

Միայն ամական ձևը միշտ չէ կարող գործ ածուիլ, չէ կարելի ասել շնչաւոր առարկայի վերաբերութեամբ յունական թագաւոր, պարսկական Շահ.— այլ Յունաց թագաւոր. Պարսից Շահ: Այս բանիս ուշք դարձնելու է օտար լեզուներից թարգմանելու ժամանակ:

4. Գոյական յատկացուցիչը երբեմն ցոյց է տալի մէկ արեւիցէ առարկայի որակիսութիւնը. ինչպէս. Այս մարդը զարմանալի յատկութիւնների տէր է: Երկուսն էլ մէկ հասակի մարդիկ են: Հպարտութիւնը յետին աստիճանի անմտութիւն է:

Այս տեսակ սեռական յատկացուցիչը որակական ամականի միտք ունի, և այս պատճառով միայն որակական ամականով կարող է գործ ածուիլ. ազնիւ բնաւորութեան. յաւ վարքի տէր. ստորին կարգի մարդիկ:

Եթէ ուղղական կամ հայցական հոլովով յատկացեալը գօրութեամբ է իմացվում, յատկացուցիչը ստանում է նորա յօդը և հոլովական վերջաւորութիւնը. Այս գիրքը Պետրոսինն է. այսինքն՝ Պետրոսի գիրքն է: Գետերի ջուրը աւելի համեղ ու աւտղջարար է քան թէ աղբիւրներիը:

Նկատելու է, որ այս դեպքում լոգից առաջ Ա տառն է աւելացվում:

1. Թարգմանութիւն.— Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր և այնպէս աներկիւզս առնէ զմարդիկ, իբրև գանձարմին զօրս հրեշտակաց:— Ետ հրաման (Յազկերտ) լափշտակել զքրիստոնէից զինչս և զստացուածս, որ էին քի մէջ Պարսկաց աշխարհին:— Իրգեցին, ժողովեցին զբազմութիւն արանց և կախանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց, խրատ եղին, պնդեցին և արարին զամենեան զինուորս Բրիստոսի:— Զիւրդ ոչ է զօրւոր գինի. զի ամենայն մարդիկ որ բմպեն զնա՝ լիմարացուցանէ զմիտան, և զթագաւորաց և զտառապելոց մի միտս առնէ. նոյնպէս զտեսանն և զճառայի, զմեծատանց եւ զաղքատաց, և զամենայն միտս զարձուցանէ և չբջէ լուրախութիւն:— Սատակեցի զնոսա բանիւքերանով իմով:— Ոչ էր արեալ նորա այնչափ լօրէ ծննդնէ իւրմէ:

2. Իրեցէք ձեզանից մը քանի օրինակներ գոյական յատկացուցչի գործածութեան վրայ:

§ 10. ԲԱՅԱՅԱՅՏՈՒ ԵՒ ԲԱՅԱՅԱՅՏԵԱԼԻ ՀԱՄԱՅԱՅՆՈՒԹԻՒՆԸ:

1. Բացայայտիչը եթէ մէկ բառով է արտայայտվում, միշտ բացայայտեալից յետոյ է գատում և ինքը միայն ըն-

դունում որոշեալ յօդ ու հոլովական վերջաւորութիւն. Ինչպէս. Թիֆլիզ քաղաքը Կուր գետի վրայ է: Հայկ նահապետը Հայկազանց հարստութեան հիմնադիրն է:

2. Երկու կամ աւելի բառից բաղկացած բացայայտիչը կարող է բացայայտեալից նախադաս էլ վարորդի, յետագաս էլ:

Ա. Եթէ բարդ բացայայտիչը յետագաս է, երկուսն էլ ընդունում են յօդ և հոլովական վերջաւորութիւն. Աւին, Բագրատունեաց մայրաքաղաքը, նշանաւոր էր իւր ճարտարապետութեամբը: Աղքտանդր Մակեդոնացին բարկութեան ժամանակ սպանեց Կլիտոնին՝ իւր հաւատարիմ՝ զօրավարին*:

Բ. Եթէ բացայայտիչը նախադաս է, սովորաբար նոյնպէս բացայայտեալի համաձայն է գրվում, թէև երբեմն անհամաձայն է մնում. այսպէս. Մեր հին փիլասոսանները երգեցին Տիգրանի կրտսեր որդու Վահագնի քաջութիւնները: Արայի որդին Կարողսը (կամ Արայի որդի Կարցոսը) գերի ընկաւ Ըստրեսանցոց ձեռքը: Սուրէն զօրավարը Կրասոսի գլուխն ուղարկեց Հռոմէացեցոց ռիսերիմ թշնամուն Տիգրանին (կամ Հռոմայեցոց ռիսերիմ թշնամի Տիգրանին):

3) Առանձին ոճով երբեմն բացայայտեալը սեռական հոլովով է գրվում, գոյական յատկացուցչի ձևով. զորօրինակ. Եզրիպատոսի երկիրը լի է պատմական յիշատակարաններով: Սահարայի անապատում փշում է գառնաշունչ Սամուհ քամին: Գեղարքունի ձուկը գուրս է գալիս Սեւանայ լճից:

* Բայց երբեմն նախադաս բացայայտեալը աւելի բարձր է անյօդ թողնել. Յուսուփ, Աբարացոց ոստիկանը, մեծ վեհանքի հասցրեց Հայոց:

1. Թարգմանութիւն. Յասոն եղբայր Ռնեայ, ցանկացու հանել (խլել) զքահանապետութիւն Ռնեայ:— Ըրդիք սրբոյ Յունկանն Պապ և Աթանաղիոնէս մահ անձանց նիւթեցին:— Ասէ Հոսպուել ցշեզնա ցլին իւր:— Տեսանես զի նմանի պատանեակս Տուրթալ եղբոր որդւոյն իմոյ: Պետրոս էր ի Հոռոմ քաղաքէ:— Առ Ներոնիս կայսերը գլխատեցաւ Պօղոս ի Հոռոմ քաղաքի:

2. Իրեցէք ձեզանից մի քանի օրինակներ բացալայտչի գործածութեան վրայ:

Բ. Խնդրառութիւն Մասանց-Բանի:

§ 11. ԽՆԴՐԱՌՈՒ ԵՒ ԽՆԴԻՐ ԲՍՈՒՄԸ:

Եյն բառերը որոնք մի որեիցէ հոլով են պահանջում, կոչվում են խնդրառու. իսկ այն բառերը որոնք կախում ունին խնդրառու բառերից և այս կամ այն հոլովովն են գործածվում, կոչվում են խնդիր: Զորօրինակ. Փայտը կարում են կացինով նախադասութեան մէջ կարում են խնդրառու բառ է, իսկ փայտը և կացինով խնդիր:

Խնդիր պահանջում են գլխաւորապէս բայերը, ինչպէս նաև անունները և նախադասութիւնները: Իսկ խնդիր լինում են գլխաւորապէս զոյական անունները, նոյնպէս և ածականները ու դերանունները, երբ որ գոյականի մտքով են վարվում, և անորոշ դերբայը:

Խնդիրների մէջ պէտք է զանազանել գլխաւորները երկրորդականներից: Գլխաւոր խնդիր են լրացուցիչ բառերը, որոնք անհրաժեշտ են նախադասութեան մէջ. իսկ երկրորդական խնդիր պարագայական բառերն են, որոնք սերտ կապակցութիւն չունին բալի հետ և կարող են նա-

խաղաղութիւնից դուրս թողուիլ: Այսպէս այս նախադասութեան մէջ՝ *Տարեմտին* հայրս *ինձ մի գիրք* պարգևեց— *ինձ մի ղերք* գլխաւոր խնդիրներ են, *Տարեմտին*— երկրորդական:

§ 12. ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈՂՈՎՈՎ ԽՆԴԻՐ

1. Հայցական հոլովով խնդիր գրվում է գլխաւորապէս այն աւարկան, որի վրայ անցնում է ենթակայի գործողութիւնը. այս պատճառով բոլոր ներդրմական բայերը պահանջում են միշտ հայցական: *Զորօրինակ*. Հերոստրատ այրեց Եփեսոսի տաճարը: Տրդատ մէկ հարուածով սպանեց Բաղայ թագաւորին: Փոքրիկ առունները կազմում են մեծամեծ գետեր:

2. Հայցական հոլովով խնդիր առնում են՝ *ծնել*, *մեռնել*, *ընտրել* և *ընտրուել*, *կարգել* և *կարգուել*, *դառնալ*, *օծել*, *պառնել*, *անուանել* և սոցա նման ներգ. կրու. և շէզք բայերը, որոնք ցոյց են տալիս աւարկայի գրութեան փոփոխութիւնը. ինչպէս նապօլէոն Ա. ծնաւ հասարակ քաղաքացի, գարձաւ կայսր և մեռաւ գերի: Վաղարշակը Բագրատ իշխանին թագադիր կարգեց: 885-ին Աշոտ Ա. մեծ հանդէսով թագաւոր օծուեցաւ: Մենք Հայկի անունով կոչվում ենք Հայնկատելու է որ այս հայցականը միշտ անորոշ է, ուստի և անխնդիր է վարվում:

3. Հայցական հոլով պահանջում են *շարժում* ցոյց տուող բայերը իբրև պատասխան *ո՛ր* հարցման, երբ մի տեղ գնալ-գալ են նշանակում. ինչպէս. Բարեկամս Հայաստան է գնացել: Գնա՛ տուն և գիրքս բեր ուսումնարան: Մթնեցաւ թէ չէ, ամէն մարդ իւր տունը քաշուեցաւ:

Այս հայց. համապատասխանում է գրոց նախգրիւ տրականին. *Մ'թ ի տուն*, *յուսումնարան*:

4. Հայցականը գործ է անվում երբեմն ներդրականի տեղ յօդով, եթէ հասարակ անուն է, և առանց յօլի՝ եթէ յատուկ. այսպէս. Մեր կողմերը ամենեին ձիւն չէ գալիս: Ո՛ր տեղ էր բնակվում, *Երևան* թէ *Էջմիածին*: (Փոխանակ՝ մեր կողմերումը, Երևանումը):

5. Հայցական խնդիր գրվում է ամեն տեսակ բայերի մօտ՝ ժամանակի տեղութիւնը ցոյց տալու, իբրև պատասխան *ո՞րքան* ժամանակ հարցման. ինչպէս. *Ամբողջ գիշեր* շարչարուեցաւ: *Վճր օր* աշխատէ, և եօթներորդ օրը հանգստացիր: *Գիշեր ցերեկ* իր գործի հետ է լինում. Բագրատունեաց թագաւորութիւնը տևեց 160 տարի:

Յոգնակի է գրվում հայցականը՝ եթէ գործողութեան կրկնութիւն է ցոյց տալիս. ինչպէս. *Երեկոյեաները* պարսպում էինք ընթերցանութեամբ:

6. Հայցական խնդիր պահանջում են բաղդատական անձականները *քան* թէ բառերով. Սպոր աւելի մեծ է քան թէ քաղը: Ասիան աւելի ընդարձակ է քան թէ Եւրոպան:

1. *Թարգմանութիւն* — Այր ոմն էր մեծատոն և ազանէր ընհեզս և ծիրանիս — Փաղաւոր ոմն արսր հարսանիս որդու իւրում. և առաքեաց զճառայս իւր կոչել զհրաւրեանալսն ի հարսանիս և ոչ կամեցան գալ: Գարձեալ առաքեաց ալ ծառայս և ասէ. Ասացէք հլախրելոցն. Ահա ասիկ զճաշն իմ պատրաստեցի, եկալք ի հարսանիսս: Եւ նօքա յուրացեալ զնացին ոմն յազարակ իւր, ոմն ի վաճառ իւր, և ալք կաւան զճառաս իւր, թշնամանեցին և սպանին: — Անուն աշխարհիս մերոյ կոչի յանուն նախնոցն մերոյ Հակոբ Հայք: Իմաստասէրք զմարդ փոքր աշխարհ ասացին: — Անարգ և անօգուտ զքաջութիւնսն համարիմ և սու ոչինչ զպարգևան զքազումս: — Զվնց օր գործեցես և արացես զամենայն զործս քո, զի զվնց օր արար Աստուած զերկինս և զերկիր: — Եղև Զրհեղեղ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր: — Ակն կարեորագոյն է քան զամենայն անդամս: —

Հատն մանանխոյ փողը է կամ փոքրագոյն է, քան զամենայն
սերմանիս. բուսանի և լինի մեծ քան զամենայն քանջար:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ հայց. խնդիրներով:

§ 13. ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՎ ԽՆԴԻՐ.

1. Սեռական հոլովով խնդիր պահանջում են ներգոր-
ծական և կրաւորական բայերից առաջ եկած բայտեւանները.
ինչպէս. Գրեցրի ընթերցմունքը ամեն հասակի համար օգ-
տակար է: Փողը երեսնաների խնամքը ծնողաց է յանձ-
նուած: Ատուած է խնդների մխթարութիւնը: Մարդկային
ազգի Փրկիչը ծնաւ Բեթղեհէմում: Միութիւնը լատութեան
ծնող է*: Յուսահատութիւնը փոքրոզութեան ծնունդ է:

* Ող ներկայ դերբայն, եթէ իբրև գոյական առնուի,
միշտ սեռական հոլովով խնդիր է պահանջում. իսկ եթէ
իբրև բայ առնուի, իւր պէտք եղած հոլովն է ընդունում:
Այսպէս կարելի է ասել՝ Երկնքի ու երկրի Ստեղծողը, և
երկնքն ու երկիրը Ստեղծողը:—Մեր ծառայողները և մեզ
ծառայողները (տր):

2 Սեռական հոլով առնում են նույնպէս աննկու և տա-
լու բայերը, երբ հարկ է նիւթի քանակութիւնը ցոյց տալ. ինչ-
պէս. Հայրս տասը մանէթի փայտ գնեցի. Երէկ հարիւր մանէ-
թի գիրք ծախեցի: Վախժումն մանէթի ալիւր առաւ, որից
քսան մանէթի ինձ տուեց:

1. Թարգմանութիւն.—Սկիզբն ուսմանց գրոց աշխատութեամբ
չինի.—Անասունք ի սպասաւորութիւն մարդկան եղին.—Քրիստոս
եկն լաշխարս ի խնդիր մուշտրեալ ոչխարին:—Յետ վախճանին
Յովսէփայ նեղէին կղիպտացիքն զԻսրայէլ ի շինուած քաղաքաց
և ի գործս ղաշտաց:—Միտք են մարմնոյ և հոգւոյ կառավար:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ս.ս. խնդրով:

§ 14. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՎ ԽՆԴԻՐ.

1. Տրական հոլովով խնդիր պահանջում են առհաս-
քակ ներգ. և չէզոք բայերը՝ երբ որ մէկ առարկայի գործո-
ղութիւնը միւսին օգուտ կամ վնաս է բերում. ինչպէս. Ու-
սուցիչը աշակերտներին գրքեր ընծայեց: Ոգորմեցէք աշ-
քատներին, որ Ատուած էլ փոխարէնը տայ ձեզ: Հաւ չէ
ուրիշներին նախանձել: Անձրև օրը հաւերին ջուր տուող
չատ կը լինի: (Առած):

2. Կան մի քանի ներգործական բայեր, որոնք հայցա-
կան խնդրի տեղ տրական խնդիր են պահանջում. այսպէս
են՝ յաղթել, տիրել, խնդրել, ասել (անուանել բայի մտքով),
սպասել, օգնել, ծեծել և այլն. Արամը Նիւքարին յաղթեց:
Տրգրան Բ. Ասորոց երկրին տիրեց: Օգնեցէք շքաւորներին:
Պղպեղին շատ տեղ տարգեղ են ասում: (Այստեղ Նիւքարին,
երկրին և այլն, տրական են՝ և ոչ սեռական):

3. Տրական հոլով պահանջում են այն բայերը, որոնք
ցոյց են տալիս մի առարկայի ղեւզելը, խփուելը ուրիշ ա-
ռարկայի. ինչպէս. Նաւը ժայռին խփուեցաւ և խորտակուե-
ցաւ: Ոտս ծառին դիպաւ: Գլուխդ քարին տուիր: Մարը
սարին շի գիւղչիլ, մարդը մարդուն կը դիպչի (Առած):

Այս ձևով կազմուած են հետեւեալ զուրցուածները գոյ-
ների նրբութիւնները բացատրելու համար. կարմրին տալ,
ղեղնին տալ, սելին տալ, և այլն:

4. Տրական հոլով առնում են շարժում ցոյց տուող
բայերը, բայց միշտ աւանց յողի, երբ գործողութեան նպա-
տակն են յայտնում. գործիական. Գատաւորը իր օգնականե-
րին խորհրդի կանչեց: Այսօր հօրեղբորս մօտ ճաշի են հրա-
ւիրուած: Զօրքը պատեւրագմի գնաց:

5. Նոյնպէս ձգտում ցոյց տուող բայերը տրական են

պահանջում սովորաբար յօդով. Երկար աշխատանքից յետոյ վերջապէս նպատակիս հասայ: Տկարը զօրաւորի օգնութեանն է գիմում: Աղուէսի դունչը խաղողին շհասաւ, ասաւ խակ է: (Առած):

6. Տրականը, որոշեալ կամ գերանուանական յօդով. շատ անգամ դորձ է ածվում ներգոյականի տեղ կամ մէջ-վրայ, մօտ նախադրութիւններով սեռականի փոխանակ: Զորօրինակ. Վասակը Պարսից թագաւորի պալատը գնում էր գլխին ոսկի թագ ծածկած, մէջքին ականակուռ և մարգարտաշար գօտի, շինքին գումարտակ գցած, ուտըին սամուր և ականջներին օգեր: Ազրատը եկեղեցու դրան կանգնած ուղորմութիւն էր խնդրում: Սուրը ծեռիս և հրացանը ուտի առջ վազեցի: Ժանապարհին հանդիպեցայ իմ բարեկամին: Ծիտն է ծառին, հաւն է թառին: (Փոխանակ՝ գլխի վրայ, դրան մօտ, ձեռումս, ճանապարհումը, թաւի վրայ):

7. Տրականը որոշեալ յօդով դրվում է պարձեալ ներգոյականի տեղ՝ գործողութեան ժամանակը յայտնելու:

Ա. Ամիսները, տօները, և առհասարակ բոլոր ժամանակացոյց տուող անունները, երբ որ պատասխանում են Ե՞րբ հարցմանը. ինչպէս. Օգոստոսին արտերը հնձում են, սեպտեմբերին խաղողը քաղում: Ըմնամեծ ցրտերը յունվար և փետրվար ամիսներին են լինում: Ծնունդին խաշը ջուրն են ձգում: Կարմիր ձուն Զատիկին կը սալի: (Առած): Իրիկնաւահին եկաւ հասաւ: Կէսօրին արեւը խաւարեցաւ: Այդ միջոցին ամէն բան վերջացած էր:

Բ. Տարեթիւ, ամսաթիւ և օրուան ժամերը յայտնող բառերը, երբ որ պատասխանում են քանիսին հարցմանը: Հայոց տոմարը նորագուեցաւ 553-ին: Կարոյտ Ե. վախճանեցաւ 1500-ին փետրվարի 24-ին: Ամէն իրիկուն ժամը տասին քնում

եմ, ևւ առաւօտեան հինգ ու կէսին պարթնում եմ:

8. Տրական հոլովով խնդիր առնում են մի քանի որակական ածականներ՝ արժանի, ընդունակ, կարօտ, օգտակար, դիրին, յարմար ևւ ընդհանրապէս լի վերջացածները. ինչպէս են՝ սիրելի, ցանկալի ևւ այլն:

Աշխատատէր աշակերտները վարձատրութեան արժանի են: Խեղճ մարդը օգնութեան կարօտ է: Այս սենեակը երկուսիս բաւական է: Անձնատէրը ամէնին ատելի է:

1. Թարգմանութիւն.—Կուր կուրի շրժամ առւ ջնորդէ՝ սխալէ և երկօքին ի խորխորատ անկանին: Մարմն մեր հանապազօրեայ կերակրոյ պէտս ունի: Բարի արարէք ատելեաց ձերոց: —Եհար զոտն զքարի:— Աճ գօտի ընդ մէջ քո երեեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք (սաղաւարտները զխնեքին): սուր ընդ մէջ և վահան ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանաց ատնականց (մարդ ունեցող):— Ի տօնին մեծի արարին ճաշ մեծ:— Է ձեր սովորութիւն զի զմի ոք արձակեցից ձեզ ի զատկիս. արդ կամիք զի արձակեցից ձեզ զթագաւորն Հրէից: Սահակ Պարթե նստաւ լաթու հարսպետութեան յամի 390-րդի և վախճանեցաւ յամի 440-րդի:— Իսկ գունդն Հալոց ամենայն օգնականօքն հանդերձ և մոզացն քաղմութեամբ յամսեանն շորըրդի եկին հասին լաշխարհն Հալոց:— Պետրոս և Յովհաննէս ելանէին ի տաճար անդր յիներորդ ժամու ազօթիցն:— Ամբարտաւանութիւն ատելի է Աստուծոյ ևւ մարդկան:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ արակ. խնդրով:

§ 15. ԲՍՅԱՌԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՎ ԽՆԴԻՐ:

1. Բացառական հոլովով խնդիր գրվում է նախկրաւորական բալերի մօտ, ևւ ցոյց է տալիս թէ ենթական ումից է կրում գործողութիւնը. գորօրինակ. Արէջ սպանուեցաւ Կայէնից: Մեծամեծ դետերը կազմվում են

սիրր առուններից: Պոմպէտը յաղթուեցաւ Կեսարից: Յիշուս
Հրէաներից խաչուեցաւ:

Այս բացառականը շատ զործածական չէ մեր լեզոււմ,
ախպէս որ լաճախ անսովոր ձևեր է կազմում, երբեմն
նաև խօսքի մթութեան պատճառ է լինում. զորօրինակ
թէ ասենք՝ Հոռոմ քաղաքը առնուեցաւ Գալլիացիներից,
կարող է հասկացուիլ թէ Հոռոմ՝ առնուեցաւ Գալլիացի-
ների ձեռքով կամ սորա հակառակ՝ Հոռոմ առնուեցաւ
Գալլիացիների ձեռքից: Այս պատճառով կրաւորական
նախադասութիւնները շատ անգամ ուրիշ ձևերով են արա-
ւարտուում. այսպէս.

փոխանակ ասելու

ասում են

Անձնատէրը ատվում է ամէնից. Անձնատէրը ատելի է ամէնին.
Որդին սիրվում է հօրից. Հայրը սիրում է որդուն.

Արմաիրը շինուեցաւ Արմայիսից. Արմաիրը շինուեցաւ Արմա-
յիսի ձեռով.

Գաշտերը ծածկուեցան ձիւնից. Գաշտերը ծածկուեցան ձիւնով:

2. Բացառական հոլովով խնդիր պահանջում են ընդ-
հանրապէս ամեն տեսակ բայերը, երբ որ ցոյց են տալիս
գործողութեան ուղղութիւնը իբրև պատասխան ումից, ին-
չից, ո՞րտեղից, հարցերին. ինչպէս. Լուսինն իր լոյսը առ-
նում է արեգակից: Եղորիցս նամակ ստացայ: Անհնազանդ
որդին զրկուեցաւ հօր ժառանգութիւնից: Ով որ մահից վա-
խենում է, չէ կարող զինուոր լինել: Ոչ թէ աղքատու-
թիւնից պէտք է ամաշել, այլ մոլութիւններից:

Այս մտքով բացառական հոլով են առնում՝ ազատ,
զուրկ, հնուտ, տարբեր, անյոյս և սոցա նման ածականնե-
րը. Հոգւերից ազատ ես: Այդպիսի կառուածանքից հեռու եմ:
Մէկն մխիթարութիւնից զուրկ եմ:

3. Բացառական հոլով պահանջում են շինել, կաշմել,

կառուցանել և այլն, երբ որ ցոյց են տալիս թէ ինչ նիւ-
թից շինվում է մի բան. ինչպէս. Գինին քամում են
խաղողից: Սիւների կէսը հասարակ քարից շինել տուաւ,
կէսն էլ մարմարիոնից: Կապեցէք մի փունջ այս ծաղիկնե-
րից:

4. Բացառական հոլովով խնդիր պահանջում են ան-
որոշ դերանունները և թուական ու գոյական անուն-
ները ամբողջի մասերը ցոյց տալու համար. ինչպէս. Մէ-
զանից ոչ որ այնտեղ չէր: Աշակերտներից ոմանք ուսում-
նարան չեկան: Եոցանից երկուսը մեր ծանօթներն են: Այս
տանձերից մի մասը ծախու են:

5. Բազդատական ածականները քան թէ բառերով հայ-
ցականի տեղ բացառական հոլովով խնդիր են առնում, որ
աւելի սովորական է. նոյնպէս և գերազրական ածական-
ները, երբ որ ուրիշների համեմատութեամբ ամենից գե-
րազանցը կամ ստորն են ցոյց տալիս. ինչպէս. Պատիւը
հարստութիւնից թանկ է: Ասիան Եւրոպայից ընդարձակ է:
Տիրանը ամէնից աշխատատէր աշակերտն է:

6. Բացառական խնդիր պահանջում են չէզոք բայե-
րը, երբ որ գործողութեան կամ գրութեան պատճառն
են յայտնում. ինչպէս. Ահուղողից լեզուն կապուեցաւ:
Մարդս անգործութիւնից հիւանդի պէս է լինում: Ծաղիկ-
ները թառամեցան ցրտից: Չատ լալուց աչքերը կուրացան:

Գաւառական բարբառներում այս բացառականը եր-
բեմն տրականի ձև է ստանում. Այսպէս ասում են.
Նրա դարդու չկամ. Ահու, ամօթու մեռաւ.—Գրբբ. Տիչդ
նոյն ձևն երևում է առ նախադրութեամբ, առ անի, առ
ամօթոյ:

7. Բացառական հոլովը վարվում է մինչև նախադրու-
թեամբ հայցականի հետ տարածութիւն և ժամանակի

սահմանը որոշելու մէկ նշանակեալ կէտից մինչեւ նշանակեալ կէտը, իբրեւ պատասխան այս հարցերի, ո՞ր ժամանակից, կամ ո՞ր տեղից, կամ մինչեւ ո՞ր ժամանակ կամ ո՞ր տեղ: Զօրօրինակ. Հայաստանի սահմանները տարածվում էին Վրաստանից մինչեւ Ասորեստան և փոքր Ասիայից մինչեւ Պարսկաստան: Հայկից մինչեւ Վահէ երկու հազար և աւելի տարի են հաշվում: Ինք ժամից այստեղ եմ:

Նոյնպէս բացատրական է դրվում, եթէ հարկ է ցոյց տալ գործողութեան վերջը մի նշանակեալ ժամանակից հաշուելով. Երեք ժամից տեղերս կը հասնինք: Մի քառի օրից ծնողացս նամակ կը գրեմ: Կամ նաեւ յետոյ, յետ նախադրութիւններով. Մէկ երկու տարուց յետոյ բոլոր գործերս կ'աւարտեմ:

1 Պարզանուծիւն.—Յիսուս խաչեցաւ ի Հրէից:—Կրաստս պարտեցաւ ի զօրաց Տիգրանայ արքայի Հայոց:—Ընդ ելանելն Յիսուսի ի նաւէ անսի, պատահեաց նմա այր մի ի գերեզմանացըն զոր ունէր այս պիղծ. Իբրև հաես զՅիսուս ի հնուաստանէ, ընթացաւ և երկիր եպայ նմա:—Մարիամ Մագդո գերնացի տեսանէ զվէնն բարձեալ ի դրանց գերեզմանին և աւէ ցաշակերտանբարձին զՏէր ի գերեզմանէ անտի:—Կատար մի էր ի քաղաքի միում, յԱստուծոյ ոչ երկնչէր և ի մարդկանէ ոչ ամաչէր:—Մի ոմն յազգէս մերմէ, որոյ թափեալ են ոտք նորա և անկեալ սգոյունք նորա՝ կալ ի հրապարակի անդ մեռայ:—Հինգըն ի կուսանացն իմաստուն էին և հինգն՝ լիմար:—Մեծն ի ձէնջ եզիցի ձեր սպասուոր:—Տիգրան Կրուանդեան ամենեցուն թազաւորացն մերոցն հարստագոյն և խոնմագոյն էր:—Շնորհ յոյժ ունիմ զքարերարութենէ ձերմէ:

2. Գրեցէք ձեզան ց մի քանի օրինակներ բացառ. ինդրով:

§ 16. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՎ ԽՆԴԻՐ

1. Գործիական հոլովով խնդիր պահանջում են ամէն սեռի բայերը, երբ հարկ է ցոյց տալ թէ ո՞ւմ ձևով, ի՞նչ գործիքով կամ ի՞նչ միջոցով է կատարվում գործողութիւնը. հոգադրմանը երկիրը վարում են զուլմանով: Փայտը կտրում են կացինով: Ծնողքը իրանց զաւակներովն են մխիթարվում: Եյս պատկերը նկարուած է մատիտով:

2. Գործիական հոլովով խնդիր առնում են տանելու և տալու բայերը նիւթի արժողութիւնը ցոյց տալու համար. ինչպէս. Զանձ առաք այս ձին Իմ բարեկամը մի տուն գնեց 15,000 մանէթով: Ապրանքս լաւ գնով ծախեցի:

3. Գործիական հոլովը վարվում է առարկաների և նոցա գործողութեան որպիսութիւնը ցոյց տալու համար:

Ա. Բայի մօտ՝ սովորական որպիսութիւն յայտնելով, իբրեւ պատասխան ինչպէս հարցման. զօրօրինակ. Բարեկարգ աէրութիւնների մէջ ամէն գործ վճավում է օրէնքով: Զգուշութեամբ դնան, որ ճանապարհոյ չկորցնեն: Բարկանալով է խօսում: Հայկ նահապետը տնով տեղով պաղթեցաւ Հայաստան:

Բ. Ածականների մօտ՝ առարկաների որպիսութիւնը յայտնելով. Այս աշակերտը առաջինն է ջանասիրութեամբը, յառաջադիմութեամբն ու քարի վարժողը: Տարեքով մեծ է, բայց խելքով տկար:

Գ. Գոյականների մօտ՝ ազգ, արուեստ, ծագում և կոչում ցոյց տալով. Գրիգոր Լուսաւորիչը ազգով Պարթև էր և ցեղով Պահլաւ: Մխիթարը հայրենիքով Սերաստացի էր, իսկ կոչմամբ հոգևորական:

4. Գործիական հոլովը վարվում է եզակի՝ ժամանակի անպատեհութիւնը ցոյց տալու, յոգնակի՝ ժամանակի նը-

կարուծիւնը ցոյց տալու համար: Եյսպէս ասում են՝ Գի-
շերով ուր գնամ: Յերեկով քնում է: Մթնով եկաւ—Ժա-
մերով նստած շարունակ պարագում է:

5. Գործիականը ցոյց է տալիս դարձեալ ճանապարհի
ուղղութիւնը, նոյնպէս և տեղի տարածութիւնը, ինչպէս. Ո՞ր
ճանապարհով պիտի գնանք. ծովո՞վ թէ ցամաքով: Փողոց-
ների երկայնութեամբը ծաւեր տնկեցին:

Գաւառական բարբառներում կալ մի ուրիշ գործիական
էլ որոց պառարականի մտքով: Այսպէս սովորական է ասել-
մէկի ծտուին կամ շինքուին ընկնել. ոտներովը փաթաթուիլը
գլխովը ման տալ: Աշխարհ աշխարհէով էր դիպչում: (Այ-
սինքն դպարանոցա՝ դատիւք, դաշխարհաւ:) Գրաւոր լի-
զուի մէջ այս ձեւի տեղ գործ են անում հայց. և տրակ-
հուլները. — ոտներն ընկնիլ, շինքին փաթաթուիլ:

1. Թարգմանութիւն. — Մարիամ օծ դճէրն իւղով և ջնջեաց
զոտս նորա հերով իւրով: — Յիսուս ի ձայն մեծ աղաղակեաց և
ասէ. Ղազարէ, արի եկ արտաքս, և ել մեռելն ոտիք կապելովք
և ձեռքն երիզապնոց և երեսօքն վարշամապատօք: Այր
մի Վրասրացի տկար լստից նստէր, կազ լորովանէ մօր իւրոյ:—
Հրէալ ոմն Ապեղէս անուն աղէտանդրացի յազգէ, զօրաւոր էր
զրոզք:—Վաճառեցին զՅովսէփ Իսմայէլացոյն երեսուն դահն-
կանի: Մարթ էր զիւզղ ալղ վաճառել երկերիւր դահնկանի:
Սգով և տրտմութեամբ երթալին զերկայնութիւն ճանապար-
հին: Պնդեցան արքն զկնի նորա զճանապարհն Յորդանանու:
ԶՏարոնն զձն և զօրինակ Բարեւոնի շինէր: Աղամ անէծ զՎա-
լէն անէծս ցաւազինս:—Խնդացին լուծ ուրախութիւն մեծ:—
Հալրն անկեալ զպարանոցաւ անտակ որդուցն համբոբեաց զնա-
2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ գործ. խնդրով:

§. 17 ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈՒՈՎՈՎ ԽՆԴԻՐ:

1. Ներգոյական հոլովով խնդիր գրվում է ամեն տե-
տակ բայերի մօտ գործողութեան կամ դրույթեան տեղը ցոյց
տալու համար. ինչպէս. Մենք նստած էինք պարտէզում,
երբ որ անձրեք սկսաւ: Ի՞նչ պակասութիւններ տեսար նո-
րանում: Չկներք լոյսում են ջրում: Եյն մարդիկ որ Ամերի-
կայումն են բնակվում, կոչվում են Ամերիկացիք:

2. Ներգոյականը ցոյց է տալիս նոյնպէս ժամանակի
միջոցը: Եյս դիրքը երկու օրում կը կարգամ: Երկիրս իր
վրայ պտըտում է 24 ժամում: Իմ օրումը այսպիսի բան
չէի լսած:

Սորանից կազմուած է միջոցում նախադրութիւնը, որ
սեռ. հոլովով է վարվում. երկու շարաթուան միջոցին մի
ամբողջ դիրք թարգմանեց:

1. Թարգմանութիւն. — Գտանին լերինք բարձունք որպէս ի ցա-
մաքի նոյնպէս և ի ծովու:—Ազեղն ձգի յամպս յաւուրս
անձրեայինս:—Կալէն սպան զեղբաւր իւր ի դաշտի:—Տղաք
բնաւ բեցան յօթներորդում ամսեան հանել զատածոնս և
յուծ ամին փոխել:—Յերտասաղէմ ի Պրոպատիկէ աւազանին
անկեալ դէէր բազմութիւն լուծ հ'ւանդաց:—Էին իսկ ալնպիսիքն
բնակեալ ի կեանս իւրեանց իբրև ի թանձրամած խաւարի և
ողիքն արդելեալք ի մարմնի իբրև զկենդանի ի զերեզմանի:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ ներգ. խնդրով:

§ 18. ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՄԻ ԽՆԴԻՐՆԵՐ:

Չատ անգամ բայերը նախադրութիւնների միջնորդու-
թեամբ խնդիր են առնում. այսպէս. Ծնողքը ուրախանում
են իրանց որդուց յառաջադիմութեան վրայ: Ուսուցիչը եղ-

քօր պէս է վարվում աշակերտների հետ: Գնանք ղէպի տուն: Որ եթէ նախադրութիւնները վերցնէինք կամ ամենին միտք չէր լինիլ, ինչպէս երկու առաջին օրինակների մէջ, կամ գոնէ միտքը կը փոխուէր, ինչպէս վերջին օրինակի մէջ:

Նախադրութիւնների սկզբնական պայտօնն էր ցոյց տալ նիւթական առարկաների մէջ եղած զանազան շարքերութիւնները, ապինքն թէ մէկ առարկալ ո՛ր տնդ է գտնվում, միւսի վրայ կամ տակը, մէջ, ժօտին, կողքին, հետը, առաջը, ետեւը, և այլն. ինչպէս. Գրքերը դրած են պահարանի մէջ, սեղանի վրայ, ընկած են սեղանի տակ: Մուկը վազվում է անկողնի առաջ կամ ետեւ, վագում է ղէպի անկողինը կամ մինչև անկողնի և այլն: Այս է նախադրութիւնների բուն պայտօնը և նշանակութիւնը: Բայց չետոյ նախադրութիւնները սկսան գործածուիլ վերացական առարկաների հետ, և այսպէսով փոխաբերական միտք ստացան: Այսպէս ասում են. գործի վրայ մտածել, պաշտպանութեան տակ գտնուիլ, ուսման մէջ լառաջանալ. թէև գործ, պաշտպանութիւն ուսում վերացական առարկաներ են:

Հայերէն լեզուի առանձին յատկութեամբ նախադրութիւնները հօլովում են՝ (բ. § 63), երբ հարկ է առարկաների մէջ եղած յարաբերութիւնները աւելի որոշ կերպով արտայայտել, և գոյականը զրվում է սեռ. հօլովով. այսպէս. Մօխակը թուա վանդակի միջից (փոխանակ վանդակից): Զօրքը կամրջի վրայով անցաւ (կամրջով): Մենք կանգնած էինք անտառի միջին կամ միջում (անտառում): Հողի տակից մետաղներ են հանում:

1. Թարգմանութիւն.— Զրէալք չարախօսէին զԹիսուսէ (մաւին, վրայ): Զրէալք առ նախանձու մասնեցին զԹիսուս (բցու.) Առ Նոյիւ եղև ջրհեղեղ մօծ (մեկ.), Զայսու ժամանակաւ

Թագաւոյեաց Յունաց ամբարիշտն Յուլիանոս— Զուակ անարգ է, որ անցանէ զպատուի ընդ մնողաց:— Պատեցին զքաղաքաւն պատմէ:— Խաղաց զնաց լնտիոք քաղաքէ, և անց նա (Անտիոքոս) ըստ զետն մեծ ըստ Եփրատ և երթալը ընդ կողմն վերնագաւառացն:— Որ ինչ մտանէ ընդ ընրան, ոչ պղծէ զմարդ:— Առ Տիգրանու առաջնով Մարք անկան ընդ իշխանութեամբ Հայոց:— Բանակեցաւ մերձ յերուսաղէմ:— Մողպեան ինքնին մոգօքն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ քակել զԵրուսեկեղեղուն յաւուր միաշարքութուն:

2. Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ նախադրութեամբ խնդրով:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Կապակցութիւն նախադասութիւնների:

Ա. Երկրորդական նախադասութիւնների կապակցութիւնը:

§ 19. ՅԱՏԱՄԱՏՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ.

1. Յատկացուցիչ նախադասութիւնները կապվում են պլխաւորի հետ որ յարաբերական դերանունով, որին ներգործութեամբ կամ գօրութեամբ պատասխանում են զըլխաւոր նախադասութեան մէջ այն, այնպիսի ցուցական դերանունները: Զօրօրինակ. Այն ցամաքը որ ամէն կողմից ջրով պատած է, կոչվում է կղզի: Յոյց տուր մի (այնպիսի) մարդ, որին կարելի լինի յանձնել այս գործը: Ինչպէս է կոչվում այն ջուրը որ ամէն կողմից ցամաքով է պատած:

2. Եթէ յատկացուցիչ նախադասութիւնը այնպիսի բառեր է յարաբերում գլխաւոր նախադասութեան մէջ, որ տեղ կամ ժամանակ են ցոյց տալիս, որ յարաբերական/տեղ կարող են զործ ածուիլ տեղական և ժամանակական մակրայններ. ինչպէս. Մինչև այսօր ցոյց են տալիս Խոր վերապը, ուր (փոխանակ որի մէջ) ձգուեցաւ Սուրբ Գրիգորը Տրդատ թագաւորի հրամանով: Կար (ի՞նչպիսի) ժամանակ՝ երբ այժմեան ծաղկած քաղաքների տեղ անթափանցելի անտառներ էին բուսնում:

3. Որ յարաբերական դերանունը գրվում է այն հոլովով, որ պահանջում է երկրորդական նախադասութեան բայը, իսկ թիւը կախուած է գլխաւոր նախադասութեան այն բառից, որին որոշում է երկրորդական նախադասութիւնը. այսպէս. Ես վստահութիւն ունիմ այն մարդոց վրայ, որոնք խզմտանքով են կատարում իրանց գործը: Սովորաւոր, որին դատաւորները դատաւարտել էին մոլեխիւնդ խմելու, առաքինի քաղաքացի էր:

Միայն ուղ. երբեմն նաև հայց. հոլովում յարաբերական դերանունը կարող է յղնակիի տեղ եղակի վարուիլ, եթէ միայն յարաբերակից բաժանուած չէ. ինչպէս. Այն մարդիկը որ մեր գէմ ու գէմը նստած են և որոնք միմեանց հետ խօսում են, մեր բարեկամներն են:

4. Եթէ յարաբերակալը զօրութեամբ է իմացվում, յարաբերականի հետ վարվում է երբեմն որ շղկապը, և այն ժամանակ յարաբերականը եղակիում ն յօղն է ընդունում, իսկ յօղնակիում անյօղ է մնում. այսպէս. Որն որ, որին որ, որոնք որ, որոնց որ: Ահա օգտակար գրքեր. ընտրէ որնօր կամենում ես:—Փոխանակ ընտրէ այն գիրքը որ կամենում ես. կամ պարզապէս յարաբերականի վրայ յօղ դնելով՝ ընտրէ որը կամենում ես:

5. Ընտանեկան լեզուի մէջ ուղ. հոլովով որ յարաբերականը շատ անգամ ամէն հոլովների տեղ է վարվում՝ եղակի և յօղնակի, և իրանից յետոյ պէտք եղած հոլովով մի դերանուն է գրվում. այսպէս. Որ նրան կամ որ իրան, փոխանակ որին որ նրանցով կամ որ իրանցով. փոխանակ որոնցով և այլն. ինչպէս. Կան մարդիկ որ ամէն բան զփութաբացնում է նրանց: Այսինքն՝ կան մարդիկ որոնց... Արշակն ու Տրդատն այնպիսի աշակերտներ են որ բոլոր ուսուցիչները պարծենում են նրանցով: Այսինքն՝ որոնցով պարծենում են:

6. Երկու կամ աւելի նոյնհոլով յարաբերականներից վերջինը սովորաբար դուրս է թողվում. այսպէս. Արարացիք, որոնց ձիանքը յարգի են և ուղտերը օգտակար, մինչև այսօր թափառական կեանք են վարում:—Այսինքն և որոնց ուղտերը:

1. Թարգմանութիւն:—Մեզու՝ որ քան զամենայն տկար է, դերկասիրութիւն պատուէ:—Ամենայն տուն և թագաւորութիւն որ յանձն իւր ըաժանի, ոչ կարէ կալ հաստատուն:—Տեղի որ աւազին է, լստակ և քաղցրահամ բղխէ դուր: Են ոմանք որ ոչ զհտեն ընաւ թէ զինչ իցեն զիրք եւ կամ յինչ պէտս շարադրնցան:—Եւ իբրև եկն (Պօղոս), կային չորջ զնովաւ որ յերուսաղէմէ իջեալ էին Հրէայք:—Ո՛ր է որ ծնաւ արքայն Հրէից:—Հասին այն աւետեաց որում ցանկացեալ էին—Մըտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ եւս ելանելոց եմք ի նմանէ:—Այն այն Մովսէս որ եհան զմեզ յԵգիպտոսէ ոչ գիտեմք զի եզև նմա:

2. Գրեցէք ձեզանից մի քանի քաղաքեալ նախադասութիւններ երկրորդական լատկացուցիչ նախադասութիւններով:

§ 20. ՅԱՏԱԱՅՈՒՅԻՉ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ:

1. Յատկացուցիչ նախադասութիւնը կրճատուելիս՝ ածական յատկացուցչի է փոխվում, երբոր ստորոգեալը

կազմուած է ամականից ու օգնական բայից. ինչպէս. Հին գինին աւելի յարդի է քան թէ նորը, (Փսխանակ ասելու՝ Այն գինին որ հին է):

2. Յատկացուցիչ նախադասութիւնը կրճատուելիս՝ քացայայտչի է փոխվում, երբ նորա ստորագեալը կազմուած է գոյականից ու օգնական բայից. այսպէս. Արգարը որ առաջին քրիստոնեայ թագաւորն է, շատ քաղաքագէտ ու խելացի մարդ էր.—Արգար, առաջին քրիստոնեայ թագաւորը, շատ քաղաքագէտ ու խելացի մարդ էր: Անին, որ Բազրատունեաց մայրաքաղաքն էր, այժմ աւերակ դարձած է.—Անին, Բազրատունեաց մայրաքաղաքը կամ Բազրատունեաց մայրաքաղաքը՝ Անին այժմ աւերակ դարձած է:

3. Յատկացուցիչ նախադասութիւնը ներկայ, անցեալ կամ ապառնի դերբայի է փոխվում, երբ ստորագեալը սահմ. ներկայ, անցեալ կամ ապառնի ժամանակներումն է: Միևնոյն ժամանակ անցեալ և ապառնի դերբայների ենթական, եթէ գոյական է՝ սեռ. յատկացուցիչ է դառնում, եթէ գերանուն է՝ ստացական. իսկ խնդիրը դառնում է յատկացեալ՝ ստացական յօդով: Զորօրինակ. Այն մարդը որ ընկերին օգնում է, չէ կարող միայն իր անձի վրայ մտածել.— Ընկերին օգնող մարդը չէ կարող միայն իր անձի վրայ մտածել: Այն գիշերն որ Աղէքսանդրը ծնաւ, Հերոստրատ այրեց Եփեսոսի տաճարը.—Աղէքսանդրի ծնած գիշերը Հերոստրատ այրեց Եփեսոսի տաճարը: Ո՛ր են այն աշակերտները որ դու գովում էիր (կամ գովեցիր, գովել ես, գովել էիր).— Ո՛ր են քո գոված աշակերտները, կամ պարզապէս՝ Ո՛ր են գոված աշակերտներդ: Այն օրն որ նաւ պիտի նստեիք, կը գամ ձեզ ճանապարհ ձգելու.— Չեր նաւ նստելու օրը... Բաւական ընդարձակ է այն սրահը, ուր (որի մէջ) թատրոնական ներկայացումներ պիտի տրուին (կամ պիտի տրուէին):—

Բաւական ընդարձակ է թատրոնական ներկայացումներ տրուելու սրահը:

Երբեմն ներկայ դերբայի տեղ անցեալն է գործ դրվում. այսպէս. Մեր ընտանիքը շատ հին է. այսինքն՝ այն տունը, որի մէջ ընտանիքն էր:

Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ կրճատեալ լատկացուցիչ նախադասութիւններով:

§ 21. ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ԼՐԱՅՈՒՅԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ:

1. Երկրորդական ենթական նախադասութիւնը կապվում է գլխաւորի հետ ուղ կամ ուղ որ գերանունով և թէ, որ շաղկապներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ներգործութեամբ կամ աւելի գորութեամբ պատասխանում են նա, այն ցուցական գերանունները: Զորօրինակ. Ուղ կը խաղայ, նա կը կաղայ: Ուղ որ իւր վիճակից զոհ է, նա բազդաւոր է: Յայտնի է որ բոլոր մետաղները հալվում են:

2. Երկրորդական լրացուցիչ նախադասութիւնը կապվում է գլխաւորի հետ ինչ կամ ինչ որ, որ գերանուններով և թէ, որ շաղկապներով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ներգործութեամբ կամ գորութեամբ պատասխանում են այն, նա ցուցական գերանունները: Նա, այն ցուցական գերանունները գորութեամբ իմացուող գոյականի հօլովն են ընդունում, իսկ յարաբերական գերանունը դրվում է այն հօլովով, որ պահանջում է երկրորդական նախադասութեան բայն. ուրեմն և ցուց. գերանունան հօլովից իմաց-

վում է թէ երկրորդական նախադասութիւնը ինչ հոլովի տեղ գրուած է: Զորօրինակ. *Ինչ կը ցանես, այն կը հնձես* (հայց.): Լսեցի թէ շուտով ճանապարհ էք ընկնում (հայց.): Երանի նորան որ իւր վիճակից գոհ է (տր.): Քաւականացիք նորասնով (այն բանով), որ տալիս են քեզ (գործ.): Հնու կաց նորանից (այն մարդուց), որի շար օրինակը կարող է դայթակցութիւն պատճառել քեզ:

3. Օտարի վկայութիւնը, որ խօսքի մէջ բերվում է, լրացուցիչ նախադասութեան միտք ունի և ոչինչ բաւով չէ կապվում գլխաւոր նախադասութեան հետ՝ եթէ խօսողի սեպական բառերն է պարունակում, այլ միջակէտով և շակերտներով բաժանվում է գլխաւորից. թէ և որ շարկապնեքով է կապվում, եթէ նորա խօսքերի բովանդակութիւնն է յիշվում. ինչպէս. Քրիստոս ասաց. «Ես չեմ եկել օրէնքները լուծելու, այլ լրացիելու»:

1. Թարգմանութիւն. — Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ ոչ երկնչի ի նմանէ. — Որ փախչէր վատ սնուն լաշխարհի երեւէր, և անողորմ մահ ի նմանէ գտանէր. իսկ որ քանութեամբ յառաջ մատչէր քաջանուն ազգի ժառանգէր, և պարգևս մեծամեծս լանցաւոր և ի մահկանացու թագաւորէն ընդունէր. — Որ իբրև զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւն, արդ իբրև զգլխ ի մարմնու չկարէ շրջել. — Մեք գիտեմք զի զերկիր շուրջ ջուր պատէ: — Որոյ ոչինչ գոյր զօրականին՝ լանձնէր և լընկերաց մատուցանէր (Վարդան), որոյ զէն չէր, զէն պատրաստէր, և որում հանդերձ պիտոյ էր՝ հանգերձ զգեցուցանէր, և որում երիվաց՝ երիվար տալր. — Որում խնդրէ ի քէն՝ տուր, և որ կամի փոխ աւնուր ի քէն՝ մի դարձուցանէր գերեսս:

2. Գրեցէք ձեզանից մի քանի նախադասութիւններ երկրորդէն. և լրաց. նախադասութիւններով:

§ 22. ԵՆԹԱԿԱՅ ԵՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԸՐՃԱՏՈՒՄԸ.

1. Երկրորդական ենթակայ նախադ. որ գլխաւորի հետ կապուած է ով կամ ո՛վ որ դերանունով, կրճատուելիս ներկայ դերըայի է փոխվում. իսկ եթէ կապուած է թէ, որ շարկապնեքով անդէմ բայի հետ, անորոշ դերըայի է փոխվում. Զորօրինակ. *Ով որ փող ունի, խելք չունի. ով որ խելք ունի, փող չունի.* — Փող ունեցողը խելք չունի, խելք ունեցողը փող չունի: Ամէնին յայտնի է երկրի շարժուելը:

2. Երկրորդական լրացուցիչ նախադասութիւնները կըրճատուելիս փոխվում են գոյական անուան կամ անորոշ ու անցեալ դերըայների, վերջինը որոշեալ կամ ստացական յօդով. ինչպէս. *Մեզ գրեցին թէ նս մեռել է.* — Մեզ գրեցին նորա մահուան մասին: Խորհուրդ են տալիս ինձ որ զիտութիւններով պարապիմ. — Խորհուրդ են տալիս ինձ զիտութիւններով պարապելու: Ահա պատմեմ քեզ բոլոր ինչոր տեսայ ու լսեցի. — Ահա պատմեմ քեզ բոլոր տեսածս ու լսածս. Կեանքիս մէջ չեմ յիշում թէ սուտ խօսած լինիմ. — Կեանքիս մէջ սուտ խօսածս չեմ յիշում:

Գրեցէք ձեզանից մի քանի օրինակներ կրճատեալ ենթակայի և լրացուցիչ նախադասութիւնների:

§ 23. ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ.

Երկրորդական գոյական նախադասութիւնները ցոյց են տալիս գլխաւոր նախադասութեան ենթակայի գործողութեան տեղը, ժամանակը, որպիսութիւնը, պատճառը և այլն: Պարադայական նախադասութիւնները կապվում են

գլխաւորների հետ այլ և այլ շաղկապներով ու մակրայնե-
րով:

1. Տեղական նախադասութիւնները կապուած են գլխաւորների հետ ուր, ուր որ, որտեղ կամ ինչ տեղ, որ տեղից կամ ինչտեղից մակրայնեքով, որոնց գլխաւոր նախադասութեան մէջ ներգործութեամբ կամ գորութեամբ պատասխանում են այն տեղ, այն տեղից, ամէն տեղից, ոչ մի տեղ և այլն: Զորօրինակ. *Ինչ տեղ պանիր, այն տեղ քանիր: Ուր որ երթաս, ամէն տեղ հետդ կը լինինք: Գնա՛ (այն տեղ) ուր պատիւդ ու պարտքդ կանչում են քեզ: Գընում եմ (այնտեղ) որտեղից եկել եմ:*

2. Ժամանակական նախադասութիւնները կապուած են գլխաւորների հետ այլ և այլ մակրայնեքով ու շաղկապներով, նայելով թէ երկրորդական նախադասութեան գործողութիւնը գլխաւորի հետ միասին է կատարուած, թէ նորանից առաջ կամ յետոյ:

Ա. Եթէ երկրորդ. նախադ. գործողութիւնը գլխաւորի հետ միասին է կատարուած, հետեւեալ մակրայնեքով է կապուած. *Երբ կամ եւր որ, որ ժամանակ—այն ժամանակ (սահմ. ներկ. և անց. անկատար. հետ), մինչեւ այն ժամանակ,—մինչեւ որ, այն միջոցին որ. ինչպէս. Երբ որ անձրե էր գալիս, (այն ժամանակ) մենք նստած էինք հովանոցում: Այն միջոցին որ դուք խօսում էիք, ես մի ամբողջ գլուխ կարդացի: Մինչեւ դուք պատրաստուիր, (մինչեւ այն ժամանակ) ես նամակը կը վերջացնեմ:*

Բ. Եթէ երկրորդ. նախադ. գործողութիւնը գլխաւորից առաջ է կատարուած, հետեւեալ մակրայնեքով է կապուած. *Երբ որ—այն ժամանակ (անց. կար. և ապա. հետ), հազիւ թէ—որ, հէնց—որ կամ հէնց—որ. ինչպէս. Երբ որ անձրեք գաղարեցաւ, (այն ժամանակ) վերադարձանք:*

պարտէզ. *Երբ որ ժամանակ կ'ունենամ, (այն ժամանակ) կը պարապիմ ձեզ հետ: Հազիւ թէ տուն հասայ, որ սատիկ անձրե սկսաւ: Հէնց որ մթնեցաւ, ամէն մարդ իր տունը քաշուեցաւ:*

Հազիւ թէ, հէնց որ մակրայնեքի տեղ յաճախ գործ են անում թէ չէ, որ չէ բացասական ձեւերը. Մթնեցաւ թէ չէ ամէն մարդ իր տուն քաշուեցաւ: Աչքդ որ բաց չես անում, մէկ էլ տեսնում ես որ... (Եյսինքն հէնց որ մըթնեցաւ. Հազիւ թէ աչքդ բաց ես անում:)

Գ. Եթէ երկրորդ. նախադ. գործողութիւնը գլխաւորից յետոյ է կատարուած, հետեւեալ բառերով է կապուած. *մինչեւ չէ, դեռ չէ—որ, քանի որ դեռ չէ, առաջ քան թէ. ինչպէս. Դեռ չէի ստացել այս նամակը, որ բարեկամիս՞ մահուան լուրը առել էի: Քանի որ դեռ ոչինչ հասկացողութիւն չունէի, կարծում էի թէ արեգակը պտըտում է երկրի շուրջը: Առաջ քան թէ կը սկսիս մի գործ, մտածէ որտեղից կամ ինչպէս սկսիս: (Աւելի լաւ է կրճատեալ նախադասութեամբ ասել. Մի գործ սկսելուց առաջ...)*

Յ. Որակական նախադասութիւնները կապուած են գլխաւորների հետ *ինչպէս-այնպէս, ինչպէս որ—այնպէս, այնպէս-իրը թէ, այնպէս որ* մակրայնեքով—երբ մի գործողութիւն կամ գրութիւն որպիսութեան կողմից համեմատուած է ուրիշ գործողութեան կամ գրութեան հետ. *որքան—այնքան, որչափ-այնչափ* քանակական մակրայնեքով—երբ համեմատութիւնը լինում է բանակութեան կողմից. *Ինչպէս կը սկսիս գործդ, այնպէս էլ գլուխ կը գայ: Ուրան ծանր է աշխատանքը, այնքան մեծ կը լինի վարձը:*

4. Պատճառական նախադասութիւնները ցոյց են տալի գործողութեան պատճառը, առիթը, նպատակը, կապուած են գլխաւորների հետ *վասն զի, որովհետեւ, որպէս*

զի, որ շարկապնեցով ինչպէս. Հին ազգերը պաշտում էին արեգակը, լուսինն ու աստղերը, վասն զի կարծում էին թէ երկնքի լուսաւորները հոգի ու կեանք ունին: Չկարողացայ զայ կտակից, որովհետեւ շատ էի շտապում: Սաստիկ նեղացած է ինձ վրայ որ վաղուց չեմ եղել իւր մօտ: Պարտէզը ուսուցեցէք (ինչ նպատակով) որ ծաղիկները շարանան: Մահը միշտ աչքիդ առաջ ունեցիր, որպէս զի չվախենաս նորանից:

5. Պայմանական նախադասութիւնները կազմում են գլխաւորի հետ եթէ, թէ ոչ-որեւն շարկապնեցով ինչպէս. Եթէ կամենում ես երաժշտութիւն սովորել, պէտք է շատ աշխատիս որ լաւ երաժիշտ դասնաս: Թէ որ ձեզ մօտ եկած շինէի, այսրան բաղմութիւն տեսնելու առիթը չէի տեսնալ: Մարդս որ ցանկութիւն ունենայ (փոխանակ՝ եթէ մարդս ցանկութիւն ունենայ), ամենաշփուար գործը կարող է յաջողութեամբ գլուխ տանել:

Աւելի սաստիկութեան համար պայմանական նախադասութիւնը երբեմն հարցականի ձև է ստանում, այսպէս. Կամենում ես որ ես քեզ միշտ բարի խորհուրդներ տամ, առածներս կատարէ: — Այսինքն՝ եթէ կամենում ես:

6. Տեղատուական նախադասութիւնները, որ տեղի են տալիս գլխաւոր նախադասութեան գործողութեանը, կազմում են հետևեալ շարկապնեցով. Թէպէտ, թեւ-ըայց, սակայն, այնուամենայնիւ. զորօրինակ. Թէեւ շատ արգելքների պատահեցաւ. անուամենայնիւ հասաւ իր նպատակին: Թէպէտ չեմ կարող խոստանալ, ըայց կ'աշխատեմ խնդիրքդ կատարել:

Չատ անգամ թէեւ, թէպէտ եւ շարկապնեցի տեղ գիմաւոր բայի մօտ գրվում է նոյն բայի անորոշ գերբայն գործիական, նաև սղղական հոլովով խօսքին աւելի հաս-

տատութիւն տալու համար. ինչպէս: Ուտելով ամեն բան ուտում է, բայց չէ կարող մարսել: Յաւելով շատ եմ ցաւում, բայց հնար չունիմ օգնելու: Խոստանալ ամէնքը խոստանում են, բայց ոչ ամէնքը կատարում են: — Այսինքն՝ թէ եւ ուտում է, թէպէտ խոստանում են:

Երբեմն այս ձևերը գոյծ են անվում նաեւ անկախ նախադասութեան մէջ, այսինքն ուր թէ՛ն-ըայց շարկապնեցը չկան: Մեռնել ամէնքս պիտի մեռնինք: Հրաժարուելով հրաժարվում ենք այդպիսի արվայել գործողութիւնից:

1. Թորգանուծիւն: — Դըր եսն եմ, անդ եւ պաշտօնեալք իմ եղիցին: Ուր մամին է, անդը եւ արծուիք ժողովեացին: — Եւ մի' իշողն անդէն ի ձմեռացին էր թագաւորն, ատեան հարցախորձի հրամալէր լինել: — Իըրն լեղիարեցաւ ամբաստանութիւն զաւուրս բազումս, պարտաւորեցաւ կող ռբացելոյն: — Բինչև հաւու խօսեալ իցէ, երիցս ուրացիս զիս: — Որպէս մեծ է հոյի քան գմարմին, այնպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնու: — Բայց քանիզի անկեալ էր մեծ սպարապետն Հայոց ի պատերազմին, ոչ ոք գոյր անուհետե ի մէջ գլխաւոր՝ չոր լեցեալ (թեք ընկնիլ) ժողովէին գունդ մնացելոցն: — Թէպէտն բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան (ցիր ու ցան եղան), ե հասեալ անկանէին ի տեղիս լամուրս (բերդ) աշխարհին: — Թէպէտն գնեա եղև, չկարաց հատանել: — Որպէս չիք լանիրաւութենէ արդարութիւն, այսպէս ի ստութիւնէ ճշմարտութիւն: — Ունել ունէր պարձանս, ալ ոչ առ Աստուած: — Ընտուութիւն: — Ընել ունէր պարձանս, ալ ոչ առ Աստուած: — Ընելութիւն թանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու: — Շինեալ լինէին զաշտարակն ի պաշտօն գիւաց:

2. Կրեցէք ձեզանից մի քանի բաղադրեալ նախադասութիւններ երկրորդ, պարագ. նախադասութիւններով:

§ ՊԱՐԱԴԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ:

Երկրորդական պարագայական նախադասութիւնները կրճատուելիս փոխվում են պարագայական բառերի դեր. եւ գոյ. անուան ձևով.

1. Տեղական նախադասութիւնները փոխվում են անց.

և ապառ. ղերբայների ածականարար վարուած տեղ զոյա-
կանի հետ, որ գերանուական յօդ է ընդունում. ինչպէս
Արեւմուտքն այն տեղ է, որ արեւը մայր է մտնում.—Արեւ-
մուտքն է արեւի մայր մտած տեղը: Գնա՝ որ գնալու էիր
— Գնա՛ գնալու տեղը:

2. Ժամանակական նախադասութիւնները փոխվում
են. 1) ներգոյական և հայց. հոլովներով անորոշ ղերբայի
կամ երբեմն նաև գոյականի, երբ որ գլխաւորի հետ
կապվում են երբ որ, այն միջոցին որ, մինչեւ կամ
մինչեւ որ բառերով. ինչպէս. Երբ որ գիրք էր կար-
դում, բունը տարաւ.—Գիրք կարդալիս կամ գիրք կարդա-
լու ժամանակ բունը տարաւ: Երբ մի շնչին բան է պա-
տահում, յուսահատվում ես.—Մի շնչին բան պատահելիս
կամ մի շնչին բան պատահելու ժամանակ յուսահատվում ես:
Այն միջոցին որ դուք խօսում էիք, ես մի ամբողջ գլուխ
կարդացի.—Ձեր խօսակցութեան միջոցին (կամ ժամանակ)
ես մի ամբողջ գլուխ կարդացի: Սպասեցէք այստեղ մինչեւ
մենք գանք.—Սպասեցէք այստեղ մինչեւ մեր գալը: 2) Սեռ.
հոլովով անորոշ ու անց. ղերբայների պէս նախադրութեամբ,
երբ կապվում են հազիւ թէ, հէնց որ մակբայներով: Հազիւ
թէ տուն հասայ, որ ստտիկ անձրև սկսաւ.—Տուն հասնե-
լուս պէս կամ տուն հասածիս պէս ստտիկ անձրև սկսու-
է: հէնց որ մթնեցաւ, ամէն մարդ իր տունը քաշուցաւ.—
Մթնելուն պէս և այլն: Հէնց որ տեսնես, կը ճանաչես
նորան.—Տեսնելուդ պէս կամ տեսածիդ պէս կը ճանաչես
նորան: 3) Անցեալ ղերբայի բացասակ. ձեռով, երբ որ կապ-
վում են դեռ չէ, քանի որ դեռ չէ, առաջ քան թէ բա-
ռերով. Արեգակը դեռ չէ ծագում, որ նա արդէն օտի վրայ
է.—Արեգակը դեռ չծագած՝ նա արդէն օտի վրայ է: Դեռ
չէի ստացել այս նամակը, որ բարեկամիս մահուան լուրը

առել էի.—Այն նամակը դեռ չստացած՝ և այլն:
Վերջին տեսակ նախադասութիւնները կրճատվում են
նաև ըցո. հոլովով անորոշ ղերբայի առաջ նախադրու-
թեամբ. իսկ եթէ ժամանակական նախադասութեան գործո-
ղութիւնը գլխաւորից յետոյ է կատարվում, յետոյ նախա-
դրութեամբ. այսպէս. Գնալուց առաջ շմոռանաս գալ մեզ
մօտ: Աշխատելուց յետոյ պէտք է հանգստանալ:
3. Արական նախադասութիւնները փոխվում են գործ.
հոլովով գոյականի, իսկ ենթական սեռ. յատկացուցչի. ինչ-
պէս. Այնպէս է շարժվում, ինչպէս ուրիշները խորհուրդ
տուին.—Ուրիշների խորհրդովն է շարժվում:
Համեմատական նախադասութիւնների մէջ, եթէ երկու
առարկայ միմեանց հետ համեմատվում են որպիսութեան
կողմից, երկրորդ. նախադ. ենթական փոխվում է սեռ. հո-
լովի՝ պէս նախադրութեամբ կամ նման ածականով. իսկ եթէ
քանակութեան կողմից՝ բայը փոխվում է գոյականի՝ շափ
նախադրութեամբ. ինչպէս. Առիւծի պէս յարձակեցաւ թըշ-
նամու վրայ: Վահագնի աչքերը, ասում է երգը, արեգակի
նման էին փայլում: Որքան կարողացայ, այնքան սովորեցայ.
—Կարողացածիս շափ կամ կարողութեանս շափ սովորեցայ:
Անորոշ ղերբայի գործ. հոլովը վարվում է որակական
կրճատեալ նախադասութեան տեղ, բայց կատարեալ նա-
խադասութիւնից չէ կազմուած. և չէ կարող կատարեալ
նախադասութեան փոխուիլ. գործիքնակ. Երկխանց ազա-
կանում են՝ (ինչպէս) նոցա բոլոր ուղածները կատարելով:
Մարդս (ինչ եղանակով) ծանապարհորդելով շատ բան է սո-
վորում:
Երբեմն այս մտքով վարվում է անցեալ ղերբայը.
Մայրը որդիքը հետն առած՝ եկեղեցի է գնում: Ծերու-

նու ձեռնըր ընձած փողոցներումը ման էր գալիս:

4. Պատճառական նախադասութիւնները կրճատուելիս փոխվում են քացառական և համար նախադրութեամբ սեռական հոլովով գոյ. անուան և անորոշ դերբայի. վերջինը վարվում է գործիական հոլովով. գործիակ. Յամանութիւնիցը ամէն բան կորցրիր. Չափազանց աշխատելուց տկարացաւ: (Որովհետեւ յամառ եռ. որովհետեւ չափազանց աշխատում է.) Չատ ուրախացայ քեզ այս տեղ անսնելուս համար (կամ լոկ տեսնելուս): Չես ցաւում այդպիսի յարմար առիթ կորցնելուդ համար: (Սյոփերն՝ որ տեսել եմ, որ կորցրել ես): Ամէնքը զնային գրօննելու*: Ինչ նեղութիւն ասես յանձն առի նորա փրկութեան համար. Չկարողանալով հետաքրքրութիւնս զուզել՝ ներս մտայ. Մերոնց կողմից անօգնական մնալով՝ ստիպուեցանք անձնատուր լինել:

Այս գործ. հոլովով անորոշ դերբայն վարվում է երբ երկրորդ նախադասութեան գործողութիւնը գլխաւորի հետ միասին է կատարվում. իսկ եթէ գլխաւորից առաջ է կատարվում, գործ է ածվում անորոշ դերբայի կատարեալ ձեւը նոյնպէս գործիական հոլովով: Զորօրինակ. Տեսնելով (այժմ) ձեր ջանասիրութիւնը՝ վարձատրում եմ ձեզ. — Տեսած լինելով (վաղուց) ձեր ջանասիրութիւնը՝ վարձատրում եմ ձեզ:

Երբեմն այսպիսի զէպրերում օժանդակ բայն դուրս է ձգվում. Այս համարաւովն ուրախացած՝ բոլոր ցաւերս մուռացայ:

* Անորոշ դերբայի սեռականը տացական լոզ է ընդունում, եթէ գործողութեան պատճառն է ցուց տալիս, և անլոզ է մնում, եթէ գործողութեան նպատակն է ցուց տալիս:

Գրեցէք ձեզս նից մի քանի օրինակներ կրճատեալ պարագայական նախադասութիւնների:

Բ. Անկախ նախադասութիւնների կապակցութիւնը:

§ 25. ԱՆԿԱԽ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

Անկախ կոչվում են այն նախադասութիւնները, որոնք քերականօրէն միմեանցից ամենեւին կախում չունին, այլ իւրաքանչիւրը առանձին առած մի ամբողջ միտք է պարունակում իւր մէջ:

Անկախ Նախադասութիւնները կապակցվում են՝ 1. բաղկիտական շաղկապներով, երբ որ համաձայն մտքեր են պարունակում, և 2. ներհակական շաղկապներով, երբ անհամաձայն կամ հակառակ մտքեր են պարունակում: Եռաջին տեսակ կապակցութիւնը կոչվում է *չաղհիւսական*, երկրորդը՝ *ներհակական*:

Անկախ Նախադասութիւնների մէջ շաղկապների մըտքով գործ դրուած մակբայները կարող են դուրս ձգուիլ, եթէ նախադասութիւնների բովանդակութիւնից երեւում է թէ ինչ յարաբերութիւն ունին միմեանց հետ:

§ 26. ԲԱԳՇԻՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՆ:

1. Բաղկիտական Նախադասութեան մէջ մանում են մասնաւոր ու անկախ Նախադասութիւններ՝ իրրիւ մի ամբողջի մասներ, որոնք սովորաբար միմեանց հետ կապվում են *ու* կամ *ու* շաղկապով:

2. Եւ շաղկապը երբեմն դուրս է ձգվում, երբեմն էլ

Արկնվում է, նայելով թէ խօսքին կամենում ենք աւելի արագութիւն տալ, թէ աւելի ոյժ ու ծանրութիւն. ինչպէս. եկէք թաղեցէք, փախէք, գնացէք. էս դառն աշխարհիցս ռաներգ քաշեցէք ու ձեր ամբողջ մօր հոգին յիշեցէք:

Թասով գրնին խմելիս՝ հայր միշտ Աստուած յիշում են խոսվարիւմ հարբողին խընջուցիցը քշում են.

Երգ սիրում են—հոգեւոր, խաղ սիրում են,—բայց անմեղ,

Միով բանիւ նւ ըզգաստ եւ խելօք են ամեն տեղ:

Բայց առհասարակ եւ-եւ կրկնաւոր շողկապի տեղ գործ են ամվում թէ-թէ, էլ-էլ. իսկ բացասական նախագասութիւնների մէջ՝ ոչ-ոչ. ինչպէս. Թէ մեղ համար զգալի եղաւ նորա դժբաղդութիւնը եւ թէ նորա բոլոր բարեկամների համար: Չեր ուղարկած ընծաները ստացանք էլ, վայելցինք էլ: Ոչ մեր բարեկամական խորհուրդները կարողացան համոզել նորան, ոչ իւր սեպհական ձախորդութիւնները կարողացան կոտրել նորա յամառութիւնը:

3. Եթէ երկու համաձայն մտքերից հարկ լինի մէկին աւելի ոյժ տալ, գործ են ամվում ոչ միայն—այլեւ շողկապները. այսպէս Տիգրանը ոչ միայն խելացի, այլեւ բարեսիրտ երեխայ է: Ոչ միայն տեսայ նորան, այլեւ խօսեցայ հետը:

4. Եթէ կամենար ցոյց տալ թէ ինչ կարգով հետեւում են միմեանց առարկաները կամ գործողութիւնները, գործ են գրվում հետեւալ մակերայները. նախ կամ նախ եւ առաջ, յետոյ, վերջապէս և այլն: Առաջ առաջ քաղաքապետը գլխավորեց իշխանին, յետոյ քաղաքի պաշտօնատէրերը, ամէնից վերջը ժողովուրդը: Նախ եւ առաջ եկեղեցի գնացէք, յետոյ փոքր ինչ զբօսեցէք եւ վերջապէս ամէնից միասին տուն եկէք:

5. Իսկ եթէ հարկ լինի ցոյց տալ թէ գործողութիւնը փոփոխակի կրկնվում է, վարվում են հետեւալ կրկնաւոր բառերը. երբեմն-երբեմն, մէկ-մէկ, Զորօրինակ. երբեմն ստով էինք զբօսում, երբեմն կաւքով: Մէկ հանդարտ էր գնում, մէկ շուտ շուտ վազում:

Գրեցէք մի քանի օրինակներ բաղձիւտական կապակցութեան:

§ 27 ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ:

1. Ներհակական կապակցութեան մէջ մտնում են անհամաձայն, երբեմն նաեւ իրարու հակառակ նախադասութիւններ, որոնք սովորաբար կապվում են բայց, իսկ, սակայն, այլ շողկապներով, երբեմն էլ ընդհակառակն, միայն մակերայներով: Զորօրինակ. Զայլամը թեք ունի, բայց չէ կարող թուշել: Անդրանիկ եղբայրս երեսուն տարեկան է, իսկ քոյրս տասնուվեց տարեկան:

Միայն մակերայը գործ է ամվում առ հասարակ, երբ հակառակ իմաստը զօրութեամբ է իմացվում: Միայն զուր կարող էլք այդ բանը անել: (Զօրութեամբ իմացվում է՝ Ուրիշ ոչոք չէր կարող այդ բանը անել):

2. Ներհակական կապակցութեան վերաբերում են և այնպիսի իմաստների կապակցութիւնը, որոնցից մինի ընդունուելովը միւսը հերքվում է: Եյս տեսակ իմաստները կապվում են կամ-կամ եւ կամ շողկապներով. ինչպէս. Կամ դու տանը մնա՛ւ և ես գնամ, կամ ես տանը մնամ և դու գնա՛ւ: Կամ ճշմարիտը կը խօսիմ, և կամ՝ բոլորովին կը լռեմ:

3. Ներհակական կապակցութեան մէջ պատահում է երբեմն որ նախադասութիւններից մինը կրճատվում է՝ փո-

խուերով բայի և ժողովանակ կամ տեղ նախադրութիւններով
բյու. և սեռ. խնդիրների, ինչպէս. Մեզ մօտ սչար շկար.
կար միայն քո եղբարը.—Մեզ մօտ ոչ սր շկար քացի քո
եղբորից: Ոչ թէ ուրախութիւն էր սպասում մեզ այնտեղ,
այլ ամենամեծ տրամուծիւն.—Ուրախութեան տեղ ամենա-
մեծ տրամուծիւն էր սպասում մեզ այնտեղ:

4. Չատ դորձածական է մեզանում նոյնպէս այն ձեր՝
որով պայմանական նախադասութիւնը գուրս է ձգվում և
մնում նորա համադաստասան գլխաւոր նախադասութիւնը
թէ չէ, ապա թէ ոչ շաղկապներով, որ այսպէսով անկախ
նախադասութեան գորութիւն է ստանում. ինչպէս. ճշմա-
րիտն ասա, թէ չէ՝ կը պատժուիս: (Այսինքն՝ իսկ եթէ չես
ասիլ, կը պատժուիս): Գիտութեան մէջ շպէտք է ոչինչ ար-
համարհես, ապա թէ ոչ՝ ամենահատարակ ճշմարտութիւն-
ներից զուրկ կը մնաս:

Գրեցէք մի քանի օրինակներ ներհակական կապակցութեան:

872

USM 94.11.3 1971 10

4(47.925)
 7-13

9. Կարգաբանք.—Վերստունքերի Կատարակութիւնները.

1. Պոճոյկի վերջին օրերը, Լօրդ Կրաստնի, թարգմ. Յ. Միրզաբեկով 1—50 կ.
2. Իւսթա, Վ. Պախաղեանը 15 կ.
3. Կեանքը ծովերի խորքում, Լուսինովի, թարգմ. Սա. Մարտիանով 30 կ.
4. Տրիպլի, Էրանս Կարար, թարգմ. Լ. Մելիք-Աղանով 25 կ.
5. Իսլամա, Բոյ, 1 արտ., 2 պատկեր, Յակ. Վարդանիս 25 կ.
6. Կարգիւնք, Ս. Բարդղեանի (Կարգիւնք պատկերով) 50 կ.
7. Աղբիւ գոյ, գիւղակ Զ. Մ. Կասաղեանի, թարգմ. Ս. Զ. 40 կ.
8. Կնքնախորտերիւն և Ջեմալօ, Քերիմեանի, թարգմ. Կ. Չարախանի 15 կ.
9. Տնտեսագրական գրույնք, Կարիշի, թարգմ. Կ. Չարախանի 40 կ.
10. Кн. владѣнія на Кавказѣ Земскаго Училища при Кн. П. М. Губаева. 20 к.
11. Կերպարանքիւն սարկերի լեզուի, (Ս. Բ. և Գ. ժառ.) Սա. Մարտիանով 75 կ.
12. Բլիճանք պատմ. Հուճար, Ալեկսանդրովի թարգմ. Ստանիս 1 թ.
13. Երբայի և Հարաման, Սեֆրուտալալի, թարգմ. Ս. Լ. Սի. Չարախանի 10 կ.
14. Փայտաշին, Կրասնոյ գործ. Պ. Վարդանիս 50 կ.
15. Արքայի Կատարակք, թարգմ. Տ. Զուհի 25 կ.
16. Կարգաբանքն օրինակներ, Կարոյ գրքոցները Կարար, Կարգանց Կ. Անտան 20 կ.

h2

Կատարել գնողներին զինչևնով Կրասնայսկը վերադիր վճարով ուղարկում է մոսկովն Երանի, որանք ուղարկում են կոստանովար. Կրեմլ. — Таблицъ. Книжная магазинъ Гутаберга П. П. Галустану.